

ՄԱՂՄՈՍՆԵՐՈՒ ԳԻՐՔԸ

ՄԱՂՄՈՍՆԵՐՈՒ ԳԻՐՔԸ

1

Երանելի է այն մարդը՝  
Որ ամբարիշտներուն խորհուրդին համաձայն չ'ընթանար,  
Ու մեղաւորներուն ճամբային մէջ չի կենար,  
Եւ ծաղրողներուն աթոռին վրայ չի նստիր.

2 Հապա անոր հաճոյքը՝ Սէրոջ Օրէնքին մէջ է,

Եւ ցերեկ ու գիշեր անոր Օրէնքին մասին կը խորհրդածէ:

3 Անիկա ջուրի առուններուն քով տնկուած ծառի պէս պիտի ըլլայ,

Որ իր ժամանակին՝ իր պտուղը կու տայ.

Անոր տերեւը պիտի չթառամի,

Եւ ինչ բան որ ընէ՝ պիտի յաջողի:

4 Այսպէս չեն ամբարիշտները,

Հապա մղեղի պէս՝ որ հովը կը տարտղնէ:

5 Հետեւաբար ամբարիշտները պիտի չկարենան <sup>բ</sup>կանգուն մնալ՝ դատաստանին <sup>գ</sup>օրը,

Ո՛չ ալ մեղաւորները՝ արդարներուն համայնքին մէջ:

6 Որովհետեւ Տէրը կը ճանչնայ արդարներուն ճամբան,

Բայց ամբարիշտներուն ճամբան պիտի կորսուի:

ԱՍՏՈՒԾՈՅ ԸՆՏՐԱԾ ԹԱԳԱՒՈՐԸ

2

Ինչո՞ւ <sup>ա</sup>հեթանոսները կ'ալեկոծին,  
Ու <sup>բ</sup>ժողովուրդները պարապ բան կը խորհրդածեն.

2 Երկրի թագաւորները իրենք զիրենք կը հաստատեն,

Իշխանները միասին կը խորհրդակցին

Տէրոջ դէմ եւ անոր <sup>գ</sup>Օծեալին դէմ՝ **ըսելով**.

3 «Կոտրե՛նք անոնց կապանքները,

Նետե՛նք մեզմէ անոնց <sup>դ</sup>լուծը»:

4 Երկինքը բնակողը **անոնց վրայ** պիտի ծիծաղի.

Տէրը զանոնք պիտի ծաղրէ:

5 Այն ատեն իր բարկութեամբ պիտի խօսի անոնց,

<sup>ա</sup> Եբր.՝ Եհովայի

<sup>բ</sup> Եբր.՝ կանգնիլ

<sup>գ</sup> Եբր.՝ մէջ

<sup>ա</sup> Եբր.՝ ազգերը

<sup>բ</sup> Եբր.՝ բնակչութիւնները

<sup>գ</sup> Եբր.՝ Մեսիային, յուն.՝ Զրիստոսին

<sup>դ</sup> Եբր.՝ փոկերը

Եւ իր բորբոքումով պիտի շփոթեցնէ զանոնք՝ ըսելով.

- 6 «Ե՛ս օծեցի իմ թագաւորս  
 իմ սուրբ լերանս՝ Սիոնի վրայ»:
- 7 Հրամանը պիտի յայտարարեմ.  
 Տէրը ինծի ըսաւ.  
 «Դուն իմ Որդիս ես,  
 Զեզ ա՛յսօր ծնայ:
- 8 Խնդրէ՛ ինձմէ, ու հեթանոսները քեզի ժառանգութիւն պիտի տամ,  
 Ու երկրի ծայրերը՝ քեզի ստացուածք:
- 9 Զանոնք երկաթէ գաւազանով պիտի Կոտորես,  
 Բրուտի անօթի պէս պիտի փշրես զանոնք»:
- 10 Ուստի հիմա, ո՛վ թագաւորներ, ուշի՛մ եղէք,  
 Երկրի՛ դատաւորներ, խրատուեցէ՛ք:
- 11 Վախո՛վ Տէրը պաշտեցէք,  
 Դողալո՛վ խայտացէք.
- 12 Որդի՛ն համբուրեցէք՝ որպէսզի չբարկանայ,  
 Ու ճամբային մէջ չկորսուիք՝  
 Երբ անոր բարկութիւնը քիչ մը Գորբոքի:  
 Երանի՛ բոլոր անոնց՝ որ անոր կ'ապաւիհին:

ԱՌՏՈՒԱՆ ԱՂՕԹԸ՝ ՕԳՆՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Դաւիթի սաղմոսը, երբ կը փախչէր իր որդիին՝ Աբիսողոմի առջեւէն:

3

Ո՛վ Տէր, հակառակորդներս ո՛րչափ շատցան.  
 Ինծի դէմ կանգնողները բազմաթիւ են:

- 2 Ծատերը իմ անձիս համար կ'ըսեն.  
 «Աստուծմէ փրկութիւն չկայ ասոր»:<sup>ա</sup> (Սեւլա:)
- 3 Բայց, ո՛վ Տէր, դո՛ւն ես իմ վահանս,  
 Իմ փառքս եւ իմ գլուխս բարձրացնողը:
- 4 Իմ ձայնովս Տէրոջ գոչեցի,  
 Եւ իր սուրբ լեռնէն ինծի պատասխանեց: (Սեւլա:)
- 5 Ես պառկեցայ ու քնացայ.  
 Արթնցայ, քանի Տէրը ինծի նեցուկ եղաւ:
- 6 Ես պիտի չվախնամ բիրաւոր ժողովուրդներէն,  
 Որոնք զիս շրջապատեցին:
- 7 Կանգնէ՛, ո՛վ Տէր. փրկէ՛ զիս, ո՛վ իմ Աստուածս.  
 Արդարեւ դո՛ւն զարկիր իմ բոլոր թշնամիներուս այտը,  
 Ամբարիշտներուն ակռաները կոտորեցիր:
- 8 Փրկութիւնը Տէրոջն է.  
 Զու օրհնութիւնը ժողովուրդիդ վրայ Բէ: (Սեւլա:)

<sup>ա</sup> Կամ՝ հովուես

<sup>բ</sup> Եբբ.՝ բռնկի

<sup>ա</sup> Այս եբրայերէն բառը կրնայ մատնանշել ձայնի դադար կամ բարձրացում

ԻՐԻՎՈՒԱՆ ԱՂՕԹԸ՝ ՕԳՆՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ  
Գլխաւոր երաժիշտին. <sup>ա</sup>նկիւնօթի վրայ. Դաւիթի սաղմոսը:

4

Երբ գոչեմ՝ պատասխանէ՛ ինծի, ո՛վ իմ արդարութեանս Աստուածը:  
Տագնապի մէջ զիս <sup>բ</sup>սփոփեցիր.

Ողորմէ՛ ինծի եւ լսէ՛ իմ աղօթքս:

2 Մարդո՛ց որդիներ, մի՛նչեւ ե՞րբ իմ փառքս նախատինքի պիտի վերածէք,  
Ունայնութիւն պիտի սիրէք ու ստութիւն փնտռէք: (Սելա:)

3 Բայց գիտցէ՛ք թէ Տէրը զատորոշեց իրեն <sup>գ</sup>նուիրուած մարդը.  
Տէրը պիտի լսէ՛ երբ իրեն գոչեմ:

4 <sup>դ</sup>Դողացէ՛ք, եւ մի՛ մեղանչէք.  
<sup>ե</sup>Մտածեցէ՛ք ձեր անկողիներն վրայ, ու լռեցէ՛ք: (Սելա:)

5 Արդարութեան զոհե՛ր մատուցանեցէք,  
եւ Տէրո՛ջ վստահեցէք:

6 Շատեր կ'ըսեն. «Ո՞վ մեզի բարօրութիւն պիտի ցուցնէ»:  
Ո՛վ Տէր, քու երեսիդ լոյսը <sup>զ</sup>ծագեցո՛ւր մեր վրայ:

7 Իմ սիրտիս ուրախութիւն տուիր՝  
Անոնց ցորենին ու քաղցուին առատութեան ժամանակէն աւելի:

8 Խաղաղութեամբ պիտի պառկիմ եւ քնանամ,  
Որովհետեւ դո՛ւն միայն, ո՛վ Տէր, զիս ապահովութեամբ կը բնակեցնես:

ԱՂՕԹԸ՝ ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ  
Գլխաւոր երաժիշտին. <sup>ա</sup>նհիւօթի վրայ. Դաւիթի սաղմոսը:

5

Ո՛վ Տէր, ունկնդրէ՛ իմ խօսքերս,  
Նկատէ՛ խորհրդածութիւնս.

2 Ուշադի՛ր եղիր աղաղակիս ձայնին, ո՛վ իմ Թագաւորս եւ Աստուածս,  
Որովհետեւ քեզի՛ կ'աղօթեմ:

3 Ո՛վ Տէր, առտուն պիտի լսես իմ ձայնս.

---

<sup>բ</sup> Կամ՝ ըլլայ

<sup>ա</sup> Այսինքն՝ լարաւոր նուագարաններու

<sup>բ</sup> Եբբ.՝ ընդարձակեցիր

<sup>գ</sup> Եբբ.՝ բարեպաշտ

<sup>դ</sup> Եբբ.՝ Վրդովեցէ՛ք

<sup>ե</sup> Եբբ.՝ Խօսեցէ՛ք ձեր սիրտին հետ

<sup>զ</sup> Եբբ.՝ բարձրացո՛ւր

<sup>ա</sup> Այսինքն՝ փչողական նուագարաններու

Առտու՛ն աղօթքս քեզի՝ Բ պիտի ուղղեմ՝, եւ սպասեմ:

4 Արդարեւ դուն ամբարշտութեանէ ախորժող Աստուած չես.

Չարը քու քովդ պիտի չբնակի:

5 Պարծենկոտները քու աչքերուդ առջեւ պիտի չկայնին.

Բոլոր անօրէնութիւն գործողները կ'ատես:

6 Սուտ խօսողները կը կորսնցնես.

Տէրը արիւնահեղ ու խաբեբայ մարդէն կը գարշի:

7 Բայց ես քու կարեկցութեանդ շատութեամբ քու տունդ պիտի մտնեմ.

Զու վախովդ պիտի երկրպագեմ քու սուրբ տաճարիդ մէջ:

8 Ո՛վ Տէր, առաջնորդէ՛ զիս քու արդարութեամբդ՝՝ Գոտխներուս պատճառով,

Շտկէ՛ իմ առջեւս քու ճամբադ,

9 Որովհետեւ անոնց բերանին մէջ՝ Իճմարտութիւն չկայ.

Անոնց ներսը եղեռնագործութիւն է,

Անոնց կոկորդը բաց գերեզման է,

Իրենց լեզուով կը շողոքորթեն:

10 Ո՛վ Աստուած, յանցաւոր սեպէ՛ զանոնք.

Թող իյնան իրենց խորհուրդներով.

Հալածէ՛ զանոնք՝ իրենց յանցանքներուն շատութեան համար,

Զանի որ քեզի դէմ ընդվզեցան:

11 Բայց բոլոր քեզի ապաւինողները թող ուրախանան.

Յաւիտեան թող ցնծան, որովհետեւ դուն զանոնք կը պաշտպանես:

Զու անունդ սիրողները քեզմով թող հրճուին,

12 Զանի որ դուն պիտի օրհնես արդարը, ո՛վ Տէր,

Բարեհաճութեամբ պիտի շրջապատես զայն՝ որպէս թէ ասպարով մը:

ՕԳԼՈՒԹԵԱՆ ԱՂՕԹԸ՝ ՏԱՌԱՊԱՆՔԻ ԱՏԵՆ

Գլխաւոր երաժիշտին. նկինօթի վրայ.՝ շեմինիթի վրայ. Դաւիթի սաղմոսը:

6

Ո՛վ Տէր, քու բարկութեամբդ զիս մի՛ յանդիմաներ,

Եւ ցասումովդ զիս մի՛ Բ պատժեր:

2 Ո՛վ Տէր, ողորմէ՛ ինձի, որովհետեւ տկար եմ.

Բուժէ՛ զիս, ո՛վ Տէր, քանի ոսկորներս կը շփոթին:

3 Իմ անձս ալ յոյժ շփոթեցաւ.

Իսկ դուն, ո՛վ Տէր, մինչեւ ե՞րբ:

4 Վերադարձի՛ր, ո՛վ Տէր. ազատէ՛ իմ անձս,

Փրկէ՛ զիս՝ քու կարեկցութեանդ պատճառով:

Բ Եբբ.՝ դէմ պիտի գետեղեմ

Գ Եբբ.՝ դիտողներուս

Դ Եբբ.՝ հաստատութիւն

Ս Այսինքն՝ ութ լարով նուագարաններու

Բ Կամ՝ խրատեր

ՍԱՂՄՈՍՆԵՐՈՒ ԳԻՐԸԸ

- 5 Արդարեւ մահուան մէջ քեզ յիշատակել չկայ.  
ԳԴԺՈՒԽՔԻՆ մէջ ո՞վ քեզմէ շնորհակալ պիտի ըլլայ:
- 6 Հառաչելէն յոգնեցայ.  
Ամէն գիշեր "կը լուամ" մահիճս,  
Արցունքներովս կը թրջեմ մահճակալս:
- 7 Աչքս ծիրեցաւ վիշտէն,  
Բոլոր հակառակորդներուս պատճառով հինցաւ:
- 8 Հեռացէ՛ք ինձմէ դուք բոլորդ՝ որ անօրէնութիւն կը գործէք,  
Որովհետեւ Տէրը իմ լացիս ձայնը լսեց.
- 9 Տէրը իմ աղաչանքս լսեց,  
Տէրը իմ աղօթքս պիտի ընդունի:
- 10 Թող ամչնան ու յոյժ շփոթին իմ բոլոր թշնամիներս,  
Թող վերադառնան ու շուտով ամչնան:

ԱՂՕԹԸ՝ ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Դաւիթի Վեղեղին, որ երգեց Տէրոջ՝ Բենիամինեան Բուշի խօսքերուն համար:

7

- Ո՛վ Տէր, իմ Աստուածս, քեզի՛ կ'ապաւիճիմ.  
Փրկէ՛ զիս իմ բոլոր հալածիչներէս, եւ ազատէ՛ զիս.
- 2 Որպէսզի իմ անձս ՚՛ջբզքտեն առիւծի մը պէս,  
Որ կը յօշոտէ, եւ ո՛չ մէկ ազատող կ'ըլլայ:
- 3 Ո՛վ Տէր, իմ Աստուածս, եթէ սա՛ բանը ըրի.–  
Եթէ ձեռքերուս մէջ անիրաւութիւն կայ,  
4 Եթէ չարիք հատուցանեցի քարեկամիս,  
Ու "կողոպտեցի ան՝ որ "առանց պատճառի" իմ հակառակորդս էր,
- 5 Թշնամին թող հալածէ իմ անձս եւ հասնի անոր,  
Գետինին վրայ կոխկռտէ կեանքս,  
Ու փառքս հողին մէջ բնակեցնէ: (Սելա:)
- 6 Կանգնէ՛, ո՛վ Տէր, քու բարկութեամբդ.  
Բարձրացի՛ր հակառակորդներուս ցասումին դէմ:  
Արթնցի՛ր ինձի համար. դո՛ւն Գսահմանեցիր դատաստանը:

---

- Գ Այսինքն՝ Մեռած անձերու կայանին
- Դ Եբբ.՝ լողալ կու տամ
- Մ Կամ՝ ողբերգը
- Բ Եբբ.՝ չբզքտէ
- Գ Եբբ.՝ անոր՝ որ ինձի հետ խաղաղութեան մէջ էր
- Դ Կամ՝ ազատեցի
- Ե Եբբ.՝ պարապ տեղը
- Զ Եբբ.՝ պատուիրեցիր

ՄԱՂՄՈՍՆԵՐՈՒ ԳԻՐԸԸ

- 7 <sup>Է</sup> Ժողովուրդներուն համայնքը քեզ պիտի շրջապատէ.  
Բարձրացի՛ր անոնց վրայ:
- 8 Տէրը պիտի դատէ ժողովուրդները.  
Ո՛վ Տէր, դատէ՛ գիս  
Արդարութեանս եւ մէջս եղած պարկեշտութեանս համեմատ:
- 9 Ամբարիշտներուն չարութիւնը թող վերջանայ,  
Իսկ դուն հաստատէ՛ արդարը.  
Արդարեւ դուն, ո՛վ արդար Աստուած, կը քննես սիրտերն ու <sup>Ը</sup>խիղճերը:
- 10 Իմ պաշտպանութիւնս Աստուծմէ է,  
Որ կը փրկէ սիրտով ուղիղները.
- 11 Աստուած արդար դատաւոր է.  
Աստուած **ամբարիշտին** ամէն օր բարկացած է.
- 12 Եթէ ան դարձի չգայ, իր սուրը պիտի սրէ.  
Աղեղը լարած եւ հաստատած է:
- 13 Մահուան գործիքները պատրաստած է անոր դէմ,  
Իր <sup>Թ</sup>հրավառ նետերը շինած է:
- 14 Ահա՛ **ամբարիշտը** անօրէնութեան երկունքի ցաւ կը քաշէ.  
Անհրաւութիւն յղացաւ եւ ստութիւն ծնաւ:
- 15 Հոր փորեց ու խորունկցուց,  
Բայց իր պատրաստած փոսին մէջ ի՛նք պիտի իյնայ.
- 16 Անոր անհրաւութիւնը իր գլուխը պիտի վերադառնայ.  
Անոր բռնութիւնը իր գագաթին վրայ պիտի իջնէ:
- 17 Շնորհակալ պիտի ըլլամ Տէրոջմէն՝ իր արդարութեան համար,  
Սաղմոս պիտի երգեմ Ամենաբարձր Տէրոջ անունին:

ԱՍՏՈՒԾՈՅ ՓԱՌԸԸ ԵՒ ՄԱՐԴՈՒՆ ԱՐԺԱՆԻԸԸ  
Գլխաւոր երաժիշտին. <sup>Ս</sup>կիթիթի վրայ. Դաւիթի սաղմոսը:

8

Ո՛վ <sup>Բ</sup>Աստուած, մեր Տէ՛րը,  
Ի՛նչ հոյակապ է քու անունդ ամբողջ երկրի վրայ.  
Քու փառաւորութիւնդ երկինքէն վեր դրիր:

- 2 Երախաներուն եւ ծծկերներուն բերանով  
“Գովաբանութիւն կատարեցիր” քու հակառակորդներուդ պատճառով,  
Որպէսզի թշնամին ու վրէժխնդիրը լռեցնես:
- 3 Երբ տեսնեմ երկինքդ՝ քու մատներուդ գործը,

<sup>Է</sup> Եբբ.՝ Բնակչութիւններուն

<sup>Ը</sup> Եբբ.՝ երիկամունքները

<sup>Թ</sup> Կամ՝ հալածիչներուն համար

<sup>Ս</sup> Թերեւս՝ նուագարանի մը

<sup>Բ</sup> Կամ՝ Տէր

<sup>Գ</sup> Եբբ.՝ Զօրութիւն հիմնեցիր

Լուսինը եւ աստղերը՝ որոնք դուն հաստատեցիր,

- 4 Մարդը ի՞նչ է՝ որ զայն կը յիշես,  
Կամ մարդու որդին՝ որ անոր կ'այցելես:
- 5 Զիչ մը ՚վար ըրիր՝ զայն էհրեշտակներէն,  
Փառքով ու վայելչութեամբ՝ պսակեցիր զայն.
- 6 Զու ձեռքերուդ գործերուն վրայ տիրել տուիր անոր:  
Ամէն բան անոր ոտքերուն տակ դրիր.---
- 7 Բոլոր ոչխարներն ու արջառները,  
Նաեւ դաշտի գազանները,
- 8 Երկինքի էթոչուններն ու ծովուն ձուկերը,  
Եւ ինչ որ ծովու ուղիներուն մէջէն կ'անցնի:
- 9 Ո՛վ Աստուած, մեր Տէ՛րը,  
Ի՛նչ հոյակապ է քու անունդ ամբողջ երկրի վրայ:

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ԱՍՏՈՒԾՈՅ ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ  
Գլխաւոր երածիշտին. «Մութ-Լապպէնի վրայ. Դաւիթի սաղմոսը:

9

Շնորհակալ պիտի ըլլամ Տէրոջմէն իմ ամբողջ սիրտովս.  
Զու բոլոր սքանչելիքներդ պիտի պատմեմ:

- 2 Զեզմով պիտի ուրախանամ եւ հրճուիմ.  
Զու անունդ սաղմոս պիտի երգեմ, ո՛վ Ամենաբարձր:
- 3 Երբ թշնամիներս նահանջեն՝  
Պիտի գայթին ու կորսուին քու քաջելդ,
- 4 Որովհետեւ դո՛ւն՝ պաշտպանեցիր իրաւունքս եւ դատս,  
Գահին վրայ բազմեցար իբր արդար դատաւոր:
- 5 Հեթանոսները սաստեցիր,  
Ամբարիշտը կորսնցուցիր,  
Անոնց անունները ջնջեցիր ՚դարէ դար՝:
- 6 Ո՛վ թշնամի, ակերումները ընդմիշտ վերջացան.  
Զաղաքներ ակերեցիր,

---

<sup>1</sup> Եբր.՝ պակսեցուցիր

<sup>2</sup> Եբր.՝ Աստուծմէ

<sup>3</sup> Եբր.՝ թագադրեցիր

<sup>4</sup> Եբր.՝ թռչնազգիներն

<sup>5</sup> Թերեւս՝ « Որդիին Մահուան », կամ՝ նուագարանի մը

<sup>6</sup> Եբր.՝ երեսէդ

<sup>7</sup> Եբր.՝ գործադրեցիր

<sup>8</sup> Եբր.՝ յաւիտենականութենէ յաւիտենականութիւն



Անոնց յիշատակը իրենց հետ կորսուեցաւ:

7 Բայց Տէրը յաւիտեան կը գահակալէ.

Իր գահը պատրաստած է դատաստանի համար:

8 Ի՛նչ երկրագունդը պիտի դատէ արդարութեամբ,  
Ե՛տողվորդներուն դատը պիտի պաշտպանէ ուղղամտութեամբ:

9 Տէրը տնանկին ալ պատսպարան պիտի ըլլայ,  
Պատսպարան՝ տագնապի ժամանակները:

10 Անոնք որ քու անունդ գիտեն՝ քեզի պիտի վստահին,  
Որովհետեւ քեզ փնտռողները, ո՛վ Տէր, չլքեցիր:

11 Սաղմո՛ւ երգեցէք Տէրոջ՝ որ Սիոն կը բնակի,  
Հռչակեցէ՛ք անոր ըրածները ժողովուրդներուն մէջ.

12 Որովհետեւ «արիւնի վրէժխնդիրը կը յիշէ»,  
Տառապելներուն աղաղակը չի մոռնար:

13 Ո՛վ Տէր, ողորմէ՛ ինծի,  
Տե՛ս Էնտխներէս կրած տառապանքս,

Դո՛ւն՝ որ զիս մահուան դռներէն կը բարձրացնես,

14 Որպէսզի քու բոլոր Բփառաւոր գործերդ՝ պատմեմ  
Սիոնի աղջիկին դռներուն մէջ.

Պիտի խայտամ քու փրկութեամբդ:

15 Հեթանոսները իրենց պատրաստած փոսին մէջ մխրճուեցան.

Իրենց պահած ցանցին մէջ իրենց ոտքը բռնուեցաւ:

16 Տէրը ճանչցուած է իր գործադրած դատավճիռով.

Ամբարիշտը իր ձեռքին գործերով որոգայթին մէջ կ'իյնայ: (ՔՀիկկայոն: Սելա:)

17 Ամբարիշտները զճոխքը պիտի իմդուին,

Նաեւ այն բոլոր ազգերը՝ որոնք Աստուած կը մոռնան:

18 Արդարեւ աղքատը ընդմիշտ պիտի չմոռցուի.

Դժբախտներուն յոյսը յաւերժ պիտի չկորսուի:

19 Կանգնէ՛, ո՛վ Տէր. մարդը թող չզօրանայ.

Հեթանոսները թող դատուին քու առջեւդ:

20 Ո՛վ Տէր, Վախցո՛ւր զանոնք՝.

Հեթանոսները թող գիտնան թէ իրենք մարդ են: (Սելա:)

<sup>Ե</sup> Եբբ.՝ Բնակչութիւններուն

<sup>Գ</sup> Եբբ.՝ երբ արիւն որոնէ՝ զանոնք կը յիշէ

<sup>Է</sup> Եբբ.՝ զիս ատողներէն

<sup>Ը</sup> Եբբ.՝ գովաբանութիւններդ

<sup>Թ</sup> Այսինքն՝ Մտածութիւն

<sup>Ժ</sup> Այսինքն՝ մեռած անձերու կայանը

<sup>Ի</sup> Եբբ.՝ դառնան

<sup>Լ</sup> Կամ՝ սորվեցնող դիր անոնց վրայ

10

Ո՛վ Տէր, ինչո՞ւ հեռու կը կենաս.

Տագնապի ժամանակները կը թաքնուիս:

2 <sup>Մ</sup>Ամբարիշտին յոխորտանքին պատճառով դժբախտը կը տոչորի՞:

Իրենց մտածած <sup>Բ</sup>հնարքներուն մէջ իրե՛նք թող բռնուին:

3 Արդարեւ ամբարիշտը իր անձին փափաքով կը պարծենայ.

Ագահը կ'օրհնէ, Տէրը կ'անարգէ:

4 Ամբարիշտը իր դէմքին խրոխտութեան համար **Աստուած** չի փնտռեր.

Իր բոլոր <sup>Վ</sup>մտածումներուն մէջ **բնա՛ւ** Աստուած չկայ:

5 Անոր ճամբաները ամէն ժամանակ <sup>Դ</sup>պինդ են.

Քու դատավճիռներդ անոր դիմաց շատ բարձր են.

Ան իր բոլոր հակառակորդներուն վրայ կը փչէ:

6 Իր սիրտին մէջ ըսաւ. «Պիտի չսասանիմ,

Որովհետեւ սերունդէ սերունդ ձախորդութեան մէջ պիտի չըլլամ»:

7 Անոր բերանը անէծքով, խաբէութիւններով ու հարստահարութիւններով լեցուն է.

Անիրաւութիւնը եւ <sup>Ե</sup>անօրէնութիւնը անոր լեզուին տակ են:

8 Գիւղերուն **մօտ** դարան կը <sup>Վ</sup>մտնէ,

Ծածուկ տեղերու մէջ անմեղը կը սպաննէ.

Անոր աչքերը ծածկաբար տկարները կը դիտեն:

9 Ծածուկ տեղեր դարան կը մտնէ, ինչպէս առիւծը՝ իր մացառուտին մէջ.

Դարանակալ կ'ըլլայ՝ դժբախտը յափշտակելու համար.

Դժբախտը կը յափշտակէ՝ իր ցանցին մէջ <sup>Զ</sup>ձգելով զայն:

10 Կը ծուարի, կը կծկուի,

Եւ տկարները անոր <sup>Է</sup>ճանկերուն տակ կ'իյնան:

11 Իր սիրտին մէջ կ'ըսէ. «Աստուած մոռցեր է.

Իր երեսը ծածկեր է, որպէսզի ամենեւին չտեսնէ»:

12 Կանգնէ՛, ո՛վ Տէր. բարձրացո՛ւր ձեռքդ, ո՛վ Աստուած.

Մի՛ մոռնար տառապեալները:

13 Ինչո՞ւ ամբարիշտը Աստուած կ'անարգէ,

Իր սիրտին մէջ ըսելով. «**Հաշիւ** պիտի չպահանջես»:

<sup>Մ</sup> Կամ՝ Ամբարիշտը իր յոխորտանքով դժբախտը խանդով կը հալածէ

<sup>Բ</sup> Եբր.՝ մտադրութիւններուն

<sup>Վ</sup> Եբր.՝ մտադրութիւններուն

<sup>Դ</sup> Եբր.՝ ցաւալի

<sup>Ե</sup> Կամ՝ ունայնութիւնը

<sup>Վ</sup> Եբր.՝ նստի

<sup>Զ</sup> Եբր.՝ քաշելով

<sup>Է</sup> Եբր.՝ հզօրներուն

- 14 Դուն տեսար, որովհետեւ տաժանքին ու վիշտին կը նայիս,<sup>1</sup> Զու ձեռքովդ **փոխարէնը** հատուցանելու համար: Տկարը ինքզինք քեզի՛ կը յանձնէ. Որքին օգնականը դո՛ւն ես:
- 15 Կոտրէ՛ ամբարիշտին բազուկը. Փնտռէ՛ չարին ամբարշտութիւնը՝ **մինչեւ որ ա՛լ չգտնես**:
- 16 Տէրը **՞դարէ դար**՝ թագաւոր է. Հեթանոսները կորսուած են աճոր երկրէն:
- 17 Ո՛վ Տէր, տառապեայներուն փափաքը լսեցիր. Անոնց սիրտերը պիտի հաստատես, **եւ քու** ականջդ ուշադիր պիտի ըլլայ՝
- 18 Որքին ու տնանկին դատը պաշտպանելու, Որպէսզի <sup>ժ</sup>հողեղէն մարդը ա՛լ **գանոնք** չահաբեկէ:

**ՎՍՏԱՀՈՒԹԻՒՆ ՏԷՐՈՋ ՎՐԱՅ**  
Գլխաւոր երաժիշտին. Դաւիթի սաղմոսը:

11

- Տէրոջ ապաւինեցայ.  
Ի՞նչպէս իմ անձիս կ'ըսէք.  
«Ճնճողուկի **պէս** թռչէ՛ դէպի ձեր լեռը.
- 2 Որովհետեւ ահա՛ ամբարիշտները աղեղ լարեցին,  
Իրենց նետերը լարին վրայ հաստատեցին,  
Որպէսզի մուրհին մէջ արծակեն սիրտով ուղիղներուն:
- 3 Եթէ հիմերը քանդուին,  
Արդարը ի՞նչ պիտի ընէ»:
- 4 Տէրը իր սուրբ տաճարին մէջ է.  
Տէրոջ գահը երկինքն է.  
Անոր աչքերը կը տեսնեն,  
Անոր կոպերը կը քննեն մարդոց որդիները:
- 5 Տէրը կը քննէ արդարը.  
Բայց աճոր անձը կ'ատէ ամբարիշտն ու բռնութիւն սիրողը:
- 6 Ամբարիշտներուն վրայ <sup>Մ</sup>վարմեր պիտի տեղացնէ,  
Հուր, ծծումբ եւ խորշակ.  
**Ա՛յս պիտի ըլլայ** անոնց բաժակին բաժինը:
- 7 Զանի որ արդար Տէրը արդարութիւնը կը սիրէ.  
Աճոր երեսը ուղիղին կը նայի:

**ԱՂՕԹԸ՝ ՕԳՆՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ**  
Գլխաւոր երաժիշտին. շեմինիթի վրայ. Դաւիթի սաղմոսը:

12

<sup>1</sup> **Եբր.**՝ յաւիտենականութենէ յաւիտենականութիւն

<sup>ժ</sup> **Եբր.**՝ գետինէն առնուած

<sup>Մ</sup> **Կամ՝** փայլակներ

ՄԱՂՄՈՍՆԵՐՈՒ ԳԻՐԸԸ

՝Օգնութեան հասիր, ո՛վ Տէր, որովհետեւ բարեպաշտ <sup>բ</sup> չմնաց.

Արդարեւ հաւատարիմները մարդոց որդիներուն մէջէն պակսեցան:

2 Ամէն մարդ ունայնութիւն կը խօսի իր ընկերին.

Շողոքորթող շրթունքով **ու**՝ կրկնակ սիրտով՝ կը խօսին:

3 Տէրը պիտի կտրէ բոլոր շողոքորթող շրթունքները,

**ու** մեծախօս լեզուն

4 **Անոնց՝** որ կ'ըսեն. «Մեր լեզուներով պիտի յաղթենք,

Մեր շրթունքները մերն են. ո՞վ է մեր վրայ տիրողը»:

5 «Դժբախտներուն զրկանքին **եւ** աղքատներուն հեծեծանքին համար

Հիմա պիտի կանգնիմ,– կ'ըսէ Տէրը,–

Ապահովութեան մէջ պիտի դնեմ **ան՝** որուն վրայ կը փչեն»:

6 Տէրոջ խօսքերը մաքուր խօսքեր են.

Հողէ բովի մէջ հալեցուած՝

Եօթը անգամ զտուած արծաթի **պէս** են:

7 Ո՛վ Տէր, դո՛ւն պիտի պահպանես զանոնք,

Ու պիտի պաշտպանես այս սերունդէն՝ յաւիտեճապէս:

8 Ամբարիշտները ամէն կողմ կը շրջին՝

Երբ մարդոց որդիներուն մէջ անարգները բարձրանան:

ԱՂՕԹԸ՝ ՕԳՆՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ  
Գլխաւոր երաժիշտին. Դաւիթի սաղմոսը:

13

Ո՛վ Տէր, մինչեւ ե՞րբ. զիս ընդմիջտ պիտի մոռնաս:

Մինչեւ ե՞րբ քու երեսդ ինձմէ պիտի ծածկես:

2 Մինչեւ ե՞րբ ՝միտքիս մէջ հոգեր պիտի ունենամ՝,

**եւ** ամէն օր տրտմութիւն՝ սիրտիս մէջ.

Մինչեւ ե՞րբ թշնամիս իմ վրաս պիտի բարձրանայ:

3 Նայէ՛, ո՛վ Տէր, իմ Աստուածս, **ու** պատասխանէ՛ ինձի.

Լուսաւորէ՛ իմ աչքերս՝

Որպէսզի մահուան **քունը** չքնանամ,

4 Որ թշնամիս չըսէ. «Յաղթեցի անոր»,

**Կամ թէ** հակառակորդներս չխայտան երբ սասանիմ:

5 Ես քու կարեկցութեանդ վստահեցայ,

Սիրտս քու փրկութեամբդ պիտի խայտայ:

6 Պիտի երգեմ Տէրոջ,

Որովհետեւ ինձի երախտիք ըրաւ:

ՄԱՐԴՈՅ ԱՆՕԳՆԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

<sup>ա</sup> Եբր.՝ Ազատէ՛

<sup>բ</sup> Եբր.՝ հատաւ

<sup>գ</sup> Եբր.՝ սիրտով ու սիրտով

<sup>ա</sup> Եբր.՝ անձիս մէջ խորհուրդներ պիտի դնեմ

14

Անգգամը իր սիրտին մէջ ըսաւ. «Աստուած չկայ»:  
Ապականեցան պիղծ արարքներով.

Չկայ մէկը՝ որ բարիք ընէ:

2 Տէրը երկինքէն նայեցաւ մարդոց որդիներուն,  
Որպէսզի տեսնէ թէ կա՛յ արդեօք ուշիմ մէկը՝  
Որ Աստուած փնտռէ:

3 Բոլորը՝ խոտորեցան, միասին անպիտան եղան.  
Ո՛չ մէկ բարիք ընող կայ, ո՛չ իսկ մէկ հատ:

4 Միթէ գիտակից չե՞ն բոլոր անօրէնութիւն գործողները,  
Որոնք իմ ժողովուրդս կ'ուտեն՝ հաց ուտելու պէս,  
Եւ Տէրոջ չեն գոչեր:

5 Ա՛յն ատեն՝ մեծապէս պիտի վախնան՝,  
Երբ Աստուած արդարներուն սերունդին մէջ երեւնայ:

6 Դժբախտին՝ զխորհուրդը ամչցուցիք,  
Պակայն անոր ապաւէնը Տէրն է:

7 Երանի՛ թէ Սիոնէն գար Իսրայէլի փրկութիւնը.  
Երբ Տէրը իր ժողովուրդը գերութենէն վերադարձնէ՝  
Յակոբ պիտի խայտայ, եւ Իսրայէլ ուրախանայ:

ՏԷՐՈՋ ՊԱՀԱՆՋԸ

Դաւիթի սաղմոսը:

15

Տէր, ո՞վ պիտի կենայ քու վրանիդ մէջ,  
Ո՞վ պիտի բնակի քու սուրբ լերանդ վրայ:

2 Ա՛ն՝ որ պարկեշտութեամբ կ'ընթանայ, արդարութիւն կը կիրարկէ,  
Եւ իր սիրտին ճշմարտութիւնը կը խօսի:

3 Ա՛ն՝ որ իր լեզուով չի գրպարտեր,  
Ընկերին չարիք չ'ըներ,  
Եւ հարեւանին վրայ նախատինք չի բերեր.

4 Անոր՝ առջեւ արհամարհելի անձը՝ Գանարգուած է,

<sup>ա</sup> Եբբ.՝ շեղեցան

<sup>բ</sup> Եբբ.՝ երկիւղով պիտի վախնան

<sup>գ</sup> Կամ՝ խրատը

<sup>դ</sup> Կամ՝ քանի

<sup>ա</sup> Եբբ.՝ պանդխտանայ

<sup>բ</sup> Եբբ.՝ աչքերուն

<sup>գ</sup> Եբբ.՝ արհամարհուած

Բայց աստուածավախները կը պատուէ:  
Եթէ երդում ընէ <sup>ո</sup>ու վնասէ՝, չի <sup>ե</sup>դրժեր.

- 5 Իր դրամը վաշխով չի տար,  
Եւ անմեղին դէմ կաշառք չի ստանար:  
Ո՛վ որ ասոնք կ'ընէ, երբե՛ք պիտի չսասանի:

ՎՍՏԱՀՈՒԹԵԱՆ ԱՂՕԹԸ

Դաւիթի երգը:

16

Ո՛վ Աստուած, պահպանէ՛ զիս,  
Որովհետեւ քեզի ապաւինեցայ:

- 2 Տէրոջ ըսի. «Դո՛ւն ես իմ Տէրս,  
Առանց քեզի բարիք մը չունիմ»:
- 3 Երկրի վրայ եղող սուրբերուն ու երեւելիներուն **ներկայութեան** մէջ է իմ ամբողջ  
հաճոյքս:
- 4 Ուրիշ **աստուած** մը <sup>փ</sup>նտոռողներուն ցաւերը պիտի բազմապատկուին.  
Անոնց արիւնի <sup>բ</sup>նուէրներ պիտի <sup>գ</sup>չընծայեն,  
Եւ անոնց անունները շրթունքիս վրայ պիտի չառնեն:
- 5 Տէ՛րն է իմ ժառանգութեանս ու բաժակիս բաժինը.  
Իմ վիճակս դո՛ւն կը պահես:
- 6 Վիճակներ ելան ինձի հաճելի **տեղերու** մէջ.  
Այո՛, գեղեցիկ ժառանգութիւն մը <sup>տ</sup>որունցաւ ինձի՛:
- 7 Պիտի օրհնաբանեմ Տէրը՝ որ զիս կը խրատէ.  
Նաեւ գիշերուան մէջ <sup>ե</sup>խիղճս զիս կը խրատէ՛:
- 8 Տէրը շարունակ իմ առջեւս դրի.  
Քանի իմ աջ կողմս է, պիտի չսասանիմ:
- 9 Հետեւաբար սիրտս ուրախացաւ ու <sup>գ</sup>փառքս խայտաց,  
Մարմինս ալ ապահովութեամբ պիտի հանգչի.
- 10 Որովհետեւ իմ անձս <sup>ե</sup>դժոխքին մէջ պիտի չլքես,

<sup>ո</sup> Կամ՝ իր հարեւանին

<sup>ե</sup> Եբբ.՝ փոխանակեր

<sup>ա</sup> Եբբ.՝ շտապողներուն

<sup>բ</sup> Եբբ.՝ թափելիք նուէրներ

<sup>գ</sup> Եբբ.՝ չթափեմ

<sup>դ</sup> Եբբ.՝ վրաս եղաւ

<sup>ե</sup> Եբբ.՝ երիկամունքս ինձի կը սորվեցնէ

<sup>զ</sup> Այսինքն՝ անձս, կամ՝ լեզուս

<sup>է</sup> Այսինքն՝ մեռած անձերու կայանին

Պիտի չթոյլատրես որ քու <sup>Ը</sup>սուրբդ ապականութիւն տեսնէ:

- 11 Կեանքի ուղին պիտի <sup>Ք</sup>ցուցնես ինձի.  
Երեսիդ առջեւ ուրախութեան <sup>Ժ</sup>յագեցում կայ,  
Զու աջ կողմդ ընդմիջտ հաճոյքներ կան:

ԱՆՍԵՂԻ ՄԸ ԱՂՕԹԸԸ

Դաւիթի աղօթքը:

17

Ո՛վ Տէր, լսէ՛ արդար **դատս**,  
Ուշադի՛ր եղիր <sup>Մ</sup>պաղատանքիս,  
Ունկնդրէ՛ աղօթքս,  
Որ խաբեբայ շրթունքով չէ:

- 2 Իմ դատավճիռս քու ներկայութեանդ թող <sup>Ք</sup>արձակուի.  
Զու աչքերդ ուղղամտութիւնը թող տեսնեն:
- 3 Իմ սիրտս քննեցիր, գիշերը աչքէ անցուցիր,  
Զիս **բովի մէջ** գտեցիր ու ոչինչ գտար:  
Որոշեցի որ բերանս **պատուիրաններդ** չանտեսէ.
- 4 Մարդոց գործերուն **նայելով՝**  
Զու շրթունքիդ խօսքերով զգուշացայ աւազակին ուղիներէն:
- 5 Պահէ՛ քայլերս քու արահետներուդ մէջ,  
Որպէսզի ոտքերս չսահին:
- 6 Ես քեզի գոչեցի, որովհետեւ ինձի պիտի պատասխանես, ո՛վ Աստուած:  
Դարձո՛ւր ինձի քու ականջդ, լսէ՛ իմ խօսքս:
- 7 **Յո՛յց տուր** քու սքանչելի կարեկցութիւնդ,  
Դո՛ւն՝ որ **քեզի** ապաւինողները աջ ձեռքովդ կը փրկես  
<sup>Գ</sup>Հակառակորդներէն:
- 8 Պահպանէ՛ զիս աչքի բիբի պէս,  
Ծածկէ՛ զիս թելերուդ հովանիին տակ՝
- 9 Զիս աւերող ամբարիշտներուն **երեսէն:**  
Իմ անձիս թշնամիները զիս պաշարեցին.
- 10 Իրենց ճարպով <sup>Դ</sup>ծածկուեցան,  
Իրենց բերանով ամբարտաւանութեամբ խօսեցան:
- 11 Հիմա մեր քայլերը շրջապատելով

---

- <sup>Ը</sup> Եբբ.՝ բարեպաշտդ
- <sup>Ք</sup> Եբբ.՝ գիտցնես
- <sup>Ժ</sup> Եբբ.՝ կշտացում
- <sup>Մ</sup> Եբբ.՝ ճիչիս
- <sup>Ք</sup> Եբբ.՝ դուրս ելլէ
- <sup>Գ</sup> Եբբ.՝ Դէմ կանգնողներէն
- <sup>Դ</sup> Եբբ.՝ փակուեցան

Իրենց աչքերը մեր վրայ սեւեռեցին՝ մեզ <sup>Ե</sup>զգետնելու համար,

12 Առիւծի պէս՝ որ կը տենչայ բզքտել,  
Կորիւնի պէս՝ որ ծածուկ տեղերը <sup>Գ</sup>դարանակալ կ'ըլլայ՝:

13 Կանգնէ՛, ո՛վ Տէր. ընդառաջէ՛ անոր,  
<sup>Է</sup>Նուաստացո՛ւր զայն,

Զու սուրովդ ազատէ՛ իմ անձս ամբարիշտներէն:

14 Ո՛վ Տէր, քու ձեռքովդ փրկէ՛ զիս <sup>Ը</sup>մարդոցմէն,  
Աշխարհի՛ մարդոցմէն՝ որոնց բաժինը այս կեանքին մէջ է.  
Անոնց փորը պահեստներէդ կը լեցնես,  
<sup>Բ</sup>Անոնց որդիներն ալ՝ կը կշտանան,

Եւ իրենցմէ աւելցածը իրենց երախաներուն կը թողուն:

15 Իսկ ես քու երեսդ պիտի տեսնեմ արդարութեամբ.  
Երբ արթնամ՝ քու <sup>Ժ</sup>դէմքէդ պիտի կշտանամ:

ԴԱԻԻԹԻ ՅԱՂԹԱՆԱԿԻ ԵՐԳԸ

Գլխաւոր երաժիշտին՝ Տէրոջ ծառային՝ Դաւիթի սաղմոսը: Ան ուղղեց Տէրոջ այս երգին խօսքերը այն օրը՝ երբ Տէրը ազատեց զինք իր բոլոր թշնամիներուն ձեռքէն, եւ Սաւուղի ձեռքէն: Ան ըսաւ.

18

Ո՛վ Տէր, իմ զօրութի՛ննս, քեզ պիտի սիրեմ:

2 Տէրը իմ ժայռս, բերդս ու փրկիչս է:  
Աստուածս իմ վէմս է, ես անոր կ'ապաստանիմ,  
Ան է իմ վահանս ու փրկութեանս եղջիւրը,  
Եւ իմ միջնաբերդս:

3 Տէրոջ կը գոչեմ՝ որ գովելի է,  
Ու թշնամիներէս կ'ազատիմ:

4 Մահուան լարերը զիս պատեցին,  
<sup>Մ</sup>Անօրէնութեան վտակները զիս զարհուրեցուցին.

5 <sup>Բ</sup>Դժոխքին լարերը զիս շրջապատեցին  
Ու մահուան որոգայթները իմ առջեւս եկան:

6 Իմ տագնապիս մէջ Տէրը կանչեցի

<sup>Ե</sup> Եբբ.՝ գետինը զարնելու

<sup>Գ</sup> Եբբ.՝ կը կենայ

<sup>Է</sup> Եբբ.՝ կքէ՛

<sup>Ը</sup> Եբբ.՝ այր մարդոցմէն

<sup>Բ</sup> Կամ՝ Անոնք որդիներով

<sup>Ժ</sup> Եբբ.՝ կերպարանքէդ

<sup>Մ</sup> Եբբ.՝ Բելիարի

<sup>Բ</sup> Այսինքն՝ Մեռած անձերու կայանին



Եւ Աստուծոյս աղաղակեցի.

Ան իր տաճարէն իմ ծայնս լսեց,

Ու աղաղակս անոր առջեւ՝ անոր ականջներուն հասաւ:

**7** Այն ատեն երկիրը խախտեցաւ եւ շարժեցաւ,  
Լեռներուն հիմերը սարսեցան ու խախտեցան,  
Քանի որ անհկա բորբոքեցաւ:

**8** Անոր քիթէն ծուխ բարձրացաւ,  
Ու բերանէն՝ սպառող կրակ.  
Անկէ կայծեր բռնկեցան:

**9** Անհկա երկինքը հակեցուց եւ իջաւ.  
Անոր ոտքերուն տակ մառախուղ կար:

**10** Զերովբէի վրայ <sup>Գ</sup>ելաւ ու թռաւ,  
Եւ հովին թելերուն վրայ սաւառնեցաւ:

**11** Խաւարը իրեն ծածկոյթ <sup>Դ</sup>ըրաւ.  
<sup>Ե</sup>Կուտակուած ջուրերը, նօսք ամպերն ու թանձր ամպերը  
Իր շուրջը **դրաւ** իբր իրեն տաղաւար:

**12** Անոր առջեւ եղող պայծառութենէն իր թանձր ամպերը անցան  
Կարկուտով ու կրակի կայծերով:

**13** Տէրը երկինքին մէջ որոտաց,  
Եւ Ամենաբարձրը իր ծայնը **լսել** տուաւ՝  
Կարկուտով ու կրակի կայծերով:

**14** Իր նետերը արձակեց եւ զանոնք ցրուեց,  
Շատ փայլակներ դրկեց ու զանոնք խուճապի մատնեց:

**15** Ո՛վ Տէր, քու սաստովդ,  
Քու ռունգերուդ հովին արտաշնչումով՝  
Ջուրերուն հունը երեւցաւ,  
Եւ երկրագունդին հիմերը յայտնուեցան:

**16** Բարձրէն <sup>Գ</sup>հասաւ, զիս բռնեց,  
Ու յորդառատ ջուրերէն զիս հանեց:  
**17** Իմ գօրեղ թշնամիէս եւ զիս ատողներէն ազատեց զիս,  
<sup>Ե</sup>Որոնք ինձմէ հգօր էին:

**18** Չախորդութեանս օրը իմ առջեւս եկան,  
Բայց Տէրը ինձի նեցուկ եղաւ:

**19** Զիս դուրս հանեց՝ ընդարձակ տեղ մը,  
Ու զիս ազատեց՝ որովհետեւ ինձի հաճեցաւ:

**20** Տէրը իմ արդարութեանս համեմատ կը վարձատրէ զիս,  
Չեռքերուս մաքրութեան համեմատ կը հատուցանէ ինձի.

---

<sup>Գ</sup> Եբբ.՝ հեծաւ

<sup>Դ</sup> Եբբ.՝ դրաւ

<sup>Ե</sup> Եբբ.՝ Խաւար

<sup>Գ</sup> Եբբ.՝ ձեռքը երկարեց

<sup>Ե</sup> Կամ՝ Որովհետեւ

- 21 Որովհետև Տէրոջ ճամբաները պահեցի,  
Իմ Աստուծոյս հանդէպ ամբարիշտ չեղայ:
- 22 Արդարեւ անոր բոլոր դատավճիռները իմ առջեւ էին,  
Եւ անոր կանոնները ինձմէ չհեռացուցի.
- 23 Անոր առջեւ պարկեշտ եղայ,  
Եւ անօրէնութենէս զգուշացայ:
- 24 Տէրը ինձի հատուցանեց արդարութեանս համեմատ,  
Ձեռքերուս մաքրութեան համեմատ, որ անոր աչքերուն առջեւ է:
- 25 Կարեկիցից հետ կարեկից կ'ըլլաս,  
Պարկեշտ <sup>Բ</sup>մարդուն հետ պարկեշտ կ'ըլլաս,
- 26 Մաքուրին հետ մաքուր կ'ըլլաս,  
Ու ծուռին հետ կը <sup>Ք</sup>ծռիս.
- 27 Արդարեւ դո՛ւն կ'ազատես տառապեալ ժողովուրդը,  
Եւ գոռոզ աչքերը կը ցածցնես:
- 28 Արդարեւ դո՛ւն կը վառես իմ ճրագս.  
Տէ՛րը՝ իմ Աստուածս կը ճառագայթէ խաւարիս վրայ:
- 29 Բեզմով գունդի մը դէմ կը վազեմ,  
Եւ իմ Աստուծմովս պարիսպից վրայէն կ'ոստնում:
- 30 Աստուծոյ ճամբան անթերի է.  
Տէրոջ խօսքերը փորձարկուած են.  
Ան վահան է բոլոր իրենց ապաւինողներուն:
- 31 Արդարեւ ո՞վ Աստուած է՝ Տէրոջմէն զատ,  
Կամ ո՞վ վէմ է՝ մեր Աստուծմէն զատ:
- 32 Աստուած է որ զիս ոյժով կը գօտելորէ.  
Ա՛ն անթերի կ'ընէ իմ ճամբաս:
- 33 Ոտքերս եղնիկի **ոտքերուն** <sup>Ժ</sup>ճման կ'ընէ՞,  
Ու բարձունքներուս վրայ զիս կը կայնեցնէ:
- 34 Ձեռքերս պայքարի կը վարժեցնէ,  
Եւ <sup>Ի</sup>բազուկներս պղինձէ աղեղ կը լարեն՞:
- 35 Նաեւ քու փրկութեանդ վահանը տուիր ինձի,  
Քու աջ ձեռքդ զիս կազդուրեց,  
Եւ հեզութիւնդ զիս մեծցուց:
- 36 Բայլերս իմ ներքեւս լայնցուցիր,  
Ու **ոտքերուս** կոճերը չտատանեցան:
- 37 Թշնամիներս հալածեցի եւ անոնց հասայ.  
Չվերադարձայ՝ մինչեւ որ զանոնք սպառեցի:
- 38 Զանոնք <sup>Լ</sup>խոցեցի, ու չկրցան կանգնիլ.

---

<sup>Բ</sup> Եբբ.՝ զօրաւոր մարդուն

<sup>Ք</sup> Եբբ.՝ խոտորիս

<sup>Ժ</sup> Եբբ.՝ կը հաւասարեցնէ

<sup>Ի</sup> Կամ՝ բազուկներովս պղինձէ աղեղ մը կը կոտորուի

<sup>Լ</sup> Կամ՝ կոտրեցի

Անոնք ոտքերուս տակ ինկան:

- 39 Պատերազմի համար զիս ոյժով գօտեւորեցիր,  
Իմ վրաս ելլողները տակս ձգեցիր:
- 40 Թշնամիներուս <sup>Խ</sup>կռնակը ինձի դարձնել տուիր<sup>՝</sup>,  
Որպէսզի զիս ասողները բնաջնջեմ:
- 41 Աղաղակեցի՜ն, բայց ազատարար չկար:  
Տէրոջ աղաղակեցի՜ն, բայց անոնց չպատասխանեց:
- 42 Զանոնք ծեծեցի՝ հովին առջեւէն քշուած փոշիի պէս մանր,  
Զանոնք փողոցներուն ցեխին պէս ակեցի:
- 43 Զիս ազատեցիր ժողովուրդին կռիւներէն.  
Զիս <sup>Ծ</sup>հեթանոսներուն գլխաւոր ըրիր:  
Իմ չճանչցած ժողովուրդս ինձի կը հպատակի:
- 44 Ինձի կը հնազանդին՝ երբ իրենց ականջներով լսեն.  
Օտարազգիները <sup>Կ</sup>իմ առջեւ կը քծնին<sup>՝</sup>:
- 45 Օտարազգիները կը կթոտին,  
Ու իրենց ամրափակ տեղերէն դուրս՝ <sup>Կ</sup>ըղան<sup>՝</sup>:
- 46 Տէրը կ'ապրի՝. օրհնեա՛լ ըլլայ իմ Վէմս.  
Թող բարձրանայ իմ փրկութեանս Աստուածը:
- 47 Աստուած է որ իմ վրէժս կ'առնէ,  
Ժողովուրդները ինձի կ'ենթարկէ:
- 48 Թշնամիներէս զիս ազատելով՝  
Նոյնիսկ ինձի դէմ կանգնողներէն ակելի բարձրացուցիր զիս,  
Ու բռնաւոր մարդէն ազատեցիր:
- 49 Ուստի հեթանոսներուն մէջ քեզ պիտի ներբողեմ, ո՛վ Տէր,  
Ես քու անունիդ սաղմոս պիտի երգեմ:
- 50 Ի՛նք է իր թագաւորին <sup>Ը</sup>մեծ փրկութիւններ տուողը<sup>՝</sup>,  
Ու իր օծեալին՝ Դաւիթի եւ անոր զարմին հետ  
Կարեկցութեամբ վարուողը՝ յաւիտենապէս»:

ԱՍՏՈՒԾՈՅ ՓԱՌԸ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ ՄԷՋ  
Գլխաւոր երաժիշտին. Դաւիթի սաղմոսը:

19

Երկինքը Աստուծոյ փառքը կը պատմէ,  
Ու երկինքի հաստատութիւնը անոր ձեռքերուն գործը կը ցուցնէ:  
2 Մէկ օրը միւս օրին կ'արտայայտէ ա՜նոր խօսքը,  
Մէկ գիշերը միւս գիշերին կը պարզէ ա՜նոր գիտութիւնը:

<sup>Խ</sup> Կամ՝ ծոծրակը ինձի տուիր

<sup>Ծ</sup> Կամ՝ ազգերուն

<sup>Կ</sup> Կամ՝ ինձի կը ստեն

<sup>Կ</sup> Կամ՝ գօտիով կը կապուին

<sup>Ը</sup> Երբ՝ փրկութեան աշտարակը

ՄԱՂՄՈՍՆԵՐՈՒ ԳԻՐԸԸ

- 3 Ո՛չ զրոյց կայ, ո՛չ ալ խօսքեր.  
Անոնց ձայնը չի լսուիր:
- 4 Բայց անոնց <sup>ա</sup>հնչիւնը տարածուեցաւ՝ ամբողջ երկիրը,  
Եւ անոնց խօսակցութիւնը՝ մինչեւ երկրագունդին ծայրը:  
Անոնց մէջ **Աստուած** վրան մը <sup>բ</sup>կանգնեցուց արեւին համար,
- 5 Եւ <sup>գ</sup>ան իր առագաստէն ելլող փեսայի պէս է,  
Զօրաւոր մարդու պէս կը բերկրի՝ **իր** ուղին վազելով:
- 6 Երկինքի մէկ ծայրէն կ'ելլէ,  
Ու կը շրջի մինչեւ միւս ծայրը.  
Ոչինչ կը ծածկուի անոր տաքութենէն:

ՏԷՐՈՋ ՕՐԷՆԸԸ

- 7 Տէրոջ Օրէնքը անթերի է, անձը կը վերանորոգէ.  
Տէրոջ վկայութիւնը վստահելի է, միամիտը իմաստուն կ'ընէ:
- 8 Տէրոջ հրամանները ուղիղ են, սիրտը կ'ուրախացնեն.  
Տէրոջ պատուիրանները **վճիտ** են, աչքերուն լոյս կու տան:
- 9 Տէրոջ վախը սուրբ է, յաւերժ կը գոյատեւէ:  
Տէրոջ դատավճիռները ճշմարիտ են, բոլորն ալ արդար են:
- 10 Աւելի ցանկալի են՝ քան ոսկին, ու մեծաքանակ զուտ ոսկին.  
Աւելի քաղցր են՝ քան մեղրը, եւ խորհիսխէ կաթած մեղրը:
- 11 Անոնցմով իսկ կը խրատուի քու ծառադ,  
Ու գանոնք պահելուն <sup>դ</sup>վարձատրութիւնը մեծ է:
- 12 Ո՞վ կրնայ հասկնալ **իր** սխալները.  
Ծածո՛ւկ **մեղքերէն** <sup>ե</sup>մաքրէ զիս.
- 13 Հպարտութեան **մեղքերէն** ալ զերծ պահէ քու ծառադ,  
Անոնք թող չտիրեն ինձի:  
Այն ատեն պարկեշտ կ'ըլլամ,  
Եւ անպարտ՝ մեծ յանցանքէ:
- 14 Բերանիս խօսքերն ու սիրտիս խորհրդածութիւնը  
Հաճելի ըլլան <sup>զ</sup>քեզի,  
Ո՛վ Տէր, իմ վէ՛մս եւ փրկարա՛րս:

ԱՂՕԹԸ՝ ՅԱՂԹԱՆԱԿԻ ՀԱՄԱՐ  
Գլխաւոր երաժիշտին. Դաւիթի սաղմոսը:

<sup>ա</sup> Եբր.՝ լարը դուրս ելաւ

<sup>բ</sup> Եբր.՝ դրաւ

<sup>գ</sup> Այսինքն՝ արեւը

<sup>դ</sup> Եբր.՝ հետեւանքը, կամ՝ պատճառը

<sup>ե</sup> Եբր.՝ անպարտ ըրէ

<sup>զ</sup> Եբր.՝ քու առջեւդ

# 20

- Տէրը թող պատասխանէ քեզի տագնապի օրը ,  
 Յակոբի Աստուծոյն անունը թող պաշտպանէ քեզ .
- 2 Սրբարանէն թող օգնութիւն դրկէ քեզի,  
 Ու Սիոնէն կազդուրէ քեզ :
- 3 Բոլոր ընծաներդ թող յիշէ,  
 Եւ ողջակէզներդ ընդունի : (Սելա :)
- 4 Սիրտիդ համաձայն թող տայ քեզի,  
 Ու բոլոր <sup>ա</sup>ծրագիրներդ <sup>բ</sup>իրագործէ :
- 5 Զու փրկութեամբդ պիտի ցնծանք,  
 Եւ մեր Աստուծոյն անունով դրօշ բարձրացնենք :  
 Տէրը թող իրագործէ բոլոր խնդրանքներդ :
- 6 Հիմա գիտցայ թէ Տէրը կ'ազատէ իր օծեալը,  
 Անոր կը պատասխանէ իր սուրբ երկինքէն՝  
 Իր աջ ձեռքին փրկարար զօրութեամբ :
- 7 Ոմանք կառքերու **կ'ապաւիցից**, ոմանք ալ՝ ձիերու .  
 Բայց մենք Տէրոջ՝ մեր Աստուծոյն անունը պիտի յիշենք :
- 8 Անոնք կը բեցան եւ ինկան,  
 Բայց մենք կանգնեցանք ու շիտակ կայնեցանք :
- 9 <sup>գ</sup>Ո՛վ Տէր, փրկէ՛ թագաւորը .  
 Պատասխանէ՛ մեզի այն օրը՝ երբ գոչենք <sup>ա</sup> :

ՓԱՌԱԲԱՆՈՒԹԻՒՆ՝ ՅԱՂԹԱՆԱԿԻ ՀԱՄԱՐ  
 Գլխաւոր երաժիշտին . Դաւիթի սաղմոսը :

# 21

- Ո՛վ Տէր, քու զօրութեամբդ թագաւորը պիտի ուրախանայ,  
 Ու քու փրկութեամբդ ո՛րչափ շատ պիտի խայտայ :
- 2 Անոր սիրտին փափաքը իրեն տուիր,  
 Եւ անոր շրթունքին խնդրանքը չմերժեցիր : (Սելա :)
- 3 Արդարեւ բարութեան օրհնութիւններով անոր ընդառաջեցիր .  
 Անոր գլուխը զուտ ոսկիէ թագ դրիր :
- 4 Զեզմէ կեանք խնդրեց,  
 Եւ անոր երկար օրեր տուիր՝ <sup>ա</sup>դարէ դար <sup>ա</sup> :
- 5 Անոր փառքը մեծ է քու փրկութեամբդ .  
 Փառաւորութիւն ու վայելչութիւն դրիր անոր վրայ :
- 6 Արդարեւ օրհնութիւնները յաւերժ <sup>բ</sup>հաստատեցիր անոր վրայ,

<sup>ա</sup> Կամ՝ խորհուրդներդ

<sup>բ</sup> Եբր.՝ լրացնէ

<sup>գ</sup> Կամ՝ Ո՛վ Տէր, փրկէ՛ . թագաւորը մեզի թող պատասխանէ այն օրը՝ երբ գոչենք :

<sup>ա</sup> Եբր.՝ յաւիտենականութենէ յաւիտենականութիւն

<sup>բ</sup> Եբր.՝ դրիր

Զու ներկայութեանդ մէջ <sup>4</sup>մեծապէս ուրախացուցիր՝ զայն.

- 7 Զանի թագաւորը Տէրոջ կը վստահի,  
Ամենաբարձրին կարեկցութեամբ պիտի չսասանի:
- 8 Զու ձեռքդ պիտի գտնէ բոլոր թշնամիներդ  
Զու աջ ձեռքդ պիտի գտնէ քեզ ատողները:
- 9 Զանոնք կրակի <sup>7</sup>հնոցի պէս պիտի ընես <sup>6</sup>երբ երեւնաս՝.  
Տէրը իր բարկութեամբ պիտի <sup>9</sup>բնաջնջէ զանոնք,  
Ու կրակը պիտի սպառէ զանոնք:
- 10 Անոնց <sup>5</sup>զաւակները երկրէն պիտի կորսնցնես,  
Եւ անոնց զարմը՝ մարդոց որդիներէն:
- 11 Եթէ քեզի դէմ չարութիւն <sup>8</sup>ծրագրեն  
**Եւ** <sup>9</sup>բնեմգութիւն մտածեն, պիտի չկարենան **կատարել.**
- 12 Արդարեւ դուն անոնց կռակ դարձնել պիտի տաս,  
**Երբ նետերդ** հաստատես լարերուդ վրայ՝ անոնց երեսին դէմ:
- 13 Ո՛վ Տէր, բարձրացի՛ր քու ոյժովդ.  
Պիտի երգենք ու սաղմոս ըսենք քու զօրութեանդ:

ՏԱՌԱՊԱՆՔԻ ՃԻՉ ՄԸ

<sup>9</sup>Գլխաւոր երաժիշտին. <sup>10</sup>Այելէթ-Շահարի վրայ. <sup>11</sup>Դաւիթի սաղմոսը:

22

Իմ Աստուա՛ծս, իմ Աստուա՛ծս, ինչո՞ւ զիս լքեցիր.

Զիս փրկելէն **եւ** <sup>1</sup>բաղադակիս խօսքերէն հեռու **կեցար:**

- 2 Ո՛վ իմ Աստուա՛ծս, ցերեկը **քեզի** կը գոչեմ, սակայն չես պատասխաներ.  
Գիշերն ալ **կը կանչեմ** ու չեմ լռեր:
- 3 Բայց դուն սուրբ ես,  
Ո՛վ Իսրայէլի գովաբանութիւններուն մէջ բնակող:
- 4 Մեր հայրերը քեզի վստահեցան.  
Վստահեցան, եւ ազատեցիր զանոնք:
- 5 Զեզի աղաղակեցին, ու փրկուեցան.

<sup>4</sup> Եբբ.՝ ուրախութեամբ ուրախացուցիր

<sup>7</sup> Եբբ.՝ փուռի

<sup>6</sup> Եբբ.՝ քու երեսիդ ատենը

<sup>9</sup> Եբբ.՝ կլլէ

<sup>5</sup> Եբբ. պտուղը

<sup>8</sup> Եբբ. ծռեն

<sup>9</sup> Եբբ.՝ նեմգ մտադրութիւն

<sup>10</sup> Այսինքն՝ “ Արշալոյսի Եղնիկ  ին

<sup>11</sup> Եբբ.՝ մռնչիւնիս

Քեզի վստահեցան, ու չամչցան.

6 Բայց ես ճճի եմ, ո՛չ թէ մարդ.

Մարդոց մէջ՝ նախատուած, ու ժողովուրդներուն մէջ՝ արհամարհուած:

7 Բոլոր զիս տեսնողները զիս կը ծաղրեն.

Շրթունք կը բանան, գլուխ կը շարժեն՝ **ըսելով.**

8 «Տէրոջ <sup>Գ</sup>դարձաւ, թող <sup>Դ</sup>փրկէ զինք.

Թող ազատէ զինք, որովհետեւ իրեն հաճեցաւ»:

9 Բայց դո՛ւն զիս դուրս քաշեցիր **մօրս**՝ արգանդէն.

Դո՛ւն ինձի վստահութիւն տուիր մօրս ծիծերուն վրայ:

10 «Քեզի՛ յանձնուեցայ՝՝ արգանդէն.

Դո՛ւն ես իմ Աստուածս՝ մօրս որովայնէն:

11 Մի՛ հեռանար ինձմէ, որովհետեւ տագնապը մօտ է.

Արդարեւ ո՛չ մէկը կ'օգնէ:

12 Շատ ցուլեր զիս շրջապատեցին,

Բասանի հզօր **ցուլերը** զիս պաշարեցին:

13 Իրենց երախը ինձի դէմ բացին՝

Բզքտող ու մռնչող առիւծի **պէս:**

14 Ջուրի պէս թափուեցայ,

Եւ բոլոր ոսկորներս քակուեցան.

Սիրտս մեղրամոմի պէս եղաւ,

Ընդերքիս մէջ հալեցաւ:

15 Ոյժս չորցաւ <sup>Է</sup>խեցատի մը պէս,

Ու լեզուս քիմքիս փակաւ.

Ջիս մահուան հողը դրիր:

16 Արդարեւ շուները զիս շրջապատեցին,

Չարագործներուն խումբը զիս պաշարեց,

Չեռքերս եւ ոտքերս ծակեցին.

17 Բոլոր ոսկորներս **կրնամ**<sup>Ը</sup> համրել:

Անոնք զիս կը դիտեն, ինձի կը նային.

18 Իմ հագուստներս իրենց մէջ կը բաժնեն,

Ու պատմուճանցիս վրայ վիճակ կը ձգեն:

19 Բայց դուն, ո՛վ Տէր, մի՛ հեռանար **ինձմէ.**

Ո՛վ իմ գօրութիւնս, արտորա՛ ինձի օգնելու.

20 Ազատէ՛ իմ անձս սուրէն,

Ու <sup>Թ</sup>կեանքս՝ շունին թաթէն:

---

<sup>Գ</sup> Եբբ.՝ գլորեցաւ

<sup>Դ</sup> Եբբ. ազատ արձակէ

<sup>Ե</sup> Եբբ.՝ փորէն

<sup>Զ</sup> Եբբ. Զո՛ւ վրայ նետուեցայ

<sup>Է</sup> Այսինքն՝ թրծուած կաւի կտորի

<sup>Ը</sup> Եբբ.՝ հաշուել

21 Ազատէ՛ զիս առիւծին երախէն,  
ժԳոմէշներուն եղջիւրներէն:

ԳՈՎԱԲԱՆՈՒԹԵԱՆ ԵՐԳ

Ինծի պատասխանցիր:

- 22 Զու անունդ եղբայրներուս պիտի հռչակեմ,  
Համախմբումին մէջ քեզ պիտի գովաբանեմ:
- 23 Ո՛վ Տէրոջմէն վախցողներ, գովաբանեցէ՛ք զայն,  
Ո՛վ Յակոբի ամբողջ զարմը, փառաւորեցէ՛ք զայն,  
Ո՛վ Իսրայէլի ամբողջ զարմը, վախցէ՛ք անկէ.
- 24 Որովհետեւ չարհամարհեց ու ՚չքամահրեց դժբախտին տառապանքը,  
Ու երեսը անկէ չծածկեց,  
Հապա լսեց՝ երբ իրեն աղաղակեց:
- 25 Զեզ պիտի գովաբանեմ մեծ համախմբումին մէջ.  
Իմ ուխտերս պիտի կատարեմ իրմէ վախցողներուն առջեւ:
- 26 Հեզերը պիտի ուտեն ու կշտանան.  
Տէրը փնտռողները զայն պիտի գովաբանեն.  
Չեր սիրտը յաւերժ պիտի ապրի:
- 27 Երկրի բոլոր ծայրերը պիտի յիշեն ու Տէրոջ վերադառնան,  
Ազգերուն բոլոր գերդաստանները քու առջեւդ պիտի երկրպագեն.
- 28 Որովհետեւ Տէրոջն է թագաւորութիւնը,  
Եւ ա՛ն կը տիրէ ազգերուն վրայ:
- 29 Երկրի բոլոր պարարտները պիտի ուտեն ու երկրպագեն.  
Բոլոր հողը իջնողները պիտի ՚ծնրադրեն անոր առջեւ,  
Նաեւ ա՛ն՝ որ չի կրնար իր անձը ողջ պահել:
- 30 ԽՉարմ մը՝ պիտի պաշտէ զայն.  
Տէրոջ մասին պիտի պատմուի յաջորդ սերունդին.
- 31 Պիտի գան եւ անոր արդարութիւնը հռչակեն  
Այն ժողովուրդին՝ որ պիտի ծնի,  
Թէ այս բանը ա՛ն իրագործեց:

ՏԵՐԸ՝ ՄԵՐ ՀՈՎԻԻԸ  
Դաւիթի սաղմոսը:

23

Տէրը իմ հովիւս է.

<sup>բ</sup> Եբբ.՝ մէկ հատիկս

<sup>գ</sup> Կամ՝ Միեղջերուներուն

<sup>հ</sup> Եբբ.՝ պիղծ չսեպեց

<sup>ւ</sup> Եբբ. ծռին

<sup>խ</sup> Կամ՝ իմ զարմս



Ես ո՛չ մէկ բանի կարօտ պիտի ըլլամ:

- 2 Զիս դալար մարգագետիններու մէջ կը պառկեցնէ,  
Հանդարտ ջուրերու քով կը տանի:
- 3 Անձս կը վերանորոգէ.  
Զիս կ'առաջնորդէ արդարութեան արահետներուն մէջ՝ իր անունին համար:
- 4 Նոյնիսկ եթէ մահուան շուքի ձորէն քալեմ,  
Ո՛չ մէկ չարիքէ պիտի վախնամ.  
Որովհետեւ դուն ինծի հետ ես,  
Զու գաւազանդ ու ցուպդ են որ զիս կը հանդարտեցնեն:
- 5 Սեղան կը պատրաստես իմ առջես՝ իմ հակառակորդներուս դիմաց.  
Իմ գլուխս իւղով կ'օծես,  
Իմ բաժակս լեփ-լեցուն է:
- 6 Անտարակոյս բարօրութիւնն ու կարեկցութիւնը՝ «ինծի պիտի հետեւին»  
Կեանքիս բոլոր օրերուն մէջ,  
Եւ քննիչս Տէրոջ տունը պիտի բնակիմ:

ՄԵԾ ԹԱԳԱԻՈՐԸ

Դաւիթի սաղմոսը:

24

Տէրոջն է երկիրը եւ «անոր լիութիւնը»,  
Երկրագունդն ու անոր բնակիչները.

- 2 Որովհետեւ ի՛նք զայն ծովերուն վրայ հիմնեց,  
Եւ գետերուն վրայ հաստատեց:
- 3 Ո՞վ պիտի բարձրանայ Տէրոջ լեռը,  
Կամ ո՞վ պիտի կանգնի անոր սուրբ տեղը.—
- 4 Ձեռքերով անմեղն ու սիրտով վճիտը,  
Որ քունայնութեան անձնատուր չ'ըլլար»,  
Եւ խաբէութեամբ երդում չ'ըներ.
- 5 Ան Տէրոջմէն օրհնութիւն պիտի ստանայ,  
Ու իր փրկութեան Աստուծմէն՝ արդարութիւն:
- 6 Ա՛յս է սերունդը զայն փնտռողներուն,  
Զու երեսդ խնդրողներուն, «Ո՛վ Յակոբ»: (Սելա:)
- 7 Ո՛վ դռներ, բարձրացուցէ՛ք ձեր գլուխը.  
Բարձրացէ՛ք, ո՛վ յաւիտենական դռներ,  
Որպէսզի Փառքի թագաւորը մտնէ:
- 8 Ո՞վ է այս Փառքի թագաւորը.—

<sup>ւ</sup> Եբր.՝ զիս պիտի հետապնդեն

<sup>բ</sup> Եբր.՝ բոլոր օրերը

<sup>ւ</sup> Կամ՝ զայն լեցնողները

<sup>բ</sup> Եբր.՝ անձը ունայնութեան չի բարձրացներ

<sup>գ</sup> Կամ՝ Յակոբն է

Պարոզ եւ զօրաւոր Տէրը,  
Պատերազմի մէջ զօրաւոր Տէրը:

9 Ո՛վ դռներ, բարձրացուցէ՛ք ձեր գլուխը.  
Բարձրացէ՛ք, ո՛վ յաւիտենական դռներ,  
Որպէսզի Փառքի թագաւորը մտնէ:

10 Ո՞վ է այս Փառքի թագաւորը.—  
Զօրքերուն Տէրը,  
Ի՛նքն է Փառքի թագաւորը: (Սելա:)

ԱՐՕԹԸ՝ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ  
Դաւիթի սաղմոսը:

25

Ո՛վ Տէր, իմ անձս քեզի բարձրացուցի.

2 Ո՛վ իմ Աստուածս, քեզի վստահեցայ. թող չամչնամ,  
Ու թշնամիներս ինձմով չհրճուիմ:

3 Զեզի յուսացողներէն ո՛չ մէկը թող ամչնայ.  
՝Առանց պատճառի՝՝ անհաւատարիմ եղողները թող ամչնան:

4 Ո՛վ Տէր, <sup>բ</sup>ցուցո՛ւր ինձի քու ճամբաներդ,  
Սորվեցո՛ւր ինձի քու ուղիներդ:

5 <sup>գ</sup>Առաջնորդէ՛ զիս քու ճշմարտութեանդ մէջ, ու սորվեցո՛ւր ինձի.  
Արդարեւ դո՛ւն ես իմ փրկութեանս Աստուածը,  
Զեզի՛ կը սպասեմ ամէն օր:

6 Ո՛վ Տէր, յիշէ՛ քու գթութիւններդ եւ կարեկցութիւններդ,  
Որովհետեւ յաւիտենական են:

7 Մի՛ յիշեր մանկութեան մեղքերս ու յանցանքներս,  
**Հապա** զի՛ս յիշէ քու կարեկցութեամբդ՝  
Քու բարութեանդ պատճառով, ո՛վ Տէր:

8 Տէրը բարի եւ ուղիղ է.  
Հետեւաբար մեղաւորներուն կը սորվեցնէ ճամբան:

9 Իրաւունքի մէջ ընթանալ պիտի տայ հեզերուն.  
Իր ճամբան պիտի սորվեցնէ հեզերուն:

10 Տէրոջ բոլոր ուղիները կարեկցութիւն եւ ճշմարտութիւն են՝  
Իր ուխտն ու վկայութիւնները պահողներուն:

11 Ո՛վ Տէր, քու անունիդ համար  
Ներէ՛ իմ անօրէնութիւնս, Պորովհետեւ մեծ է:

12 Ո՞վ է այն մարդը՝ որ Տէրոջմէն կը վախնայ.

<sup>դ</sup> Եբբ.՝ Հուժկու

<sup>ա</sup> Եբբ.՝ Պարապ տեղը

<sup>բ</sup> Եբբ.՝ գիտցո՛ւր

<sup>գ</sup> Եբբ.՝ Զալեցո՛ւր

<sup>դ</sup> Կամ՝ թէեւ

Ահա՛ անո՛ր պիտի սորվեցնէ իր ընտրած ճամբան:

- 13 Անոր անձը բարօրութեան մէջ պիտի բնակի,  
եւ անոր զարմը երկրին պիտի տիրանայ:
- 14 Տէրոջ մտերմութիւնը իրմէ վախճողներուն հետ է.  
Իր ուխտը անոնց կը <sup>Ե</sup>սորվեցնէ:
- 15 Աչքերս շարունակ Տէրոջ կը նայիմ,  
Որովհետեւ ի՛նք ոտքերս ցանցէն պիտի հանէ:
- 16 Ինծի՛ դարձիր ու ողորմէ՛ ինծի,  
Քանի որ մինակ եւ դժբախտ եմ:
- 17 Սիրտիս տագնապները շատցան.  
Դո՛ւրս հանէ զիս տուայտանքներէս:
- 18 Նայէ՛ տառապանքիս ու տաժանքիս,  
եւ ներէ՛ բոլոր մեղքերս:
- 19 Տե՛ս իմ թշնամիներս, որովհետեւ շատցան,  
Ու բուռն ատելութեամբ զիս ատեցին:
- 20 Պահպանէ՛ իմ անձս եւ ազատէ՛ զիս.  
Թող չամչնամ, քանի քեզի ապաւինեցայ:
- 21 Պարկեշտութիւնը եւ ուղղամտութիւնը թող պաշտպանեն զիս,  
Որովհետեւ քեզի յուսացի:
- 22 Ո՛վ Աստուած, փրկէ՛ Իսրայէլը  
Իր բոլոր տագնապներէն:

ԲԱՐԻ ՄԱՐԴՈՒ ՄԸ ԱՂՕԹԸԸ

Դաւիթի սաղմոսը:

26

Ո՛վ Տէր, դա՛տս պաշտպանէ,  
Որովհետեւ պարկեշտութեամբս ընթացայ.  
Տէրոջ վստահեցայ, պիտի չտատանիմ:

- 2 Ո՛վ Տէր, փորձէ՛ զիս, քննէ՛ զիս,  
Զտէ՛ <sup>Մ</sup>երիկամունքս եւ սիրտս.
- 3 Քանի որ քու կարեկցութիւնդ աչքերուս առջեւ է,  
Ու քու ճշմարտութեանդ մէջ ընթացայ:
- 4 Ունայն <sup>Բ</sup>մարդոց հետ չնստայ,  
եւ <sup>Գ</sup>կեղծաւորներուն <sup>Դ</sup>հետ պիտի չերթամ՝.
- 5 Չարագործներուն համախմբումը ատեցի,  
եւ ամբարիշտներուն հետ պիտի չնստիմ:

<sup>Ե</sup> Եբբ.՝ գիտցնէ

<sup>Մ</sup> Այսինքն՝ խիղճս

<sup>Բ</sup> Եբբ.՝ այր մարդոց

<sup>Գ</sup> Եբբ.՝ թաքնուողներուն

<sup>Դ</sup> Կամ՝ քով պիտի չմտնեմ

- 6 Ձեռքերս անմեղութեամբ պիտի լուամ,  
Ու քու զոհասեղանիդ շուրջ պիտի երթամ, ո՛վ Տէր,
- 7 Որպէսզի շնորհակալութեան ձայնը լսել տամ  
Ու քու բոլոր սքանչելիքներդ պատմեմ:
- 8 Ո՛վ Տէր, սիրեցի քու տանդ՝ բնակութիւնը,  
Զու փառքիդ բնակած տեղը:
- 9 Մի՛ կորսնցներ իմ անձս մեղաւորներուն հետ,  
Եւ իմ կեանքս՝ արիւնահեղ մարդոց հետ,
- 10 Որոնց ձեռքերուն մէջ լրբութիւն կայ,  
Ու անոնց աջ ձեռքը կաշառքով լեցուն է:
- 11 Բայց ես պարկեշտութեամբս պիտի ընթանամ.  
Փրկէ՛ զիս եւ ողորմէ՛ ինձի:
- 12 Իմ ոտքս՝ ուղղամտութեան մէջ կը կենայ.  
Համախմբումներուն մէջ Տէրը պիտի օրհնաբանեմ:

ՓԱՌԱԲԱՆՈՒԹԵԱՆ ԱՂՕԹԸ

Դաւիթի սաղմոսը:

27

- Տէրը իմ լոյսս ու փրկութիւնս է,  
Ես որմէ՞ պիտի վախնամ.  
Տէրը իմ կեանքիս՝ զօրութիւնն է,  
Ես որմէ՞ պիտի դողամ:
- 2 Երբ չարագործներ իմ մարմինս ուտելու համար ինձի մօտեցան,  
Իմ հակառակորդներս ու թշնամիներս գայթեցան եւ ինկան:
- 3 Եթէ ինձի դէմ բանակ մը՝<sup>բ</sup> հաւաքուի,  
Սիրտս պիտի չվախնայ.  
Եթէ ինձի դէմ պատերազմ՝<sup>գ</sup> մղուի,  
<sup>դ</sup> Դա՛րձեալ վստահութիւն պիտի ունենամ:
- 4 Մէկ բան կը խնդրեմ Տէրոջմէն  
Ու սա՛ կը՝<sup>ե</sup> փափաքիմ,  
Որ կեանքիս բոլոր օրերը  
Տէրոջ տան մէջ բնակիմ՝  
Տէրոջ՝<sup>զ</sup> գեղեցկութիւնը տեսնելու,

<sup>ե</sup> Եբր.՝ բնակավայրը

<sup>գ</sup> Կամ՝ լեռնադաշտին

<sup>ա</sup> Եբր.՝ ամրոցն

<sup>բ</sup> Եբր.՝ բանակի

<sup>զ</sup> Եբր.՝ կանգնի

<sup>դ</sup> Եբր.՝ Անո՛վ ալ

<sup>ե</sup> Եբր.՝ փնտռեմ

Եւ անոր տաճարին մէջ **իրեց** <sup>է</sup>հարցնելու համար:

- 5** Արդարեւ ծախորդութեան ժամանակ՝  
իր <sup>բ</sup>բնակարանին մէջ զիս պիտի պահէ,  
իր վրանին ծածկոյթով զիս պիտի ծածկէ,  
Վէմի վրայ պիտի բարձրացնէ զիս:
- 6** Եւ հիմա իմ գլուխս պիտի բարձրանայ՝  
իմ շուրջս եղող թշնամիներէս վեր:  
Անոր վրանին մէջ **ուրախութեան** գոչիւնով զոհեր պիտի մատուցանեմ,  
Պիտի երգեմ ու սաղմոս ըսեմ Տէրոջ:
- 7** Ո՛վ Տէր, լսէ՛ ձայնս՝ **երբ** գոչեմ,  
Ողորմէ՛ եւ պատասխանէ՛ ինձի:
- 8** **Երբ ըսիր**. «Երե՛սս փնտռեցէք»,  
իմ սիրտս քեզի ըսաւ. «Զու երեսդ պիտի փնտռեմ, ո՛վ Տէր»:
- 9** Երեսդ ինձմէ մի՛ ծածկեր,  
Բարկութեամբ ծառայ մի՛ <sup>բ</sup>հեռացներ.  
Ինձի օգնական եղար, զիս **երեսէ** մի՛ ձգեր.  
Զիս մի՛ լքեր, ո՛վ իմ փրկութեանս Աստուածը:
- 10** Թէեւ հայրս ու մայրս զիս լքեն,  
Տէրը զիս պիտի <sup>զ</sup>ընդունի:
- 11** Ո՛վ Տէր, սորվեցո՛ւր ինձի քու ճամբադ  
Եւ առաջնորդէ՛ զիս լեռնադաշտի ուղիին մէջ՝ <sup>հ</sup>նսոխներուս պատճառով:
- 12** Զիս մի՛ մատներ հակառակորդներուս <sup>լ</sup>կամքին,  
Որովհետեւ ինձի դէմ <sup>ս</sup>սուտ վկաներ  
Եւ բռնութիւն փչողներ կանգնեցան:
- 13** **Վստահ եմ թէ** Տէրոջ բարութիւնը պիտի տեսնեմ  
Ապրողներու երկրին մէջ:
- 14** Տէրոջ սպասէ.  
Ուժովցի՛ր ու քաջասի՛րտ եղիր.  
Դա՛րձեալ Տէրոջ սպասէ:

ԱՂՕԹԸ՝ ՕԳՆՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Դաւիթի սաղմոսը:

---

<sup>ա</sup> **Երբ**.՝ ախորժութիւնը

<sup>է</sup> **Երբ**.՝ փնտռելու

<sup>բ</sup> **Երբ**.՝ տաղաւարին

<sup>բ</sup> **Երբ**.՝ շեղեցներ

<sup>զ</sup> **Երբ**.՝ հաւաքէ

<sup>հ</sup> **Երբ**.՝ դիտողներուս

<sup>լ</sup> **Երբ**.՝ անձին

<sup>ս</sup> **Կամ**՝ կեղծ

# 28

Ո՛վ Տէր, քեզի՛ կը գոչեմ.  
Ո՛վ իմ Վէմս, մի՛ լռեր ինձի հանդէպ,  
Որպէսզի «լռութեանդ պատճառով»  
ԲԳերեզմանը իջնողներուն չնմանիմ:

- 2 Լսէ՛ իմ աղաչանքիս ծայնը՝  
Երբ քեզի կ'աղաղակեմ,  
Երբ ձեռքերս կը բարձրացնեմ  
Դէպի սուրբ Գոթիորդ:
- 3 Զիս մի՛ լկորսնցներ ամբարիշտներուն հետ,  
Նաեւ անօրէնութիւն գործողներուն հետ,  
Որոնք իրենց ընկերներուն հետ խաղաղութեան մասին կը խօսին,  
Բայց իրենց սիրտին մէջ չարութիւն կայ:
- 4 Հատուցանէ՛ անոնց՝ իրենց արարքներուն համեմատ,  
Եւ իրենց ըրած չարիքներուն համեմատ.  
Հատուցանէ՛ անոնց՝ իրենց ձեռքերու գործերուն համեմատ.  
«Վարձատրէ՛ զանոնք»:
- 5 Բանի անոնք Տէրոջ ըրածները  
Ու անոր ձեռքերուն գործերը չեն նկատեր,  
Ան պիտի քանդէ զանոնք, եւ ա՛յլ պիտի չկառուցանէ:
- 6 Օրհնեա՛լ ըլլայ Տէրը,  
Որ լսեց իմ աղաչանքիս ծայնը:
- 7 Տէրը զօրութիւնս եւ վահանս է.  
Իմ սիրտս անոր վստահեցաւ, ու ես օգնութիւն ստացայ:  
Ուստի սիրտս հրճուեցաւ,  
Եւ իմ երգովս զինք պիտի ներբողեմ:
- 8 Տէրը անոնց զօրութիւնն է,  
Իր օծեալին ազատութեան ամրոցն է:
- 9 Փրկէ՛ քու ժողովուրդդ,  
Եւ օրհնէ՛ քու ժառանգութիւնդ.  
Նաեւ հովուէ՛ զանոնք, ու յաւիտեա՛ն բարձրացուր:

ՏԵՐՈՋ ՉԱՅՆԸ ՓՈԹՈՐԻԿԻՆ ՄԷՋ  
Դաւիթի սաղմոսը:

# 29

Տէրո՛ջ տուէք, ո՛վ «հզօրներու որդիներ,

- 
- <sup>ա</sup> Եբր.՝ ինձի հանդէպ քու լռելովդ
  - <sup>բ</sup> Եբր.՝ Գուբը
  - <sup>գ</sup> Այսինքն՝ սրբավայրդ
  - <sup>դ</sup> Եբր.՝ քաջեր
  - <sup>ե</sup> Եբր.՝ Հատուցանէ՛ անոնց վարձատրութիւնը

- Տէրո՛ջ տուէք փառք ու զօրութիւն:
- 2 Տէրո՛ջ տուէք իր անունին փառքը,  
Տէրո՛ջ երկրպագեցէք <sup>բ</sup>սուրբ զարդարանքով՝:
- 3 Տէրոջ ձայնը ջուրերուն վրայ է.  
Փառքի Աստուածը կ'որոտայ:  
Տէրը յորդառատ ջուրերու վրայ է.
- 4 Տէրոջ ձայնը ուժեղ է,  
Տէրոջ ձայնը փառաւոր է:
- 5 Տէրոջ ձայնը մայրիները կը կոտորէ,  
Ու Տէրը կը կոտորտէ Լիբանանի մայրիները.
- 6 Զանոնք կը ցատկուտեցնէ հորթի պէս,  
Լիբանանը եւ Սարիոնը՝ <sup>գ</sup>գոմէշի ձագի պէս:
- 7 Տէրոջ ձայնը կրակի բոցեր կը <sup>դ</sup>ժայթքեցնէ:
- 8 Տէրոջ ձայնը կը սարսափեցնէ անապատը.  
Տէրը Կադէսի անապատը կը սարսափեցնէ:
- 9 Տէրոջ ձայնը եղնիկներուն <sup>ե</sup>ծնանիլ կու տայ,  
Եւ անտառները կը մերկացնէ.  
Անոր տաճարին մէջ բոլորն ալ **անոր** փառքը կը պատմեն:
- 10 Տէրը ջրհեղեղին վրայ կը գահակալէ.  
Տէրը յաւիտեան կը գահակալէ իբր թագաւոր:
- 11 Տէրը իր ժողովուրդին զօրութիւն պիտի տայ,  
Տէրը իր ժողովուրդը խաղաղութեամբ պիտի օրհնէ:

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԱՂՕԹԸ

Դաւիթի սաղմոսը. տան նաւակատիքին երգը:

30

- Ո՛վ Տէր, կը բարձրացնեմ քեզ, որովհետեւ զիս ազատեցիր,  
Ու թշնամիներս ինձմով չուրախացուցիր:
- 2 Ո՛վ Տէր, իմ Աստուածս, քեզի աղաղակեցի,  
Եւ զիս բուժեցիր:
- 3 Ո՛վ Տէր, իմ անձս <sup>ա</sup>դժոխքէն բարձրացուցիր,  
Գուրը իջնողներուն մէջէն զիս ողջ պահեցիր:
- 4 Սաղմո՛ս երգեցէք Տէրոջ, ո՛վ անոր բարեպաշտները,  
Ու շնորհակալ՝ եղէք՝ անոր սրբութիւնը յիշելով:
- 5 Արդարեւ իր բարկութիւնը մէկ վայրկեան **կը տեսէ,**

<sup>ա</sup> Կամ՝ Աստուծոյ

<sup>բ</sup> Կամ՝ սրբութեան վայելչութեամբ

<sup>գ</sup> Կամ՝ միեղջերուի

<sup>դ</sup> Եբր.՝ տաշէ

<sup>ե</sup> Եբր.՝ երկնել

<sup>ա</sup> Այսինքն՝ մեռած անձերու կայանէն

**Իսկ** իր բարեհաճութեան մէջ ենք **մեր ամբողջ** կեանքի **ընթացքին**.

Իրիկունը **Քլաց կայ**՝,

Բայց առտուն՝ **ցնծութիւն**:

**6** Իմ անդորրութեանս մէջ ըսի.

«Երբեք պիտի չսասանիմ»:

**7** Ո՛վ Տէր, քու բարեհաճութեամբդ իմ լեռս կայունացուցիր եւ զօրացուցիր:

**Բայց** երեսդ ծածկեցիր, **ու** ես շփոթեցայ:

**8** Ո՛վ Տէր, քեզի՛ կը գոչեմ,

Տէրո՛ջ կ'աղաչեմ:

**9** Իմ արիւնէս ի՞նչ շահ կ'ըլլայ՝

Եթէ ես <sup>Գ</sup>գերեզմանը իջնեմ:

Միթէ հողը քեզ պիտի ներբողէ՞,

**Կամ** քու ճշմարտութիւնդ պիտի հռչակէ՞:

**10** Լսէ՛, ո՛վ Տէր, ու ողորմէ՛ ինձի.

Օգնէ՛ ինձի, ո՛վ Տէր:

**11** Իմ կոծս պարի փոխեցիր.

Քուրծս ինձմէ հանեցիր

Եւ զիս ուրախութեամբ գօտելորեցիր,

**12** Որպէսզի <sup>Դ</sup>փառքս սաղմոս երգէ քեզի եւ ա՛լ չլռէ:

Ո՛վ Տէր, իմ Աստուա՛ծս, քեզ յաւիտեան պիտի ներբողեմ:

**ՎՍՏԱՀՈՒԹԵԱՆ ԱՂՕԹԸ՝ ԱՍՏՈՒԾՈՅ ՎՐԱՅ**

**Գլխաւոր երաժիշտին. Դաւիթի սաղմոսը:**

**31**

Ո՛վ Տէր, քեզի ապաւինեցայ,

Երբեք պիտի չամչնամ.

Ազատէ՛ զիս քու արդարութեամբդ:

**2** Դարձո՛ւր ականջդ ինձի,

Ծուտո՛վ ազատէ զիս:

Ամրո՛ց **եւ** վէ՛մ եղիր ինձի,

Բերդ ու տուն՝ զիս ապրեցնելու համար,

**3** Որովհետեւ դո՛ւն ես իմ ժայռս եւ բերդս.

Առաջնորդէ՛ ու կառավարէ՛ զիս՝ քու անունիդ համար:

**4** Հանէ՛ զիս ցանցէն՝ որ ինձի համար թաղած են,

Քանի դո՛ւն ես իմ <sup>Մ</sup>զօրութիւնս:

**5** Զու ձեռքդ կը յանձնեմ իմ հոգիս.

Դո՛ւն փրկեցիր զիս, ո՛վ Եհովա, ճշմարտութեա՛ն Աստուած:

**6** Սնոտի <sup>Բ</sup>ունայնութիւններ դիտողները ատեցի,

<sup>բ</sup> Երբ.՝ լացը կը գիշերէ մեզի հետ

<sup>գ</sup> Երբ.՝ ապականութիւնը

<sup>դ</sup> Այսինքն՝ անձս, կամ՝ լեզուս

<sup>ե</sup> Երբ.՝ ամրոցս



Իսկ ես Տէրոջ վստահեցայ:

- 7** Զու կարեկցութեամբդ պիտի խայտամ եւ ուրախանամ,  
Որովհետեւ իմ տառապանքս տեսար,  
Եւ անձիս տագնապները գիտցար:
- 8** Զիս թշնամիին ձեռքը չմատնեցիր,  
**Հապա** ոտքերս ընդարձակ տեղ մը կայնեցուցիր:
- 9** Ո՛վ Տէր, ողորմէ՛ ինձի, որովհետեւ տագնապի մէջ եմ.  
Աչքս, անձս ու փորս վիշտէն ծիրեցան:
- 10** Արդարեւ կեանքս տրտմութենէն սպառեցաւ,  
Եւ տարիներս՝ հառաչանքէն.  
Ոյժս անօրէնութենէս <sup>բ</sup>պակսեցաւ,  
Ոսկորներս ալ ծիրեցան:
- 11** Բոլոր հակառակորդներուս, մանաւանդ դրացիներուս առջեւ նախատուեցայ,  
Ու ճանչուորներուս երկիւղ եղայ.  
Զիս դուրսը տեսնողները ինձմէ կը փախչէին:
- 12** Մեռեալի պէս սիրտէ մոռցուեցայ,  
<sup>դ</sup>Փճացած անօթի նմանեցայ:
- 13** Արդարեւ շատերու չարախօսութիւնը լսեցի.  
Ամէն կողմ երկիւղ կար:  
Երբ անոնք միասին խորհրդակցեցան ինձի դէմ,  
Կը խորհէին <sup>է</sup>հոգիս առնել:
- 14** Բայց ես քեզի՛ վստահեցայ, ո՛վ Տէր:  
Ես ըսի. «Դո՛ւն ես իմ Աստուածս».
- 15** Իմ ժամանակներս քու ձեռքդ եմ.  
Ազատէ՛ զիս թշնամիներուս ձեռքէն ու զիս հալածողներէն:
- 16** Երե՛նդ <sup>բ</sup>պայծառացուր քու ծառայիդ վրայ,  
Փրկէ՛ զիս քու կարեկցութեամբդ:
- 17** Ո՛վ Տէր, թող չամչնամ,  
Որովհետեւ քեզի՛ գոչեցի.  
Ամբարիշտները թող ամչնան,  
Թող լուռ կեցան <sup>է</sup>դժխբին մէջ:
- 18** Թող պապանձին ստախօս շրթունքները,  
Որոնք յոխորտանքով եւ արհամարհանքով  
Անպատկառութիւն կը խօսին արդարին դէմ:
- 19** Ո՛րչափ մեծ է քու բարութիւնդ՝

---

<sup>բ</sup> Այսինքն՝ կուռքեր

<sup>գ</sup> Եբբ.՝ գայթեցաւ

<sup>դ</sup> Կամ՝ Կորսուած

<sup>է</sup> Եբբ.՝ շունչս

<sup>զ</sup> Եբբ.՝ լուսաւորէ

<sup>է</sup> Այսինքն՝ մեռած անձերու կայանին

Որ քեզմէ վախցողներուն վերապահեցիր,  
Ու քեզի ապաւինողներուն համար իրագործեցիր՝  
Մարդոց որդիներուն առջեւ:

20 Զանոնք քու երեսիդ ծածկոյթով պիտի ծածկես  
Մարդոց սադրանքներէն.

Տաղաւարի մէջ պիտի ծածկես զանոնք  
Լեզուներու վէճերէն:

21 Օրհնեա՛լ ըլլայ Տէրը,

Որովհետեւ իր սքանչելի կարեկցութիւնը **ցոյց տուաւ** ինծի  
՝Ամրացած քաղաքի մէջ:

22 Իրարանցումիս մէջ ըսի.

«Ես քու աչքերուդ առջեւէն <sup>բ</sup>վտարուեցայ»:

Սակայն դուն աղաչանքիս ձայնը լսեցիր՝  
Երբ քեզի աղաղակեցի:

23 Տէրը սիրեցէք, ո՛վ անոր բոլոր բարեպաշտները.

**Արդարեւ** Տէրը հաւատարիմները կը պաշտպանէ,  
Իսկ յոխորտանքով վարողներուն գերազանցօրէն կը հատուցանէ:

24 Ուժովցէ՛ք ու քաջասի՛րտ եղէք,

Դուք բոլորդ՝ որ Տէրոջ կը յուսաք:

ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՆԵՐՈՒՄ  
Դաւիթի <sup>ա</sup>երգը:

32

Երանի՛ անոր՝ որուն յանցանքը ներուեցաւ,  
Եւ անոր մեղքը ծածկուեցաւ:

2 Երանի՛ այն մարդուն՝ որուն Բանօրէնութիւն չի սեպեր՝ Տէրը,  
Եւ անոր հոգիին մէջ խաբէութիւն չկայ:

3 Երբ <sup>գ</sup>լուռ կեցայ, ոսկորներս մաշեցան  
Ամբողջ օրը <sup>դ</sup>աղաղակելէս,

4 Որովհետեւ ցերեկ ու գիշեր քու ձեռքդ իմ վրաս ծանրացաւ.  
Իմ <sup>ե</sup>թարմութիւնս ամառուան չորութեան վերածուեցաւ: (Սելա:)

5 Ուստի մեղքս քեզի գիտցուցի,  
Եւ անօրէնութիւնս չծածկեցի:

---

<sup>բ</sup> Եբբ.՝ Պատնէշով

<sup>բ</sup> Եբբ.՝ կտրուեցայ

<sup>ա</sup> Կամ՝ իմաստութեան սաղմոսը

<sup>բ</sup> Կամ՝ անօրէնութեան վրայ չի մտածեր

<sup>գ</sup> Այսինքն՝ մեղքերս չխոստովանեցայ

<sup>դ</sup> Եբբ.՝ մռնչելէս

<sup>ե</sup> Եբբ.՝ աւիշս

Ես ըսի. «Տէրո՛ջ պիտի խոստովանիմ յանցանքներս»:

Դուն ալ ներեցիր իմ մեղքիս անօրէնութիւնը: (Սելա:)

- 6 Ասոր համար ամէն բարեպաշտ պիտի աղօթէ քեզի՝  
Զեզ գտնելու ժամանակը:  
Իսկապէս շատ ջուրերու յորդած ատենը՝  
Անոնք պիտի չմօտենան անոր:
- 7 Դո՛ւն ես իմ <sup>գ</sup>պատսպարանս.  
Պիտի պաշտպանես զիս տագնապէն,  
Պիտի շրջապատես զիս ազատութեան երգերով: (Սելա:)
- 8 <sup>Է</sup>Զեզի պիտի սորվեցնեմ՝, ու քեզի պիտի ցուցնեմ երթալիք ճամբադ.  
Զեզ պիտի խրատեմ, իմ աչքս քու վրայ պիտի ըլլայ:
- 9 Ձիու պէս ու ջորիի պէս մի՛ ըլլաք, որոնք խելք չունին.  
Իրենց բերանը սանձով ու պախուրցով կապուելու է, որպէսզի քեզի չմօտենան:
- 10 Ամբարիշտին կոտտանքը շատ պիտի ըլլայ,  
Սակայն կարեկցութիւնը պիտի շրջապատէ Տէրոջ վստահողը:
- 11 Ո՛վ արդարներ, ուրախացէ՛ք Տէրոջմով, ու խայտացէ՛ք,  
Յնծացէ՛ք դուք բոլորդ՝ որ սիրտով ուղիղ էք:

ՓԱՌԱԲԱՆՈՒԹԵԱՆ ԵՐԳ

33

Յնծացէ՛ք Տէրոջմով, ո՛վ արդարներ.

Գովաբանութի՛ւն կը պատշաճի ուղիղներուն:

- 2 Ներբողեցէ՛ք Տէրը քնարով.  
Սաղմո՛ս երգեցէք անոր՝ տասը լար ունեցող տաւիղով:
- 3 Նո՛ր երգ մը երգեցէք անոր,  
Ճարտարութեամբ նուագեցէք՝ **ցնծութեան** գոչիւնով.
- 4 Որովհետեւ Տէրոջ խօսքը ուղիղ է,  
Եւ անոր բոլոր գործերը ճշմարտութեամբ են:
- 5 Ան կը սիրէ արդարութիւնն ու իրաւունքը.  
Երկիրը լեցուն է Տէրոջ կարեկցութեամբ:
- 6 Տէրո՛ջ խօսքով <sup>ս</sup>ստեղծուեցաւ երկինքը,  
Եւ իր բերանին շունչով՝ անոր ամբողջ գօրքը:
- 7 Ծովուն ջուրերը <sup>բ</sup>կարկառի մը պէս՝ կը դիզէ,  
Անդունդները շտեմարաններու մէջ կը դնէ:
- 8 Ամբողջ երկիրը թող վախճայ Տէրոջմէն,  
Երկրագունդին բոլոր բնակիչները թող դողան իրմէ.
- 9 Որովհետեւ ի՛նք ըսաւ, ու եղաւ.  
Ի՛նք պատուիրեց, ու <sup>գ</sup>գոյացաւ:

<sup>գ</sup> Եբբ.՝ ծածկոյթս

<sup>Է</sup> Եբբ.՝ Զեզ ուշիմ պիտի ընեմ

<sup>ս</sup> Եբբ.՝ շինուեցաւ

<sup>բ</sup> Կամ՝ որպէս թէ տիկի մը մէջ

- 10 Տէրը կը ձախողեցնէ հեթանոսներուն խորհուրդները,  
Կը փճացնէ ժողովուրդներուն դիտաւորութիւնները-
- 11 Տէրոջ <sup>Դ</sup>ծրագիրը յաւիտեան կը մնայ,  
Եւ անոր սիրտին մտածումները՝ <sup>Ե</sup>սերունդէ սերունդ՝<sup>Դ</sup>:
- 12 Երանի՛ այն ազգին՝ որուն Աստուածը Տէ՛րն է,  
Այն ժողովուրդին՝ որ իրեն համար ընտրեց իբր ժառանգութիւն:
- 13 Տէրը երկինքէն կը նայի,  
Բոլոր մարդոց որդիները կը տեսնէ-
- 14 Իր բնակութեան տեղէն  
Երկրի բոլոր բնակիչները կը դիտէ:
- 15 Անոնց սիրտերը հաւասարապէս ի՛նք ձեւակերպեց-  
Անոնց բոլոր արարքները կը նկատէ:
- 16 Թագաւոր մը զօրագունդերու շատութեամբ չի փրկուիր,  
Ո՛չ ալ զօրաւոր մարդ մը մեծ ոյժով կ'ազատի:
- 17 Ձիւն փրկութեան համար ընդունայն է-  
Իր մեծ ոյժով չի կրնար ազատել:
- 18 Ահա՛ Տէրոջ աչքը իրմէ վախցողներուն  
Եւ իր կարեկցութեան յուսացողներուն վրայ է,
- 19 Անոնց անձը՝ մահէն ազատելու,  
Ու սովի ժամանակ զանոնք ողջ պահելու համար:
- 20 Մեր անձը Տէրոջ կը սպասէ-  
Ա՛ն է մեր օգնութիւնն ու վահանը:
- 21 Արդարեւ մեր սիրտերը անով կ'ուրախանան,  
Որովհետեւ անոր սուրբ անունին վստահեցանք:
- 22 Ո՛վ Տէր, քու կարեկցութիւնդ մեր վրայ ըլլայ,  
Ինչպէս մենք քեզի կը յուսանք:

ԱՍՏՈՒԾՈՅ ԲԱՐՈՒԹԵԱՆ ՓԱՌԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ

Դաւիթի սաղմոսը, երբ իր դատողութիւնը այլափոխեց Աբիմելէքի առջեւ- ան ալ վռնտեց զինք, եւ ինք գնաց:

34

- Ամէն ատեն Տէրը պիտի օրհնաբանեմ-  
Անոր գովաբանութիւնը շարունակ իմ բերանս պիտի ըլլայ:
- 2 Իմ անձս Տէրոջմով պիտի պարծենայ-  
Հեզերը պիտի լսեն եւ ուրախանան:
- 3 Տէ՛րը մեծարեցէք ինձի հետ,  
Ու միասի՛ն բարձրացնենք անոր անունը:
- 4 Տէրը փնտռեցի, եւ ինձի պատասխանեց-  
Զիս ազատեց բոլոր երկիւղներէս:
- 5 Անոր նայողները լուսափայլ եղան-

<sup>Գ</sup> Եբր․՝ կայնեցաւ

<sup>Դ</sup> Կամ՝ խորհուրդը

<sup>Ե</sup> Եբր․՝ բոլոր սերունդներուն մէջ

Անոնց երեսները չշիկնեցան:

- 6 Այս դժբախտը գոչեց, Տէրը լսեց,  
Եւ զայն իր բոլոր տագնապներէն փրկեց:
- 7 Տէրոջ հրեշտակը անկէ վախցողներուն շուրջը կը բանակի,  
Ու զանոնք կ'ազատէ:
- 8 Համտեսեցէ՛ք եւ տեսէ՛ք թէ Տէրը բարի է.  
Երանի՛ այն մարդուն՝ որ անոր կ'ապաւիցի:
- 9 Տէրոջմէ՛ն վախցէք, ո՛վ անոր սուրբերը,  
Որովհետեւ անկէ վախցողներուն ոչինչ կը պակսի:
- 10 Առիւծի կորիւնները պիտի թշուառանան եւ անօթեցան,  
Սակայն Տէրը փնտռողներուն ո՛չ մէկ բարիք պիտի պակսի:
- 11 Եկէ՛ք, որդիներ, մտի՛կ ըրէք ինծի,  
Տէրոջ վախը պիտի սորվեցնեմ ձեզի:
- 12 Ո՞վ է այն մարդը՝ որ ապրիլ կը բաղձայ,  
Ու շատ օրեր կը սիրէ՝ բարիք տեսնելու համար...-
- 13 Զե՛րծ պահէ քու լեզուդ չարախօսութենէ,  
Եւ շրթունքդ՝ խաբէութիւն խօսելէ.
- 14 Չարութենէ հեռացի՛ր ու բարի՛ք գործէ,  
Խաղաղութի՛ն փնտռէ եւ անո՛ր հետամուտ եղի՛ր:
- 15 Տէրոջ աչքերը արդարներուն վրայ են,  
Եւ անոր ականջները՝ անոնց աղաղակին:
- 16 Տէրոջ երեսը չարագործներուն դէմ է,  
Անոնց յիշատակը երկրէն ջնջելու համար:
- 17 Արդարները կ'աղաղակեն, Տէրը կը լսէ,  
Եւ իրենց բոլոր տագնապներէն կ'ազատէ զանոնք:
- 18 Տէրը մօտ է անոնց՝ որոնց սիրտը կոտրած է,  
Ու հոգիով ճմլուածները կը փրկէ:
- 19 Արդարին ձախորդութիւնները շատ են,  
Բայց Տէրը բոլորէն կ'ազատէ զայն:
- 20 Անոր բոլոր ոսկորները կը պահպանէ,  
Անոնցմէ ո՛չ մէկը կը կոտորի:
- 21 Չարութիւնը ամբարիշտը պիտի մեռցնէ,  
Եւ արդարը ատողները՝ պիտի դատապարտուին՝:
- 22 Տէրը իր ծառաներուն անձը կը փրկէ.  
Իրեն ապաւինողներէն ո՛չ մէկը պիտի դատապարտուի:

ԱՂՕԹԸ՝ ՕԳԼՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Դաւիթի սաղմոսը:

35

Ո՛վ Տէր, «կռուէ՛ ինծի դէմ կռուողներուն հետ».

<sup>ա</sup> Եբր.՝ գօրաւոր մարդուն

<sup>բ</sup> Եբր.՝ յանցաւոր պիտի սեպուին

<sup>ա</sup> Կամ՝ վիճէ՛ ինծի դէմ վիճողներուն հետ

Պայքարէ՛ ինծի դէմ պայքարողներուն հետ:

- 2 Բռնէ՛ վահանն ու ասպարը,  
Եւ կանգնէ՛ ինծի օգնելու:
- 3 Նաեւ քաշէ՛ նիզակը, ու գոցէ՛ **ճամբան**<sup>բ</sup>՝ զիս հետապնդողներուն դէմ.  
Ըսէ՛ անձիս. «Ե՛ս եմ քու փրկութիւնդ»:
- 4 Իմ անձս փնտռողները թող ամչնան եւ խայտառակուին.  
Ինծի դէմ չարիք հնարողները  
Թող ընկրկին ու շիկնին.
- 5 Հովին առջեւ եղած մղեղին պէս թող ըլլան,  
Եւ Տէրոջ հրեշտակը թող վանէ **զանոնք**.
- 6 Անոնց ճամբան խաւար ու սահուն թող ըլլայ,  
Եւ Տէրոջ հրեշտակը թող հետապնդէ **զանոնք**:
- 7 Արդարեւ առանց <sup>բ</sup>պատճառի իրենց ցանցը փոսի մէջ թաղեցին ինծի համար,  
Առանց պատճառի **փոս** փորեցին անձիս համար.
- 8 <sup>գ</sup>Անոնց վրայ յանկարծ աւերում թող գայ,  
Եւ իրենց թաղած ցանցը զիրենք բռնէ,  
Նոյն աւերումին մէջ իյնան:
- 9 Սակայն իմ անձս Տէրոջմով պիտի խայտայ,  
Անոր փրկութեամբ պիտի բերկրի:
- 10 Իմ բոլոր ոսկորներս պիտի ըսեն.  
«Տէ՛ր, ո՞վ քեզի նման է.  
Դուն կ'ազատես դժբախտը իրմէ աւելի ուժեղէն,  
Դժբախտն ու աղքատը՝ զիրենք թալլողէն»:
- 11 <sup>դ</sup>Սուտ վկաներ կանգնեցան.  
Չգիտցածներս կը հարցնէին ինծի:
- 12 Բարիքի փոխարէն չարիք հատուցանեցին ինծի՝  
Անձս <sup>ե</sup>կողոպտելով:
- 13 Բայց ես անոնց հիւանդութեան ատեն քուրձ կը հագնէի.  
Անձս ծոմապահութեամբ կը խոնարհեցնէի,  
Եւ աղօթքս իմ ծոցս <sup>զ</sup>կը վերադառնար՝:
- 14 Ինչպէս իմ բարեկամիս կամ եղբօրս հետ՝ **այնպէս ալ անոնց հետ** կը <sup>է</sup>վարուէի,  
Իր մօր համար սուգ պահողի մը պէս՝ մռայլ ու նկուն էի:
- 15 Բայց երբ կաղացի՝ ուրախացան եւ հաւաքուեցան.  
Զարնողները ինծի դէմ հաւաքուեցան, բայց ես <sup>ը</sup>չէի գիտեր՝.

---

<sup>բ</sup> Եբբ.՝ վճարումի

<sup>գ</sup> Եբբ.՝ Անոր

<sup>դ</sup> Եբբ.՝ Բուռն

<sup>ե</sup> Եբբ.՝ զաւակներէ զրկելով

<sup>զ</sup> Կամ՝ պիտի վերադառնայ

<sup>է</sup> Եբբ.՝ քալէի

<sup>ը</sup> Կամ՝ զանոնք չէի ճանչնար

Պատուեցին **զիս**<sup>բ</sup>՝ առանց դադրելու.

- 16 Հացկատակ, կեղծաւոր ծաղրածուներու հետ՝  
հրենց ակռաները ինծի դէմ կը կրճտէին:
- 17 Ո՛վ Տէր, մինչեւ ե՞րբ պիտի նայիս.  
<sup>բ</sup>Ազատէ՛ իմ անձս անոնց ակերումներէն,  
իմ <sup>ժ</sup>կեանքս՝ **առիւծի** կորիւններէն:
- 18 **Այն ատեն** մեծ համախմբումին մէջ քեզմէ շնորհակալ պիտի ըլլամ,  
Շատ ժողովուրդի մէջ քեզ պիտի գովաբանեմ:
- 19 Ընդունայն ինծի թշնամի եղողները ինձմով թող չուրախանան,  
Առանց պատճառի զիս ատողները աչքով նշան թող չընեն:
- 20 Արդարեւ խաղաղութեան **մասին** չեն խօսիր,  
Հապա երկրին մէջ եղող հանդարտներուն դէմ խաբէութիւն կը հնարեն:
- 21 Իրենց բերանը ինծի դէմ <sup>հ</sup>լայն կը բանան՝ **ու** կ'ըսեն.  
«Վա՛շ, վա՛շ, մեր աչքերը տեսան»:
- 22 Ո՛վ Տէր, դուն տեսար, լուռ մի՛ կեցար.  
Ո՛վ Տէր, ինձմէ մի՛ հեռանար:
- 23 Սթափէ՛, ո՛վ իմ Աստուածս եւ Տէրս,  
Արթնցի՛ր՝ իրաւունքիս **ու** դատիս **համար**:
- 24 Դա՛նտս պաշտպանէ՛ քու արդարութեանդ համեմատ, ո՛վ Տէր, իմ Աստուա՛ծս,  
Որպէսզի վրաս չուրախանան.
- 25 Իրենց սիրտին մէջ թող չըսեն. «Վա՛շ, մեր <sup>լ</sup>փափաքը եղաւ»:  
Թող չըսեն. «Կլլեցի՛նք զինք»:
- 26 Իմ ձախորդութեամբս ուրախացողները՝  
Թող միասին ամչնան եւ շիկնին.  
Ինծի դէմ <sup>ն</sup>հպարտացողները՝  
Թող ամօթ **ու** խայտառակութիւն հագնին:
- 27 Ինծի համար արդարութիւն փափաքողները՝  
Թող ցնծան եւ ուրախանան,  
Ու շարունակ ըսեն. «Աստուած թող մեծնայ,  
Որ իր ծառային խաղաղութիւն կը բաղձայ»:
- 28 Իմ լեզուս քու արդարութիւնդ պիտի <sup>ժ</sup>հռչակէ՛  
Ամէն օր քեզ գովաբանելով:

ՄԱՐԴՈՒՆ ՉԱՐՈՒԹԻՒՆԸ

Գլխաւոր երաժիշտին՝ Տէրոջ ծառային՝ Դաւիթի սաղմոսը:

<sup>բ</sup> Եբբ.՝ Հեռացո՛ւր

<sup>ժ</sup> Եբբ.՝ մէկ հատիկս

<sup>հ</sup> Եբբ.՝ կը լայնցնեն

<sup>լ</sup> Եբբ.՝ անձին փափաքը

<sup>ն</sup> Եբբ.՝ իրենք զիրենք մեծցնողները

<sup>ժ</sup> Եբբ.՝ գոչէ

# 36

- Ամբարիշտին յանցանքին մասին սիրտիս մէջի պատգամը **սա՛** է.  
 Աստուծոյ երկիւղը չկայ իր աչքերուն առջեւ,  
**2** Որովհետեւ ինքզինք կը շողոքորթէ իր աչքերուն,  
**Փոխանակ** իր անօրէնութիւնը գտնելու եւ ասելու:  
**3** Անոր բերանին խօսքերը անօրէնութիւն ու խաբէութիւն են.  
 Հրաժարած է ուշիմ ըլլալէ **եւ** բարիք ընելէ:  
**4** Իր անկողինին մէջ անօրէնութեան մասին կը մտածէ.  
 Կը **«**գտնուի այնպիսի ճամբայի մը մէջ՝ որ լաւ չէ,  
 Եւ չարութիւնը չի մերժեր:  
**5** Ո՛վ Տէր, քու կարեկցութիւնդ մինչեւ երկինք **կը հասնի**,  
 Եւ քու հաւատարմութիւնդ՝ մինչեւ նօսր ամպերը:  
**6** Զու արդարութիւնդ <sup>բ</sup>հզօր լեռներու պէս է,  
 Զու դատաստաններդ մեծ անդունդ մըն են.  
 Դո՛ւն մարդիկն ու անասունները <sup>գ</sup>կ'ապրեցնես, ո՛վ Տէր:  
**7** Ի՛նչ պատուական է քու կարեկցութիւնդ, ո՛վ Աստուած.  
 Մարդոց որդիները քու թելերուդ հովանիին կ'ապաւիւնին:  
**8** Անոնք քու տանդ պարարտութենէն պիտի յագեցան,  
 Եւ քու զուարճութիւններուդ վտակէն պիտի խմցնես անոնց.  
**9** Արդարեւ քո՛ւ քովդ է կեանքի աղբիւրը,  
 Զո՛ւ լոյսովդ <sup>դ</sup>կը լուսաւորուինք՝:  
**10** Երկարածգէ՛ քու կարեկցութիւնդ՝ քեզ ճանչցողներուն,  
 Ու քու արդարութիւնդ՝ սիրտով ուղիղներուն:  
**11** <sup>ե</sup>Յոխորտին ոտքը քովս թող չգայ,  
 Եւ ամբարիշտներուն ձեռքը զիս չջարժէ:  
**12** Հոն ինկան անօրէնութիւն գործողները.  
<sup>զ</sup>Տապալեցան, ու չկրցան կանգնիլ:

ՉԱՐԻՆ ՈՒ ԲԱՐԻՒՆ ՎԻՃԱԿԸ  
Դաւիթի սաղմոսը:

# 37

- Մի՛ բորբոքիր չարագործներուն դէմ,  
 Մի՛ նախանձիր անհրաւութիւն գործողներուն.  
**2** Որովհետեւ անոնք շուտով պիտի կտրուին՝ խոտի պէս,

---

<sup>ա</sup> Եբր.՝ կայնի  
<sup>բ</sup> Եբր.՝ Աստուծոյ  
<sup>գ</sup> Եբր.՝ կ'ազատես  
<sup>դ</sup> Եբր.՝ լոյս պիտի տեսնենք  
<sup>ե</sup> Եբր.՝ Յոխորտանքին  
<sup>զ</sup> Եբր.՝ Հրուեցան



Ու պիտի թառամի՞ն՝ կանաչ դալարի պէս:

- 3** Տէրո՛ջ վստահէ եւ բարի՛ք ըրէ,  
Որ երկրի՞ն մէջ բնակիս ու ճշմարտութեան մէջ արածիս:
- 4** Տէրը քու վայելքդ թող ըլլայ,  
Որ ան քեզի տայ սիրտիդ խնդրանքները:
- 5** Տէրո՛ջ՝ յանձնէ քու ճամբադ,  
Անո՛ր վստահէ, եւ ան պիտի գործէ.–
- 6** Դուրս պիտի հանէ քու արդարութիւնդ՝ լոյսի պէս,  
Ու քու իրաւունքդ՝ կէսօրուան պէս:
- 7** <sup>բ</sup>Հանդարտ կեցիր՝ Տէրոջ քով, սպասէ՛ անոր,  
Ու մի՛ բորբոքիր իր ճամբան յաջողութեամբ գացողին դէմ,  
<sup>գ</sup>Նենգութեամբ վարուող մարդուն դէմ:
- 8** Թո՛ղ բարկութիւնը եւ լքէ՛ ցասումը.  
Մի՛ բորբոքիր՝ որ չարիք չընես:
- 9** Արդարեւ չարագործները պիտի բնաջնջուին,  
Սակայն Տէրոջ յուսացողները երկրի՞ն պիտի տիրանան.
- 10** Արդարեւ քիչ մը **ատենէն** ետք ամբարիշտը պիտի <sup>դ</sup>չքանայ,  
Անոր տեղի՞ն <sup>ե</sup>ուշադրութիւն պիտի դարձնես՝, բայց պիտի <sup>զ</sup>չգտնես:
- 11** Սակայն հեզերը երկրի՞ն պիտի տիրանան,  
Ու <sup>է</sup>շատ խաղաղութիւն՝ պիտի վայելեն:
- 12** Ամբարիշտը արդարի՞ն դէմ **չարիք** կը խորհի,  
Եւ անոր դէմ ակռաները կը կրճտէ:
- 13** **Սակայն** Տէրը անոր վրայ պիտի ծիծաղի,  
Որովհետեւ կը տեսնէ թէ անոր օրը կը հասնի:
- 14** Ամբարիշտները սուր քաշեցին  
Եւ իրենց աղեղը լարեցին՝  
Դժբախտն ու աղքատը տապալելու համար,  
<sup>բ</sup>Ուղիղ ճամբայէն ընթացողները՝ մորթելու համար:
- 15** Անոնց սուրը իրենց սիրտը պիտի մտնէ,  
Եւ անոնց աղեղները պիտի կոտորուին:
- 16** Արդարի՞ն ունեցած քիչ **բանը**՝  
Շատ ամբարիշտներու ճոխութենէն լաւ է.

---

<sup>ա</sup> Եբր.՝ գլորէ

<sup>բ</sup> Եբր.՝ Լռէ՛

<sup>գ</sup> Եբր.՝ Նենգ մտադրութեամբ

<sup>դ</sup> Եբր.՝ չըլլայ

<sup>ե</sup> Եբր.՝ նկատես

<sup>զ</sup> Եբր.՝ չըլլայ

<sup>է</sup> Եբր.՝ խաղաղութեան շատութիւնը

<sup>բ</sup> Եբր.՝ ճամբայով ուղիղները

- 17 Որովհետեւ ամբարիշտներուն բազուկները պիտի կոտրուին,  
Բայց արդարներուն նեցուկը Տէ՛րն է:
- 18 Տէրը պարկեշտներուն օրերը գիտէ,  
Եւ անոնց ժառանգութիւնը յաւիտեանական պիտի ըլլայ:
- 19 Չախորդութեան ժամանակ պիտի չամչնան,  
Ու սովի օրերը պիտի կշտանան:
- 20 Բայց ամբարիշտները պիտի կորսուին,  
Եւ Տէրոջ թշնամիները <sup>բ</sup>պարարտ գառներու ճարպին՝ պէս պիտի սպառին,  
Մուխի պէս պիտի <sup>ժ</sup>ցնդին:
- 21 Ամբարիշտը փոխ կ'առնէ, ու չի վերադարձներ.  
Սակայն արդարը կ'ողորմի եւ կու տայ:
- 22 Արդարեւ <sup>հ</sup>անոր օրհնածները երկրին պիտի տիրանան,  
Բայց անկէ անիծուածները պիտի բնաջնջուին:
- 23 **Բարի** <sup>լ</sup>մարդուն քայլերը Տէրոջմէն կը հաստատուին,  
Եւ ինք կը հաճի անոր ճամբային.
- 24 Թէեւ իյնայ՝ պիտի չզգետնուի,  
Որովհետեւ Տէրը անոր <sup>լ</sup>ձեռքը կը բռնէ՝:
- 25 Երիտասարդ էի ու ծերացայ,  
Բայց արդարը լքուած չտեսայ,  
Կամ անոր զարմը՝ հաց մուրացող:
- 26 Ամէն օր կ'ողորմի ու փոխ կու տայ.  
Անոր զարմը օրհնուած է:
- 27 Չարութենէ հեռացի՛ր եւ բարի՛ք գործէ,  
Ու յաւիտեան պիտի մնաս.
- 28 Արդարեւ Տէրը իրաւունքը կը սիրէ,  
Եւ իր բարեպաշտները չի լքեր.  
Անոնք յաւիտեան կը պահպանուին,  
Իսկ ամբարիշտներուն զարմը պիտի բնաջնջուի:
- 29 Արդարները երկրին պիտի տիրանան,  
Ու յաւերժ պիտի բնակին անոր մէջ:
- 30 Արդարին բերանը իմաստութիւնը կը <sup>ծ</sup>հռչակէ,  
Եւ անոր լեզուն իրաւունքը կը հաղորդէ.
- 31 Իր Աստուծոյն Օրէնքը իր սիրտին մէջ է,  
Անոր քայլերը պիտի չտատանին:
- 32 Ամբարիշտը <sup>կ</sup>արդարին վրայ կը հսկէ՝

---

<sup>բ</sup> Կամ՝ պարարտ արօտի

<sup>ժ</sup> Եբբ.՝ սպառին

<sup>հ</sup> Այսինքն՝ Տէրոջ

<sup>լ</sup> Եբբ.՝ զօրաւոր մարդուն

<sup>լ</sup> Եբբ.՝ ձեռքին նեցուկն է

<sup>ծ</sup> Եբբ.՝ գոչէ

Եւ կը ճանայ զինք մեռցնել.

33 Տէրը անոր ձեռքը պիտի չլքէ զինք,  
Ու երբ դատուի՝ պիտի չդատապարտէ զինք:

34 Սպասէ՛ Տէրոջ ու պահէ՛ անոր ճամբան,  
Եւ ան քեզ պիտի բարձրացնէ, որպէսզի երկրին տիրանաս.  
Ամբարիշտներուն բնաջնջումը պիտի տեսնես:

35 Ամբարիշտը՝ զօրաւոր տեսայ,  
Իր տեղը կեցող կանաչագարդ ծառի մը պէս տարածուած.

36 Բայց ան անցաւ, եւ ահա՛ չկայ.  
Զայն փնտռեցի, բայց չգտայ:

37 Պարկե՛շտը դիտէ եւ ուղիղի՛ն նայէ.  
Որովհետեւ խաղաղարար մարդը բարի վախճան պիտի ունենայ,

38 Իսկ յանցաւորները միասին պիտի բնաջնջուին:  
Ամբարիշտներուն վախճանը բնաջնջում պիտի ըլլայ,

39 Բայց արդարներուն փրկութիւնը Տէրոջմէն է.  
Տագնապի ժամանակ ինք անոնց զօրութիւնն է:

40 Տէրը պիտի օգնէ անոնց, եւ ազատէ զանոնք.  
Ամբարիշտներէն պիտի ազատէ  
Ու պիտի փրկէ զանոնք, որովհետեւ իրեն կ'ապաւինին:

ՏԱՌԱՊՈՂ ՄԱՐԴՈՒ ՄԸ ԱՂՕԹԶԸ  
Դաւիթի սաղմոսը. յիշատակի համար:

38

Ո՛վ Տէր, քու զայրոյթովդ զիս մի՛ յանդիմաներ,  
Ու ցատումովդ զիս մի՛ պատժեր:

2 Արդարեւ քու նետերդ իմ մէջս՝ մխուեցան,  
Եւ ձեռքդ իմ վրաս՝ կը ճնշէ՞:

3 Իմ մարմինիս մէջ առողջութիւն չկայ՝ քու սրտմտութեանդ յպատճառով,  
Ոսկորներուս մէջ՝ հանգստութիւն չկայ՝ իմ մեղքիս պատճառով.

---

<sup>4</sup> Եբբ.՝ արդարը կը դիտէ

<sup>6</sup> Եբբ.՝ փնտռէ

<sup>8</sup> Եբբ.՝ բռնակալ

<sup>7</sup> Եբբ.՝ ամբողջ

<sup>ա</sup> Կամ՝ մի՛ խրատեր

<sup>բ</sup> Եբբ.՝ իջան

<sup>գ</sup> Եբբ.՝ կ'իջնէ

<sup>դ</sup> Եբբ.՝ երեսէն

<sup>ե</sup> Եբբ.՝ խաղաղութիւն

## ՄԱՂՄՈՍՆԵՐՈՒ ԳԻՐԸԸ

- 4 Արդարեւ անօրէնութիւններս գլուխէս վեր <sup>ա</sup>ելան,  
Ծանր բեռի պէս <sup>է</sup>իմ վրաս ծանրացան<sup>ա</sup>։
- 5 <sup>բ</sup>Վէրքերս գարշահոտ եղան ու նեխեցան՝  
իմ յիմարութեանս պատճառով։
- 6 Կծկուեցայ եւ յոյժ նկուն եղայ.  
Ամէն օր մռայլ կը շրջիմ,
- 7 Որովհետեւ կողերս ջերմութեամբ լեցուեցան,  
Ու մարմինիս մէջ առողջութիւն չկայ։
- 8 Անգօր եմ, եւ յոյժ ճգմուած.  
Սիրտիս ալեկոծութենէն <sup>բ</sup>աղաղակեցի։
- 9 Ո՛վ Տէր, իմ ամբողջ փափաքս քու առջեւ է,  
Ու հառաչանքս քեզմէ չծածկուեցաւ։
- 10 Սիրտս կը բաբախէ, ոյժս գիս լքեց,  
Եւ աչքերուս լոյսը՝ ա՛ն ալ չքացաւ։
- 11 Զիս սիրողներն ու բարեկամներս իմ ախտիս **պատճառով** անդին կը կայնին,  
Մերձաւորներս ալ հեռու կը կենան։
- 12 Անձս փնտռողները **ինծի** որոգայթ կը լարեն,  
Ինծի չարիք ուզողները աղէտի մասին կը խօսին,  
Ամէն օր խաբէութեան մասին կը խորհրդածեն։
- 13 Սակայն ես խուլի պէս չեմ լսեր,  
Համրի պէս բերանս չեմ բանար.
- 14 **Այնպիսի** մարդու մը պէս եմ՝ որ չի լսեր,  
Ու պատասխան չկայ իր բերանը։
- 15 Արդարեւ, ո՛վ Տէր, ես քեզի՛ կը յուսամ,  
Դո՛ւն պիտի պատասխանես, ո՛վ Տէր, իմ Աստուա՛ծս.
- 16 Որովհետեւ ըսի. «Անոնք ինձմով թող չուրախանան,  
Ոտքիս սահած ժամանակը ինծի դէմ թող <sup>գ</sup>չհպարտանան»։
- 17 Արդարեւ ես կաղալու պատրաստ եմ,  
Եւ կոտտանքս շարունակ առջեւս է.
- 18 Որովհետեւ անօրէնութիւնս պիտի իմացնեմ,  
Ու մեղքիս համար պիտի մտահոգուիմ։
- 19 Բայց թշնամիներս կենսալից են, հզօր են.  
Զիս ընդունայն ատողները բազմաթիւ են։
- 20 Բարիքի փոխարէն չարիք հատուցանողները ինծի կ'ընդդիմանան,  
Որովհետեւ բարիին հետամուտ կ'ըլլամ։
- 21 Զիս մի՛ լքեր, ո՛վ Տէր.  
Ինձմէ մի՛ հեռանար, ո՛վ իմ Աստուածս։

---

<sup>ա</sup> Եբր.՝ անցան

<sup>է</sup> Եբր.՝ ինծի համար շատ ծանր են

<sup>բ</sup> Եբր.՝ Հարուածներս

<sup>բ</sup> Եբր.՝ մռնչեցի

<sup>գ</sup> Եբր.՝ իրենք զիրենք չմեծցնեն

22 Արտորա՛ ինծի օգնելու,  
Ո՛վ Տէր, իմ փրկութիւնս:

ՏԱՌԱՊՈՂ ՄԱՐԴՈՒ ՄԸ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆԸ  
Գլխաւոր երաժիշտին՝ Իդիթունի. Դաւիթի սաղմոսը:

39

Ես ըսի. «Ուշադիր պիտի ըլլամ ճամբաներու՛  
Որպէսզի լեզուովս չմեղանչեմ.  
Բերանս բերանակապով պիտի պահպանեմ՝  
Մինչ ամբարիշտը իմ առջես է»:

2 Համր եղայ՝ լռելով.

Բարերարութեան մասին ալ լռեցի,  
Ու կոտտանքս գրգռուեցաւ:

3 Սիրտս տաքցաւ ներսս,

Խորհրդածութեանս մէջ կրակը վառեցաւ,  
Այն ատեն լեզուովս խօսեցայ՝ ըսելով.

4 «Ո՛վ Տէր, գիտցո՛ւր ինծի վախճանս,  
Եւ օրերուս չափը՝ թէ ո՞րքան է»,

Որպէսզի գիտնամ թէ ի՞նչպէս անցաւոր եմ:

5 Ահա՛ օրերուս չորս մատնաչափի լայնք տուիր,

Ու կեանքիս տեւողութիւնը ոչինչի պէս է քու առջեւ:  
Անտարակոյս ամէն հաստատուն մարդ  
Ամբողջովին ունայնութիւն է: (Սելա:)

6 Ի՛րապէս մարդը՝ ստուերի մը պէս կը պտըտի.

Ի՛րապէս զուր տեղը կ'ալեկոծի.

Հարստութիւն կը դիզէ, բայց չի գիտեր թէ ո՞վ պիտի ժողվէ զայն:

7 «Եւ հիմա ի՞նչ բանի սպասեմ, ո՛վ Տէր.

Իմ ակնկալութիւնս դո՛ւն ես:

8 Ազատէ՛ զիս իմ բոլոր յանցանքներէս.

Մի՛ մատներ զիս անզգամներու նախատինքին:

9 Համր եղայ ու բերանս չբացի,

Որովհետեւ դո՛ւն կը գործես:

10 Հեռացո՛ւր ինձմէ քու հարուածդ.

Ձեռքիդ զարկը զիս կը զհիւծէ:

11 Երբ յանդիմանութիւններով ՚իսրատես մարդը՝ իր անօրէնութեան համար,

Յեցի մը պէս կը փճացնես անոր ցանկալի բաները.

<sup>u</sup> Կամ՝ պատկերի

<sup>p</sup> Երբ.՝ դներ

<sup>q</sup> Երբ.՝ սպառէ

<sup>r</sup> Կամ՝ պատժես

<sup>t</sup> Երբ.՝ հալեցնես

Ի՞րապէս ամէն մարդ ունայնութիւն է: (Սելա:)

- 12 Ո՛վ Տէր, լսէ՛ իմ աղօթքս եւ ունկնդրէ՛ աղաղակս.  
Լուռ մի՛ կենար արցունքներուս առջեւ.  
Որովհետեւ քու քովդ պանդուխտ մըն եմ,  
Հիւր մը՝ իմ բոլոր նախահայրերուս պէս:
- 13 Նայուա՛ծքդ դարձուր ինձի՝ որ զուարթանամ,  
Զանի չեմ գացեր հո՞ն՝ որ ա՛լ «չգտնուիմ»:

ՓԱՌԱԲԱՆՈՒԹԵԱՆ ԵՐԳ

Գլխաւոր երաժիշտին. Դաւիթի սաղմոսը:

40

<sup>ա</sup>Յուսալով սպասեցի Տէրոջ.

Ան ալ հակեցաւ իմ կողմս, լսեց աղաղակս,

- 2 Եւ բարձրացուց զիս <sup>բ</sup>կորուստի գուբէն, <sup>գ</sup>տղմալից յատակէն՝.

Ոտքերս <sup>դ</sup>ամրացուց ժայռի վրայ, քայլերս հաստատեց,

- 3 Ու բերանս դրաւ նոր երգ մը՝

Մեր Աստուծոյ գովաբանութիւնը:

Շատերը պիտի տեսնեն, պիտի վախնան

Ու Տէրոջ պիտի վստահին:

- 4 Երանի՛ այն <sup>ե</sup>մարդուն՝ որ իր վստահութիւնը Տէրոջ վրայ կը դնէ,

Եւ <sup>զ</sup>ուշադրութիւն չի դարձներ հպարտներուն ու ստուրթեան <sup>է</sup>հետեւողներուն:

- 5 Շա՛տ են քու ըրած սքանչելիքներդ,

Ո՛վ Տէր, իմ Աստուածս.

Մեր մասին ունեցած մտածումներդ

Ո՛չ մէկը կրնայ <sup>ը</sup>զետեղել քու առջեւդ.

Պիտի հռչակէի ու խօսէի **անոնց մասին,**

**Բայց** պատմուելու համար **չափազանց** շատ են:

- 6 Դուն զոհէ եւ ընծայէ չախորժեցար,

**Հապա** իմ ականջներս բացիր.

<sup>գ</sup> Եբբ.՝ չըլլամ

<sup>ա</sup> Կամ՝ Սպասելով

<sup>բ</sup> Եբբ.՝ ժխորի

<sup>գ</sup> Եբբ.՝ յատակի տղմուտ ցելսէն

<sup>դ</sup> Եբբ.՝ կանգնեցուց

<sup>ե</sup> Եբբ.՝ զօրաւոր մարդուն

<sup>զ</sup> Եբբ.՝ երես

<sup>է</sup> Կամ՝ դարձողներուն

<sup>ը</sup> Կամ՝ գնահատել

Ողջակէզ ու մեղքի պատարագ չպահանջեցիր:

7 Այն ատեն ըսի.«Ահա՛ կու գամ.

(Ի՛մ մասիս գրուած է գիրքի պատատին մէջ.)

8 Ո՛վ իմ Աստուածս, քու կամքդ գործադրելէն կ'սխորժիմ,

Ու քու Օրէնքդ իմ ներսս է»:

9 \*Արդարութիւնդ աւետեցի մեծ համախմբումին մէջ.

Ահա՛ շրթունքս <sup>ժ</sup> չգոցեցի,

Ո՛վ Տէր, դուն գիտես:

10 Սիրտիս մէջ <sup>Ի</sup> գաղտնի չպահեցի՝ քու արդարութիւնդ.

Հաւատարմութիւնդ ու փրկութիւնդ պատմեցի:

Զու կարեկցութիւնդ եւ ճշմարտութիւնդ մեծ համախմբումէն չծածկեցի:

11 Դուն, ո՛վ Տէր, քու գթութիւնդ մի՛ մերժեր ինձի.

Զու կարեկցութիւնդ ու ճշմարտութիւնդ շարունակ թող պաշտպանեն զիս:

ԱՂԹԸ՝ ՕԳՆՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

(Սաղմ. 70)

12 Արդարեւ անթիւ չարիքներ զիս պատեցին.

Անօրէնութիւններս ինձի հասան, ու չեմ կրնար **զանոնք** տեսնել:

Գլուխիս մազերէն շատ են, եւ սիրտս զիս կը լքէ:

13 Ո՛վ Տէր, բարեհաճէ՛ զիս ազատել.

Ո՛վ Տէր, արտորա՛ ինձի օգնելու:

14 Թող միասին ամչնան ու շիկնին

Իմ անձս փնտռողները՝ զայն կորսնցնելու համար.

Թող ընկրկին եւ խայտառակուին

Անոնք՝ որ ինձի չարիք կը բաղձան:

15 Թող <sup>Խ</sup> ամչնալով <sup>Յ</sup> ընկճուին

Անոնք՝ որ ինձի կ'ըսեն. «Վա՛շ, վա՛շ»:

16 Բոլոր քեզ փնտռողները

Քեզմով թող բերկրին եւ ուրախանան.

Զու փրկութիւնդ սիրողները

Շարունակ թող ըսեն. «Տէրը թող մեծնայ»:

17 Թէեւ ես դժբախտ եւ աղքատ եմ,

Տէրը կը մտածէ իմ մասիս:

Դո՛ւն ես իմ օգնականս ու փրկիչս.

\* Եբր.՝ Արդարութիւնը

<sup>ժ</sup> Եբր.՝ չարգիլեցի

<sup>Ի</sup> Եբր.՝ չծածկեցի

<sup>Լ</sup> Եբր.՝ արգիլեր

<sup>Խ</sup> Կամ՝ իրենց ամօթին պատճառով

<sup>Յ</sup> Եբր.՝ ամայանան

Ո՛վ իմ Աստուածս, մի՛ ուշանար:

ՀԻՒԱՆԴԻ ՄԸ ԱՂՕԹՔԸ

Գլխաւոր երաժիշտին. Դաւիթի սաղմոսը:

41

Երանի՛ անոր՝ որ չքաւորին <sup>ա</sup>ուշադրութիւն կը դարձնէ՞:

Չախորդութեան ժամանակ Տէրը պիտի ազատէ զինք:

2 Տէրը պիտի պահպանէ եւ ողջ պահէ զինք.

Երանելի պիտի ըլլայ երկրի վրայ,

Ու պիտի չմատնէ զինք թշնամիներուն <sup>բ</sup>կամքին:

3 Տէրը պիտի կազդուրէ զինք թուլութեան մահիճին վրայ.

<sup>գ</sup>Պիտի բժշկէ զինք իր հիւանդութեան ատենը՞:

4 Ես ըսի. «Ո՛վ Տէր, ողորմէ՛ ինձի,

Բուժէ՛ իմ անձս, քանի քեզի դէմ մեղանչեցի»:

5 Թշնամիներս կը չարախօսեն իմ մասիս՝ **ըսելով.**

«Ե՞րբ պիտի մեռնի եւ անուըն կորսուի»:

6 Եթէ **մէկը ինձի** գայ՝ **զիս** տեսնելու համար, ունայն խօսքեր **կ'ըսէ.**

Իր սիրտը անօրէնութիւն կը ժողվէ իրեն համար,

**Որպէսզի** դուրս ելլելով խօսի:

7 Բոլոր զիս ատողները միասին կը փսփսան ինձի դէմ.

<sup>դ</sup>Կը չարախօսեն՞ ինձի դէմ՝ **ըսելով.**

8 «Ե՛վատ ախտէ մը վարակուած է՞».

Եւ **հիմա** որ պառկած է, ա՛յ պիտի չկանգնի»:

9 Մինչեւ անգամ իմ <sup>զ</sup>մտերիմս՝ որուն կը վստահէի,

Իմ հացս ուտողը ինձի դէմ կրունկ վերցուց:

10 Սակայն, ո՛վ Տէր, դո՛ւն ողորմէ ինձի ու կանգնեցո՛ւր զիս,

Որպէսզի հատուցանեմ անոնց:

11 Գիտե՛մ թէ ինձմէ կ'ախորժիս,

Որովհետեւ թշնամիս վրաս չի <sup>է</sup>պարծենար:

12 Զիս պարկեշտութեանս մէջ կը պահես,

Եւ յաւիտենապէս քու առջեւ կը հաստատես:

13 Օրհնեա՛յ ըլլայ Տէրը՝ Իսրայէլի Աստուածը

<sup>բ</sup>Դարէ դար՞: Ամէն ու ամէն:

<sup>ա</sup> Եբբ.՝ կը հասկնայ

<sup>բ</sup> Եբբ.՝ անձին

<sup>գ</sup> Եբբ.՝ Իր ամբողջ անկողինը պիտի փոխէ իր հիւանդութեան ատենը

<sup>դ</sup> Եբբ.՝ Չարիք կը մտածեն

<sup>է</sup> Եբբ.՝ Բելիարի բան մը անոր վրայ թափած է

<sup>զ</sup> Եբբ.՝ խաղաղութեանս մարդը

<sup>է</sup> Եբբ.՝ գոչեր



ՏԱՐԱԳԻՐԻ ՄԸ ԱՂՕԹԸԸ

Գլխաւոր երաժիշտին. Կորխի որդիներուն երգը:

42

Ինչպէս եղջերուն ջուրի վտակներուն կը տենչայ,  
Այնպէս ալ իմ անձս քեզի կը տենչայ, ո՛վ Աստուած:

2 Անձս կը ծարաւնայ Աստուծոյ, ապրո՞ղ Աստուծոյն.

Ե՞րբ պիտի գամ եւ Աստուծոյ առջեւ երեւնամ:

3 Յերեկ ու գիշեր արցունքներս ինծի հաց եղան,  
Որովհետեւ «ամէն ատեն» ինծի կ'ըսեն. «Ո՞ր է քու Աստուածդ»:

4 Այս բաները յիշելով՝

Անձս իմ ներսս կը <sup>բ</sup>հալի,

Զանի որ բազմութեան հետ <sup>գ</sup>կ'երթայի,

Անոնց հետ հանդիսաւորապէս դէպի Աստուծոյ տունը կը յառաջանայի՝

Յնծութեան եւ շնորհակալութեան ձայնով,

Տօնախմբող բազմութեան հետ:

5 Ինչո՞ւ նկուն ես, ո՛վ իմ անձս,

Եւ ինչո՞ւ իմ ներսս կ'ալեկոծիս.

Աստուծո՛յ յուսա, քանի տակաւին պիտի ներբողեմ զայն՝

Իր <sup>դ</sup>փրկարար ներկայութեան՝ համար:

6 Ո՛վ իմ Աստուածս, անձս իմ ներսս նկուն է.

Հետեւաբար քեզ կը յիշեմ Յորդանանի երկրէն,

Հերմոններէն ու <sup>ե</sup>Փոքր լեռնէն:

7 Անդունդը կը գոչէ անդունդին՝ քու յորձանքներուդ աղմուկով.

Զու բոլոր կոհակներդ եւ ալիքներդ իմ վրայէս անցան:

8 Յերեկը՝ Տէրը պիտի պատուիրէ իր կարեկցութեան,

Ու գիշերը՝ իր երգը ինծի հետ պիտի ըլլայ,

Իմ աղօթքս՝ կեանքիս Աստուծոյն:

9 Աստուծոյ՝ իմ ժայռիս պիտի ըսեմ.

«Ինչո՞ւ զիս մոռցեր ես,

Ինչո՞ւ մռայլ շրջիմ՝

Թշնամիէն տանջուած»:

10 Հակառակորդներս զիս կը նախատեն՝ ոսկորներս ջախջախելու պէս,

Ամէն օր ինծի ըսելով. «Ո՞ր է քու Աստուածդ»:

11 Ինչո՞ւ նկուն ես, ո՛վ իմ անձս,

<sup>բ</sup> Եբր.՝ Յաւիտենականութենէ յաւիտենականութիւն

<sup>գ</sup> Եբր.՝ ամբողջ օրը

<sup>դ</sup> Եբր.՝ թափի

<sup>ե</sup> Եբր.՝ կ'անցնէի

<sup>զ</sup> Եբր.՝ երեսին փրկութեան

<sup>է</sup> Եբր.՝ Միսար

Եւ ինչո՞ւ իմ ներսս կ'ալեկոծիս.  
Աստուծո՛յ յուսա, քանի տակաւին պիտի ներբողեմ զայն.  
**Ա՛՛՛՛ Է** իմ երեսիս փրկութիւնը եւ իմ Աստուածս:

ՏԱՐԱԳԻՐԻ ՄԸ ԱՂՕԹԸԸ

43

Դա՛տս պաշտպանէ, ո՛վ Աստուած.  
Իրաւո՛ւնքս պաշտպանէ՝ անբարեպաշտ ազգէն:

Ազատէ՛ զիս խաբեբայ եւ անիրաւ մարդէն,

2 Զանի որ դո՛ւն ես իմ՝ զօրութեանս Աստուածը:

Ինչո՞ւ զիս կը մերժես,

Ինչո՞ւ մռայլ շրջիմ՝

Թշնամիէն տանջուած:

3 Ղրկէ՛ քու լոյսդ ու ճշմարտութիւնդ.

Անոնք թող առաջնորդեն զիս, եւ տանին զիս

Քու սուրբ լեռդ ու զբնակարաններդ:

4 Աստուծոյ զոհասեղանին քով պիտի երթամ,

Իմ ուրախութեանս **եւ** խայտանքիս Աստուծոյն առջեւ:

Քեզ քնարո՛վ պիտի ներբողեմ,

Ո՛վ Աստուած, ի՛մ Աստուածս:

5 Ինչո՞ւ նկուն ես, ո՛վ իմ անձս,

Եւ ինչո՞ւ իմ ներսս կ'ալեկոծիս:

Աստուծո՛յ յուսա, քանի տակաւին պիտի ներբողեմ զայն.

**Ա՛՛՛՛ Է** իմ երեսիս փրկութիւնը եւ իմ Աստուածս:

ԱՂՕԹԸ՝ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Գլխաւոր երաժիշտին. Կորխի որդիներուն երգը:

44

Ո՛վ Աստուած, մեր ականջներով լսեցինք,

Մեր հայրերը մեզի պատմեցին

**Այն** գործը՝ որ իրենց ժամանակին մէջ կատարեցիր,

Վաղեմի օրերը:

2 Զու ձեռքո՛վդ հեթանոսները վտարեցիր,

Ու՝ զանոնք տնկեցիր.

Բժողովուրդները չարչարեցիր,

Եւ զանոնք տարածեցիր:

<sup>ա</sup> Կամ՝ անկարեկից

<sup>բ</sup> Եբր.՝ ամրոցիս

<sup>գ</sup> Կամ՝ խորանդ

<sup>ա</sup> Այսինքն՝ մեր հայրերը

<sup>բ</sup> Եբր.՝ Բնակչութիւնները

- 3 Արդարեւ ո՛չ թէ իրենց սուրով տիրացան երկրին,  
Ո՛չ ալ իրենց բազուկը զիրենք ազատեց,  
Հապա քո՛ւ աջ ձեռքդ, քո՛ւ բազուկդ եւ քո՛ւ երեսիդ լոյսը,  
Որովհետեւ անոնց բարեհաճեցար:
- 4 Դո՛ւն ես իմ Թագաւորս, ո՛վ Աստուած.  
Դո՛ւն Գապահովէ Յակոբի փրկութիւնը:
- 5 Զեզմո՛վ մեր թշնամիները պիտի զարնենք.  
Զո՛ւ անունովդ մեզի դէմ կանգնողները պիտի կոխկռտենք:
- 6 Արդարեւ աղեղիս չեմ վստահիր,  
Ու սուրս զիս չի կրնար ազատել.
- 7 Հապա դո՛ւն մեզ կ'ազատես մեր թշնամիներէն,  
Ու մեզ ատողները կ'ամչցնես:
- 8 Ամէն օր Աստուծով կը պարծենանք,  
Եւ քու անունդ յաւիտեան պիտի ներբողենք: (Սելա:)
- 9 Սակայն մեզ մերժեցիր ու խայտառակեցիր,  
Եւ մեր զօրքերուն հետ <sup>7</sup>չեկար:
- 10 Թշնամիին առջեւ մեզի նահանջել տուիր,  
Ու մեզ ատողները մեզ կողոպտեցին իրենց համար:
- 11 Մեզ մատնեցիր՝ ոչխարի պէս ուտելիք **ըլլալու**,  
Եւ մեզ ցրուեցիր հեթանոսներուն մէջ:
- 12 Զու ժողովուրդդ ոչինչ **գինով** ծախեցիր,  
Ու քու **հարստութիւնդ** չաւելցուցիր անոնց գինով:
- 13 Մեր դրացիներուն առջեւ՝ մեզ նախատինք ըրիր,  
Մեր շուրջը եղողներուն՝ ծաղր ու ծանակ:
- 14 Մեզ հեթանոսներուն մէջ <sup>4</sup>նշաւակ ըրիր,  
Եւ <sup>4</sup>ժողովուրդներուն մէջ՝ գլուխ շարժելու **պատճառ**:
- 15 <sup>5</sup>Ամէն ատեն՝ իմ նախատինքս առջեւս է,  
Ու երեսիս ամօթը զիս կը ծածկէ՝
- 16 Նախատողին եւ հայհոյողին ձայնին <sup>2</sup>պատճառով,  
Թշնամիին ու վրէժխնդիրին պատճառով:
- 17 Այս բոլորը մեր վրայ հասաւ,  
Սակայն մենք քեզ չմոռցանք եւ քու ուխտդ չժխտեցինք:
- 18 Մեր սիրտերը չընկրկեցան,  
Ո՛չ ալ մեր քայլերը քու ուղիէդ շեղեցան,
- 19 Թէպէտ շնագայլերուն եղած տեղը ճզմեցիր մեզ,

<sup>4</sup> Եբբ.՝ պատուիրէ

<sup>7</sup> Եբբ.՝ դուրս չելար

<sup>5</sup> Եբբ.՝ առակ

<sup>4</sup> Եբբ.՝ բնակչութիւններուն

<sup>5</sup> Եբբ.՝ Ամբողջ օրը

<sup>2</sup> Եբբ.՝ երեսէն

Ու մահուան շուքով ծածկեցիր մեզ:

- 20 Եթէ մեր Աստուծոյն անունը մոռցեր ենք,  
Կամ օտար աստուծոյ <sup>բ</sup>երկարեր ենք մեր ձեռքերը,
- 21 Միթէ Աստուած այս **բանը** պիտի չհետազօտէ<sup>օ</sup>,  
Զանի ի՛նք գիտէ սիրտին <sup>գ</sup>գաղտնիքները:
- 22 Բայց քեզի՛ համար ամէն օր կը սպաննուիմք,  
Սպանդանոցի ոչխարի պէս կը սեպուիմք:
- 23 Սթափէ՛, ո՛վ Տէր, ինչո՞ւ կը քնանաս.  
Արթնցի՛ր, ընդմիջտ մի՛ մերժեր **մեզ**:
- 24 Ինչո՞ւ երեսդ կը ծածկես,  
Մեր տառապանքն ու տանջանքը կը մոռնաս:
- 25 Արդարեւ մեր անձը մինչեւ հողը <sup>հ</sup>ցածցաւ,  
Մեր փորը գետինը փակաւ:
- 26 Կանգնէ՛, օգնէ՛ մեզի,  
Ու փրկէ՛ մեզ՝ քու կարեկցութեանդ պատճառով:

**ԹԱԳԱՒՈՐԱԿԱՆ ՀԱՐՍԱՆԻՔԻ ԵՐԳ**

Գլխաւոր երաժիշտին. <sup>ա</sup>Շուշանիմի վրայ. Կորխի որդիներուն երգը. <sup>բ</sup>սիրոյ տաղ:

**45**

Սիրտէս բարի խօսք կը <sup>գ</sup>բխի.

Թագաւորին համար շարադրածս կ'արտասանեմ.

Լեզուս արագագիր գրագիրին գրիչին **պէս** է:

- 2 Դուն մարդոց որդիներուն ամենէն գեղեցիկն ես.  
Զու շրթունքիդ վրայ շնորհք թափուած է.  
Հետեւաբար Աստուած քեզ օրհնեց յաւիտեանապէս:
- 3 Ո՛վ զօրաւոր, կապէ՛ սուրդ ազդրիդ վրայ՝  
Զու փառաւորութեամբդ եւ վայելչութեամբդ:
- 4 Զու վայելչութեամբդ հեծի՛ր ու յաջողէ՛,  
<sup>ա</sup>Ճշմարտութիւնը, հեզութիւնը **եւ** արդարութիւնը պաշտպանելու համար՝:  
Աջ ձեռքդ ահաւոր **բաներ** <sup>բ</sup>պիտի արձակէ՞.
- 5 Զու նետերդ սուր են,

<sup>բ</sup> Եբր.՝ տարածեր

<sup>գ</sup> Եբր.՝ թաքուն պահուածները

<sup>հ</sup> Կամ՝ ծռեցաւ

<sup>ա</sup> Այսինքն՝ “ Շուշաններու□

<sup>բ</sup> Եբր.՝ սիրականի

<sup>գ</sup> Եբր.՝ փրփրի

<sup>ա</sup> Եբր.՝ Ճշմարտութեան, հեզութեան **եւ** արդարութեան խնդիրին համար

<sup>բ</sup> Եբր.՝ արձակել պիտի տայ քեզի

Ու թագաւորին թշնամիներուն սիրտին մէջ պիտի մխուից.

Ժողովուրդները քու տակդ պիտի իյնան:

6 Ո՛վ Աստուած, քու գահդ <sup>Գ</sup>դարէ դար՝ կը կենայ.

Քու թագաւորութեանդ մականը ուղղամտութեան մական է:

7 Արդարութիւնը կը սիրես եւ ամբարշտութիւնը կ'ատես.

Հետեւաբար, ո՛վ Աստուած, քու Աստուածդ

Բերկրանքի իւղով օծեց քեզ՝ ընկերակիցներէդ անելի:

8 Քու բոլոր հագուստներդ զմուռս, հալուէ ու կասիա կը բուրեն.

Փղոսկրէ պալատներուն մէջ լարաւոր **նուագարանները** քեզ կ'որախացնեն:

9 Թագաւորներու աղջիկներ քու պատուականներուդ մէջ են.

Թագուհին քու աջ կողմդ կը կայնի՝ Ոփիրի մաքուր ոսկիով **զարդարուած**:

10 Ո՛վ աղջիկ, լսէ՛ ու տե՛ս, եւ դարձո՛ւր ականջդ.

Մոռցի՛ր քու ժողովուրդդ ու հօրդ տունը:

11 Այն ատեն թագաւորը պիտի ցանկայ քու գեղեցկութեանդ,

Որովհետեւ ինք է քու տէրդ. ուստի երկրպագէ՛ անոր:

12 Տիրոսի աղջիկն ու ժողովուրդին հարուստները

Ընծայով <sup>Է</sup>պիտի խնդրեն քու շնորհքդ՝:

13 Թագաւորին աղջիկը <sup>Ը</sup>փառաւոր է **պալատին** ներսը,

Ոսկի թելով հիւտուած է իր հանդերձը:

14 Նկարագարդ **հանդերձով** պիտի բերուի թագաւորին.

Անոր հետեւող կոյսերը – իր ընկերուհիները – քեզի պիտի բերուին.

15 Ուրախանալով եւ խայտալով պիտի բերուին,

Թագաւորին պալատը պիտի մտնեն:

16 Քու հայրերուդ տեղը որդիներդ պիտի ըլլան.

Ամբողջ երկրին մէջ իշխանաւորներ պիտի ընես զանոնք:

17 Քու անունդ <sup>Ք</sup>հռչակել պիտի տամ սերունդէ սերունդ.

Հետեւաբար ժողովուրդները քեզ պիտի ներբողեն դարէ դար:

ԱՍՏՈՒԱԾ ՄԵՋԻ ՀԵՏ Է

Գլխաւոր երաժիշտին. Կորխի որդիներուն երգը. <sup>Մ</sup>ալամոթի վրայ՝:

46

Աստուած մեր ապաւէնն ու զօրութիւնն է,

Տագնապներու մէջ <sup>Բ</sup>շուտ գտնուող օգնական մը:

2 Հետեւաբար պիտի չվախնանք՝ թէեւ երկիրը փոխուի,

Ու լեռները երերան եւ ծովուն <sup>Գ</sup>մէջտեղը **ձգուից**,

<sup>Գ</sup> Եբբ.՝ յաւիտենականութենէ յաւիտենականութիւն

<sup>Է</sup> Եբբ.՝ պիտի պաղատին երեսիդ

<sup>Ը</sup> Եբբ.՝ ամբողջ փառք

<sup>Ք</sup> Եբբ.՝ յիշատակել

<sup>Մ</sup> Այսինքն՝ զիլ ձայնի համար

<sup>Բ</sup> Եբբ.՝ շատ

- 3 Թէւ անոր ջուրերը գոռան ու խոռովին,  
Լեռները ցնցուին անոր <sup>7</sup> ուռնեցալով: (Սելա:)
- 4 Գետ մը կայ, որուն վտակները կ'որախացնեն Աստուծոյ քաղաքը,  
Ամենաբարձրին սուրբ <sup>5</sup> բնակարանները:
- 5 Աստուած անոր մէջ է, ան պիտի չսասանի.  
Աստուած անոր պիտի օգնէ առտուն կանուխ:
- 6 Հեթանոսները կ'ալեկոծին, թագաւորութիւնները կ'երերան.  
Ամենաբարձրը իր ձայնը լսել կու տայ, երկիրը կը հալի:
- 7 Զօրքերու Տէրը մեզի հետ է.  
Յակոբի Աստուածը մեր պատսպարանն է: (Սելա:)
- 8 Եկէ՛ք ու տեսէ՛ք Տէրոջ գործերը.  
Ի՛նչ ակերներ ըրաւ երկրի վրայ:
- 9 Պատերազմները կը դադրեցնէ մինչեւ երկրի ծայրը.  
Աղեղը կը կոտորտէ, նիզակը կը փշրէ, սայլերը կրակով կ'այրէ:
- 10 Հանդարտեցէ՛ք ու գիտցէ՛ք թէ ես Աստուած եմ.  
Հեթանոսներուն մէջ պիտի բարձրանամ, երկրի վրայ պիտի բարձրանամ:
- 11 Զօրքերու Տէրը մեզի հետ է,  
Յակոբի Աստուածը մեզի պատսպարանն է: (Սելա:)

ԳԵՐԱԳՈՅՆ ԻԾԽՈՂԸ

Գլխաւոր երաժիշտին. Կորխի որդիներուն սաղմոսը:

47

- Ծա'փ զարկէք, բոլո՛ր ժողովուրդներ,  
Գոչեցէ՛ք Աստուծոյ ցնծութեան ձայնով:
- 2 Արդարեւ Ամենաբարձր Տէրը ահեղ է.  
Ամբողջ երկրի վրայ մեծահամբաւ թագաւոր է:
- 3 Ժողովուրդները մեզի կ'ենթարկէ,  
Եւ <sup>4</sup> ազգերը մեր ոտքերուն տակ կը դնէ:
- 4 Մեզի ընտրեց մեր ժառանգութիւնը,  
Իր սիրելի Յակոբին մեծափառութիւնը: (Սելա:)
- 5 Աստուած **ուրախութեան** գոչիւնով վեր ելաւ,  
Տէրը շեփորի ձայնով **բարձրացաւ:**
- 6 Սաղմո՛ս երգեցէք Աստուծոյ, սաղմո՛ս ըսէք.  
Սաղմո՛ս երգեցէք մեր թագաւորին, սաղմո՛ս ըսէք,
- 7 Որովհետեւ Աստուա՛ծ է ամբողջ երկրի թագաւորը.  
Ուշիմութեա՛մբ սաղմոս երգեցէք:
- 8 Աստուած <sup>9</sup> ազգերուն վրայ կը թագաւորէ,

<sup>4</sup> Եբր.՝ սիրտը

<sup>7</sup> Եբր.՝ յոխորտալով

<sup>5</sup> Կամ՝ խորանը

<sup>8</sup> Եբր.՝ բնակչութիւնները

<sup>9</sup> Կամ՝ հեթանոսներուն

Աստուած բազմած է իր սուրբ գահին վրայ:

- 9 Ժողովուրդներուն ազնուականները հաւաքուեցան Աբրահամի Աստուծոյն ժողովուրդին հետ, Որովհետեւ երկրին վահանները Աստուծոյ են. Ինք յոյժ բարձրացած է:

**ՍԻՈՆ՝ ԱՍՏՈՒԾՈՅ ԶԱՂԱՔԸ**  
Կորխի որդիներուն երգը. սաղմոս:

**48**

Տէրը մեծ է, ու յոյժ գովելի է Մեր Աստուծոյն քաղաքին մէջ, իր սուրբ լերան վրայ:

- 2 Գեղեցիկ ու բարձր է Ամբողջ երկրին բերկրանքը՝ Հիւսիսային կողմերը եղող Սիոն լեռը, Մեծ Թագաւորին քաղաքը:
- 3 Աստուած անոր պալատներուն մէջ իբր միջնաբերդ ճանչցուած է:
- 4 Արդարեւ ահա՛ թագաւորները հաւաքուեցան, Միասին շրջագայեցան.
- 5 Տեսան ու զարմացան, Շփոթեցան **եւ** աճապարելով **փախան:**
- 6 Հոն դող մը համակեց զանոնք, **«Յաւ մը՝ ծննդաբերող կնոջ ցաւին** պէս.
- 7 Արեւելեան հովով Թարսիսի նաւերը փշրեցիր:
- 8 Ինչպէս լսեցինք՝ այնպէս ալ տեսանք Զօրքերու Տէրոջ քաղաքին մէջ, Մեր Աստուծոյն քաղաքին մէջ. Աստուած զայն պիտի հաստատէ յաւիտենապէս: (Սելա:)
- 9 Ո՛վ Աստուած, քու կարեկցութեանդ վրայ կը մտածենք Զու տաճարիդ մէջ:
- 10 Զու գովաբանութիւնդ, ո՛վ Աստուած, Զու անունիդ պէս մինչեւ երկրի ծայրերն է. Արդարութեամբ լեցուն է քու աջ ձեռքդ:
- 11 Սիոն լեռը թող ուրախանայ, Եւ Յուդայի Բաղջիկները թող խայտան՝ Զու դատաստաններուդ պատճառով:
- 12 <sup>Գ</sup>Պտըտեցէ՛ք Սիոնի շուրջ,

<sup>u</sup> **Եբր.**՝ Երկունքի ցաւ

<sup>p</sup> **Կամ՝** գիւղերը

<sup>q</sup> **Եբր.**՝ Ծրջեցէ՛ք

Շրջապատեցէ՛ք զայն,  
՝Համրեցէ՛ք անոր աշտարակները.

13 <sup>Ե</sup>Ուշադրութեամբ դիտեցէք՝ անոր պատուարները,  
Զննեցէ՛ք անոր պալատները,  
Որպէսզի պատմէք յաջորդ սերունդին:

14 Արդարեւ այս Աստուածը մե՛ր Աստուածն է՝ <sup>Գ</sup>դարէ դար՝.  
Ի՛նք պիտի առաջնորդէ մեզ՝ մինչեւ մահ:

ՀԱՐՍՏՈՒԹԵԱՆ ՎՍՏԱՀԵԼՈՒ ՅԻՄԱՐՈՒԹԻՒՆԸ  
Գլխաւոր երաժիշտին. Կորխի որդիներուն սաղմոսը:

49

Լսեցէ՛ք ասիկա, ո՛վ բոլոր ազգեր,  
Ունկնդրեցէ՛ք, աշխարհի բոլոր բնակիչներ,

2 Ռամիկներ եւ ազնուականներ,  
Հարուստներ եւ աղքատներ, հաւասարապէս:

3 Բերանս իմաստութիւն պիտի արտայայտէ,  
Ու սիրտիս խորհրդածութիւնը՝ հանճար:

4 Իմ ականջս առակի պիտի դարձնեմ,  
Հանելուկս քնարով պիտի լուծեմ:

5 Ինչո՞ւ վախնամ վատ օրերու մէջ,  
Երբ <sup>Մ</sup>հետապնդողներուն անօրէնութիւնը զիս կը շրջապատէ:

6 Իրենց գոյքերուն վստահողներէն,  
Եւ իրենց հարստութեան շատութեամբ պարծեցողներէն

7 Ո՛չ մէկը կրնայ փրկել իր եղբայրը,  
Ո՛չ <sup>Ա</sup>լ անոր փրկանքը Աստուծոյ հատուցանել,

8 (Արդարեւ սուղ է անոնց անձին փրկութեան <sup>Գ</sup>փնդ.  
Թող հրաժարի յաւիտենապէս.)

9 Որպէսզի ապրի ընդմիջտ,  
Եւ ապականութիւն չտեսնէ:

10 Արդարեւ կը տեսնէ թէ իմաստունները կը մեռնին,  
Անմիտն ու անխելքը <sup>Ն</sup>ոյնպէս կը կորսուին,  
Եւ իրենց գոյքերը ուրիշներուն կը թողուն:

11 <sup>Բ</sup>Անոնք կը կարծեն՝ թէ իրենց տուները յաւիտեան <sup>Ա</sup>պիտի գոյատեւեն,  
Ու իրենց բնակարանները՝ սերունդէ սերունդ.  
<sup>Գ</sup>Հողերը իրենց անուններով կը կոչեն:

<sup>Ե</sup> Եբր.՝ Հաշուեցէ՛ք

<sup>Ե</sup> Եբր.՝ Դրէ՛ք ձեր սիրտը

<sup>Գ</sup> Եբր.՝ յաւիտենականութենէ յաւիտենականութիւն

<sup>Մ</sup> Եբր.՝ կրունկներուս

<sup>Բ</sup> Եբր.՝ Անոնց ներքին կարծիքն է

<sup>Գ</sup> Կամ՝ Գետիները



- 12 Բայց մարդը պատիւի մէջ չի մնար,  
Անասուններու նման է, որոնք կը կորսուին:
- 13 Անոնց այս ճամբան իրենց անմտութիւնն է,  
Սակայն անոնց յաջորդները անոնց խօսքերուն պիտի հաւանին: (Սելա:)
- 14 Անոնք ոչխարներու պէս է դժոխքը պիտի դրուին,  
Մա՛հը զանոնք պիտի արածէ.  
Առտուն ուղիղները անոնց պիտի տիրապետեն,  
Անոնց կերպարանքը պիտի կորսուի,  
Իրենց բնակութիւնը դժոխքին մէջ պիտի ըլլայ:
- 15 Սակայն Աստուած դժոխքին տիրապետութենէն պիտի փրկէ իմ անձս,  
Որովհետեւ զիս պիտի ընդունին: (Սելա:)
- 16 Մի՛ վախճար՝ երբ մարդ մը հարստանայ,  
Եւ անոր տան փառքը շատնայ.
- 17 Որովհետեւ երբ մեռնի՝ ոչինչ պիտի լտանի իրեն հետ,  
Ու իր փառքը իր ետեւէն պիտի չիջնէ:
- 18 Թէպէտ իր անձը կ'օրհներ՝ մինչ կ'ապրէր,  
(Զեզ կը ներբողեն՝ երբ դուն քեզի բարիք ընես,)
- 19 Սակայն իր նախահայրերուն սերունդին պիտի երթայ.  
Անոնք ամենեւին լոյս պիտի չտեսնեն:
- 20 Մարդը՝ որ թկը պատուուի՝ բայց չի հասկնար՝  
Անասուններու կը նմանի, որոնք կը կորսուին:

ՃՇՄԱՐԻՏ ՊԱՇՏԱՄՈՒՆԸԸ

Ասափի սաղմոսը

50

ՄՂգօր Աստուածը՝ Տէրը խօսեցաւ,  
Ու երկիրը կանչեց արեւելքէն մինչեւ արեւմուտք:

- 2 Սիոնէն՝ գեղեցկութեան կատարելութենէն  
Աստուած փայլեցաւ:
- 3 Մեր Աստուածը պիտի գայ եւ պիտի չլռէ.  
Անոր առջեւ սպառող կրակ պիտի ըլլայ,  
Ու շուրջը՝ սաստիկ մրրիկ:
- 4 Երկինքը վերէն պիտի կանչէ,

<sup>7</sup> Եբբ.՝ գիշերեր

<sup>8</sup> Այսինքն՝ մեռած անձերու կայանը

<sup>9</sup> Եբբ.՝ մաշի

<sup>10</sup> Եբբ.՝ ձեռքէն

<sup>11</sup> Եբբ.՝ առնէ

<sup>12</sup> Կամ՝ պատիւի մէջ է

<sup>13</sup> Կամ՝ Աստուածներուն

- Նաեւ երկիրը՝ իր ժողովուրդը դատելու համար, **ըսելով**․
- 5** «Հաւաքեցէ՛ք ինձի իմ բարեպաշտներս,  
Ինձի հետ զոհով ուխտ կնքողները»:
- 6** Երկինքը անոր արդարութիւնը պիտի հռչակէ,  
Որովհետեւ Աստուած՝ ինքն է դատաւորը: (Սելա:)
- 7** «Լսէ՛, ո՛վ իմ ժողովուրդս, պիտի խօսիմ.  
Ո՛վ Իսրայէլ, քեզի դէմ պիտի վկայեմ.  
Ես Աստուած եմ, քո՛ւ Աստուածդ:
- 8** Զու զոհերուդ համար չէ որ քեզ կը յանդիմանեմ,  
Կամ ողջակէզներուդ համար՝ որոնք շարունակ իմ առջեւ են:
- 9** Զու տունէդ զուարակ չեմ առներ,  
**Ո՛չ ալ** քու փարախներէդ՝ նոխազներ.
- 10** Որովհետեւ իմս են անտառին բոլոր գազանները,  
Հազարաւոր լեռներուն անասունները:
- 11** Ես կը ճանչնամ լեռներուն բոլոր թռչունները,  
Ու դաշտի <sup>բ</sup>գազանները իմ քովս են՝:
- 12** Եթէ անօթեմամ՝ քեզի պիտի չըսեմ.  
Զանի իմս է երկրագունդը, նաեւ <sup>գ</sup>անոր լիութիւնը՝:
- 13** Միթէ ես ցուրտու միս կ'ուտե՞մ,  
Կամ նոխազներու արիւն կը խմե՞մ:
- 14** <sup>դ</sup>Շնորհակալութեա՛ն զոհ մատուցանէ՛՜ Աստուծոյ,  
Կատարէ՛ ուխտերդ Ամենաբարձրին,
- 15** Եւ ինձի՛ գոչէ տագնապի օրը.  
Ես քեզ պիտի ազատեմ, ու դուն զիս պիտի փառաւորես»:
- 16** Սակայն Աստուած ամբարիշտին կ'ըսէ.  
«Քեզի ի՞նչ՝ որ դուն իմ կանոններս կը թուես,  
Իմ ուխտս բերանդ կ'առնես:
- 17** Արդարեւ դուն խրատը ատեցիր,  
Եւ իմ խօսքերս ետեւդ ձգեցիր.
- 18** Գողը տեսնելով՝ անոր հաւանեցար,  
Ու շնացողներուն բաժնեկից եղար.
- 19** Բերանդ չարախօսութեան <sup>ե</sup>կը յանձնես՝,  
Եւ լեզուդ <sup>զ</sup>խաբէութիւն կը հնարէ՛՜.
- 20** Կը նստիս **ու** եղբօրդ դէմ կը խօսիս,  
Մօրդ որդին կը վարկաբեկես:
- 21** Այս **բաները** ըրիր, ու ես լռեցի.  
Կարծեցիր թէ ես **բոլորովին** քեզի պէս եմ:

<sup>բ</sup> Կամ՝ առատութիւնը իմ քովս է

<sup>գ</sup> Կամ՝ գայն լեցնողները

<sup>դ</sup> Եբբ.՝ Շնորհակալութիւն զոհէ

<sup>ե</sup> Եբբ.՝ կ'արձակես

<sup>զ</sup> Եբբ.՝ խաբէութեան կը յարի

**Բայց** քեզ պիտի յանդիմանեմ,

եւ աչքերուդ առջեւ պիտի զետեղեմ **քու ըրածներդ**:

**22** Ուրեմն հասկցէ՛ք ասիկա, դուք որ Աստուած կը մոռնաք,

Որ **ձեզ** չբզքտեմ եւ ո՛չ մէկ ազատող ըլլայ:

**23** <sup>Է</sup>Շնորհակալութեան զոհ մատուցանողը՝ զիս կը փառաւորէ.

եւ **իր** ճամբային <sup>Ը</sup>ուշադիր եղողին՝

Յոյց պիտի տամ Աստուծոյ փրկութիւնը»:

ԱՂԹԶ՝ ՆԵՐՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Գլխաւոր երածիշտին. Դաւիթի սաղմոսը, երբ Նաթան մարգարէն իրեն եկաւ՝ իր

Բեթսաբէի քով մտնելէն ետք:

**51**

Ողորմէ՛ ինծի, ո՛վ Աստուած, քու կարեկցութեանդ համեմատ,

Ջնջէ՛ իմ յանցանքներս՝ քու առատ գթութեանդ համեմատ:

**2** Բոլորովին լուա զիս իմ անօրէնութենէս,

եւ մաքրէ՛ զիս իմ մեղքէս.

**3** Որովհետեւ ես յանցանքներուս գիտակից եմ,

Ու մեղքս շարունակ իմ առջեւ է:

**4** Զեզի՛, միայն քեզի դէմ մեղանչեցի,

եւ աչքերուդ **առջեւ** չարիք գործեցի.

Հետեւաբար դուն արդար պիտի ըլլաս՝ երբ խօսիս,

եւ ամբիծ՝ երբ դատես:

**5** Ահա՛ ես անօրէնութեամբ <sup>Մ</sup>ծնայ,

Ու մայրս մեղքո՛վ յղացաւ զիս:

**6** Ահա՛ դուն ճշմարտութենէ կ'ախորժիս <sup>Բ</sup>ներքին մարդուն՝ մէջ,

եւ ծածուկ **սեղը** իմաստութիւնը պիտի <sup>Գ</sup>հասկցնես ինծի:

**7** Մաքրէ՛ զիս մեղքէն՝ զոպայի **մշտիկով**, ու մաքուր պիտի ըլլամ.

Լուա՛ զիս, ու ձիւնէն աւելի ճերմակ պիտի ըլլամ:

**8** Բերկրա՛նք եւ ուրախութի՛ն լսել տուր զիս.

Թող խայտան այն ոսկորները՝ որ ճզմեցիր:

**9** Ծածկէ՛ երեսդ իմ մեղքերէս,

Ու ջնջէ՛ բոլոր անօրէնութիւններս:

**10** Մաքո՛ւր սիրտ ստեղծէ իմ մէջս, ո՛վ Աստուած,

Ուղի՛ղ հոգի վերահաստատէ իմ ներսս:

**11** Զիս մի՛ վտարեր ներկայութենէդ,

եւ ինձմէ մի՛ առներ քու Սուրբ Հոգիդ:

<sup>Է</sup> Եբբ.՝ Շնորհակալութիւն զոհողը

<sup>Ը</sup> Եբբ.՝ զգուշութիւն ընողին

<sup>Մ</sup> Եբբ.՝ երկնուեցայ

<sup>Բ</sup> Եբբ.՝ ծածկուած մասերուն

<sup>Գ</sup> Կամ՝ գիտցնես

- 12 Վերադարձո՛ւր ինձի քու փրկութեանդ բերկրանքը,  
Ու յօժարակամ հոգի մը նեցուկ թող ըլլայ ինձի:
- 13 Յանցաւորներուն պիտի սորվեցնեմ քու ճամբաներդ,  
Ու մեղաւորները քեզի պիտի վերադառնան:
- 14 Ո՛վ Աստուած, փրկութեա՛նս Աստուածը,  
Ազատէ՛ զիս արինահեղութենէ,  
**Որ լեզուս ցնծութեամբ խօսի քու արդարութեանդ մասին:**
- 15 Ո՛վ Տէր, բա՛ց շրթունքս,  
Ու բերանս պիտի հռչակէ քու փառաւոր գործերդ՝:
- 16 Արդարեւ զոհէ՛ չես ախորժիր՝ որ **գայն** մատուցանեմ.  
Ողջակէզի **ալ** չես հաւանիր:
- 17 Աստուծոյ **հաճելի** զոհը՝ կոտրած հոգին է.  
Կոտրած ու ճմլուած սիրտը, ո՛վ Աստուած, դուն չես արհամարհեր:
- 18 Բարի՛ք ըրէ Սիոնի՝ քու բարեհաճութեամբդ,  
Կառուցանէ՛ Երուսաղէմի պարիսպները:
- 19 Այն ատեն պիտի ախորժիս արդարութեան զոհերէն,  
Ողջակէզներէն եւ ամբողջովին այրուած զոհերէն.  
Այն ատեն քու զոհասեղանիդ վրայ զուարակներ պիտի մատուցանեն:

ԱՍՏՈՒԾՈՅ ԴԱՏԱՍՏԱՆԸ ԵՒ ՇՆՈՐՀԸ

Գլխաւոր երաժիշտին. Դաւիթի երգը, երբ եղովմայեցի Դովեկ եկաւ, Սաւուղի պատմեց եւ  
անոր ըսաւ. «Դաւիթ Աքիմելէքի տունը մտած է»:

52

Ինչո՞ւ չարութեամբ կը պարծենաս, ո՛վ զօրաւոր **մարդ**.  
Աստուծոյ կարեկցութիւնը ՝մշտատես է:

- 2 Լեզուդ եղեռնագործութիւններ կը հնարէ,  
Սուր ածելիի պէս խաբէութեամբ կը վարուի:
- 3 Չարութիւնը կը սիրես՝ քան բարութիւնը,  
Ստութիւնը՝ քան Բանկեղծութիւնը: (Սելա:)
- 4 Ամէն փորձանող խօսք կը սիրես,  
Ո՛վ խաբեբայ լեզու:
- 5 Ուստի Աստուած քեզ ընդմիջտ պիտի տապալէ,  
Քեզ պիտի բռնէ եւ վրանէդ խլէ,  
Քեզ արմատէդ պիտի խլէ ապրողներու երկրէն: (Սելա:)
- 6 Արդարները պիտի տեսնեն ու վախնան,  
Եւ անոր վրայ պիտի ծիծաղին՝ **ըսելով**.

---

- <sup>7</sup> **Կամ՝** ազնիւ
- <sup>8</sup> **Եբր.**՝ գովաբանութիւնդ
- <sup>9</sup> **Եբր.**՝ ամբողջ օրն
- <sup>10</sup> **Եբր.**՝ արդարութեան խօսքը
- <sup>11</sup> **Եբր.**՝ կլլող

- 7 «Ահա՛ այն <sup>7</sup>մարդը՝ որ Աստուած իրեն ամրոց չըրաւ,  
 Հապա իր հարստութեան ճոխութեան վստահեցաւ,  
 Եւ իր եղեռնագործութեամբ զօրացաւ»:
- 8 Իսկ ես կանաչագարդ ձիթենիի պէս եմ Աստուծոյ տան մէջ.  
 Աստուծոյ կարեկցութեան կը վստահիմ <sup>8</sup>դարէ դար՝:
- 9 Զեզ յաւիտեան պիտի ներբողեմ՝  
 Որովհետեւ ասիկա ըրիր,  
 Ու քու անունիդ պիտի յուսամ՝  
 Զանի որ <sup>9</sup>անպաստաւոր է բարեպաշտներուդ առջեւ:

**ՄԱՐԴՈՑ ԱՆՋԳԱՄՈՒԹԻՒՆԸ**  
 Գլխաւոր երաժիշտին. <sup>7</sup>մահալաթի վրայ. Դաւիթի երգը:

**53**

- Անզգամը իր սիրտին մէջ ըսաւ. «Աստուած չկայ»:  
 Ապականեցան պիղծ անիրաւութեամբ:  
 Չկայ մէկը՝ որ բարիք ընէ:
- 2 Աստուած երկինքէն նայեցաւ մարդոց որդիներուն,  
 Որպէսզի տեսնէ թէ կա՛յ արդեօք ուշիմ մէկը՝  
 Որ Աստուած փնտռէ:
- 3 Բոլորը <sup>3</sup>խտորեցան, միասին անպիտան եղան.  
 Ո՛չ մէկ բարիք ընող կայ, ո՛չ իսկ մէկ **հատ**:
- 4 Միթէ գիտակից չե՞ն անօրէնութիւն գործողները,  
 Որոնք իմ ժողովուրդս կ'ուտեն՝ հաց ուտելու **պէս**,  
 Եւ Աստուծոյ չեն գոչեր:
- 5 Հո՛ն **ուր** երկիւղ չկար՝ անոնք շատ վախցան,  
 Որովհետեւ Աստուած քեզի դէմ բանակողներուն ոսկորները ցրուեց.  
 Ամչցուցիր զանոնք, որովհետեւ Աստուած անարգեց զանոնք:
- 6 Երանի՛ թէ Սիոնէն գար Իսրայէլի փրկութիւնը.  
 Երբ Աստուած իր ժողովուրդը գերութենէն վերադարձնէ՝  
 Յակոբ պիտի խայտայ, **եւ** Իսրայէլ ուրախանայ:

**ԱՂՕԹԸ՝ ԹՇՆԱՄԻՆԵՐԷՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԵԼՈՒ ՀԱՄԱՐ**  
 Գլխաւոր երաժիշտին. նկինօթի վրայ. Դաւիթի երգը, երբ Զիփացիները եկան ու Սաւուդի  
 ըսին. «Ահա՛ Դաւիթ մեր քով պահուըտած է»:

**54**

Ո՛վ Աստուած, ազատէ՛ զիս քու անունովդ,

---

- <sup>7</sup> Եբբ.՝ զօրաւոր մարդը
- <sup>8</sup> Եբբ.՝ յաւիտենականութենէ յաւիտենականութիւն
- <sup>9</sup> Եբբ.՝ լաւ
- <sup>7</sup> Թերեւս՝ նուագարանի մը
- <sup>8</sup> Եբբ.՝ ետ քաշուեցան

Դա՛տս պաշտպանէ քու գորութեամբդ:

- 2 Ո՛վ Աստուած, լսէ՛ իմ աղօթքս,  
Ունկնդրէ՛ բերանիս խօսքերը.
- 3 Որովհետեւ օտարները ինձի դէմ կանգնեցան,  
Բռնակալները իմ անձս կը փնտռեն,  
Եւ Աստուած իրենց առջեւ չդրին: (Սելա:)
- 4 Ահա՛ Աստուած է իմ օգնականս.  
Տէրը անձիս նեցուկ եղողներուն հետ է:
- 5 Չարիքը ՝ոտխներուս պիտի վերադարձնէ.  
Բնաջնջէ՛ զանոնք քու ճշմարտութեամբդ:
- 6 Ես յօժարակամ քեզի զոհ պիտի մատուցանեմ,  
Զու անունդ պիտի ներբողեմ, ո՛վ Տէր, որովհետեւ Բբարի է.
- 7 Արդարեւ զիս ամէն տագնապէ ազատեց,  
Եւ աչքս թշնամիներու կորուստը տեսաւ:

ԲԱՐԵԿԱՍԷ ՄԸ ՄԱՏՆՈՒԱԾԻ ՄԸ ԱՂՕԹԸԸ  
Գլխաւոր երաժիշտին. նկնթի վրայ. Դաւիթի երգը:

55

Ո՛վ Աստուած, ունկնդրէ՛ իմ աղօթքս,  
Եւ մի՛ թաքնուիր իմ աղաչանքէս:

- 2 Մտի՛կ ըրէ ու պատասխանէ՛ ինձի.  
Իմ գանգատովս ՝կը մոլորիմ՝ եւ ալեխոով կ'ըլլամ,
- 3 Թշնամիին ձայնէն եւ ամբարիշտին Բճնշումէն,  
Որովհետեւ վրաս անօրէնութիւն կը Գթափեն,  
Ու բարկութեամբ զիս ՝կը հետապնդեն՝:
- 4 Սիրտս սարսափեցաւ իմ ներսս,  
Եւ մահուան ահերը ինկան վրաս:
- 5 Վախ ու դող Եհամակեցին զիս՝,  
Ահուդողը ծածկեց զիս,
- 6 Եւ ըսի. «Երանի՛ թէ աղաւնիի նման թելեր ունենայի,  
Որպէսզի թռչէի ու հանգչէի.
- 7 Ահա՛ հեռուն կը փախչէի,  
Անապատին մէջ կը Գբնակէի. (Սելա.)

<sup>u</sup> Եբբ.՝ դիտողներուս

<sup>p</sup> Կամ՝ նպաստաւոր

<sup>w</sup> Կամ՝ կը տրտմիմ

<sup>p</sup> Եբբ.՝ ճնշումին երեսէն

<sup>q</sup> Եբբ.՝ սահեցնեն

<sup>r</sup> Եբբ.՝ կ'ատեն

<sup>t</sup> Եբբ.՝ եկան վրաս

- 8 Արտորալով կը փախչէի  
Սաստիկ հովէն ու մրրիկէն»:
- 9 <sup>Կ</sup>Կորսնցորդը **զանոնք**, ո՛վ Տէր. բաժնէ՛ անոնց լեզուները,  
Որովհետեւ քաղաքին մէջ բռնութիւն եւ կռիւ տեսայ:
- 10 Յերեկ ու գիշեր անոր պարիսպներուն վրայ կը շրջին.  
Անօրէնութիւն եւ տաժանք կայ անոր մէջ:
- 11 Եղեռնագործութիւն կայ անոր մէջ,  
Հարստահարութիւնն ու խաբէութիւնը անոր հրապարակներէն չեն հեռանար:
- 12 Արդարեւ թշնամի մը չէր գիս նախատողը՝ որ հանդուրժէի,  
**Կամ** <sup>Բ</sup>Բոսիս չէր ինծի դէմ <sup>Ք</sup>Ի պարտացողը՝ որ անկէ պահուրտէի.
- 13 Հապա դո՛ւն, <sup>Փ</sup>Փնծի հաւասար՝ մարդ մը,  
Իմ մտերի՛մս ու ճանչուո՛րս.
- 14 Իրարու հետ <sup>Ի</sup>Իքաղցր խօսակցութիւն կ'ունենայինք՝,  
Եւ բազմութեան հետ Աստուծոյ տունը կ'երթայինք:
- 15 Մահը <sup>Վ</sup>Վանկարծ անոնց վրայ թող հասնի՞,  
Ու ողջ-ողջ <sup>Խ</sup>Խոթիքը թող իջնեն,  
Որովհետեւ իրենց <sup>Ք</sup>Բնակարաններուն **եւ** իրենց մէջ չարութիւն կայ:
- 16 **Իսկ** ես Աստուածո՛յ պիտի գոչեմ,  
Ու Տէրը գիս պիտի ազատէ:
- 17 Իրիկունը, առտուն եւ կէսօրին պիտի գանգատիմ ու <sup>Կ</sup>հառաչեմ,  
Ան ալ պիտի լսէ իմ ձայնս:
- 18 Խաղաղութեամբ պիտի փրկէ իմ անձս ինծի դէմ **մղուող** պայքարէն,  
Որովհետեւ շատեր քովս էին:
- 19 Աստուած պիտի լսէ,  
Ու <sup>Ն</sup>Նախտենականութեան մէջ՝ բնակողը պիտի խոնարհեցնէ զանոնք. (Սելա.)  
Որովհետեւ անոնք չեն փոխուիր,  
Եւ Աստուծմէ չեն վախնար:

---

<sup>Գ</sup> Եբբ.՝ գիշերէի

<sup>Կ</sup> Եբբ.՝ Կլլէ՛

<sup>Բ</sup> Եբբ.՝ գիս ատողը

<sup>Ք</sup> Եբբ.՝ ինքզինք մեծցնողը

<sup>Փ</sup> Եբբ.՝ ինծի **պէս** գնահատուած

<sup>Ի</sup> Եբբ.՝ մտերմութիւնը կը քաղցրացնէինք

<sup>Վ</sup> Եբբ.՝ զանոնք թող հրապուրէ

<sup>Խ</sup> Այսինքն՝ մեռած անձերու կայանը

<sup>Ք</sup> Եբբ.՝ պանդխտութեան **վայրերուն**

<sup>Կ</sup> Եբբ.՝ գոռամ

<sup>Ն</sup> Եբբ.՝ վաղուց

- 20 **Ամբարիշտը** ձեռքը իրեն հետ խաղաղութեան մէջ եղողներուն վրայ երկարեց, իր ուխտը դրժեց:
- 21 Անոր բերանին **խօսքերը** կոգիէն կակուղ են, Բայց անոր սիրտին մէջ պատերազմ կայ. Անոր խօսքերը իւղէն կակուղ են, Բայց մերկ սուրեր են:
- 22 Զու հոգդ ձգէ՛ Տէրոջ վրայ, Եւ ան քեզի նեցուկ պիտի ըլլայ. Ան երբեք պիտի չթոյլատրէ որ արդարը սասանի:
- 23 Բայց դուն, ո՛վ Աստուած, զանոնք ապականութեան գուրը պիտի իջեցնես. Արիւնահեղ ու խաբեբայ մարդիկը իրենց օրերուն կէսին պիտի չհասնին, Սակայն ես քեզի պիտի վստահիմ:

ՎՍՏԱՀՈՒԹԵԱՆ ԱՂՕԹԸ՝ ԱՍՏՈՒԾՈՅ ՎՐԱՅ

Գլխաւոր երաժիշտին. <sup>ա</sup>Եոնաթ-Էլէմ-Րեհոգիմի վրայ. Դաւիթի երգը, երբ Փղշտացիները բռնեցին զինք Գէթի մէջ:

56

- Ողորմէ՛ ինձի, ո՛վ Աստուած, Որովհետեւ մարդը կ'ուզէ զիս կլլել. Ամէն օր պայքարելով՝ զիս կը տանջէ:
- 2 <sup>բ</sup>Ոսոխներս ամէն օր կ'ուզեն **զիս** կլլել, Զանի շատեր <sup>գ</sup>գոռոզութեամբ կը պայքարին ինձի դէմ:
- 3 <sup>դ</sup>Երբ վախնամ՝ քեզի պիտի վստահիմ:
- 4 Աստուծո՛վ պիտի գովաբանեմ իր խօսքը. Աստուծոյ կը վստահիմ, պիտի չվախնամ. <sup>ե</sup>Մարդը ինձի ի՞նչ **կրնայ** ընել:
- 5 Ամէն օր <sup>զ</sup>զիս կը վշտացնեն՝, Իմ մասիս անոնց բոլոր մտածումները չարութեան համար են:
- 6 Կը զինակցին, կը պահուրտին, Իմ հետքերս կը դիտեն, Որովհետեւ անձիս կը սպասեն՝ **որ զիս կորսնցնեն:**
- 7 Միթէ անօրէնութեամբ պիտի ազատի՞ն. Ո՛վ Աստուած, **քու** բարկութեամբդ նուաստացո՛ւր ժողովուրդները:
- 8 Իմ թափառումներս հաշուեցիր.

<sup>ա</sup> Այսինքն՝ “ Հեռաւոր Բեւեկնիի Աղաւնի□ ին

<sup>բ</sup> Եբբ.՝ Դիտողներս

<sup>գ</sup> Եբբ.՝ բարձրէն, կամ՝ ո՛վ Ամենաբարձր

<sup>դ</sup> Եբբ.՝ Վախնալու ժամանակ

<sup>ե</sup> Եբբ.՝ Մարմինը

<sup>զ</sup> Կամ՝ խօսքերս կը ծռեն



Դի՛ր արցունքներս քու տիկիդ մէջ.

Միթէ **անոնք** քու գիրքիդ մէջ **գրուած** չե՞ն:

**9** Թշնամիներս պիտի նահանջեն այն օրը՝ երբ **քեզի** գոչեմ.

Ասիկա գիտեմ, որովհետեւ Աստուած ինձի հետ է:

**10** Աստուծո՛վ պիտի գովաբանեմ **իր** խօսքը,

Տէրոջո՛վ պիտի գովաբանեմ **իր** խօսքը:

**11** Աստուծոյ կը վստահիմ, պիտի չվախնամ.

Մարդը ինձի ի՞նչ **կրնայ** ընել:

**12** Ո՛վ Աստուած, <sup>է</sup>քեզի ըրած ուխտերս պիտի կատարեմ՝:

Զեզի <sup>Ե</sup>շնորհակալութեան զոհ պիտի մատուցանեմ՝,

**13** Որովհետեւ իմ անձս մահէն ազատեցիր:

Ոտքերս ալ անկումէն **զերծ** չե՞ս **պահեր,**

Որպէսզի Աստուծոյ առջեւ ընթանամ ապրողներու լոյսին մէջ:

ՕԳՆՈՒԹԵԱՆ ԱՂԹԸ

Գլխաւոր երածիշտին. <sup>ա</sup>Ալ-Թաշհէթ. Դաւիթի երգը, երբ Սաւուղի առջեւէն կը փախչէր  
դէպի քարայրը:

57

Ողորմէ՛ ինձի, ո՛վ Աստուած. ողորմէ՛ ինձի,

Որովհետեւ իմ անձս քեզի՛ կ'ապաւիճի:

Զու թեւերուդ հովանիին պիտի ապաւիճիմ,

Մինչեւ որ աղէտները անցնին:

**2** Ամենաբարձր Աստուծոյն պիտի գոչեմ,

Աստուծոյ՝ որ ինձի համար **ամէն ինչ** կը կատարէ:

**3** Երկինքէն պիտի ղրկէ եւ զիս ազատէ,

Ու պիտի նախատէ զիս կլլելու ուզողները. (Սելա.)

Աստուած պիտի ղրկէ իր կարեկցութիւնը եւ ճշմարտութիւնը:

**4** Իմ անձս առիւծներու մէջ է.

<sup>Բ</sup>Բոց փչող՝ մարդոց որդիներուն **մէջ** կը պառկիմ,

Որոնց ակռաները նիզակներ ու նետեր են,

Եւ լեզուն՝ սրածայր սուր:

**5** Բարձրացի՛ր երկինքի վրայ, ո՛վ Աստուած.

Զու փառքդ ամբողջ երկրի վրայ թող ըլլայ:

**6** Իմ քայլերուս ցանց պատրաստեցին,

Անձս կքեցաւ.

Փոս փորեցին առջեւս,

Բայց իրենք ինկան անոր մէջ: (Սելա.)

**7** Սիրտս <sup>Գ</sup>տրամադիր է, ո՛վ Աստուած, սիրտս տրամադիր է.

<sup>է</sup> **Եբբ.**՝ քու ուխտերդ իմ վրաս են

<sup>Ե</sup> **Եբբ.**՝ շնորհակալութիւն պիտի հատուցանեմ

<sup>ա</sup> **Այսինքն**՝ “Մի՛ Կորսնցներ”

<sup>Բ</sup> **Եբբ.**՝ Բոցավառ

Պիտի երգեմ ու սաղմոս պիտի ըսեմ:

8 Արթնցի՛ր, ո՛վ իմ փառքս.

Արթնցե՛ք, ո՛վ տաւիղ եւ քնար.

Ես արշալոյսին պիտի արթննամ:

9 Ո՛վ Տէր, քեզ պիտի ներբողեմ ժողովուրդներուն մէջ.

Զեզի սաղմոս պիտի երգեմ Եազգերուն մէջ,

10 Որովհետեւ քու կարեկցութիւնդ մինչեւ երկինք կը հասնի,

Ու քու ճշմարտութիւնդ՝ մինչեւ նօսր ամպերը:

11 Բարձրացի՛ր երկինքի վրայ, ո՛վ Աստուած,

Զու փառքդ ամբողջ երկրի վրայ թող ըլլայ:

ԱՂԹԸ՝ ՉԱՐԸ ՊԱՏԺԵԼՈՒ ՀԱՄԱՐ  
Գլխաւոր երաժիշտին. ՍԱ-Թաշհէթ. Դաւիթի երգը,

# 58

Իրապէս պապանձելո՞վ արդարութիւն կը խօսիք.

Ուղղամտութեամբ կը դատէք, ո՛վ մարդոց որդիներ:

2 Մանաւանդ սիրտով անիրաւութիւններ կը գործէք,

Երկրի վրայ ձեր ձեռքերով բռնութիւն կը բանեցնէք:

3 Ամբարիշտները **իրենց մօր** արգանդէն հոստորած են,

Պորովայնէն կը մոլորին՝ սուտ խօսելով:

4 Անոնց ժահրը օձի ժահրի նման է:

Խուլ քարբի պէս **եւ**՝ որ իր ականջները կը խցէ.

5 Ան մտիկ չ'ըներ հմայողներուն ձայնը,

Թէեւ Եվարպետութեամբ կը թովեն:

6 Ո՛վ Աստուած, փշրէ՛ անոնց ակռաները իրենց բերաններուն մէջ.

Ո՛վ Տէր, կոտորէ՛ **առիւծի** կորիւններուն ժանիքները:

7 Անոնք թող հալին՝ հոսող ջուրերու պէս.

**Երբ** իրենց **աղեղները** լարեն՝ նետերը **արծակելու համար**, անոնք թող ծայրատուած

<sup>4</sup> Եբբ.՝ պատրաստ, կամ՝ հաստատ

<sup>7</sup> Այսինքն՝ անձս, կամ՝ լեզուս

<sup>8</sup> Եբբ.՝ բնակչութիւններուն

<sup>9</sup> Եբբ.՝ մեծնայ

<sup>10</sup> Այսինքն՝ «Մի՛ կորսնցներ»

<sup>11</sup> Եբբ.՝ կշռէք

<sup>12</sup> Եբբ.՝ օտարացած

<sup>13</sup> Եբբ.՝ փորէն

<sup>14</sup> Եբբ.՝ իմաստութեամբ

<sup>15</sup> Եբբ.՝ գացող

ըլլան:

- 8 Խխունջի պէս ըլլան՝ որ գացած ատենը կը հալի,  
Կնոջ մը վիժած գաւակից պէս ըլլան՝ որ արեւը չտեսնեն:
- 9 Տակաւին ձեր կաթսաները <sup>է</sup>դժնիկներուն կրակը <sup>ը</sup>չզգացած,  
Թէ՛ <sup>բ</sup>թարմ եւ թէ <sup>ժ</sup>բոցավառ դժնիկները մրրիկով պիտի ցրուէ:
- 10 Արդարը պիտի ուրախանայ՝ երբ վրէժխնդրութիւնը տեսնէ.  
Իր ոտքերը ամբարիշտին արիւնին մէջ պիտի լուայ:
- 11 Ուստի մարդ պիտի ըսէ. «Անտարակոյս արդարին համար <sup>հ</sup>վարձատրութիւն կայ.  
Անտարակոյս Աստուած մը կայ՝ որ կը դատէ երկրի վրայ»:

ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ ԱՂՕԹԸ

Գլխաւոր երաժիշտին. <sup>ա</sup>Ալ-Թաշհէթ. Դաւիթի երգը, երբ Սաւուղ մարդիկ ղրկեց եւ տունը <sup>բ</sup>պաշարեցին՝ զինք մեռցնելու համար:

59

Ազատէ՛ զիս թշնամիներէս, ո՛վ իմ Աստուածս.

Պաշտպանէ՛ զիս ինծի դէմ կանգնողներէն:

- 2 Ազատէ՛ զիս անօրէնութիւն գործողներէն,  
Փրկէ՛ զիս արիւնահեղ մարդոցմէն.
- 3 Արդարեւ ահա՛ իմ անձիս դէմ դարան մտան,  
Զօրեղ մարդիկ ինծի դէմ զինակցեցան,  
**Բայց** ո՛չ թէ յանցանքիս եւ մեղքիս համար, ո՛վ Տէր:
- 4 **Թէպէտ** անօրէնութիւն չունիմ, կը վազեն ու կը պատրաստուին.  
Արթնցի՛ր, դիմաւորէ՛ զիս եւ նայէ՛:
- 5 Ո՛վ Տէր, զօրքերո՛ւ Աստուած, Իսրայէլի՛ Աստուածը,  
Արթնցի՛ր, որ բոլոր հեթանոսները <sup>գ</sup>քննես.  
Ո՛չ մէկ անօրէն անհաւատարիմի ողորմէ: (Սեւա:)
- 6 Անոնք իրիկունը կը վերադառնան՝  
Շունի պէս <sup>դ</sup>ոռնալով,  
Ու քաղաքին <sup>ե</sup>մէջ կը շրջին՝:

---

- <sup>է</sup> Փշոտ թուփ մը
- <sup>ը</sup> Եբր.՝ չնկատած
- <sup>բ</sup> Եբր.՝ ապրող
- <sup>ժ</sup> Եբր.՝ բորբոքած
- <sup>հ</sup> Եբր.՝ պտուղ
- <sup>ա</sup> Այսինքն՝ “Մի՛ կորսնցնէր□
- <sup>բ</sup> Եբր.՝ պահպանեցին
- <sup>գ</sup> Եբր.՝ աչքէ անցընես
- <sup>դ</sup> Եբր.՝ գռռալով
- <sup>ե</sup> Եբր.՝ շուրջը կը դառնան

ՍԱՂՄՈՍՆԵՐՈՒ ԳԻՐԸԸ

- 7 Ահա՛ իրենց բերանէն հայհոյութիւն կը ժայթքեցնեն,  
Անոնց շրթունքներուն վրայ սուրեր կան,  
Որովհետեւ կ'ըսեն. «Ո՞վ կը լսէ»:
- 8 Բայց դո՛ւն, ո՛վ Տէր, անոնց վրայ պիտի ծիծաղիս.  
Բոլոր հեթանոսները պիտի ծաղրես:
- 9 Ո՛վ «իմ գօրութիւնս», քեզի՛ պիտի էսպասեմ,  
Զանի Աստուած է իմ պատսպարանս:
- 10 Էիմ Աստուածս իր կարեկցութեամբ՝ պիտի ընդառաջէ ինծի.  
Աստուած պիտի ցուցնէ ինծի Քոսոխներու կորուստը:
- 11 Մի՛ մեռցներ զանոնք, որպէսզի ժողովուրդս չմոռնայ.  
Յնցէ՛ զանոնք քու ոյժովդ,  
Նուաստացոր զանոնք, ո՛վ Տէր, մեր վահանը:
- 12 Թող բռնուին իրենց ամբարտաւանութեան մէջ՝  
Իրենց բերանին մեղքին ու շրթունքին խօսքին համար,  
Նաեւ անէծքին եւ սուտին համար՝ որ կ'արտաբերեն:
- 13 Սպառէ՛ ցասումով, սպառէ՛ զանոնք՝ որպէսզի չքանան,  
Ու գիտնան թէ Աստուած կը տիրէ Յակոբի վրայ,  
Մինչեւ երկրի ծայրերը: (Սելա:)
- 14 Անոնք իրիկունը պիտի վերադառնան՝  
Շունի պէս ոռնալով,  
Եւ քաղաքին մէջ պիտի շրջին:
- 15 Կերակուրի համար աստանդական պիտի շրջին.  
Եթէ չկշտանան՝ «ա՛յդպէս պիտի գիշերեն»:
- 16 Իսկ ես քու գօրութիւնդ պիտի երգեմ,  
Առտուն քու կարեկցութեամբդ պիտի ցնծամ,  
Որովհետեւ դուն ինծի միջնաբերդ եղար  
Եւ ապաստանարան՝ իմ տագնապիս օրը:
- 17 Ո՛վ իմ գօրութիւնս, քեզի՛ սաղմոս պիտի երգեմ,  
Զանի իմ պատսպարանս Աստուած է,  
Ի՛նծի կարեկից Աստուածը՝:

ՓՐԿՈՒԹԵԱՆ ԱՂՕԹԸ

Գլխաւոր երաժիշտին. <sup>ա</sup>Շուշան-էտութի վրայ. Դաւիթի երգը՝ սորվեցնելու համար, երբ

<sup>գ</sup> Կամ՝ անոր գօրութիւնը

<sup>է</sup> Եբբ.՝ դիտեմ

<sup>բ</sup> Եբբ.՝ Կարեկցութեանս Աստուածը

<sup>բ</sup> Եբբ.՝ դիտողներուս

<sup>դ</sup> Կամ՝ պիտի տրտնջեն

<sup>ի</sup> Եբբ.՝ Կարեկցութեանս Աստուածը

<sup>ա</sup> Այսինքն՝ «Շուշանը Վկայութիւն է»

պատերազմեցաւ Միջագետքի Ասորիներուն եւ Սուբայի Ասորիներուն դէմ, ու Յովաբ՝ վերադառնալով՝ Եդովմայեցիներէն տասներկու հազար հոգի զարկաւ Ադի ձորին մէջ:

60

Ո՛վ Աստուած, մեզ մերժեցիր,  
Մեզ <sup>բ</sup>ցրուեցիր ու բարկացար.  
Վերադարձի՛ր մեզի՞:

2 Երկիրը շարժեցիր, զայն ճեղքեցիր.  
<sup>ն</sup>Նորոգէ՛ անոր փլած տեղերը, որովհետեւ կ'երերայ:

3 Զու ժողովուրդիդ տաժանք ցոյց տուիր.  
Մեզի թմրութեան գինի խմցուցիր:

4 Զեզմէ վախցողներուն դրօշակ տուիր,  
Որ <sup>ե</sup>ճշմարտութեան համար պարզեն՞. (Սելա.)

5 Որպէսզի քու սիրելիներդ ազատին:  
Փրկէ՛ աջ ձեռքովդ, ու պատասխանէ՛ ինծի:

6 Աստուած իր <sup>գ</sup>սրբութեամբ խօսեցաւ.  
«Ես պիտի հրճուիմ՝ Սիւքէմը բաժնելով,  
Ու Սոկքովթի հովիտը չափելով:

7 Գաղաադ իմս է, Մանասէ իմս է,  
Եփրեմ գլուխիս <sup>է</sup>զօրութիւնն է.  
Յուդա իմ օրէնսդիրս է:

8 Մովաբ իմ լուացուելու կոնքս է.  
Եդովմի վրայ պիտի ձգեմ իմ կօշիկս:  
Ո՛վ <sup>բ</sup>Փղշտացիներ, գոչեցէ՛ք ինծի համար»:

9 Ո՞վ պիտի տանի զիս <sup>բ</sup>ամրացած քաղաքը.  
Ո՞վ պիտի առաջնորդէ զիս մինչեւ Եդովմ:

10 Միթէ դուն չե՞ս, ո՛վ Աստուած, որ մեզ մերժեցիր,  
Ու մեր զօրքերուն հետ <sup>ժ</sup>չգացիր, ո՛վ Աստուած:

11 Օգնութի՛նն տուր մեզի՝ տագնապի մէջէն **ելլելու**,  
Որովհետեւ ընդունայն է մարդուն <sup>ի</sup>օգնութիւնը.

---

<sup>բ</sup> Եբբ.՝ պատռեցիր

<sup>գ</sup> Կամ՝ վերադարձո՛ւր մեզ

<sup>դ</sup> Եբբ.՝ Բուժէ՛

<sup>է</sup> Կամ՝ փախչին աղեղին առջեւէն

<sup>զ</sup> Կամ՝ սրբարանին մէջ

<sup>է</sup> Եբբ.՝ ամրոցն

<sup>բ</sup> Եբբ.՝ Պաղեստին

<sup>բ</sup> Եբբ.՝ պատնէշով

<sup>ժ</sup> Եբբ.՝ դուրս չելար

<sup>ի</sup> Եբբ.՝ ազատութիւնը

12 Աստուծո՛վ ոյժ պիտի բանեցնենք.  
Ա՛ն պիտի կոխկռտէ մեր թշնամիները:

ՊԱՆՊԱՆՈՒԹԵԱՆ ԱՂՕԹԸ

Գլխաւոր երաժիշտին. նկինօթի վրայ. Դաւիթի սաղմոսը:

61

Ո՛վ Աստուած, լսէ՛ իմ <sup>ա</sup>պաղատանքս,  
Եւ ուշադի՛ր եղիր աղօթքիս:

2 Զեզի պիտի գոչեմ երկրի ծայրէն՝ երբ սիրտս թալկանայ.  
Առաջնորդէ՛ զիս դէպի <sup>բ</sup>հնձմէ բարձր եղող վէմը,

3 Որովհետեւ դուն ինձի ապաւէն եղար,  
Ամուր աշտարակ մը՝ թշնամիին դէմ:

4 Ես քու վրանիդ մէջ պիտի <sup>գ</sup>բնակիմ յաւիտենապէս.  
Քու թեւերուդ ծածկոյթին պիտի ապաւինիմ: (Սելա:)

5 Արդարեւ դուն, ո՛վ Աստուած, լսեցիր իմ ուխտերս,  
<sup>դ</sup>հնձի տուիր քու անունէդ վախցողներուն ժառանգութիւնը:

6 Թագաւորին օրերուն վրայ օրե՛ր ակելցուր.  
Անոր տարիները սերունդէ սերունդ թող ըլլան.

7 Յաւիտեան Աստուծոյ առջեւ թող բազմի.  
<sup>ե</sup>Հրահանգէ՛ կարեկցութեան եւ ճշմարտութեան, որպէսզի զինք պաշտպանեն:

8 Այն ատեն յաւերժ սաղմոս պիտի երգեմ քու անուանդ,  
Որպէսզի ամէն օր ուխտերս կատարեմ:

ՎՍՏԱՀՈՒԹԻՒՆ ԱՍՏՈՒԾՈՅ ՎՐԱՅ

Գլխաւոր երաժիշտին՝ Իդիթունի համաձայն. Դաւիթի սաղմոսը:

62

Իմ անձս միայն Աստուծոյ <sup>ա</sup>կը վստահի՞.  
Իրմէ՛ է իմ փրկութիւնս.

2 Միայն ի՛նք է իմ վէմս ու փրկութիւնս.  
Իմ միջնաբերդս է, շատ պիտի չսասանիմ:

3 Մինչեւ ե՞րբ մարդու մը վրայ պիտի յարձակիք.  
Բոլո՛րդ ալ պիտի ջախջախուիք՝

Ծռած պատի ու խախտու ցանկապատի պէս:

4 Անոնք կը խորհրդակցի՞ն՝ միայն <sup>բ</sup>գայն իր վեհութենէն <sup>գ</sup>վար ձգելու՞ համար.

<sup>ա</sup> Եբբ.՝ ճիչս

<sup>բ</sup> Եբբ.՝ ինձի համար շատ

<sup>գ</sup> Եբբ.՝ պանդխտանամ

<sup>դ</sup> Եբբ.՝ Սահմանէ՛

<sup>ա</sup> Եբբ.՝ լուռ կը կենայ

<sup>բ</sup> Եբբ.՝ քշելու

Ստույթեան կը հաւանին.

Իրենց բերանով կ'օրհնեն,

Բայց իրենց սիրտով կ'անհիծեն: (Սելա:)

5 Ո՛վ իմ անձս, միայն Աստուծոյ փստահէ,

Որովհետեւ իրմէ է իմ յոյսս:

6 Միայն ի՛նք է իմ վէմս եւ փրկութիւնս.

Իմ միջնաբերդս է, պիտի չսասանիմ:

7 Իմ փրկութիւնս ու փառքս Աստուծմէ՛ են.

Իմ զօրութեանս վէմը **եւ** ապաւէնս Աստուած է:

8 Ամէն ժամանակ վստահեցէ՛ք անոր, ո՛վ ժողովուրդ.

Բացէ՛ք ձեր սիրտերը անոր առջեւ,

**Որովհետեւ** Աստուած ապաւէն է մեզի: (Սելա:)

9 Անտարակոյս ռամիկ մարդիկը ունայնութիւն են,

Ազնուական մարդիկը սուտ են.

Եթէ կշիռքի մէջ դրուին,

Բոլորն ալ ունայնութենէն **թեթեւ** են:

10 Հարստահարութեան մի՛ վստահիք,

Յափշտակութեան վրայ փունճ **յոյս** մի՛ դնէք.

Եթէ հարստութիւնը շատնայ,

Ձեր սիրտը **անոր** մի՛ կապէք՝:

11 Մէկ անգամ Աստուած խօսեցաւ,

Երկու անգամ սա՛ լսեցի,

Թէ զօրութիւնը Աստուծոյ կը պատկանի:

12 Կարեկցութիւնն ալ քեզի կը պատկանի, ո՛վ Տէր.

Որովհետեւ իւրաքանչիւրին կը հատուցանես իր գործին համեմատ:

ՓԱՓԱՔ ԱՍՏՈՒԾՈՅ ՀԱՆԴԷՊ

Դաւիթի սաղմոսը, երբ Յուդայի անապատին մէջ էր:

63

Ո՛վ Աստուած, դո՛ւն ես իմ Աստուածս.

Արշալոյսին քե՛զ կը փնտռեմ:

Անձս կը ծարաւնայ քեզի, ու մարմինս կը կարօտնայ քեզ,

Անջրդի եւ ծարաւուտ երկրի մը մէջ՝ ուր ջուր չկայ,

2 Զու զօրութիւնդ ու փառքդ տեսնելու համար՝

Ինչպէս քեզ դիտած եմ սրբարանին մէջ:

3 Զանի քու կարեկցութիւնդ կեանքէն լաւ է,

Իմ շրթունքս քեզ պիտի դրուատէ:

4 Այսպէս՝ քեզ պիտի օրհնաբանեմ որքան **ատեն** որ ապրիմ,

Զու անունովդ ձեռքերս պիտի բարձրացնեմ:

Գ Եբբ.՝ լուռ կեցիր

Դ Եբբ.՝ Թափեցէ՛ք

Ե Եբբ.՝ անոր վրայ մի՛ դնէք

- 5 Իմ անձս պիտի կշտանայ՝ իբր թէ ճարպով ու պարարտութեամբ,  
Եւ իմ բերանս պիտի գովաբանէ քեզ ցնծութեան շրթունքով:
- 6 Երբ անկողիցիս վրայ քեզ կը յիշեմ,  
Գիշերուան պահերուն մէջ քու մասիդ կը խորհրդածեմ.
- 7 Որովհետեւ ինծի օգնական եղար,  
Ու քու թելերուդ հովանիից տակ պիտի ցնծամ:
- 8 Իմ անձս քեզի կը յարի,  
Քու աջ ձեռքդ ինծի նեցուկ կ'ըլլայ.
- 9 Բայց անոնք որ անձս կը փնտռեն՝ գայց <sup>ա</sup>կորսնցնելու համար,  
Երկրի ստորին մասերը պիտի մտնեն,
- 10 <sup>բ</sup>Սուրով պիտի իյնան՝,  
<sup>գ</sup>Աղուէսներու բաժին պիտի ըլլան:
- 11 Բայց թագաւորը Աստուծով պիտի ուրախանայ.  
Ո՛վ որ անով երդում ընէ՝ պիտի պարծենայ,  
Իսկ ստախօսներուն բերանը պիտի փակուի:

**ԱՂԹԸ՝ ՊԱՀՊԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ**  
Գլխաւոր երածիշտին. Դաւիթի սաղմոսը:

**64**

- Ո՛վ Աստուած, լսէ՛ իմ ձայնս՝ երբ կը գանգատիմ.  
Պահպանէ՛ կեանքս թշնամիից երկիւղէն:
- 2 <sup>ա</sup>Պահէ՛ զիս չարագործներուն խորհրդածողովէն,  
Անօրէնութիւն գործողներուն բազմութենէն,
- 3 Որոնք իրենց լեզուները սուրի պէս կը սրեն,  
Իրենց աղեղները կը լարեն՝ որ իրենց նետերը – լեղի խօսքերը –
- 4 Ծածուկ տեղէն արձակեն պարկեշտին.  
Յանկարծակի անոր կ'արձակեն, ու չեն վախնար:
- 5 Իրենց չար արարքներուն մէջ <sup>բ</sup>կը քաջալերուին՝,  
Որոգայթներ թաղելու մասին կը խօսակցին.  
Կ'ըսեն. «Ո՛վ պիտի տեսնէ զանոնք»:
- 6 Անհրաւութիւն կը <sup>գ</sup>հնարեն,  
Ու կ'ըսեն. «<sup>դ</sup>Վերջացուցինք մեր ծրագրածը"»:  
Իւրաքանչիւրին ներսը եւ սիրտը խորունկ են:

---

- <sup>ա</sup> Երբ.՝ աներելու
- <sup>բ</sup> Երբ.՝ Սուրի ձեռքով պիտի գլորին
- <sup>գ</sup> Կամ՝ Ծնագայլերու
- <sup>ա</sup> Երբ.՝ Ծածկէ՛
- <sup>բ</sup> Երբ.՝ կ'ուժովնան
- <sup>գ</sup> Երբ.՝ փնտռեն
- <sup>դ</sup> Երբ.՝ Մեր փնտռած փնտռտուրը վերջացաւ



- 7 Բայց Աստուած իր նետը անոնց պիտի արձակէ.  
Անոնք յանկարծ պիտի վիրաւորուին:
- 8 Անոնց լեզուն զիրենք պիտի <sup>ե</sup>տապալէ իրարու վրայ.  
Բոլոր զանոնք տեսնողները պիտի փախչին:
- 9 Բոլոր մարդիկը պիտի վախնան.  
Աստուծոյ արարքները պիտի հռչակեն,  
Եւ անոր գործին <sup>զ</sup>ուշադրութիւն դարձնեն<sup>ն</sup>:
- 10 Արդարը Տէրոջմով պիտի ուրախանայ, եւ անոր պիտի ապաւինի.  
Ամէն սիրտով ուղիղ՝ **անով** պիտի պարծենայ:

ԳՈՎԱԲԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԾՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ  
Գլխաւոր երաժիշտին. Դաւիթի սաղմոսը. երգ:

## 65

- Ո՛վ Աստուած, <sup>ա</sup>վստահաբար պիտի գովաբանուիս Սիոնի մէջ,  
Ու քեզի եղած ուխտը պիտի կատարուի:
- 2 Ո՛վ աղօթք լսող,  
Ամէն <sup>բ</sup>մարդ քեզի պիտի գայ:
- 3 <sup>զ</sup>Անօրէնութիւնները ինձմէ զօրաւոր եղան.  
Դո՛ւն պիտի քաւես մեր յանցանքները:
- 4 Երանի՛ անոր որ կ'ընտրես ու **քեզի** կը մօտեցնես,  
Որպէսզի բնակի քու գաւիթներուդ մէջ.  
Պիտի կշտանանք քու տանդ՝  
Քու սուրբ տաճարիդ բարութեամբ:
- 5 Ահաւոր **արարքներով**՝ արդարութեամբ պիտի պատասխանես մեզի,  
Ո՛վ մեր փրկութեան Աստուածը,  
Երկրի բոլոր ծայրերուն ու ծովերէն հեռու եղողներուն ապահովութիւնը:
- 6 Դո՛ւն լեռները հաստատեցիր քու կարողութեամբդ՝  
Զօրութեամբ գօտելորուելով:
- 7 Դուն կը հանդարտեցնես ծովերուն ժխորը,  
Անոնց ալիքներուն ժխորը,  
Եւ <sup>դ</sup>ազգերուն դղրդիւնը:
- 8 **Երկրի** ծայրերը բնակողները պիտի վախնան քու նշաններէդ.  
Առտուան եւ իրիկուան ելքը դուն կը ցնծացնես:
- 9 Երկիրը աչքէ կ'անցընես ու զայն կը ջրես,  
Զայն առատօրէն կը հարստացնես.

<sup>ե</sup> Եբր.՝ գայթեցնէ

<sup>զ</sup> Եբր.՝ հասկնան

<sup>ա</sup> Եբր.՝ լռութեամբ

<sup>բ</sup> Եբր.՝ մարմին

<sup>զ</sup> Կամ՝ Անօրէնութեան խօսքերը

<sup>դ</sup> Եբր.՝ բնակչութիւններուն

Աստուծոյ առուն ջուրով լեցուն է:  
«Անոց ցորեն կը պատրաստես,  
Որովհետեւ սա՛պէս կը պատրաստես՝ զայն...»

- 10 Անոր ակօսները կ'ոռոգես,  
Անոր ճեղքերը կը հարթես,  
Զայն կը կակուղցնես տարափներով,  
Անոր **մէջ** բուսածը կ'օրհնես:
- 11 Տարին կը <sup>է</sup>պսակես քու բարիքներովդ,  
Եւ քու արահետներդ պարարտութիւն կը կաթեցնեն.
- 12 Անապատի մարգագետիններուն **վրայ** կը կաթեցնեն,  
Ու բլուրները խայտանքով կը գօտետորուին:
- 13 Արօտները հօտերով կը ծածկուին,  
Եւ հովիտները՝ ցորենով:  
Անոնք **ցնծութեամբ** կը գոռան ու կ'երգեն:

ԳՈՎԱԲԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԾՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԵՐԳ  
Գլխաւոր երաժիշտին. սաղմոս. երգ:

66

**Յնծութեամբ** գոչեցէք Աստուծոյ, դուք բոլորդ՝ երկրի բնակիչներ:

- 2 Սաղմո՛ս երգեցէք անոր անունին փառքին,  
Փառաւոր՝ ըրէք անոր գովաբանութիւնը:
- 3 Ըսէ՛ք Աստուծոյ. «Ո՛րքան ահաւոր են քու գործերդ.  
Թշնամիներդ քեզի պիտի <sup>ա</sup>հպատակին՝  
Քու մեծ գօրութեանդ համար:
- 4 Ամբողջ երկիրը պիտի երկրպագէ քեզի,  
Սաղմոս պիտի երգէ քեզի,  
Սաղմոս պիտի ըսէ քու անունիդ»: (Սելա:)
- 5 Եկէ՛ք ու տեսէ՛ք Աստուծոյ գործերը.  
Ան **իր** արարքներով ահեղ է մարդոց <sup>բ</sup>որդիներուն հանդէպ՝:
- 6 Ծովը ցամաքի վերածեց,  
Գետէն ոտքով անցան.  
Հոն իրմով ուրախացանք:
- 7 Իր գօրութեամբ յաւիտեան կը տիրէ.  
Անոր աչքերը ազգերը կը դիտեն.  
Ապստամբները իրենք զիրենք թող չբարձրացնեն: (Սելա:)
- 8 Ո՛վ ժողովուրդներ, օրհնաբանեցէ՛ք մեր Աստուածը.

---

- <sup>ա</sup> Այսինքն՝ Մարդոց
- <sup>բ</sup> Այսինքն՝ երկիրը
- <sup>է</sup> Եբր.՝ թագադրես
- <sup>ա</sup> Եբր.՝ ստեն
- <sup>բ</sup> Եբր.՝ որդիներէն անելի

Լսել տուէք անոր գովաբանութեան ձայնը:

- 9 Ի՛նք մեր անձը <sup>Գ</sup>ողջ կը պահէ՛»,  
Եւ չի թոյլատրեր որ մեր ոտքերը սահին:
- 10 Արդարեւ դուն փորձարկեցիր մեզ, ո՛վ Աստուած.  
Զտեցիր մեզ, ինչպէս արծաթը կը զտուի:
- 11 Մեզ ցանցի մէջ մտցուցիր.  
Ծանր բեռ դրիր մեր մէջքին վրայ:
- 12 Մեր գլուխներուն վրայ մարդիկ հեծցուցիր.  
Կրակն ու ջուրը մտանք,  
Սակայն մեզ դուրս հանեցիր՝ առատութեան տեղը:
- 13 Ողջակէզներով պիտի մտնեմ քու տունդ.  
Պիտի կատարեմ ուխտերս՝
- 14 Որոնք շրթունքս <sup>Դ</sup>խոստացաւ,  
Եւ տագնապիս մէջ բերանս խօսեցաւ:
- 15 Պարարտ **անասուններ** պիտի մատուցանեմ քեզի իբր ողջակէզ՝ խոյերու խունկով.  
Արջառներէն զուարակներ պիտի զոհեմ՝ նոխազներու հետ: (Սելա:)
- 16 Եկէ՛ք ու լսեցէ՛ք, դուք բոլորդ՝ որ Աստուծմէ կը վախնաք,  
Եւ պատմեմ ինչ որ ըրաւ իմ անձիս:
- 17 Բերանովս անոր գոչեցի,  
Ու լեզուովս <sup>Ե</sup>գինք բարձրացուցի՝:
- 18 Եթէ սիրտիս մէջ անօրէնութիւն տեսնէի՝  
Տէրը պիտի չլսէր:
- 19 Սակայն Աստուած լսեց,  
Աղօթքիս ձայնին ուշադիր եղաւ:
- 20 Օրհնեա՛լ ըլլայ Աստուած՝ որ աղօթքս **չմերժեց**,  
Եւ իր կարեկցութիւնը ինձմէ չհեռացուց:

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԵՐԳ

Գլխաւոր երաժիշտին. նկիւնօթի վրայ. սաղմոս. երգ:

67

Աստուած թող ողորմի մեզի եւ օրհնէ մեզ,  
Իր երեսը թող <sup>Մ</sup>պայծառացնէ մեր վրայ, (Սելա,)

- 2 Որպէսզի երկրի վրայ քու ճամբադ ճանչցուի,  
Ու բոլոր ազգերուն մէջ՝ քու փրկութիւնդ:
- 3 Ժողովուրդները քե՛զ թող ներբողեն, ո՛վ Աստուած.  
Բոլո՛ր ժողովուրդները քե՛զ թող ներբողեն:
- 4 <sup>Բ</sup>Ազգերը թող ուրախանան եւ ցնծան,

<sup>Գ</sup> Եբբ.՝ կեանք կը դնէ

<sup>Դ</sup> Եբբ.՝ բացաւ

<sup>Ե</sup> Եբբ.՝ ինք բարձրացաւ

<sup>Մ</sup> Եբբ.՝ լուսաւորէ

<sup>Բ</sup> Եբբ.՝ Բնակչութիւնները

Որովհետև ժողովուրդները ուղղամտությամբ պիտի դատես,  
Ու երկրի ազգերը դո՛ւն պիտի առաջնորդես: (Սելա:)

5 Ժողովուրդները քե՛զ թող ներբողեն, ո՛վ Աստուած,  
Բոլո՛ր ժողովուրդները քե՛զ թող ներբողեն:

6 Գետինը իր արգասիքը պիտի տայ,  
Եւ Աստուած – մեր Աստուածը – մեզ պիտի օրհնէ:

7 Աստուած մեզ պիտի օրհնէ,  
Ու երկրի բոլոր ծայրերը իրմէ պիտի վախճան:

ՅԱՂԹԱՆԱԿԻ ԱԶԳԱՅԻՆ ԵՐԳ

Գլխաւոր երաժիշտին. Դաւիթի սաղմոսը. երգ:

68

Աստուած թող կանգնի, իր թշնամիները թող ցրուի,  
Եւ զինք ատողները իր «առջեւէն թող փախչին:

2 Տարտղնէ՛ զանոնք՝ ինչպէս մուխը կը տարտղնուի.  
Ինչպէս մեղրամոմը կրակին առջեւ կը հալի,  
Ա՛յնպէս թող կորսուին ամբարիշտները Աստուծոյ առջեւէն:

3 Բայց արդարները թող ուրախանան,  
Աստուծոյ առջեւ թող հրճուին  
Եւ ուրախութեամբ թող բերկրին:

4 Երգեցէ՛ք Աստուծոյ, սաղմո՛ս ըսէք անոր անունին.  
Ճամբա՛յ պատրաստեցէք Բամպերու վրայ՝ հեծնողին:  
Անոր անունը՝ Եսահ է.  
Հրճուեցէ՛ք անոր առջեւ:

5 Որբերուն հայրն ու այրիներուն դատաւորը  
Աստուած է՝ իր սուրբ բնակավայրին մէջ:

6 Աստուած միայնակ եղողները ՚ընտանիքի մէջ կը բնակեցնէ,  
Կապուածները՝ «ազատ կ'արձակէ» ու կ'երջանկացնէ,  
Բայց ապստամբները չոր տեղեր կը բնակին:

7 Ո՛վ Աստուած, երբ քու ժողովուրդիդ առջեւէն՝ գացիր,  
Երբ անապատէն յառաջացար, (Սելա,)

8 Երկիրը շարժեցաւ, երկինքն ալ շաղ կաթեցուց Աստուծոյ առջեւ.  
Սինան ալ շարժեցաւ Աստուծոյ՝ Իսրայէլի Աստուծոյն առջեւ:

9 Ո՛վ Աստուած, քու ժառանգութեանդ՝ առատ տեղատարափ ըտուիր.

<sup>ա</sup> Եբբ.՝ երեսէն

<sup>բ</sup> Կամ՝ անապատի մէջ

<sup>գ</sup> Կամ՝ Եհովա, այսինքն՝ Ա՛ն՝ որ է, կամ՝ Յաւիտենականը

<sup>դ</sup> Եբբ.՝ տան

<sup>ե</sup> Եբբ.՝ դուրս կը հանէ

<sup>զ</sup> Եբբ.՝ դուրս ելար

Երբ հիւծած էր՝ դուն **զայն** հաստատեցիր:

- 10** Զու <sup>բ</sup>ժողովուրդդ անոր մէջ բնակեցաւ.  
Զու <sup>ժ</sup>բարիքներդ դժբախտին համար պատրաստեցիր, ո՛վ Աստուած:
- 11** Տէրը պատգամ տուաւ,  
Աւետաբեր **կիները** մեծ զօրաբաժին եղան.
- 12** «Զօրքերուն թագաւորները կը փախչի՛ն, կը փախչի՛ն»,  
Եւ տան մէջ բնակող **կիը** ասարը կը բաժնէ:
- 13** Թէեւ գոմերուն մէջտեղը պառկած ըլլաք,  
Աղանիի թներուն **պէս** պիտի ըլլաք՝ **որոնք** արծաթով ծածկուած **եց**,  
Իսկ անոր փետուրները՝ դեղնորակ ընտիր ոսկիով:
- 14** Երբ Ամենակարողը այդ **երկրին** մէջ թագաւորներ <sup>հ</sup>ցրուեց,  
**երկիրը** ճերմկցաւ Սելմոնի ձիւնին պէս:
- 15** Աստուծոյ լեռը Բասան լեռան **պէս** է,  
Բազմագագաթ լեռը մը՝ Բասան լեռան **պէս**:
- 16** Ո՛վ բազմագագաթ լեռներ, ինչո՞ւ նախանձով կը նայիք  
Այն լեռան՝ ուր Աստուած <sup>լ</sup>փափաքեցաւ բնակիլ.  
Այո՛, Տէրը **հոն** պիտի բնակի ընդմիշտ:
- 17** Աստուծոյ կառքերը քսան հազար են, <sup>և</sup>հազարներով հազար՝.  
Տէրը անոնց մէջ է, **իր** սուրբ **տեղը՝ ինչպէս Սինայի մէջ**:
- 18** Բարձր **վայրը** ելար, գերութիւնը գերեվարեցիր,  
Պարգեւներ առիր մարդոց համար,  
Նոյնիսկ ապստամբներուն համար,  
Որպէսզի <sup>ժ</sup>Տէր Աստուած **անոնց մէջ** բնակի:
- 19** Օրհնեա՛լ ըլլայ Տէրը օրէ օր.  
**Երբ** բեռնաւորուինք՝  
Աստուած մեզ կը փրկէ: (Սելա:)
- 20** Մեր Աստուածը փրկութեան Աստուածն է,  
Մահէն <sup>կ</sup>ազատողը Տէրն է՝ Եհովան.
- 21** Սակայն Աստուած պիտի կոտրէ իր թշնամիներուն գլուխը,  
Նաեւ իր յանցանքներուն մէջ ընթացողին մազոտ գագաթը:

---

<sup>է</sup> Եբր.՝ յօժարակամ

<sup>բ</sup> Եբր.՝ ցօղեցիր

<sup>բ</sup> Եբր.՝ զօրագունդդ

<sup>ժ</sup> Եբր.՝ բարութեամբդ

<sup>հ</sup> Եբր.՝ տարածեց

<sup>լ</sup> Եբր.՝ ցանկաց

<sup>և</sup> Կամ՝ հազարաւոր հրեշտակներ

<sup>ժ</sup> Եբր.՝ Եահ

<sup>կ</sup> Եբր.՝ դուրս հանողը

- 22 Տէրը ըսաւ. «**Իմ ժողովուրդս** Բասանէն պիտի վերադարձնեմ,  
Ծովուն խորխորատներէն պիտի վերադարձնեմ,
- 23 Որպէսզի ոտքդ թշնամիներու արիւնին մէջ թաթխուի,  
**Եւ** շուներուդ լեզուն իր բաժինը **առնէ**»:
- 24 Զու շքերթներդ տեսան, ո՛վ Աստուած.  
Իմ Աստուծոյս, իմ Թագաւորիս շքերթները՝ սրբարանին մէջ:
- 25 Առջեւէն երգողները կ'երթային,  
Ետեւէն՝ նուագահարները,  
Թմբկահար օրիորդներուն մէջտեղը.
- 26 «Օրհնաբանեցէ՛ք Աստուած համախմբումներուն մէջ,  
**Օրհնաբանեցէ՛ք** Տէրը՝ **դո՛ւք որ** Իսրայէլի աղբիւրէն էք»:
- 27 Հոն է կրտսեր Բենիամինը՝ որ անոնց կը տիրապետէ,  
**Հոն են** Յուդայի իշխանաւորները՝ իրենց բազմութեամբ,  
Զաբուղոնի իշխանաւորներն **ու** Նեփթաղիմի իշխանաւորները:
- 28 Զու Աստուածդ՝ <sup>6</sup>ապահովեց զօրութիւնդ.  
Զօրացո՛ւր, ո՛վ Աստուած, ինչ որ մեզի համար ըրիր:
- 29 Երուսաղէմ եղող տաճարիդ համար՝  
Թագաւորները քեզի ընծաներ պիտի բերեն:
- 30 Սաստէ՛ եղէգներու մէջ **բնակող** գազանը, <sup>8</sup>ցուլերուն խումբը՝  
Ժողովուրդներուն հորթերուն հետ,  
Որպէսզի հպատակին՝ արծաթի կտորներ **բերելով**.  
Յրուէ՛ պատերազմէն ախորժող ժողովուրդները:
- 31 Եգիպտոսէն ազնուականներ պիտի գան.  
Եթովպիա իր ձեռքերը <sup>7</sup>աճապարանքով պիտի երկարէ՝ Աստուծոյ:
- 32 Ո՛վ երկրի թագաւորութիւններ, երգեցէ՛ք Աստուծոյ,  
Սաղմո՛ս ըսէք Տէրոջ, (Սելա,)
- 33 Անոր՝ որ երկինքին վրայ կը <sup>5</sup>նստի, <sup>5</sup>յաւիտեանական երկինքին վրայ.  
Ահա՛ ան իր ձայնը **լսել** կու տայ, **իր** զօրաւոր ձայնը:
- 34 <sup>1</sup>Փա՛ռք տուէք Աստուծոյ.  
Անոր մեծափառութիւնը Իսրայէլի վրայ է,  
Եւ անոր զօրութիւնը նօսր ամպերուն մէջ է:
- 35 Ահեղ ես, ո՛վ Աստուած, քու սրբարաններուդ մէջ:  
Նոյնինքն Իսրայէլի Աստուածն է  
Որ զօրութիւն ու կարողութիւն կու տայ **իր** ժողովուրդին:  
Օրհնեա՛լ ըլլայ Աստուած:

<sup>6</sup> Եբր.՝ պատուիրեց

<sup>8</sup> Կամ՝ հզօրներուն

<sup>7</sup> Եբր.՝ վազել պիտի տայ

<sup>6</sup> Կամ՝ հեծնէ

<sup>5</sup> Եբր.՝ վաղեմի

<sup>1</sup> Եբր.՝ Զօրութիւն

ՕԳՆՈՒԹԵԱՆ ԱՂԵՐՍ

Գլխաւոր երաժիշտին.<sup>ա</sup> Շոշանհիմի վրայ. Դաւիթի սաղմոսը:

69

Փրկէ՛ զիս, ո՛վ Աստուած,  
Որովհետեւ ջուրերը իմ անձիս հասան:

2 Խորունկ ցեխի մէջ կը մխրճուիմ՝  
Ուր կայնելու տեղ չկայ:  
Ջուրերուն խորերը մտայ,  
Ու հոսանքները զիս ընկղմեցին:

3 <sup>բ</sup>Գոչելէն յոգնեցայ, կոկորդս հրաբորբոք է.  
Աչքերս նուաղեցան իմ Աստուծոյս սպասելէն:

4 Առանց <sup>գ</sup>պատճառի զիս ատողները գլուխիս մազերէն շատ են.  
Ընդունայն ինծի թշնամանալով զիս բնաջնջել **ուզողները** զօրացան.  
<sup>դ</sup>Ի՞նչպէս վերադարձնեմ ինչ որ յափշտակած չեմ:

5 Ո՛վ Աստուած, դուն գիտես իմ յիմարութիւնս,  
Ու յանցանքներս քեզմէ ծածկուած չեն:

6 Զեզի յուսացողները իմ **պատճառովս** թող չամչնան,  
Ո՛վ Տէր, զօրքերո՛ւ Տէր.  
Զեզ փնտռողները իմ **պատճառովս** թող չխայտառակուին,  
Ո՛վ Իսրայէլի Աստուածը:

7 Արդարեւ <sup>ե</sup>քեզի համար՝ նախատինք կրեցի,  
<sup>զ</sup>Ամօթը ծածկեց երեսս:

8 Եղբայրներուս օտար եղայ,  
Եւ մօրս որդիներուն՝ <sup>է</sup>անծանօթ.

9 Որովհետեւ քու տանդ նախանձախնդրութիւնը զիս կլանեց,  
Ու քեզ <sup>ը</sup>անարգողներուն նախատինքները իմ վրաս ինկան:

10 Երբ լացի եւ անձս ծոմապահութեամբ **խոնարհեցուցի**,  
Ասիկա ինծի նախատինք եղաւ.

11 Նաեւ քուրձը ինծի հանդերձ ընելով՝  
Անոնց <sup>ը</sup>նշաւակ **դարձայ**:

<sup>ա</sup> Այսինքն՝ “ Շուշաններուն”

<sup>բ</sup> Եբբ.՝ Գոչելէս

<sup>գ</sup> Եբբ.՝ վճարումի

<sup>դ</sup> Եբբ.՝ Այն ատեն

<sup>ե</sup> Կամ՝ քու պատճառովդ

<sup>զ</sup> Եբբ.՝ Նախատինքը

<sup>է</sup> Եբբ.՝ օտարագրի

<sup>ը</sup> Եբբ.՝ նախատողներուն

- 12 Դուռը նստողները իմ մասին կը խօսին,  
Ու գինեմոլներու տաղերգութեան **նիւթը** եղայ:
- 13 Բայց ես քեզի՛ կ'ողողեմ իմ աղօթքս,  
Ո՛վ Տէր, <sup>ժ</sup>պատեհ ժամանակին:  
Ո՛վ Աստուած, քու մեծ կարեկցութեամբդ  
Պատասխանէ՛ ինծի՝ քու փրկութեանդ ճշմարտութեամբ:
- 14 Հանէ՛ զիս ի սիկէն՝ որ չմխրճուիմ,  
Եւ ազատիմ զիս աստողներէն ու խորունկ ջուրերէն:
- 15 Ջուրերուն հոսանքը զիս թող չընկղմէ,  
Խորխորատը զիս թող չկլլէ,  
Եւ չըրհորը իր բերանը վրաս թող չգոցէ:
- 16 Պատասխանէ՛ ինծի, ո՛վ Տէր,  
Որովհետեւ քու կարեկցութիւնդ <sup>Խ</sup>քաղցր է:  
Դարձի՛ր ինծի՝ քու առատ գթութեանդ համաձայն,
- 17 Ու երեսդ մի՛ ծածկեր քու ծառայէդ,  
Որովհետեւ տագնապի մէջ եմ:  
Շտապելո՛վ պատասխանէ ինծի.
- 18 Մօտեցի՛ր իմ անձիս **եւ** ազատէ՛ զայն,  
Փրկէ՛ զիս՝ իմ թշնամիներուս պատճառով:
- 19 Դուն գիտես իմ նախատինքս, ամօթս ու խայտառակութիւնս.  
Բոլոր հակառակորդներս քու առջեւ եմ:
- 20 Նախատինքը սիրտս կոտրեց, եւ հիւանդացայ.  
Յաւակից մը ակնկալեցի, բայց ո՛չ մէկը կար.  
Մխիթարիչ **փնտռեցի**՝ բայց չգտայ:
- 21 **Հապա** կերակուրի տեղ թոյն տուին ինծի,  
Ու ծարաւցած ատենս՝ քացախ խմցուցին ինծի:
- 22 Անոնց սեղանը իրենց առջեւ վարմ թող ըլլայ,  
Եւ <sup>Ծ</sup>յաջողութիւնը՝ որոգայթ:
- 23 Անոնց աչքերը թող խաւարին՝ որպէսզի չտեսնեն.  
Անոնց մէջքերը շա՛րունակ դողացուր:
- 24 Զու սրտմտութիւնդ թափէ՛ անոնց վրայ,  
Ու բորբոքած բարկութիւնդ թող հասնի անոնց վրայ:
- 25 Անոնց <sup>Կ</sup>բնակարանը ամայի թող ըլլայ,  
Եւ անոնց վրաններուն մէջ ո՛չ մէկը բնակի.

---

<sup>բ</sup> Եբբ.՝ առակ

<sup>ժ</sup> Եբբ.՝ հաւանելի

<sup>Ի</sup> Այսինքն՝ յատակի տիղմէն

<sup>Լ</sup> Կամ՝ գութը

<sup>Խ</sup> Եբբ.՝ բարի

<sup>Ծ</sup> Եբբ.՝ խաղաղութիւնը

<sup>Կ</sup> Եբբ.՝ գիւղակը



- 26 Որովհետեւ անոնք կը հալածեն ա՛ն՝ որ դուն զարկիր,  
եւ կը խօսին քու վիրաւորածներուդ կոտտանքին մասին:
- 27 Անոնց անօրէնութեան վրայ անօրէնութի՛ւն <sup>6</sup>աւելցուր,  
Որպէսզի քու արդարութեանդ չհասնին:
- 28 Կեանքի գիրքէն թող ջնջուին,  
եւ արդարներուն հետ չարձանագրուին:
- 29 Բայց ես դժբախտ ու վշտաբեկ եմ.  
Ո՛վ Աստուած, քու փրկութիւնդ թող պաշտպանէ զիս:
- 30 Աստուծոյ անունը պիտի գովաբանեմ երգով,  
Ու զայն պիտի մեծարեմ ներբողով:
- 31 Ասիկա եղջերաւոր ու կճղակաւոր եզէն կամ՝ զուարակէն  
Աւելի՛ <sup>8</sup>հաճելի պիտի ըլլայ Տէրոջ:
- 32 Հեզերը պիտի տեսնեն եւ ուրախանան.  
Ո՛վ Աստուած փնտռողներ, ձեր սիրտն ալ պիտի ապրի,
- 33 Որովհետեւ Տէրը աղքատները կը լսէ,  
եւ իր <sup>7</sup>բանտարկեալները չ՛արհամարհեր:
- 34 Երկինքն ու երկիրը թող գովաբանեն զայն,  
**Նաեւ** ծովը եւ բոլոր անոր մէջ շարժողները.
- 35 Արդարեւ Աստուած Սիոնը պիտի փրկէ,  
Յուդայի քաղաքները պիտի կառուցանէ,  
եւ հոն պիտի բնակին ու տիրանան անոր:
- 36 Իր ծառաներուն զարմը պիտի ժառանգէ զայն,  
եւ իր անունը սիրողները անոր մէջ պիտի բնակին:

ՕԳՆՈՒԹԵԱՆ ԱՂՕԹԸ

Գլխաւոր երաժիշտին. Դաւիթի սաղմոսը. յիշատակի համար:

70

Ո՛վ Աստուած, **շուտով** ազատէ զիս.  
Ո՛վ Տէր, արտորա՛ ինձի օգնելու:

- 2 Թող ամչնան ու շիկնին՝  
Իմ անձս փնտռողները.  
Թող ընկրկին եւ խպնին  
Անոնք՝ որ ինձի չարիք կը բաղձան:
- 3 Թող <sup>9</sup>ամչնալով նահանջեն  
Անոնք՝ որ **ինձի** կ'ըսեն. «Վա՛շ, վա՛շ»:
- 4 Բոլոր քեզ փնտռողները  
Քեզմով թող բերկրին եւ ուրախանան.  
Ու քու փրկութիւնդ սիրողները

<sup>6</sup> Եբբ.՝ դիր

<sup>8</sup> Եբբ.՝ լաւ

<sup>7</sup> Եբբ.՝ կապուածները

<sup>9</sup> Կամ՝ իրենց ամօթին պատճառով

Շարունակ թող ըսեն. «Աստուած թող մեծնայ»:

- 5 Բայց եւ դժբախտ եւ աղքատ եմ.  
Ո՛վ Աստուած, արտորա՛ ինծի **օգնելու**:  
Դո՛ւն եւ իմ օգնականս ու փրկիչս.  
Ո՛վ Տէր, մի՛ ուշանար:

ԾԵՐՈՒՆԻՒ ՄԸ ԱՂՕԹԸԸ

71

- Ո՛վ Տէր, քեզի՛ ապաւիճեցայ.  
Երբե՛ք թող չամչնամ:
- 2 Ազատէ՛ զիս քու արդարութեամբդ, ու փրկէ՛ զիս.  
Դարձո՛ւր ականջդ ինծի եւ ազատէ՛ զիս:
- 3 Բնակութեան վէ՛մ եղիր ինծի,  
Որպէսզի շարունակ **հոն** երթամ.  
Դո՛ւն պատուիրեցիր զիս փրկել,  
Որովհետեւ դո՛ւն եւ իմ ժայռս ու բերդս:
- 4 Ո՛վ իմ Աստուածս, ազատէ՛ զիս ամբարիշտին ձեռքէն,  
Անիրաւին եւ բռնաւորին ձեռքէն.
- 5 Որովհետեւ դո՛ւն եւ իմ յոյսս, ո՛վ Տէր Եհովա.  
Դո՛ւն եւ իմ վստահութիւնս՝ մանկութենէս ի վեր:
- 6 Ես քո՛ւ վրադ յենեցայ արգանդէն,  
Դո՛ւն եւ իմ պաշտպանս՝ մօրս որովայնէն՝.  
Դո՛ւն եւ շարունակ իմ գովաբանութեանս **առարկան**:
- 7 Հրաշալիքի պէս եմ շատերուն,  
Բայց դո՛ւն եւ իմ ամուր ապաւէնս:
- 8 Բերանս քո՛ւ գովաբանութեամբդ լեցուն է,  
Քո՛ւ պարծանքովդ՝ ամէն օր:
- 9 Ջիս մի՛ ձգեր ծերութեան ատեն.  
Ջիս մի՛ լքեր՝ երբ ոյժս սպառի:
- 10 Արդարեւ թշնամիներս ինծի դէմ կը խօսին,  
Իմ անձիս վրայ հսկողները միասին կը խորհրդակցին՝
- 11 Ըսելով. «Աստուած լքեց զայն.  
Հետապնդեցէ՛ք ու բռնեցէ՛ք զայն,  
Զանի ո՛չ մէկը **զինք** պիտի ազատէ»:
- 12 Ո՛վ Աստուած, մի՛ հեռանար ինձմէ.  
Ո՛վ իմ Աստուածս, արտորա՛ ինծի օգնելու:
- 13 Թող ամչնան եւ <sup>ա</sup>բնաջնջուիս իմ անձիս ընդդիմացողները,

---

- <sup>ա</sup> Եբր.՝ ազատ արձակէ
- <sup>բ</sup> Եբր.՝ Բնակավայրի
- <sup>գ</sup> Եբր.՝ փորէն
- <sup>դ</sup> Կամ՝ Դո՛ւն զիս դուրս հանեցիր մօրս որովայնէն
- <sup>ե</sup> Եբր.՝ սպառիս

Նախատինքով ու խայտառակութեամբ թող ծածկուի՞ն ինձի չարիք <sup>9</sup>ուզողները:

- 14** Բայց ես շարունակ պիտի յուսամ,  
Եւ քու բոլոր գովաբանութիւններուդ վրայ **ուրիշներ** պիտի աւելցնեմ:
- 15** Բերանս պիտի պատմէ քու արդարութիւնդ,  
Ամէն օր՝ քու փրկութիւնդ,  
Քանի **անոնց** հաշիւը չեմ գիտեր:
- 16** Պիտի էքալեմ Տէր Եհովայի զօրութեամբ.  
Քու արդարութիւնդ պիտի յիշատակեմ, միա՛յն քուկդ:
- 17** Ո՛վ Աստուած, մանկութենէս ի վեր սորվեցուցիր ինձի,  
Ու մինչեւ հիմա քու սքանչելիքներդ հռչակեցի.
- 18** Ծերութեանս եւ ալեւորութեանս մէջ ալ  
Ջիս մի՛ լքեր, ո՛վ Աստուած,  
Մինչեւ որ հռչակեմ քու <sup>10</sup>կարողութիւնդ **յաջորդ** սերունդին,  
Եւ քու զօրութիւնդ բոլոր անոնց՝ որ պիտի գան:
- 19** Քու արդարութիւնդ ալ շատ բարձր է, ո՛վ Աստուած.  
Դուն մեծագործութիւններ կատարեցիր,  
Քեզի պէս ո՞վ կայ, ո՛վ Աստուած:
- 20** **Դուն**՝ որ բազմաթիւ ու <sup>11</sup>չարչարալից տագնապներ <sup>12</sup>կրել տուիր՝ ինձի,  
Ջիս պիտի վերապրեցնես.  
Ջիս դարձեալ պիտի բարձրացնես երկրի անդունդներէն:
- 21** Իմ մեծութիւնս պիտի <sup>13</sup>ճոխացնես,  
Եւ զիս <sup>14</sup>ամէն կողմէ պիտի հանգստացնես՝:
- 22** Ես ալ քեզ պիտի ներբողեմ տաւիղով՝  
Քու ճշմարտութեանդ համար, ո՛վ իմ Աստուածս.  
Սաղմոս պիտի երգեմ քեզի քնարով,  
Ո՛վ Իսրայէլի Սուրբը:
- 23** Երբ քեզի սաղմոս երգեմ՝ շրթունքս պիտի ցնծայ,  
Նաեւ իմ անձս՝ որ դուն փրկեցիր:
- 24** Իմ լեզուս ալ ամէն օր քու արդարութիւնդ պիտի <sup>15</sup>հռչակէ,  
Որովհետեւ ինձի չարիք <sup>16</sup>ուզողները ամչցան ու շիկնեցան:

---

<sup>9</sup> Եբբ.՝ փնտռողները

<sup>10</sup> Եբբ.՝ երթամ

<sup>11</sup> Եբբ.՝ բազուկդ

<sup>12</sup> Եբբ.՝ չար

<sup>13</sup> Եբբ.՝ ցոյց տուիր

<sup>14</sup> Կամ՝ բազմապատկես

<sup>15</sup> Կամ՝ շրջապատելով պիտի մխիթարես

<sup>16</sup> Եբբ.՝ գոչէ

<sup>17</sup> Եբբ.՝ փնտռողները

ԱՂՕԹԸ՝ ՍՈՂՈՄՈՆ ԹԱԳԱԻՈՐԻՆ ՆԱՄԱՐ  
«Սողոմոնի համար»

72

Ո՛վ Աստուած, <sup>բ</sup>վստահէ՛ քու դատաստաններդ թագաւորին,  
Եւ արդարութիւնդ՝ թագաւորին որդիին:

2 Ան արդարութեամբ պիտի դատէ քու ժողովուրդդ,  
Ու կանոնին համաձայն՝ դժբախտներդ:

3 Լեռները խաղաղութիւն պիտի բերեն ժողովուրդին,  
Բլուրներն ալ՝ <sup>գ</sup>արդարութիւն:

4 Ժողովուրդին դժբախտներուն դատը պիտի պաշտպանէ,  
Աղքատին որդիները պիտի ազատէ,  
Եւ հարստահարիչը պիտի ճգմէ:

5 Զեզմէ պիտի վախնան՝ <sup>դ</sup>քանի արեւն ու լուսինը կը մնան՝,  
Սերունդէ սերունդ:

6 Հնձուած խոտի վրայ **իջած** անձրեւի պէս պիտի իջնէ,  
Տարափներու պէս՝ **որոնք** <sup>ե</sup>գետինը կը կակուղցնեն:

7 Անոր օրերուն մէջ արդարը պիտի ծաղկի,  
Եւ <sup>զ</sup>շատ խաղաղութիւն՝ պիտի ըլլայ,  
Մինչեւ որ ա՛յ լուսին չըլլայ:

8 Ան ծովէ ծով պիտի տիրապետէ,  
Ու Գետէն մինչեւ երկրի ծայրերը:

9 Անապատին բնակիչները անոր առջեւ պիտի <sup>զ</sup>ծնրադրեն,  
Եւ անոր թշնամիները փոշի պիտի լզեն:

10 Թարսիսի ու կղզիներուն թագաւորները ընծայ պիտի <sup>ը</sup>մատուցանեն,  
Շաբայի եւ Սաբայի թագաւորները պարգեւ պիտի բերեն:

11 Բոլոր թագաւորները անոր պիտի երկրպագեն,  
Բոլոր ազգերը <sup>բ</sup>անոր պիտի ծառայեն՝:

12 Արդարեւ աղքատը պիտի ազատէ՝ երբ աղաղակէ,

<sup>ա</sup> Կամ՝ Սողոմոնի սաղմոսը

<sup>բ</sup> Եբր.՝ տո՛ւր

<sup>գ</sup> Եբր.՝ արդարութեամբ

<sup>դ</sup> Եբր.՝ արեւին հետ ու լուսինին առջեւ

<sup>ե</sup> Կամ՝ հողը

<sup>զ</sup> Եբր.՝ խաղաղութեան շատութիւն

<sup>զ</sup> Եբր. ծոխն

<sup>ը</sup> Եբր. հատուցանեն

<sup>բ</sup> Կամ՝ զայն պիտի պաշտեն

Դժբախտն ալ, եւ ա՛ն՝ որ օգնական չունի:

- 13 Չքաւորին եւ աղքատին պիտի խղճայ,  
Աղքատներուն անձերը պիտի ազատէ.
- 14 Հարստահարութենէ ու բռնութենէ պիտի փրկէ անոնց անձը,  
Եւ անոնց արիւնը պատուական պիտի ըլլայ իր <sup>ժ</sup>առջեւ:
- 15 Պիտի ապրի, ու Շաբայի ոսկիէն պիտի տան անոր.  
Շարունակ պիտի աղօթեն անոր համար,  
Ամէն օր պիտի օրհնեն զայն:
- 16 Յորեմի յորդառատութիւն պիտի ըլլայ երկրին մէջ՝  
Լեռներուն գագաթը.  
Անոր <sup>Ի</sup>հասկերը Լիբանանի **ծառերուն** պէս պիտի շարժին.  
<sup>Լ</sup>Քաղաքացիները գետինի <sup>Խ</sup>խոտին պէս պիտի բուսնին:
- 17 Անոր անունը յաւիտենական պիտի ըլլայ.  
Քանի արեւը կը մնայ՝ անոր անունն ալ պիտի մնայ,  
Ու մարդիկ անով պիտի օրհնուին.  
Բոլոր ազգերը երանելի պիտի կոչեն զայն:
- 18 Օրհնեա՛լ ըլլայ <sup>Յ</sup>Տէր Աստուած, Իսրայէլի՛ Աստուածը.  
Միայն ինքն է սքանչելիքներ ընողը:
- 19 Յաւիտեան օրհնեա՛լ ըլլայ իր փառաւոր անունը.  
Ամբողջ երկիրը թող լեցուի անոր փառքով: Ամէն ու ամէն:
- 20 Յեսսէի որդիին՝ Դաւիթի աղօթքները վերջացան:

ԱՍՏՈՒԾՈՅ ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆԸ

Ասափի սաղմոսը:

73

Անտարակոյս Աստուած բարի է Իսրայէլի,

**Այսինքն՝** վճիտ սիրտ ունեցողներուն:

- 2 Բայց քիչ մնաց՝ որ ոտքերս ծռէին,  
Մազ մնաց՝ որ քայլերս <sup>Մ</sup>տատանէին:
- 3 Արդարեւ նախանձեցայ պարծենկոտներուն՝  
Ամբարիշտներուն <sup>Բ</sup>յաջողութիւնը տեսնելով.
- 4 Քանի որ <sup>Գ</sup>մինչեւ իրենց մահը՝ կապանքներ չունին,

<sup>ժ</sup> Եբր.՝ աչքերուն

<sup>Ի</sup> Եբր.՝ պտուղը

<sup>Լ</sup> Եբր.՝ Քաղաքին մարդիկը

<sup>Խ</sup> Եբր.՝ բոյսին

<sup>Յ</sup> Եբր.՝ Եհովա

<sup>Մ</sup> Եբր.՝ թափէին

<sup>Բ</sup> Եբր.՝ խաղաղութիւնը

<sup>Գ</sup> Եբր.՝ իրենց մահուան մէջ ալ

Իրենց մարմինն ալ պարարտ է:

5 Անոնք **ուրիշ** մարդոց **նման** տաժանքի մէջ չեն,

**Ուրիշ** մարդոց հետ չեն <sup>7</sup>ձաղկուիր:

6 Հետեւաբար յոխորտանքը վզնոցի պէս զանոնք կը շրջապատէ,

Բռնութիւնը հանդերձի պէս զանոնք կը ծածկէ:

7 Անոնց աչքերը <sup>8</sup>ճարպակալած են<sup>8</sup>,

Իրենց սիրտին պատկերացումները <sup>9</sup>կը դրսեւորեն<sup>9</sup>:

8 Անոնք <sup>10</sup>կը ծաղրեն<sup>10</sup>, ու չարութեամբ կը խօսին հարստահարելու **մասին**.

Գոռոզութեամբ կը խօսին:

9 Իրենց բերանը երկինքի դէմ կը <sup>11</sup>բանան,

Ու իրենց լեզուն երկրի մէջէն կ'ընթանայ:

10 (Ուստի իր ժողովուրդը հոս կը վերադառնայ,

Եւ առատութեամբ ջուր կը <sup>12</sup>քաշուի անոնց:)

11 Անոնք կ'ըսեն. «Աստուած ի՞նչպէս կրնայ գիտնալ.

Ամենաբարձրին քով գիտութիւն կա՞յ»:

12 Ահա՛ ասոնք են ամբարիշտները,

Որ միշտ անդորրութիւն ունին **եւ իրենց** հարստութիւնը կը շատցնեն:

13 Ի՛րապէս պարապ տեղը իմ սիրտս մաքրեցի

Ու ձեռքերս անմեղութեամբ լուացի,

14 Որովհետեւ ամէն օր կը ձաղկուիմ,

Ամէն առտու կը յանդիմանուիմ:

15 Եթէ ըսէի. «Ես այսպէս պիտի խօսիմ»,

Ահա՛ քու որդիներուդ սերունդին անհաւատարիմ պիտի ըլլայի:

16 Երբ մտածեցի որ ասիկա հասկնամ՝

Տաժանք **թուեցաւ** իմ աչքերուս,

17 Մինչեւ որ Աստուծոյ սրբարանը մտայ,

**Եւ** հասկցայ անոնց վախճանը:

18 Ի՛րապէս դուն սահուն տեղեր դրեր ես զանոնք,

Աւերակներու մէջ պիտի տապալես զանոնք:

19 Ի՛նչպէս վայրկենապէս ամայութեան մէջ **ինկան**.

Արհաւիրքէն սպառելով կորսուեցան:

20 Ինչպէս երազ մը՝ մարդուն արթննալէն ետք,

Ո՛վ Տէր, <sup>11</sup>արթննալով դուն անոնց պատկերը պիտի արհամարհես:

---

<sup>7</sup> Եբբ.՝ հարուածուիր

<sup>8</sup> Եբբ.՝ ճարպէն դուրս կ'ելլեն

<sup>9</sup> Եբբ.՝ կ'անցընեն

<sup>10</sup> Եբբ.՝ նեխած են

<sup>11</sup> Եբբ.՝ դնեն

<sup>12</sup> Եբբ.՝ քամուի

<sup>13</sup> Կամ՝ քաղաքին մէջ

- 21 Մինչ սիրտս ՚դառնացած էր  
Ու ՚երկկամունքէս խոցուած էի,
- 22 Ես՝ անխելք ըլլալով՝ չէի հասկնար,  
Քու առջեւդ անասուններու պէս էի:
- 23 Սակայն ես շարունակ քեզի հետ եմ,  
Դուն իմ աջ ձեռքէս կը բռնես.
- 24 Զիս քու խրատովդ պիտի առաջնորդես,  
Ու վերջաւորութեան՝ զիս փառքի մէջ պիտի ընդունիս:
- 25 Երկինքի մէջ ո՞վ ունիմ.  
Երկրի վրայ ալ քեզմէ զատ ո՛չ մէկուն կը բաղձամ:
- 26 Իմ մարմինս ու սիրտս կը սպառին,  
**Բայց** Աստուած իմ սիրտիս վէմը եւ իմ բաժինս է՝ յաւիտենապէս:
- 27 Արդարեւ ահա՛ կը կորսուին քեզմէ հեռացողները.  
Դուն կը բնաջնջես բոլոր անոնք՝ որ կը պոռնկին քեզմէ **մոլորելով**:
- 28 Իսկ ինձի համար Աստուծոյ մօտենալս բարիք է.  
՚Վստահութիւնս դրած եմ Տէրոջ՝ Եհովայի վրայ,  
Որպէսզի քու բոլոր գործերդ պատմեմ:

**ԱՂԹԸ՝ ԱԶԳԻՆ ՓՐԿՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ**  
Ասափի երգը:

**74**

- Ո՛վ Աստուած, ինչո՞ւ **մեզ** ընդմիջտ մերժեցիր,  
Ու բարկութիւնդ կը մխայ քու արօտիդ ոչխարներուն վրայ:
- 2 Յիշէ՛ քու համայնքդ՝ **որ** վաղուց ստացար,  
Քու ժառանգութեանդ՝ **«**վիճակը՝ **որ** փրկեցիր,  
Եւ Սիոն լեռը՝ ուր բնակեցար:
- 3 Բարձրացո՛ւր քու քայլերդ դէպի մշտատեւ ակերակները.  
**Տե՛ս** սրբարանը թշնամիին գործած ամբողջ չարիքը:
- 4 Քու հակառակորդներդ **Ք**կ'աղաղակեն **Պ**տաճարիդ մէջ.  
Իրե՛նց նշանները կը դնեն իբր նշան:
- 5 **Մարդ** կը ճանչցուէր՝ երբ թաւուտի ծառերուն վրայ  
Տապար կը վերցնէր.
- 6 Իսկ հիմա, անոր փորագրութիւնները՝  
Կացիններով ու կռաններով կը կոտորտեն, բոլորը միասին:
- 7 **Պ**Կրակով այրեցին քու սրբարանդ՝.

<sup>ի</sup> Եբր.՝ խմորուած, **այսինքն**՝ թթուած

<sup>լ</sup> Այսինքն՝ խիղճէս

<sup>խ</sup> Եբր.՝ Ապաւինութիւնս

<sup>ւ</sup> Եբր.՝ չափելու գաւազանը

<sup>բ</sup> Եբր.՝ կը մռնչեն

<sup>գ</sup> Եբր.՝ հանդիպումի վայրիդ

- Պղծեցին քու անունիդ բնակարանը՝ մինչեւ գետին **կործանելով**։
- 8 Իրենց սիրտերուն մէջ ըսին. «Կեղեքե՛նք զանոնք՝ **բոլորը** միասին»։  
Երկրին մէջ Աստուծոյ բոլոր <sup>Ե</sup>ժողովարանները այրեցին։
- 9 Մեր նշանները չենք տեսներ.  
Ա՛յ մարգարէ չկայ։  
Մեր քով ո՛չ մէկը կայ՝  
Որ գիտնայ թէ **ասիկա** մինչեւ ե՛րբ **պիտի տեսէ**։
- 10 Ո՛վ Աստուած, հակառակորդը մինչեւ ե՛րբ **պիտի նախատէ**.  
Թշնամին ընդմիջ՞տ **պիտի անարգէ քու անունդ**։
- 11 Ինչո՞ւ ետ կը քաշես քու ձեռքդ, քու ա՛ջ ձեռքդ.  
**Հանէ՛ զայն ծոցէդ եւ** <sup>Գ</sup>բնաջնջէ՛։
- 12 Բայց վաղուց Աստուած է իմ թագաւորս,  
Ի՛նք փրկութիւններ կ'իրագործէ երկրի մէջ։
- 13 Դո՛ւն ծովը պատռեցիր քու զօրութեամբդ,  
Վիշապներուն գլուխները փշրեցիր ջուրերուն մէջ։
- 14 Դո՛ւն ջախջախեցիր <sup>Է</sup>կոկորդիլոսի գլուխները.  
Զայն իբր ուտելիք տուիր <sup>Ը</sup>տափաստանի մէջ **բնակող ժողովուրդին**՝։
- 15 Դո՛ւն <sup>Թ</sup>բխեցուցիր աղբիւրն ու վտակը,  
Դո՛ւն չորցուցիր <sup>Ժ</sup>մշտահոս գետերը։
- 16 Զո՛ւկդ է ցերեկը, քո՛ւկդ է նաեւ գիշերը.  
Դո՛ւն հաստատեցիր <sup>Ի</sup>լուսինը եւ արեւը։
- 17 Դո՛ւն դրիր երկրի բոլոր սահմանները.  
Դո՛ւն <sup>Լ</sup>ստեղծեցիր ամառն ու ձմեռը։
- 18 Սա՛ յիշէ, թէ թշնամին նախատեց Տէրը,  
Եւ անգգամ ժողովուրդ մը անարգեց քու անունդ։
- 19 Գազանին մի՛ մատներ քու տատրակիդ անձը.  
Ընդմիջտ մի՛ մոռնար քու դժբախտներուդ <sup>Խ</sup>կեանքը։
- 20 Նայէ՛ քու ուխտիդ, որովհետեւ երկրին խաւար տեղերը

---

<sup>Դ</sup> Եբր.՝ Կրակ ձգեցին քու սրբարանիդ վրայ

<sup>Ե</sup> Եբր.՝ հանդիպումի վայրերը

<sup>Գ</sup> Եբր.՝ սպառէ՛

<sup>Է</sup> Եբր.՝ լեւիաթանի

<sup>Ը</sup> Այսինքն՝ շնագայլերուն

<sup>Թ</sup> Եբր.՝ ճեղքեցիր

<sup>Ժ</sup> Եբր.՝ տեսական

<sup>Ի</sup> Եբր.՝ լուսաւորը

<sup>Լ</sup> Եբր.՝ ձեւակերպեցիր

<sup>Խ</sup> Եբր.՝ զօրագունդը



Բռնութեան բնակարաններով լեցուած են:

- 21 Տնանկը խպնելով թող չվերադառնայ.  
Դժբախտն ու աղքատը թող գովաբանեն քու անունը:
- 22 Կանգնէ՛, ո՛վ Աստուած. պաշտպանէ՛ իրաւունքդ.  
Յիշէ՛ այն նախատիները՝ որ անզգամը ամէն օր քեզի կ'ընէ:
- 23 Մի՛ մոռնար քու հակառակորդներուդ ձայնը.  
Քեզի դէմ կանգնողներուն ժխորը շարունակ կը բարձրանայ:

ԱՍՏՈՒԱԾ՝ ԴԱՏԱԻՈՐԸ

Գլխաւոր երաժիշտին. <sup>ա</sup>Ալ-Թաշհէթ. Ասափի սաղմոսը. երգ:

75

Քե՛զ կը ներբողենք, ո՛վ Աստուած.  
Կը ներբողենք քու անունդ՝ քանի որ մօտ է.  
Քու սքանչելիքներդ կը պատմուին:

- 2 Երբ **սահմանուած** ատենը <sup>բ</sup>գայ,  
Ուղղամտութեամբ պիտի դատեմ:
- 3 Երկիրն ու անոր բոլոր բնակիչները հալեցան.  
Անոր սիւները ե՛ս կը հաստատեմ: (Սելա:)
- 4 Պարծենկոտներուն ըսի. «Մի՛ պարծենաք»,  
Եւ ամբարիշտներուն. «Եղջիւր մի՛ բարձրացնէք:
- 5 Ձեր եղջիւրները **այդքան** վեր մի՛ բարձրացնէք.  
Անպատկառ պարանոցով մի՛ խօսիք»:
- 6 Արդարեւ բարձրանալը ո՛չ արեւելքէն է,  
Ո՛չ արեւմուտքէն, ո՛չ ալ անապատէն,
- 7 Հապա Աստուա՛ծ է դատաւորը.  
Մէկը կը ցածցնէ, ու միւսը կը բարձրացնէ:
- 8 Արդարեւ Տէրոջ ձեռքը բաժակ կայ, ու գինին կարմիր է.  
Ան խառնուրդով լեցուն է, եւ անկէ կը լեցնէ.  
Երկրի բոլոր ամբարիշտները  
Անոր մրուրները քամելով պիտի խմեն:
- 9 Իսկ ես **ասիկա** յաւիտեան պիտի հռչակեմ,  
Յակոբի Աստուծոյն սաղմոս պիտի երգեմ:
- 10 Ամբարիշտներուն բոլոր եղջիւրները պիտի կոտրեմ,  
**Բայց** արդարին եղջիւրները պիտի բարձրանան:

ԱՍՏՈՒԱԾ՝ ՅԱՂԹԱԿԱՆԸ

Գլխաւոր երաժիշտին. նկինօթի վրայ. Ասափի սաղմոսը. երգ:

76

Աստուած Յուդայի մէջ ճանչցուած է.  
Անոր անունը Իսրայէլի մէջ մեծ է:

- 2 Անոր <sup>ա</sup>խորանը Սաղէմի մէջ է,

<sup>ա</sup> Այսինքն՝ «Մի՛ Կորսնցներ»

<sup>բ</sup> Երբ.՝ ստանամ

- Եւ անոր բնակավայրը՝ Սիոնի մէջ:
- 3 Ինք հոն կոտորտեց աղեղին <sup>բ</sup>նետերը,  
Վահանը, սուրը եւ պատերազմի **զէնքերը**: (Սելա:)
- 4 Դուն ւաւելի լուսափայլ **ու** հոյակապ ես՝  
Զան որսի լեռները:
- 5 <sup>գ</sup>Զաջասիրտները <sup>դ</sup>կողոպտուեցան,  
Զունի մէջ <sup>ե</sup>թաղուեցան,  
Կտրիճ մարդոցմէն ո՛չ մէկը իր ձեռքերը <sup>զ</sup>կրցաւ գործածել՝:
- 6 Ո՛վ Յակոբի Աստուածը, քու սաստիդ **պատճառով**  
Կառքն ու ձին թմրեցան:
- 7 Դո՛ւն, ո՛վ **Տէր**, դուն ահեղ ես.  
Ո՛վ կրնայ կայնիլ քու առջեւը՝ երբ բարկանաս:
- 8 Դուն երկինքէն լսել տուիր դատավճիռը.  
Երկիրը վախցաւ եւ հանդարտ կեցաւ,
- 9 Երբ Աստուած կանգնեցաւ դատավճիռ **արձակելու**,  
Որպէսզի երկրի բոլոր հեզերը փրկէ: (Սելա:)
- 10 Ի՛րապէս մարդուն ցասումը քեզ պիտի ներբողէ,  
Ու մնացած ցասումը դո՛ւն պիտի <sup>է</sup>զսպես:
- 11 Ո՛ւխտ ըրէք Տէրոջ՝ ձեր Աստուծոյն, ու կատարեցէ՛ք.  
Բոլոր անոր շուրջը եղողները  
Ընծաներ թող բերեն Ահեղին:
- 12 Ինք առաջնորդներուն հոգին պիտի կտրէ,  
Ինք ահեղ է երկրի թագաւորներուն հանդէպ:

ՏԱԳՆԱԴԻ ՄԷՋ ՄԽԻԹԱՐՈՒԹԻԻՆ

Գլխաւոր երաժիշտին՝ Իդիթունի համաձայն. Ասափի սաղմոսը:

77

- Իմ ձայնս Աստուծոյ **ուղղուած** է, ու կ'աղաղակեմ.  
Իմ ձայնս Աստուծոյ **ուղղուած** է, եւ ան ինծի պիտի ունկնդրէ:
- 2 Իմ տագնապիս օրը Տէրը փնտռեցի.  
Իմ ձեռքս գիշերը տարածուած էր ու չէր թուլնար.  
Իմ անձս կը մերժէր մխիթարուիլ:
- 3 Աստուած յիշեցի, եւ ալեխոռով եղայ.

<sup>ա</sup> Եբր.՝ տաղաւարը

<sup>բ</sup> Եբր.՝ շանթերը

<sup>գ</sup> Եբր.՝ Սիրտով հզօրները

<sup>դ</sup> Եբր.՝ իբր ւաւար **առնուեցան**

<sup>ե</sup> Եբր.՝ մրափեցիմ

<sup>զ</sup> Եբր.՝ գտաւ

<sup>է</sup> Եբր.՝ կապես

Գանգատեցայ, ու հոգիս թալկացաւ: (Սելա:)

- 4 Իմ աչքերս արթուն կը պահես.  
Խռոված եմ, եւ չեմ կրնար խօսիլ:
- 5 Կը մտածեմ վաղեմի օրերուն,  
Հին **ատենուան** տարիներուն մասին:
- 6 Գիշերուան մէջ կը յիշեմ իմ տաղս.  
Իմ սիրտիս մէջ կը խոկամ,  
Եւ հոգիս ալ կը փնտռէ.
- 7 «Արդեօք Տէրը յաւիտեան պիտի մերժէ՞.  
Ա՛յ բնաւ պիտի չհաճի՞»:
- 8 Միթէ անոր կարեկցութիւնը ընդմիջտ դադրեցաւ.  
**Իր** խոստումը վերջացա՞ւ սերունդէ սերունդ:
- 9 Միթէ Աստուած մոռցա՞ւ ողորմիլ.  
Միթէ բարկութեամբ <sup>ա</sup>կասեցո՞ւց իր գթութիւնը»: (Սելա:)
- 10 Ուստի ըսի. «Ահա՛ւասիկ իմ տկարութեանս **պատճառը**.—  
<sup>բ</sup>Ամենաբարձրին աջ ձեռքը փոխուած է՞»:
- 11 <sup>գ</sup>Տէրոջ ըրածները պիտի յիշեմ.  
Արդարեւ քու վաղեմի սքանչելիքներդ պիտի յիշեմ,
- 12 Բոլոր գործերուդ մասին պիտի խորհրդածեմ,  
Եւ արարքներուդ վրայ պիտի խոկամ:
- 13 Ո՛վ Աստուած, քու ճամբադ սրբարանին մէջ է.  
Ո՞ր աստուածը **մեր** Աստուծոյն պէս մեծ է:
- 14 Դո՛ւն ես սքանչելիքներ ընող Աստուածը.  
Քու գօրութիւնդ ժողովուրդներուն մէջ <sup>դ</sup>ցոյց տուիր՝,
- 15 **Եւ** բազուկովդ փրկեցիր քու ժողովուրդդ՝  
Յակոբի ու Յովսէփի որդիները: (Սելա:)
- 16 Ջուրերը քեզ տեսան, ո՛վ Աստուած,  
Ջուրերը քեզ տեսան **ու** սարսափեցան.  
Անդունդներն ալ մոլեգնեցան:
- 17 Թանձր **ամպերը** ջուրով <sup>ե</sup>ողողեցին.  
Նօսր ամպերը <sup>զ</sup>թնդացին,  
Նետերդ ալ <sup>է</sup>արձակուեցան:
- 18 Քու որոտումիդ <sup>ը</sup>պայթիւնը թաթառին մէջ էր.

<sup>ա</sup> Եբր.՝ գոցե՞ց

<sup>բ</sup> Կամ՝ Սակայն Ամենաբարձրին աջ ձեռքին տարիները պիտի յիշեմ

<sup>գ</sup> Եբր.՝ Եահի

<sup>դ</sup> Եբր.՝ գիտցուցիր

<sup>ե</sup> Կամ՝ ընկղմեցին

<sup>զ</sup> Եբր.՝ ձայն տուին

<sup>է</sup> Եբր.՝ գացին

<sup>ը</sup> Եբր.՝ ձայնը

Փայլակները լուսաւորեցին երկրագունդը,  
Երկիրը սարսեցաւ եւ շարժեցաւ:

- 19 Զու ճամբադ ծովուն մէջ է,  
Զու ճանապարհդ՝ յորդառատ ջուրերուն մէջ,  
Ու քու հետքերդ չեն գիտցուիր:
- 20 Հօտի պէս առաջնորդեցիր քու ժողովուրդդ՝  
Մովսէսի եւ Ահարոնի ձեռքով:

ԱՍՏՈՒԱԾ ԵՒ ԻՐ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ  
Ասափի երգը:

78

Ո՛վ ժողովուրդս, ունկնդրեցէ՛ք իմ <sup>ա</sup>օրէնքս.  
Դարձուցէ՛ք ձեր ականջը բերանիս խօսքերուն:

- 2 Առակով պիտի բանամ բերանս,  
Եւ վաղեմի հանելուկները պիտի արտայայտեմ,
- 3 Որոնք լսեցինք ու գիտցանք,  
Եւ մեր հայրերը մեզի պատմեցին:
- 4 Մենք պիտի չպահենք անոնց որդիներէն.  
Յաջորդ սերունդին պիտի պատմենք  
Տէրոջ <sup>բ</sup>փառաւոր գործերը՝, անոր զօրութիւնը,  
Եւ անոր ըրած սքանչելիքները:
- 5 Արդարեւ վկայութիւն հաստատեց Յակոբի մէջ,  
Օրէնք դրաւ Իսրայէլի մէջ.  
Զանոնք պատուիրեց մեր հայրերուն,  
Որպէսզի <sup>գ</sup>սորվեցնեն իրենց որդիներուն.
- 6 Որպէսզի յաջորդ սերունդը՝ ծնելիք որդիները **զանոնք** գիտնան,  
Եւ կանգնելով իրենց որդիներուն հաղորդեն,
- 7 Անոնք ալ իրենց յոյսը Աստուծոյ վրայ դնելով՝  
Չմոռնան Աստուծոյ ըրածները,  
Հապա անոր պատուիրանները պահեն.
- 8 Իրենց հայրերուն պէս  
Ապստամբ եւ անհնազանդ սերունդ մը չըլլան,  
**Այնպիսի** սերունդ մը՝ որ իր սիրտը չէ հաստատած,  
Որուն հոգին հաւատարիմ չէ Աստուծոյ:
- 9 Եփրեմի որդիները՝ **որոնք** սպառազինեալ աղեղնաւորներ էին,  
Պատերազմին օրը **կռնակ** դարձուցին.
- 10 Աստուծոյ ուխտը չպահեցին,  
Մերժելով անոր Օրէնքին համաձայն ընթանալ.
- 11 Մոռցան անոր արարքները

<sup>ա</sup> Կամ՝ ուսուցումս

<sup>բ</sup> Եբբ.՝ գովաբանութիւնները

<sup>գ</sup> Եբբ.՝ գիտցնեն

- Եւ անոր սքանչելիքները՝ որ իրենց ցոյց տուեր էր:
- 12 Անոնց հայրերուն առջեւ սքանչելիքներ ըրաւ,  
Եգիպտոսի երկրին՝ Տայանիսի դաշտին մէջ:
- 13 Ծովը ճեղքեց ու զանոնք անցուց,  
Ջուրերն ալ կարկառի պէս կանգնեցուց:
- 14 Յերեկը ամպով առաջնորդեց զանոնք,  
Եւ ամբողջ գիշերը՝ կրակի լոյսով:
- 15 Վէմերը ճեղքեց անապատին մէջ,  
Ու խմցուց **անոնց**՝ իբր թէ մեծ անդունդէն.
- 16 Հոսանքներ հանեց ժայռէն,  
Եւ ջուրերը գետերու պէս <sup>7</sup>հոսեցուց:
- 17 Բայց անոնք դարձեալ մեղանչեցին անոր դէմ՝  
Տափաստանին մէջ բարկացնելով Ամենաբարձրը.
- 18 Իրենց սիրտերուն մէջ Աստուած փորձեցին՝  
Կերակուր <sup>8</sup>ուզելով իրենց ցանկութեան համաձայն՝:
- 19 Աստուծոյ դէմ խօսեցան **եւ** ըսին.  
«Միթէ Աստուած կրնա՞յ  
Անապատին մէջ սեղան պատրաստել:
- 20 Ահա՛ վէմին զարկաւ, ու ջուրերը հոսեցան,  
Եւ վտակները յորդեցան.  
Արդեօք կրնա՞յ հաց ալ տալ,  
Կրնա՞յ միս պատրաստել իր ժողովուրդին համար»:
- 21 Ուստի Տէրը լսեց ու սրդողեցաւ,  
Կրակ մը վառեցաւ Յակոբի դէմ,  
Նաեւ բարկութիւն <sup>9</sup>բորբոքեցաւ Իսրայէլի դէմ.
- 22 Որովհետեւ Աստուծոյ չհաւատացին  
Եւ անոր փրկութեան չվստահեցան,
- 23 Թէպէտ ինք վերէն պատուիրեր էր նօսր ամպերուն  
Ու երկինքի դռները բացեր էր,
- 24 Կերակուրի համար մանանայ տեղացուցեր էր անոնց վրայ,  
Ու երկինքի ցորենը տուեր էր անոնց:
- 25 Մարդը հզօրներուն հացը կերաւ.  
Կշտանալու **չափ** պաշար դրկեց անոնց:
- 26 Երկինքի մէջ արեւելեան հովը բարձրացուց,  
Եւ իր գօրութեամբ հարաւային հովը բերաւ.
- 27 Անոնց վրայ փոշիի պէս միս տեղացուց,  
Ծովու աւազին չափ թելաւոր թռչուններ.
- 28 Անոնց բանակավայրին մէջ <sup>10</sup>իջեցուց **զանոնք**,  
Իրենց բնակարաններուն շուրջը:

<sup>7</sup> Եբբ.՝ իջեցուց

<sup>8</sup> Եբբ.՝ խնդրելով իրենց անձերուն համար

<sup>9</sup> Եբբ.՝ բարձրացաւ

<sup>10</sup> Եբբ.՝ իյնալ տուաւ

- 29 Կերան ու լա՛ւ կշտացան,  
Որովհետեւ իրենց ցանկացածը իրենց տուաւ.
- 30 Իրենց ցանկացածէն <sup>Ե</sup> չզրկուեցան:  
Մինչ իրենց կերակուրը իրենց բերանն էր,
- 31 Աստուծոյ բարկութիւնը անոնց դէմ բորբոքեցաւ,  
Եւ մեռցուց անոնց <sup>Բ</sup> զօրաւորները,  
<sup>Գ</sup> Զգետնեց Իսրայէլի ընտիրները:
- 32 Հակառակ այս բոլորին՝ դարձեալ մեղանչեցին,  
Ու չհաւատացին անոր սքանչելիքներուն.
- 33 Ուստի ունայնութեան մէջ սպառեց անոնց օրերը,  
Եւ արհաւիրքի մէջ՝ անոնց տարիները:
- 34 Երբ կը մեռցնէր զանոնք, զինք կը փնտռէին.  
Կը վարադառնային եւ Իփութով Աստուած կը փնտռէին.
- 35 Կը յիշէին թէ Աստուած իրենց Վէմն էր,  
Եւ Ամենաբարձր Աստուածը՝ իրենց Փրկարարը:
- 36 Սակայն իրենց բերանով կը հրապուրէին,  
Իրենց լեզուով կը ստէին անոր.
- 37 Իրենց սիրտը ուղիղ չէր անոր առջեւ,  
Ու հաւատարիմ չէին անոր ուխտին հանդէպ:
- 38 Բայց ան գթած ըլլալով՝ **անոնց** անօրէնութիւնը կը քաւէր,  
Ու չէր բնաջնջեր **զանոնք**:  
Յաճախ կը կասեցնէր իր բարկութիւնը,  
Ու չէր արթնցներ իր ամբողջ ցասումը,
- 39 Որովհետեւ կը յիշէր թէ անոնք մարմին են,  
Հովի մը **պէս**՝ որ կ'երթայ ու չի վերադառնար:
- 40 Զանի՛ անգամ անոր դէմ ընդվզեցան անապատին մէջ,  
Զայն վշտացուցին ամայութեան մէջ.
- 41 'Կրկին ու կրկին՝ Աստուած փորձեցին,  
Եւ Իսրայէլի Սուրբը տրտմեցուցին.
- 42 Չյիշեցին անոր ձեռքը,  
Այն օրը՝ երբ զիրենք թշնամիէն փրկեց.
- 43 **Մոռցան** թէ ի՛նչպէս իր նշանները ըրաւ Եգիպտոսի մէջ,  
Ու իր հրաշքները՝ Տայանիսի դաշտին մէջ.—
- 44 Արիւնի վերածեց անոնց գետերը  
Եւ անոնց հոսանքները, որ չկարենան խմել:
- 45 Շանաճանճեր դրկեց անոնց վրայ, որոնք լափեցին զանոնք,  
Ու գորտեր՝ որոնք ապականեցին զանոնք:

---

<sup>Ե</sup> Եբբ.՝ չօտարացան

<sup>Բ</sup> Եբբ.՝ պարարտները

<sup>Գ</sup> Եբբ.՝ կքիլ տուաւ

<sup>Ի</sup> Եբբ.՝ արշալոյսին

<sup>Լ</sup> Եբբ.՝ Դարձեալ

- 46 Անոնց արգասիքը գրուիճին տուաւ,  
Եւ անոնց վաստակը՝ մարախին.
- 47 Անոնց որթատունկերը կարկուտով փճացուց,  
Ու անոնց ժանտաթզեցիները՝ խոշոր կարկուտով.
- 48 Անոնց անասունները կարկուտին մատնեց,  
Եւ անոնց հօտերը՝ կայծակին:
- 49 Անոնց վրայ արձակեց իր <sup>Խ</sup>բորբոքած բարկութիւնը՝,  
Յասում, սրտմտութիւն ու տագնապ,  
<sup>Ծ</sup>Չար հրեշտակներ դրկելով:
- 50 Իր բարկութեան ճամբայ բացաւ.  
Անոնց անձը մահէն զերծ չպահեց,  
Հապա անոնց <sup>Կ</sup>կեանքը ժանտախտի մատնեց:
- 51 Ամէն անդրանիկ սպաննեց Եգիպտոսի մէջ,  
<sup>Ս</sup>Առջիներէկերը՝ Քամի վրաններուն մէջ:
- 52 Իր ժողովուրդը ոչխարներու պէս փոխադրեց,  
Ջանոնք հօտի պէս տարաւ անապատին մէջէն.
- 53 Ջանոնք ապահովութեամբ առաջնորդեց, ուստի չվախցան,  
Իսկ ծովը ծածկեց անոնց թշնամիները:
- 54 Ջանոնք տարաւ իր սուրբ հողամասը,  
Այն լեռը՝ որ իր աջ ձեռքը ստացեր էր:
- 55 Անոնց առջեւէն ազգեր վռնտեց,  
<sup>Վ</sup>Վիճակով բաժնեց՝ անոնց՝ իբր ժառանգութիւն,  
Ու Իսրայէլի տոհմերը անոնց վրաններուն մէջ բնակեցուց:
- 56 Բայց անոնք Ամենաբարձր Աստուածը փորձեցին եւ անոր դէմ ընդվզեցան,  
Ու չպահեցին անոր վկայութիւնները:
- 57 Իրենց հայրերուն պէս ընկրկեցան եւ անհաւատարիմ եղան,  
Խաբեբայ աղեղի պէս <sup>Ղ</sup>դարձան.
- 58 Որովհետեւ զայն գրգռեցին իրենց բարձր տեղերով,  
Ու զայն նախանձի մղեցին իրենց <sup>Կ</sup>կուռքերով:
- 59 Աստուած լսեց եւ սրդողեցաւ,  
Ու մեծապէս անարգեց Իսրայէլը.
- 60 Սելովի <sup>Մ</sup>բնակարանը **երեսէ** ձգեց,

---

<sup>Խ</sup> Եբր.՝ բարկութեան բորբոքումը

<sup>Ծ</sup> Կամ՝ Չարիքի

<sup>Կ</sup> Եբր.՝ կենդանիները

<sup>Ս</sup> Եբր.՝ Կորովին սկիզբը

<sup>Վ</sup> Եբր.՝ Լարով վիճակեց

<sup>Ղ</sup> Կամ՝ դիմաշրջուեցան

<sup>Կ</sup> Եբր.՝ քանդակուած պատկերներով

<sup>Մ</sup> Կամ՝ խորանը

Այն վրանը՝ ուր մարդոց մէջ բնակեր էր:

- 61 Ի՞ր գօրութիւնը գերութեան մատնեց,  
Իր պարծանքը՝ թշնամիներուն ձեռքը:
- 62 Իր ժողովուրդը սուրի մատնեց,  
Եւ իր ժառանգութեան դէմ սրդողեցաւ:
- 63 Անոր երիտասարդները կրակէն սպառեցան,  
Անոր կոյսերը չգովերգուեցան.
- 64 Անոր քահանաները սուրով ինկան,  
Ու անոր այրիները չլացին:
- 65 Այն ատեն Տէրը արթնցաւ՝ որպէս թէ քունէ,  
Գինիէն ցնծացող գօրաւոր մարդու մը պէս,
- 66 Եւ իր թշնամիները ետեւի կողմէն զարկաւ,  
Յաւիտենական նախատինքի մատնելով զանոնք:
- 67 Յովսէփի վրանը մերժեց,  
Ու Եփրեմի տոհմը չընտրեց,
- 68 Հապա Յուդայի տոհմը ընտրեց,  
Սիոն լեռը՝ որ սիրեց:
- 69 Իր սրբարանը կառուցանեց բարձր բլուրներու պէս,  
Երկրի պէս՝ որ յաւիտենապէս հաստատեց:
- 70 Իր ծառան՝ Դաւիթը ընտրեց,  
Ու զայն ոչխարի փարախներէն առաւ,
- 71 Զայն կաթնտու ոչխարներուն ետեւէն բերաւ,  
Որպէսզի հովուէ իր ժողովուրդը՝ Յակոբը,  
Եւ իր ժառանգութիւնը՝ Իսրայէլը:
- 72 Ան ալ հովուեց զանոնք՝ իր սիրտին պարկեշտութեամբ,  
Ու ձեռքերուն ճարտարութեամբ առաջնորդեց զանոնք:

ԱՂԹՔ՝ ԱԶԳԻՆ ԱԶԱՏՈՒՄԻՆ ՀԱՄԱՐ

Ասափի սաղմոսը:

79

Ո՛վ Աստուած, հեթանոսները քու ժառանգութեանդ մէջ մտան,  
Քու սուրբ տաճարդ պղծեցին,  
Երուսաղէմը ակերակի շեղջի քվերածեցին:

- 2 Քու ծառաներուդ դիակները  
Երկինքի թռչուններուն տուից՝ իբր ուտելիք,  
Քու բարեպաշտներուդ մարմինը՝ երկրի գազաններուն.
- 3 Անոնց արիւնը ջուրի պէս թափեցին Երուսաղէմի շուրջը,  
Եւ ո՛չ մէկը կար՝ որ զանոնք թաղէր:
- 4 Մեր դրացիներուն նախատինք եղանք,  
Ծաղր ու ծանակ՝ մեր շուրջը եղողներուն:
- 5 Մինչեւ ե՞րբ, ո՛վ Տէր. ընդմիջտ պիտի բարկանա՞ս.  
Քու նախանձախնդրութիւնդ կրակի պէս պիտի վառի՞:

՝ Կամ՝ Անոր

՞ Եբր.՝ վրայ դրին



- 6 Թափէ՛ քու ցասումդ այն ազգերուն վրայ՝  
Որոնք քեզ չեն ճանչնար,  
Այն թագաւորութիւններուն վրայ՝  
Որոնք քու անունդ չեն կանչեր.
- 7 Որովհետեւ Յակոբը կլանեցին,  
Եւ անոր բնակութիւնը ամայացուցին:
- 8 <sup>բ</sup>Մի՛ յիշեր մեր՝՝ նախկին անօրէնութիւնները.  
Քու գթութիւններդ շուտով թող գան մեր առջեւ,  
Զանի չափազանց <sup>գ</sup>թշուառացանք:
- 9 Օգնէ՛ մեզի, ո՛վ մեր փրկութեան Աստուածը,  
Քու անունիդ փառքին համար.  
Ազատէ՛ մեզ ու քաւէ՛ մեր մեղքերը,  
Քու անունիդ համար:
- 10 Ինչո՞ւ հեթանոսները ըսեն.  
«Ո՞ւր է անոնց Աստուածը».  
Քու ծառաներուդ թափուած արիւնին վրէժը  
Թող գիտցուի հեթանոսներուն մէջ, մեր աչքերուն առջեւ:
- 11 Բանտարկեալին հեծեծանքը քու առջեւ թող հասնի.  
Քու <sup>դ</sup>գօրութեանդ մեծութեամբ՝  
<sup>ե</sup>Ապրեցո՛ւր մահուան <sup>զ</sup>մատնուածները:
- 12 Եօթնապատի՛կ հատուցանէ մեր դրացիներուն՝ իրենց ծոցին մէջ՝  
Իրենց նախատինքին **փոխարէն**, որով քեզ <sup>է</sup>անարգեցին, ո՛վ Տէր:
- 13 Բայց մենք՝ քու ժողովուրդդ եւ քու արօտիդ ոչխարները՝  
Յաւիտեան քեզ պիտի ներբողենք,  
Ու քու <sup>բ</sup>փառաւոր գործերդ՝՝ պիտի պատմենք սերունդէ սերունդ:

ԱՂՕԹԸ՝ ԱԶԳԻՆ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄԻՆ ՆԱՄԱՐ  
Գլխաւոր երաժիշտին. «Շուշանիմ-էտուօ»ի վրայ. Ասափի սաղմոսը:

80

Ունկնդրէ՛, ո՛վ Իսրայէլի Հովիւր,  
Որ Յովսէփը հօտի պէս կ'առաջնորդես:

---

- <sup>բ</sup> Եբր.՝ Մեզի դէմ մի՛ յիշեր
- <sup>գ</sup> Եբր.՝ ցածցանք
- <sup>դ</sup> Եբր.՝ բազուկիդ
- <sup>ե</sup> Եբր.՝ Ո՛ղջ թողուր
- <sup>զ</sup> Եբր.՝ որդիները
- <sup>է</sup> Եբր.՝ նախատեցին
- <sup>բ</sup> Եբր.՝ գովաբանութիւնդ
- <sup>ւ</sup> Այսինքն՝՝ «Շուշանները վկայութիւն եւ»

- Փայլէ՛, դո՛ւն՝ որ քերովբէներու վրայ կը բազմիս:
- 2 Արթնցո՛ւր քու գօրութիւնդ  
Եփրեմի, Բենիամինի եւ Մանասէի առջեւ,  
Ու եկո՛ւր մեզ փրկելու:
- 3 Ո՛վ Աստուած, վերադարձո՛ւր մեզ.  
ԲՊայծառացո՛ւր քու երեսդ, եւ պիտի փրկուինք:
- 4 Ո՛վ Տէր, զօրքերո՛ւ Աստուած,  
Մինչեւ ե՞րբ պիտի Գարկանաս քու ժողովուրդիդ աղօթքին դէմ:
- 5 Արցունքի հաց կը կերցնես անոնց,  
Ու եռապատիկ չափով արցունք կը խմցնես անոնց:
- 6 Մեզ բանավէճի հիւթ կ'ընես մեր դրացիներուն մօտ,  
Եւ մեր թշնամիները մեզ կը ծաղրեն իրենց մէջ:
- 7 Ո՛վ զօրքերու Աստուած, վերադարձո՛ւր մեզ.  
Պայծառացո՛ւր քու երեսդ, ու պիտի փրկուինք:
- 8 Եգիպտոսէն որթատունկ մը փոխադրեցիր,  
Հեթանոսները վռնտեցիր եւ զայն տնկեցիր.
- 9 Անոր առջեւէն տեղ պատրաստեցիր,  
Անոր արմատները Դհաստատեցիր,  
Ու ան երկիրը լեցուց:
- 10 Լեռները ծածկուեցան անոր շուքով.  
Անոր ոստերը Աստուծոյ մայրիներուն պէս եղան:
- 11 Իր ոստերը երկնցուց մինչեւ ծովը,  
Եւ իր մատաղատունկերը՝ մինչեւ Գետը:
- 12 Ինչո՞ւ էք անդեցիր անոր ցանկապատերը,  
Որ ճամբայէն բոլոր անցնողները զայն կողոպտեն:
- 13 Անտառին խոզը զայն ապականեց,  
Ու դաշտի գազանները զայն ճարակեցին:
- 14 Ո՛վ զօրքերու Աստուած, կ'աղերսե՛մ, վերադարձի՛ր.  
Նայէ՛ երկինքէն ու տե՛ս,  
Եւ աչքէ՛ անցուր այս որթատունկը,  
Այն տունկը՝ որ քու աջ ձեռքովդ տնկեցիր,  
Ու որդին՝ որ քեզի համար զօրացուցիր.
- 16 Կրակով այրուած եւ կտրուած է,  
Զու Գսաստէդ կը կորսուին:
- 17 Զու ձեռքդ աջ կողմդ եղող մարդուն վրայ թող ըլլայ,  
Մարդու որդիին վրայ՝ որ քեզի համար զօրացուցիր:
- 18 Մենք ա՛լ է՛ պիտի չհեռանանք՝ քեզմէ.

---

<sup>բ</sup> Եբբ.՝ Լուսաւորէ՛

<sup>գ</sup> Եբբ.՝ մխաս

<sup>դ</sup> Եբբ.՝ արմատացուցիր

<sup>ե</sup> Եբբ.՝ պատռեցիր

<sup>զ</sup> Եբբ.՝ երեսիդ սաստէն

Վերապրեցո՛ւր մեզ, եւ քու անունդ պիտի կանչենք:

19 Ո՛վ Տէր, զօրքերո՛ւ Աստուած, վերադարձո՛ւր մեզ.  
Պայծառացո՛ւր քու երեսդ, ու պիտի փրկուինք:

ԱՂՕԹԸ՝ ՏՕՆԱԽՄԲՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Գլխաւոր երաժիշտին. կիթառի վրայ. Ասափի սաղմոսը:

81

Յնծացէ՛ք Աստուծոյ առջեւ, որ մեր զօրութիւնն է,  
Ուրախութեա՛մք գոչեցէք Յակոբի Աստուծոյն:

2 Առէ՛ք <sup>ա</sup>նուագարանները, բերէ՛ք թմբուկը,  
Նաեւ հաճելի քնարը՝ տաւիղին հետ:

3 Շեփո՛ր հնչեցուցէք <sup>բ</sup>ամսագլուխին,  
Նաեւ <sup>գ</sup>լիալուսինին, մեր տօնին օրը:

4 Արդարեւ ասիկա Իսրայէլի համար կանոն մըն է,  
Յակոբի Աստուծոյն որոշումը.

5 Ի՛նք ասիկա Յովսէփի մէջ իբր վկայութիւն դրաւ,  
Երբ <sup>դ</sup>յարձակեցաւ Եգիպտոսի երկրին վրայ,  
Ուր լեզու մը լսեցի՝ որ չէի գիտեր.

6 «Անոր ուսը հանեցի բռնին տակէն.  
Անոր ձեռքերը <sup>ե</sup>հեռացան կողովէն:

7 Տագնապի մէջ գոչեցիր, ու քեզ ազատեցի.  
Պատասխանեցի քեզի որոտումի ծածկոյթին մէջէն,  
Փորձարկեցի քեզ Մերիպայի ջուրին քով: (Սելա:)

8 Լսէ՛, ո՛վ իմ ժողովուրդս, ու վկայեմ քեզի.  
Ո՛վ Իսրայէլ, <sup>զ</sup>մտի՛կ ըրէ՛՝ ինծի,

9 Օտար Աստուած թող չըլլայ քու մէջդ,  
Օտար Աստուծոյ մի՛ երկրպագեր:

10 Ե՛ս եմ Տէրը՝ քու Աստուածդ,  
Որ բարձրացուցի քեզ Եգիպտոսի երկրէն.  
<sup>է</sup>Լա՛յն բաց՝ քու բերանդ,  
Ու զայն պիտի լեցնեմ:

<sup>է</sup> Եբբ.՝ ետ պիտի չքաշուինք

<sup>ա</sup> Եբբ.՝ նուագը

<sup>բ</sup> Եբբ.՝ նոր լուսինին

<sup>գ</sup> Կամ՝ որոշուած ժամանակին

<sup>դ</sup> Եբբ.՝ դուրս ելաւ

<sup>ե</sup> Եբբ.՝ անցան

<sup>զ</sup> Եբբ.՝ եթէ մտիկ ընես

<sup>է</sup> Եբբ.՝ Լայնցո՛ւր

- 11 Բայց իմ ժողովուրդս ձայնս մտիկ չըրաւ,  
եւ Իսրայէլ զիս չուզեց:
- 12 Ուստի զանոնք իրենց սիրտին կամակորուրեան <sup>բ</sup>լքեցի,  
**Որպէսզի** իրենց խորհուրդներուն համաձայն ընթանան:
- 13 Երանի՛ թէ իմ ժողովուրդս ինծի մտիկ ըներ,  
եւ Իսրայէլ իմ ճամբաներուս մէջ ընթանար:
- 14 Շուտով պիտի ընկճէի անոնց թշնամիները,  
Ու ձեռքս պիտի դարձնէի անոնց հակառակորդներուն դէմ:
- 15 Տէրը ատողները <sup>բ</sup>պիտի քծնէիմ իր առջեւ՝,  
եւ <sup>գ</sup>անոնց ժամանակը յաւիտենական պիտի ըլլար:
- 16 Ան <sup>դ</sup>ընտիր ցորեն պիտի կերցնէր անոնց,  
Ու վէմէն **հոսած** մեղրով պիտի կշտացնէի ձեզ»:

**ԱՍՏՈՒԱԾ՝ ԳԵՐԱԳՈՅՆ ԻՇԽՈՂԸ**  
Ասափի սաղմոսը:

**82**

Աստուած կայնած է <sup>ա</sup>հզօրներու համայնքին մէջ,  
<sup>բ</sup>Դատաւորներուն մէջ կը դատէ:

- 2 «Մինչեւ ե՞րբ անիրաւութեամբ պիտի դատէք,  
եւ ամբարիշտներուն աչառութիւն պիտի ընէք: (Սելա:)
- 3 Չքաւորին ու որբին դա՛տը պաշտպանեցէք,  
Դժբախտին եւ թշուառին իրաւո՛ւնքը պաշտպանեցէք:
- 4 <sup>գ</sup>Փրկեցէ՛ք չքաւորն ու աղքատը,  
Ազատեցէ՛ք **զանոնք** ամբարիշտներուն ձեռքէն»:
- 5 Չեն գիտեր եւ չեն հասկնար,  
Խաւարի մէջ կ'ընթանան.  
Երկրի բոլոր հիմերը երերացին:
- 6 Ես ըսի. «Դուք աստուածներ էք.  
Դուք բոլորդ Ամենաբարձրին որդիներն էք.
- 7 Բայց մարդոց պէս պիտի մեռնիք,  
եւ իշխանաւորներէն մէկուն պէս պիտի իյնաք»:
- 8 Կանգնէ՛, ո՛վ Աստուած, դատէ՛ երկիրը,  
Որովհետեւ դո՛ւն պիտի ժառանգես բոլոր ազգերը:

---

- <sup>բ</sup> Եբր.՝ ղրկեցի
- <sup>բ</sup> Կամ՝ պիտի ստէիմ իրեն
- <sup>գ</sup> Այսինքն՝ Իսրայէլի
- <sup>դ</sup> Եբր.՝ ճարպոտ
- <sup>ա</sup> Կամ՝ Աստուծոյ
- <sup>բ</sup> Կամ՝ Աստուածներուն
- <sup>գ</sup> Եբր. Ազա՛տ արձակեցէք

ԱՂԾԹՔ՝ ԹՇՆԱՄԻՆԵՐՈՒ ՊԱՐՏՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Երգ. Ասափի սաղմոսը:

83

Ո՛վ Աստուած, մի՛ լռեր.

Անձայն մի՛ ըլլար ու հանդարտ մի՛ կենար, ո՛վ Աստուած.

2 Որովհետեւ ահա՛ քու թշնամիներդ կը գռռան,  
Քեզ ատողները գլուխ կը բարձրացնեն:

3 Խորամանկութեամբ կը դաւադրեն քու ժողովուրդիդ դէմ,  
Կը խորհրդակցին քու «պաշտպանեալներուդ դէմ.

4 Կ'ըսեն. «Եկէ՛ք, անհետացնե՛նք զանոնք՝ որպէսզի ազգ չըլլան,  
Եւ ա՛լ չյիշատակուի Իսրայէլի անունը»:

5 Արդարեւ <sup>բ</sup>միաբանութեամբ խորհրդակցեցան  
Ու քեզի դէմ դաշինք կնքեցին՝

6 Եդովմի վրանները եւ Իսմայելացիները,  
Մովաբ ու Հագարացիները,

7 Գեբաղ, Ամմոն եւ Ամաղէկ,  
«Փղշտացիները՝ Տիւրոսի բնակիչներուն հետ:

8 Նաեւ Ասուր անոնց միացաւ.  
Ղովտի որդիներուն ձեռնտու եղան: (Սելա:)

9 Ըրէ՛ անոնց՝ ինչպէս Մադիամի,  
Ինչպէս Սիսարայի ու Յաբիհի ըրի՞ր Կիսուն վտակին քով:

10 Անոնք Ենդովրի մէջ բնաջնջուեցան,  
Աղբ եղան հողին համար:

11 Անոնց ազնուականները Օրէբի՛ ու Զէբի՛ պէս ըրէ,  
Եւ անոնց բոլոր <sup>դ</sup>նախարարները՝ Զեբէէի ու Սաղմանայի պէս,

12 Որոնք ըսին. «Աստուծոյ բնակարաններուն  
Մե՛նք տիրանանք՝ մեզի համար»:

13 Ո՛վ իմ Աստուածս, թաթառի՛ պէս ըրէ զանոնք,  
Հովին առջեւ եղող խոզանին պէս:

14 Ինչպէս կրակը կ'այրէ անտառը,  
Ու բոցը կը բռնկեցնէ լեռները,

15 Ա՛յնպէս հետապնդէ զանոնք քու մրրիկովդ,  
Շփոթեցո՛ւր զանոնք քու փոթորիկովդ:

16 Անարգանքո՛վ <sup>ե</sup>ծածկէ անոնց երեսը,  
Որպէսզի քու անունդ փնտռեն, ո՛վ Տէր:

<sup>ա</sup> Եբբ.՝ պահածներուդ

<sup>բ</sup> Եբբ.՝ մէկ սիրտով

<sup>գ</sup> Կամ՝ Պաղեստին

<sup>դ</sup> Եբբ.՝ օծեալները

<sup>ե</sup> Եբբ.՝ լեցուր

- 17 Թող ամչնան ու յաւերժ շփոթին,  
Թող շիկնին եւ կորսուին.
- 18 Որպէսզի գիտնան թէ միայն դո՛ւն,– որուն անունը Եհովա է,–  
Ամենաբարձր եւ ամբողջ երկրի վրայ:

ԲԱՂՁԱՆԸ՝ ԱՍՏՈՒԾՈՅ ՏԱՆ ՀԱՆԴԷՊ

Գլխաւոր երաժիշտին. կիթառի վրայ. Կորխի որդիներուն սաղմոսը:

84

- Ի՛նչպէս սիրելի են քու **բնակարաններդ**,  
Ո՛վ զօրքերու Տէր.
- 2 Իմ անձս կը կարօտնայ Տէրոջ գաւիթները,  
Եւ նոյնիսկ կը **բնուաղի անոնց** համար.  
Իմ սիրտս ու մարմինս ցնծութեամբ **կը գոչեն**  
Ապրո՛ղ Աստուծոյն:
- 3 Ճնճողուկն ալ տուն գտաւ,  
Ու ծիծեռնակը իրեն բոյն՝ իր ձագերը դնելու համար,  
Քու զոհասեղաններուդ **քով**, ո՛վ զօրքերու Տէր,  
Իմ Թագաւորս եւ Աստուածս:
- 4 Երանի՛ անոնց՝ որ քու տանդ մէջ կը բնակին.  
Անոնք անդադար քեզ պիտի գովաբանեն: (Սելա:)
- 5 Երանի՛ այն մարդոց՝ որոնց զօրութիւնը քեզմէ է,  
Եւ իրենց սիրտին մէջ **տանդ** ճամբաները կան:
- 6 Արտասուքներու հովիտէն անցնելով՝ **Պաղբիւրի կը վերածեն**՝ զայն.  
**Առաջին անձրեւն ալ Պորհնութիւններով կը ծածկէ զայն**՝:
- 7 Անոնք **հետզհետէ կը զօրանան**,  
**Մինչեւ որ** Աստուծոյ առջեւ երեւնան Սիոնի մէջ:
- 8 Ո՛վ Տէր, զօրքերո՛ւ Աստուած, լսէ՛ իմ աղօթքս.  
Ո՛վ Յակոբի Աստուածը, ունկնդրէ՛: (Սելա:)
- 9 Ո՛վ Աստուած, մեր վահանը, տե՛ս.  
Նայէ՛ քու օծեալիդ երեսին:
- 10 Զանի մէ՛կ օրը քու գաւիթներուդ մէջ՝  
Հազարէն լաւ է **ուրիշ տեղ**,  
Նախընտրեցի իմ Աստուծոյս տան շեմին վրայ կենալ,  
Զան թէ **ամբարիշտներու վրաններուն մէջ բնակիլ**:
- 11 Արդարեւ **Տէր Աստուած արեւ ու վահան է**.

---

- <sup>ա</sup> Կամ՝ խորանդ
- <sup>բ</sup> Եբր.՝ սպառի
- <sup>գ</sup> Եբր.՝ աղբիւր կ'ընեն
- <sup>դ</sup> Կամ՝ աւազանները կը լեցնէ
- <sup>ե</sup> Եբր.՝ ոյժէ ոյժ կ'երթան
- <sup>զ</sup> Եբր.՝ ամբարշտութեան

Տէրը շնորհք եւ փառք պիտի տայ.  
Ո՛չ մէկ բարութիւն պիտի մերժէ  
Պարկեշտութեամբ ընթացողներուն:

12 Ո՛վ գօրքերու Տէր,  
Երանելի՛ է քեզի վստահող մարդը:

ԱՂԹԸ՝ ԱԶԳԻՆ ԲԱՐՕՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ  
Գլխաւոր երաժիշտին. Կորխի որդիներուն սաղմոսը:

85

Ո՛վ Տէր, դուն հաճեցար քու երկրիդ.  
Դո՛ւն վերադարձուցիր Յակոբի՝<sup>ա</sup> գերիները,

2 Ներեցիր քու ժողովուրդիդ անօրէնութիւնը,  
Ծածկեցիր անոնց բոլոր մեղքերը. (Սելա.)

3 <sup>բ</sup> Հեռացուցիր քու ամբողջ ցասումդ,  
Կասեցուցիր քու՝ <sup>գ</sup> բորբոքած բարկութիւնդ՝:

4 <sup>դ</sup> Վերադարձո՛ւր մեզ՝, ո՛վ մեր փրկութեան Աստուածը.  
Դադրեցո՛ւր քու գրգռութիւնդ՝ որ մեզի դէմ է:

5 Միթէ յաւիտեան պիտի բարկանա՞ս մեզի.  
Զու բարկութիւնդ սերունդէ սերունդ պիտի երկարաձգե՞ս:

6 Միթէ մեզ պիտի չվերապրեցնե՞ս,  
Որպէսզի քու ժողովուրդդ քեզմով ուրախանայ:

7 Յո՛նց տուր մեզի, ո՛վ Տէր, քու կարեկցութիւնդ.  
<sup>ե</sup> Ծնորհէ՛ մեզի քու փրկութիւնդ:

8 Պիտի լսեմ ինչ որ <sup>զ</sup> Տէր Աստուած պիտի խօսի,  
Որովհետեւ խաղաղութեան **մասին** պիտի խօսի իր ժողովուրդին եւ իր  
բարեպաշտներուն,  
Եթէ անոնք անմտութեան չվերադառնան:

9 Անտարակոյս իր փրկութիւնը մօտ է իրմէ վախցողներուն,  
Որպէսզի փառքը բնակի մեր երկրին մէջ:

10 Կարեկցութիւնն ու ճշմարտութիւնը իրարու հանդիպեցան,  
Արդարութիւնն ու խաղաղութիւնը **զիրար** համբուրեցին:

11 Ճշմարտութիւնը երկրէ պիտի բուսնի,  
Եւ արդարութիւնը երկինքէն վար պիտի նայի:

<sup>է</sup> Եբր.՝ Եհովա

<sup>ա</sup> Եբր.՝ գերութիւնը

<sup>բ</sup> Եբր.՝ Հաւաքեցիր

<sup>գ</sup> Եբր.՝ բարկութեանդ բորբոքումը

<sup>դ</sup> Կամ՝ Վերադարձի՛ր մեզի

<sup>ե</sup> Եբր.՝ Տո՛ւր

<sup>զ</sup> Եբր.՝ Եհովա

- 12 Նաեւ Տէրը բարօրութիւն պիտի տայ,  
Ու մեր գետինը՝ իր արգասիքը:
- 13 Արդարութիւնը անոր առջեւէն պիտի երթայ,  
Եւ է՛իր քայլերը՝՝ ճամբային մէջ պիտի դնէ:

ԱՂԹԹԷ՝ ՕԳՆՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ  
Դաւիթի աղօթքը:

86

- Ո՛վ Տէր, դարձո՛ւր ականջդ.  
Պատասխանէ՛ ինձի, քանի դժբախտ եւ աղքատ եմ.
- 2 Պահպանէ՛ իմ անձս, որովհետեւ բարեպաշտ եմ:  
Ո՛վ իմ Աստուածս, դո՛ւն փրկէ քեզի վստահող ծառայ.
- 3 Ողորմէ՛ ինձի, ո՛վ Տէր,  
Որովհետեւ քեզի՛ կը գոչեմ ամէն օր:
- 4 Ուրախացո՛ւր քու ծառայիդ անձը,  
Քանի որ դէպի քե՛զ կը բարձրացնեմ իմ անձս, ո՛վ Տէր:
- 5 Արդարեւ դուն, ո՛վ Տէր, բարի ու ներող ես,  
Եւ մեծապէս կարեկից բոլոր անոնց՝ որ քեզի կը գոչեն:
- 6 Ունկնդրէ՛ իմ աղօթքս, ո՛վ Տէր,  
Ուշադի՛ր եղիր աղաչանքներուս ձայնին:
- 7 Տագնապիս օրը քեզի՛ կը գոչեմ,  
Որովհետեւ դուն ինձի կը պատասխանես:
- 8 Ո՛վ Տէր, ո՛չ մէկը քեզի պէս է աստուածներուն մէջ,  
Եւ քու գործերուդ նմանը չկայ:
- 9 Զու ստեղծած բոլոր ազգերդ պիտի գան  
Ու երկրպագեն քու առջեւդ, ո՛վ Տէր,  
Եւ քու անունդ պիտի փառաւորեն:
- 10 Արդարեւ դուն մեծ ես, սքանչելիքներ կ'ընես.  
Միայն դուն Աստուած ես:
- 11 Ո՛վ Տէր, սորվեցո՛ւր ինձի քու ճամբադ,  
**Որպէսզի** քու ճշմարտութեանդ մէջ ընթանամ.  
<sup>բ</sup>Յօժարեցո՛ւր սիրտս, որպէսզի քու անունէդ վախնայ:
- 12 Ամբողջ սիրտովս քեզ պիտի ներբողեմ, ո՛վ Տէր, իմ Աստուա՛ծս,  
Ու քու անունդ յաւիտեան պիտի փառաւորեմ.
- 13 Որովհետեւ քու կարեկցութիւնդ մեծ եղաւ ինձի հանդէպ,  
Եւ դո՛ւն ազատեցիր իմ անձս <sup>գ</sup>խորունկ <sup>դ</sup>դժոխքէն:

<sup>է</sup> Կամ՝ մեզ իր քայլերուն

<sup>ա</sup> Եբր.՝ ըրած

<sup>բ</sup> Եբր.՝ Միացո՛ւր

<sup>գ</sup> Եբր.՝ ստորին

<sup>դ</sup> Այսինքն՝ մեռած անձերու կայանէն



- 14 Ո՛վ Աստուած, հպարտները ինծի դէմ կանգնեցան,  
Ու խումբ մը բռնակալներ իմ անձս փնտռեցին.  
Անոնք քեզ իրենց առջեւ չդրին:
- 15 Բայց դուն, ո՛վ Տէր, գթած եւ ողորմած Աստուած ես,  
Համբերատար ու առատաձեռն՝ կարեկցութեամբ եւ ճշմարտութեամբ:
- 16 Դարձի՛ր ու ողորմէ՛ ինծի.  
Տո՛ւր զօրութիւնդ քու ծառայիդ,  
Ու փրկէ՛ քու աղախինիդ որդին:
- 17 Բարութեան նշա՛ն մը՝ ցոյց տուր՝ ինծի,  
Որպէսզի զիս ատողները տեսնեն եւ ամչնան.  
Որովհետեւ դուն, ո՛վ Տէր, ինծի կ'օգնես ու զիս կը մխիթարես:

**ԵՐՈՒՍԱՂԷՍԸ ՓԱՌԶԻ ՄԷՋ**  
Կորնթի որդիներուն սաղմոսը. երգ:

**87**

- Անոր հիմերը սուրբ լեռներուն վրայ են:
- 2 Տէրը Սիոնի դռները  
Յակոբի բոլոր բնակարաններէն աւելի կը սիրէ:
  - 3 Փառաւոր բաներ կը պատմուին քեզի համար,  
Ո՛վ Աստուծոյ քաղաքը: (Սելա:)
  - 4 <sup>Մ</sup>Ռահաբն ու Բաբելոնը պիտի յիշատակեմ զիս <sup>Բ</sup>ճանչցողներուն մէջ՝:  
Ահա՛ <sup>Գ</sup>Փղշտացիներուն երկիրը՝, եւ Տիրոս՝ <sup>Դ</sup>Քուշի հետ.  
Ասիկա հոն ծնաւ:
  - 5 Սիոնի համար պիտի ըսուի.  
«Այս կամ այն մարդը հոն ծնաւ»,  
Եւ Ամենաբարձրը ի՛նք պիտի հաստատէ զայն:
  - 6 Երբ Տէրը ազգերը արձանագրէ, պիտի ՚ըսէ.  
«Ասիկա հոն ծնաւ»: (Սելա:)
  - 7 Երգողները, նոյնպէս **ալ** <sup>Գ</sup>սրնգահարները **պիտի ըսեն**.  
«Իմ բոլոր աղբիւրներս քու մէջդ են»:

**ՕԳՆՈՒԹԵԱՆ ԱՂԵՐՍ**  
Երգ. Կորնթի որդիներուն սաղմոսը. Գլխաւոր երաժիշտին. <sup>Մ</sup>մահալաթ-լէանօթի վրայ.

---

<sup>Ե</sup> Եբբ.՝ ըրէ  
<sup>Մ</sup> Այսինքն՝ Եգիպտոսը  
<sup>Բ</sup> Կամ՝ ճանչցողներու պէս  
<sup>Գ</sup> Եբբ.՝ Պաղեստին  
<sup>Դ</sup> Կամ՝ Եթովպիայի  
<sup>Ե</sup> Եբբ.՝ հաշուէ  
<sup>Գ</sup> Կամ՝ պարողները

88

- Ո՛վ Տէր, իմ փրկութեա՛նս Աստուածը,  
Յերեկ **ու** գիշեր քու առջեւդ կ'աղաղակեմ:
- 2** Իմ աղօթքս քու առջեւդ թող ելլէ,  
Դարձո՛ւր քու ականջդ իմ <sup>բ</sup>պաղատանքիս.
- 3** Որովհետեւ իմ անձս ձախորդութիւններով <sup>գ</sup>լեցուեցաւ,  
Եւ կեանքս <sup>դ</sup>դժոխքից <sup>ե</sup>մօտեցաւ:
- 4** Գուրը իջնողներուն հետ սեպուեցայ.  
Ոյժ չունեցող <sup>զ</sup>մարդու մը պէս եղայ:
- 5** Մեռելներու մէջ <sup>է</sup>հնկած եմ՝  
Գերեզմանի մէջ պառկող <sup>ը</sup>սպաննուածներու պէս,  
Որոնք ա՛լ չես յիշեր,  
Եւ <sup>բ</sup>քու ձեռքէդ կտրուած՝ եմ:
- 6** Դուն գիս ամենէն <sup>զ</sup>խորունկ գութին մէջ դրիր,  
Խաւարին ու խորխորատին մէջ.
- 7** Քու ցասումդ <sup>ը</sup>ծանրացաւ իմ վրաս,  
Եւ բոլոր կոհակներովդ **գիս** տառապեցուցիր: (Սելա:)
- 8** Իմ ճանչուորներս ինձմէ հեռացուցիր,  
Ջիս գարշելի ըրիր անոնց առջեւ.  
Արգելափակուեցայ, ու չեմ կրնար դուրս ելլել:
- 9** Տառապանքէն աչքերս մարեցան.  
Ամէն օր քեզի գոչեցի, ո՛վ Տէր,  
Չեռքերս քեզի երկարեցի:
- 10** Միթէ մեռելներո՞ւն սքանչելիք պիտի ընես.  
Միթէ ուրուականներո՞րը պիտի կանգնին ու քեզ ներբողեն: (Սելա:)

<sup>ա</sup> Թերեւս՝ մեղմ ձայնով նուագարանի մը

<sup>բ</sup> Եբբ.՝ ճիչիս

<sup>գ</sup> Եբբ.՝ կշտացաւ

<sup>դ</sup> Այսինքն՝ մեռած անձերու կայանին

<sup>ե</sup> Եբբ.՝ հասաւ

<sup>զ</sup> Եբբ.՝ գօրաւոր մարդու

<sup>է</sup> Եբբ.՝ ազատ արձակուած

<sup>ը</sup> Եբբ.՝ խոցուածներու

<sup>բ</sup> Այսինքն՝ քեզմէ մերժուած

<sup>զ</sup> Եբբ.՝ ստորին

<sup>ը</sup> Եբբ.՝ դրուեցաւ

- 11 Միթէ կը պատմուի՞ քու կարեկցութիւնդ գերեզմանին մէջ, եւ քու հաւատարմութիւնդ՝ Վիհին մէջ:
- 12 Միթէ կը գիտցուի՞ն քու սքանչելիքներդ խաւարին մէջ, Ու քու արդարութիւնդ՝ մոռացումի երկրին մէջ:
- 13 Բայց ես, ո՛վ Տէր, քեզի՛ աղաղակեցի, եւ աղօթքս առտուն քու առջեւ պիտի ելլէ:
- 14 Ո՛վ Տէր, ինչո՞ւ իմ անձս կը մերժես, Ու քու երեսդ ինձմէ կը ծածկես:
- 15 Ես դժբախտ եմ, մանկութենէս ի վեր շունչս տալու մօտ եմ. Զու ահերդ կրեցի ու խռովեցայ:
- 16 Զու բորբոքումդ իմ վրայէս անցաւ, եւ քու արհաւիրքներդ զիս բնաջնջեցին.
- 17 Ամէն օր ջուրի պէս զիս պաշարեցին, Միասին զիս շրջապատեցին:
- 18 Սիրելի՛ն ու բարեկամը ինձմէ հեռացուցիր. իմ ճանչուորներս խաւարի մէջ են:

**ԵՐԳ՝ ԱԶԳԱՅԻՆ ՏԱԳՆԱՊԻ ԱՏԵՆ**  
Եզրահացի Եթանի երգը:

**89**

- Տէրոջ կարեկցութիւնները յաւիտեան պիտի երգեմ,  
Զու հաւատարմութիւնդ իմ բերանովս սերունդէ սերունդ պիտի գիտցնեմ.
- 2 Որովհետեւ ըսի. «Կարեկցութիւնը յաւիտեանապէս պիտի կառուցանուի. Երկինքի՛ մէջ պիտի հաստատես քու հաւատարմութիւնդ»:
  - 3 «Իմ ընտրեալիս հետ ուխտ կընքեցի, իմ ծառայիս՝ Դաւիթի երդում ըրի.
  - 4 “Զու զարմդ յաւիտեանապէս պիտի հաստատեմ, եւ քու գահդ սերունդէ սերունդ պիտի կառուցանեմ□»: (Սելա:)
  - 5 Երկինքն ալ կը ներբողէ քու սքանչելիքներդ, ո՛վ Տէր, Նաեւ քու հաւատարմութիւնդ՝ սուրբերուն համախմբումին մէջ.
  - 6 Զանի որ երկինքի մէջ ո՞վ Տէրոջ կը բաղդատուի, Ու <sup>ա</sup>հզօրներու որդիներուն մէջ ո՞վ Տէրոջ կը նմանի:
  - 7 Աստուած յոյժ զարհուրելի է սուրբերուն խորհրդածողովին մէջ, եւ ահեղ է բոլոր շուրջը եղողներուն մէջ:
  - 8 Ո՛վ Տէր, զօրքերո՛ւ Աստուած, ո՞վ քեզի պէս հզօր Տէր է. Զու հաւատարմութիւնդ շուրջդ է:
  - 9 Դո՛ւն կը <sup>բ</sup>տիրապետես ծովուն ամբարտաւանութեան վրայ. Երբ անոր ալիքները բարձրանան, դո՛ւն կը հանդարտեցնես զանոնք:
  - 10 Դո՛ւն ճգմեցիր <sup>գ</sup>Ռահաբը՝ <sup>դ</sup>սպաննուածի պէս.

<sup>1</sup> Երբ.՝ ապադոցին, **այսինքն՝** կորուստին

<sup>ա</sup> Կամ՝ Աստուծոյ

<sup>բ</sup> Երբ.՝ տիրես

<sup>գ</sup> Այսինքն՝ Եգիպտոսը

## ՍԱՂՄՈՍՆԵՐՈՒԻ ԳԻՐՔԸ

Քու գորեղ բազուկովդ ցրուեցիր թշնամիներդ:

- 11 Զո՛ւկդ է երկինքը, քո՛ւկդ է երկիրը.  
Դո՛ւն հիմնեցիր երկրագունդը եւ անոր լիութիւնը:
- 12 Հիւսիսն ու հարաւը դո՛ւն ստեղծեցիր.  
Թաբորն ու Հերմոնը քու անունովդ կը ցնծան:
- 13 Դուն գորաւոր բազուկ ունիս.  
Քու ձեռքդ ուժեղ է, աջ ձեռքդ բարձրացած է:
- 14 Արդարութիւնն ու իրաւունքը քու գահիդ խարիսխն են,  
Կարեկցութիւնն ու ճշմարտութիւնը քու երեսիդ առջեւէն կ'երթան:
- 15 Երանի՛ այն ժողովուրդին՝ որ կը ճանչնայ **ուրախութեան** գոչիւնը.  
Անոնք քու երեսիդ լոյսով պիտի քալեն, ո՛վ Տէր:
- 16 Քու անունովդ ամէն օր պիտի խայտան,  
Եւ քու արդարութեամբդ պիտի բարձրանան:
- 17 Արդարեւ դո՛ւն ես անոնց զօրութեան պարծանքը,  
Քու բարեհաճութեամբդ պիտի բարձրանայ մեր եղջիրը.
- 18 Որովհետեւ մեր վահանը <sup>Ե</sup>Տէրն է,  
Ու մեր թագաւորը Իսրայէլի <sup>Պ</sup>Սուրբն է:

## ԱՍՏՈՒԾՈՅ ԽՈՍՏՈՒՄԸ ԴԱԻԻԹԻ

- 19 Այն ատեն տեսիլքով խօսեցար քու <sup>Կ</sup>սուրբիդ հետ,  
Եւ ըսիր. «Օգնութիւն դրի զօրաւորին վրայ,  
Ժողովուրդէն ընտրուածը բարձրացուցի:
- 20 Իմ ծառաս՝ Դաւիթը գտայ,  
Իմ սուրբ իւղովս օծեցի զայն.
- 21 Իմ ձեռքս պիտի հաստատէ զայն,  
Եւ իմ բազուկս պիտի զօրացնէ զայն:
- 22 Թշնամիսն <sup>Ը</sup>զայն պիտի չհարստահարէ՛»,  
Անհրաւութեան որդին զայն պիտի չտառապեցնէ:
- 23 Անոր հակառակորդները իր առջեւ պիտի ջախջախեմ,  
Զայն ատողները պիտի հարուածեմ:
- 24 Իմ հաւատարմութիւնս ու կարեկցութիւնս անոր հետ պիտի ըլլան,  
Եւ անոր եղջիրը իմ անունովս պիտի բարձրանայ:
- 25 Ծովը պիտի դնեմ անոր ձեռքին տակ,  
Ու գետերը՝ անոր աջ ձեռքին տակ:
- 26 Ան զիս պիտի կոչէ. «Թ՛իմ Հա՛յրս,

---

<sup>Դ</sup> Եբբ.՝ խոցուածի

<sup>Ե</sup> Կամ՝ Տէրոջն

<sup>Պ</sup> Կամ՝ Սուրբինն

<sup>Կ</sup> Եբբ.՝ բարեպաշտիդ

<sup>Ը</sup> Եբբ.՝ իրմէ վաշխ պիտի չառնէ

Իմ Աստուա՛ծս, եւ իմ փրկութեանս Վէ՛մը□:

- 27 Ես ալ զայն անդրանիկ պիտի ընեմ,  
Երկրի թագաւորներուն ամենէն բարձրը:
- 28 Իմ կարեկցութիւնս յաւիտեան պիտի պահեմ անոր հանդէպ,  
Եւ ուխտս հաստատ պիտի ըլլայ անոր հետ:
- 29 Անոր զարմը յաւերժ պիտի <sup>ժ</sup>հաստատեմ,  
Ու անոր գահը երկինքի օրերուն չափ **պիտի տեւէ:**
- 30 Եթէ անոր որդիները իմ Օրէնքս լքեն  
Եւ կանոններովս չընթանան,  
31 Եթէ իմ կանոններս դրժեն  
Ու պատուիրաններս չպահեն,  
32 Ես ալ անոնց յանցանքը գաւազանով պիտի <sup>հ</sup>պատժեմ,  
Եւ անոնց անօրէնութիւնը՝ հարուածներով:
- 33 Բայց իմ կարեկցութիւնս անկէ պիտի չկտրեմ,  
Ու հաւատարմութիւնս պիտի չժխտեմ.
- 34 Իմ ուխտս պիտի չդրժեմ,  
Շրթունքէս ելածը պիտի չփոխեմ:
- 35 Մէկ անգամ երդում ըրի իմ սրբութեամբս,  
Թէ պիտի չստեմ Դաւիթի:
- 36 Անոր զարմը յաւիտեանական պիտի ըլլայ,  
Եւ իմ առջեւ անոր գահը՝ արեւին պէս.
- 37 Յաւիտեան պիտի հաստատուի՝ լուսինին պէս,  
Երկինքի մէջ հաւատարիմ վկայի **պէս**»: (Սելա:)

ՈՂԲ՝ ԹԱԳԱԽՈՐԻՆ ՊԱՐՏՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ

- 38 Բայց դուն մերժեցիր եւ անարգեցիր քու օծեալդ,  
**Անոր** դէմ սրդողեցար:
- 39 Զու ծառայիդ ուխտը ուրացար,  
Անոր <sup>Լ</sup>թագը աղարտեցիր՝ գետին **նետելով զայն:**
- 40 Անոր բոլոր ցանկապատերը <sup>Խ</sup>քանդեցիր,  
Անոր <sup>Ց</sup>ամրոցները աւերակի վերածեցիր՝:
- 41 Բոլոր ճամբայէն անցնողները կողոպտեցին զայն,  
Նախատինք եղաւ իր դրացիներուն:
- 42 Անոր հակառակորդներուն աջ ձեռքը բարձրացուցիր,

---

<sup>բ</sup> Եբբ.՝ Դո՛ւն՝ իմ Հայրս

<sup>ժ</sup> Եբբ.՝ դնեմ

<sup>հ</sup> Եբբ.՝ հատուցանեմ

<sup>Լ</sup> Եբբ.՝ պսակը

<sup>Խ</sup> Եբբ.՝ պատռեցիր

<sup>Ց</sup> Եբբ.՝ ամրոցներուն կործանում դրիր

Անոր բոլոր թշնամիները ուրախացուցիր:

- 43 Նաեւ անոր սուրին բերանը **հիրեն դէմ** դարձուցիր<sup>4</sup>,  
Ու պատերազմի մէջ **հիրեն** նեցուկ չեղար<sup>5</sup>:
- 44 Անոր վայելչութիւնը դադրեցուցիր,  
Եւ իր գահը գետին նետեցիր.
- 45 Անոր երիտասարդութեան օրերը կարճեցուցիր,  
Զայն ամօթով ծածկեցիր: (Սելա:)

ԱՂՕԹԷ՝ ՓՐԿՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

- 46 Մինչեւ ե՞րբ, ո՛վ Տէր.  
Ընդմիջտ պիտի պահուըտի՞ս,  
Եւ քու ցասումդ կրակի պէս պիտի վառի՞:
- 47 Յիշէ՛ իմ կեանքիս տեւողութիւնը.  
Միթէ ունայնութեա՞ն համար ստեղծեցիր մարդոց բոլոր որդիները:
- 48 Ո՞վ է այն ձմարդը՝ որ կ'ապրի ու մահ պիտի չտեսնէ,  
Եւ իր անձը <sup>7</sup>դժոխքին ձեռքէն պիտի փրկէ: (Սելա:)
- 49 Ո՛վ Տէր, ո՞ւր եմ քու նախկին կարեկցութիւններդ,  
**Ռրոնք** երդում ըրիր Դաւիթի՝ քու հաւատարմութեամբդ:
- 50 Ո՛վ Տէր, յիշէ՛ քու ծառաներուդ նախատինքը,  
**Ռր** իմ ծոցիս մէջ կը կրեմ բոլոր մեծ ազգերէն.
- 51 Անո՛վ քու թշնամիներդ՝ <sup>6</sup>անարգեցին, ո՛վ Տէր,  
Անո՛վ անարգեցին քու օծեալիդ <sup>5</sup>քայլերը:
- 52 Օրհնեա՛լ ըլլայ Տէրը յաւիտեան: Ամէն ու ամէն:

ԱՍՏՈՒԱԾ ԵՒ ՄԱՐԴԸ

Աստուծոյ մարդուն՝ Մովսէսի աղօթքը:

90

- Ո՛վ Տէր, դուն մեզի <sup>3</sup>պատսպարան եղար սերունդէ սերունդ:
- 2 Լեռներուն ծնելէն առաջ՝  
Երկրին ու երկրագունդին <sup>2</sup>ստեղծուելէն առաջ՝

<sup>4</sup> **Կամ՝** նահանջել տուիր

<sup>5</sup> **Եբր.**՝ զինք չկանգնեցուցիր

<sup>6</sup> **Եբր.**՝ գօրաւոր մարդը

<sup>7</sup> **Այսինքն՝** մեռած անձերու կայանին

<sup>8</sup> **Եբր.**՝ նախատեցին

<sup>5</sup> **Եբր.**՝ հետքերը

<sup>3</sup> **Եբր.**՝ բնակավայր

<sup>2</sup> **Եբր.**՝ երկնուելէն

«Դարէ դար» դուն Աստուած ես:

- 3 Դուն մարդը <sup>7</sup>փոշիի կը վերածես»,  
Եւ կ'ըսես. «Վերադարձէ՛ք, մարդոց որդիներ»:
- 4 Արդարեւ հազար տարին քու առջեւ երէկուան պէս է՝ որ անցաւ,  
Կամ գիշերուան պահու մը պէս:
- 5 <sup>6</sup>Կ'ընկղմես <sup>9</sup>զանոնք, <sup>5</sup>երագի պէս կ'ըլլան,  
Առտուն <sup>2</sup>աճող խոտին պէս կ'ըլլան.
- 6 Առտուն կը բուսնի ու կ'աճի,  
Իրիկունը կը կտրուի եւ կը չորնայ:
- 7 Արդարեւ քու բարկութենէդ կը <sup>8</sup>հիւծինք,  
Քու ցասումէդ կը շփոթինք:
- 8 Մեր անօրէնութիւնները քու առջեւ դրիր,  
Ու մեր թաքուն **մեղքերը՝** քու երեսիդ <sup>9</sup>լոյսին մէջ:
- 9 Արդարեւ մեր բոլոր օրերը քու ցասումովդ կ'անցնին,  
Մեր տարիները <sup>10</sup>ցնորքի մը պէս կ'աւարտին:
- 10 Մեր <sup>11</sup>կեանքին տարիները եօթանասուն՝ են.  
Եթէ զօրութեամբ ութսուն ալ ըլլան,  
Տակաւին անոնց հպարտանքը տաժանք եւ ունայնութիւն է,  
Որովհետեւ <sup>12</sup>անոնք շուտով կ'անցնին՝, ու մենք կը թռչինք:
- 11 Ո՞վ գիտէ քու բարկութեանդ զօրութիւնը  
Ու քու ցասումդ՝ վախիդ համեմատ:
- 12 Այնպէս սորվեցուր մեզի մեր օրերը համրել,  
Որ սիրտի իմաստութիւն <sup>13</sup>ստանանք:
- 13 Վերադարձի՛ր, ո՛վ Տէր, մինչեւ ե՞րբ.  
Արգահատէ՛ քու ծառաներուդ:

---

<sup>9</sup> **Եբր.**՝ Յաւիտենականութենէ յաւիտենականութիւն

<sup>7</sup> **Եբր.**՝ ճգմուելու կը վերադարձնես

<sup>6</sup> **Կամ**՝ Կ'ողողես

<sup>9</sup> **Այսինքն՝** այդ հազար տարիները

<sup>5</sup> **Եբր.**՝ քունի

<sup>2</sup> **Եբր.**՝ վերանորոգուող

<sup>8</sup> **Եբր.**՝ սպառինք

<sup>9</sup> **Եբր.**՝ լուսաւորութեան

<sup>10</sup> **Կամ**՝ հառաչանքի

<sup>11</sup> **Եբր.**՝ տարիներուն օրերը եօթանասուն տարի

<sup>12</sup> **Եբր.**՝ ան շուտով կը կտրուի

<sup>13</sup> **Եբր.**՝ մտցնենք

- 14 Առտուն կանուխ կշտացո՛ւր մեզ քու կարեկցութեամբդ,  
Որպէսզի ցնծանք եւ ուրախանանք մեր բոլոր օրերուն մէջ:
- 15 Ուրախացո՛ւր մեզ այն օրերուն չափով՝ որ տառապեցուցիր.  
Այն տարիներուն չափով՝ որ ձախորդութիւն տեսանք:
- 16 Զու գործդ թող երեւնայ քու ծառաներուդ,  
Եւ քու փառաւորութիւնդ՝ անոնց որդիներուն:
- 17 Տէրոջ՝ մեր Աստուծոյն՝ Վայելչութիւնը մեր վրայ թող ըլլայ:  
Մեր ձեռքերուն գործը հաստատէ՛ մեր վրայ.  
Մեր ձեռքերուն գործը հաստատէ՛:

ԱՍՏՈՒԱԾ՝ ՄԵՐ ՊԱՇՏՊԱՆԸ

91

- Ամենաբարձրին ծածկոյթին տակ բնակողը՝  
Ամենակարողին հովանիին տակ պիտի՝ <sup>ա</sup>հանգչի:
- 2 Տէրոջ համար պիտի ըսեմ. «Իմ ապաւէնս ու բերդս է,  
Իմ Աստուածս՝ որուն կը վստահիմ»:
- 3 Արդարեւ ա՛ն քեզ պիտի ազատէ թռչնորսին վարմէն,  
Աղետալի ժանտախտէն.
- 4 Իր փետուրներով քեզ պիտի ծածկէ,  
Եւ իր թելերուն տակ պիտի <sup>բ</sup>ապաստանիս.  
Անոր ճշմարտութիւնը քու ասպարդ ու վահանդ պիտի ըլլայ:
- 5 Պիտի չվախնաս գիշերուան երկիւղէն,  
Ո՛չ ալ ցերեկը թռչող նետէն,
- 6 Մութին մէջ շրջող ժանտախտէն,  
Կամ կէսօրին բնաջնջող ակերումէն:
- 7 Եթէ հազար հոգի քու քովէդ իյնան,  
Ու տասը հազար՝ քու աջ կողմէդ,  
Հարուածը քեզի պիտի չմօտենայ.
- 8 Միայն աչքերովդ պիտի նայիս,  
Եւ ամբարիշտներուն հատուցումը տեսնես:
- 9 Զանի դուն Տէրը՝ իմ Ապաւէնս,  
Ամենաբարձրը՝ քեզի <sup>գ</sup>պատսպարան ըրիր,
- 10 Ո՛չ մէկ չարիք պիտի հասնի քեզի,  
Ո՛չ ալ հարուած մը պիտի մօտենայ վրանիդ:
- 11 Արդարեւ իր հրեշտակներուն պիտի պատուիրէ քու մասիդ,  
Որ բոլոր ճամբաներուդ մէջ պահպանեն քեզ.
- 12 Իրենց ձեռքերուն վրայ պիտի կրեն քեզ,  
Որ ոտքդ քարի մը չզարնես.

<sup>4</sup> Եբբ.՝ ախորժութիւնը

<sup>ա</sup> Եբբ.՝ գիշերէ

<sup>բ</sup> Եբբ.՝ ապաւինիս

<sup>գ</sup> Եբբ.՝ բնակավայր



- 13 <sup>7</sup>Մոնչող առիւծի՝ եւ քարբի վրայ պիտի քալես,  
Առիւծի կորիւնն ու վիշապը պիտի կոխկռտես:
- 14 Զանի զիս կը հաւնի՝  
Զինք պիտի ազատեմ.  
Զինք պիտի պաշտպանեմ,  
Որովհետեւ իմ անունս գիտցաւ:
- 15 Ինծի պիտի գոչէ, եւ իրեն պիտի պատասխանեմ.  
Իրեն հետ պիտի ըլլամ տագնապի մէջ.  
Զինք պիտի ազատեմ ու պատուեմ:
- 16 Երկար օրերով զինք պիտի կշտացնեմ,  
Եւ իմ փրկութիւնս իրեն ցոյց պիտի տամ:

**ՓԱՌԱԲԱՆՈՒԹԵԱՆ ԵՐԳ**  
Սաղմոս. Շաբաթ օրուան համար երգ:

92

- Բարի է շնորհակալ ըլլալ Տէրոջմէն,  
Ու սաղմոս ըսել քու անունիդ, ո՛վ Ամենաբարձր.
- 2 Առտունները քու կարեկցութիւնդ հռչակել,  
Եւ գիշերները՝ քու հաւատարմութիւնդ,
- 3 Տասը լար ունեցող նուագարանով ու տաւիղով,  
Եւ քնարի <sup>ա</sup>ձայնով:
- 4 Արդարեւ դուն, ո՛վ Տէր, քու արարքներովդ զիս ուրախացուցիր.  
Քու ձեռքերուդ գործերով պիտի ցնծամ:
- 5 Ո՛վ Տէր, ի՛նչ մեծ են քու գործերդ.  
Յոյժ խորունկ են քու մտածումներդ:
- 6 Անխելք մարդը ասիկա չի գիտեր,  
Եւ անմիտը չի հասկնար:
- 7 Թէեւ ամբարիշտները <sup>բ</sup>խոտի պէս <sup>գ</sup>բուսնին,  
Ու բոլոր անօրէնութիւն գործողները <sup>դ</sup>ծաղկին,  
Յաւերժ պիտի բնաջնջուին.
- 8 Բայց դուն, ո՛վ Տէր, յաւիտեան բարձր ես:
- 9 Արդարեւ ահա՛ քու թշնամիներդ, ո՛վ Տէր,  
Ահա՛ քու թշնամիներդ պիտի կորսուին,  
Բոլոր անօրէնութիւն գործողները պիտի ցրուին,
- 10 Բայց իմ եղջիւրս <sup>ե</sup>գոմէշի եղջիւրին պէս պիտի բարձրացնես.

<sup>7</sup> Կամ՝ Վագրի

<sup>ա</sup> Եբր.՝ հիկկայոնով, այսինքն՝ մտածութեան երգով

<sup>բ</sup> Եբր.՝ բոյսի

<sup>գ</sup> Եբր.՝ ծաղկին

<sup>դ</sup> Եբր.՝ բուսնին

<sup>ե</sup> Կամ՝ միեղջերուի

Ես չթարմ իւղով պիտի օծուիմ:

- 11 Աչքերս <sup>Է</sup>ոսոխներուս կորուստը պիտի տեսնեն,  
Եւ ականջներս ինծի դէմ կանգնող չարագործներուն կրած պատիժը պիտի լսեն:
- 12 Արդարը արմաւենիի պէս պիտի ծաղկի,  
Լիբանանի մայրիի պէս պիտի մեծնայ:
- 13 Տէրոջ տան մէջ տնկուածները՝  
Մեր Աստուծոյն գաւիթներուն մէջ պիտի ծաղկին:
- 14 Ալեւորութեան մէջ ալ պտուղ պիտի արտադրեն,  
Պարարտ ու կանաչ պիտի մնան,
- 15 Որպէսզի հռչակեն թէ Տէրը ուղիղ է.  
Ան իմ Վէմս է, եւ անհրաւութիւն չկայ անոր քով:

ԱՍՏՈՒԱԾ՝ ԹԱԳԱԻՈՐԸ

93

Տէրը կը թագաւորէ, մեծափառութիւն հագած է.  
Տէրը զօրութեամբ ծածկուած ու գօտեւորուած է.  
Ուստի երկրագունդը հաստատուն է, չ'երերար:

- 2 Զու գահդ վաղուց հաստատ է.  
Դուն յաւիտենական ես:
- 3 Գետերը բարձրացուցին, ո՛վ Տէր,  
Գետերը բարձրացուցին իրենց ձայնը.  
Գետերը կը բարձրացնեն իրենց շառաչիւնը:
- 4 Յորդառատ ջուրերու աղմուկէն ու ծովու ՝զօրաւոր կոհակներէն  
Աւելի զօրաւոր է Տէրը՝ բարձր վայրից մէջ:
- 5 Զու վկայութիւններդ յոյժ վստահելի են.  
Ո՛վ Տէր, սրբութիւնը քու տանդ կը վայլէ Բընդմիշտ:

ԱՍՏՈՒԱԾ՝ ԲՈԼՈՐԻՆ ԴԱՏԱԻՈՐԸ

94

Ո՛վ Տէր, ՝վրէժխնդի՛ր Աստուած,  
Ո՛վ վրէժխնդի՛ր Աստուած, Բյայտնուէ՛:

- 2 Բարձրացի՛ր, ո՛վ երկրի Դատաւոր.  
Փոխարէ՛ն հատուցանէ ամբարտաւաններուն:
- 3 Մինչեւ ե՞րբ ամբարիշտները, ո՛վ Տէր,

---

- <sup>Գ</sup> Եբբ.՝ կանաչ
- <sup>Է</sup> Եբբ.՝ դիտողներուս
- <sup>Մ</sup> Եբբ.՝ հոյակապ
- <sup>Բ</sup> Եբբ.՝ երկար օրեր
- <sup>Ս</sup> Եբբ.՝ վրէժխնդրութեան
- <sup>Բ</sup> Եբբ.՝ փայլէ՛

ՍԱՂՄՈՍՆԵՐՈՒ ԳԻՐԸԸ

Մինչեւ ե՞րբ ամբարիշտները պիտի հրճուին.

4 Մինչեւ ե՞րբ պիտի բարբանջեն, անպատկառութեամբ պիտի խօսին, Ու պիտի Գպարծենան՝ բոլոր անօրէնութիւն գործողները:

5 Ո՛վ Տէր, անոնք քու ժողովուրդդ կը ճգմեն, Եւ քու ժառանգութիւնդ կը տառապեցնեն.

6 Այրին ու գաղթականը կը սպաննեն, Որբերը կը մեռցնեն

7 Եւ կ'ըսեն. «Տէրը չի տեսներ, Յակոբի Աստուածը Դուշարդութիւն չի դարձներ»»:

8 Հասկցէ՛ք, ո՛վ ժողովուրդին անխելքները. Ու դո՛ւք, ո՛վ անմիտներ, ե՞րբ ուշիմ պիտի ըլլաք:

9 Միթէ ականջը տնկողը չի՞ լսեր, Աչքը ձեւակերպողը չի՞ տեսներ:

10 Միթէ ազգերը խրատողը չի՞ յանդիմաներ. Միթէ մարդուն գիտութիւն սորվեցնողը չի՞ գիտեր:

11 Տէրը գիտէ մարդոց մտածումները, Որոնք ունայնութիւն են:

12 Երանի՛ այն Եմարդուն՝ որ դուն կը խրատես, ո՛վ Տէր, Եւ քու Օրէնքդ անոր կը սորվեցնես,

13 Որպէսզի ձախորդ օրերուն մէջ զինք հանդարտեցնես, Մինչեւ որ ամբարիշտին համար փոս փորուի:

14 Արդարեւ Տէրը իր ժողովուրդը երեսէ պիտի չձգէ, Եւ իր ժառանգութիւնը պիտի չլքէ.

15 Հապա դատաստանը արդարութեամբ պիտի կիրարկուի՞, Ու բոլոր սիրտով ուղիղները անոր պիտի հետեւին:

16 Ո՞վ Էդատս պիտի պաշտպանէ՞՝ չարագործներուն դէմ, Ո՞վ Էինծի նեցուկ պիտի ըլլայ՞՝ անօրէնութիւն գործողներուն դէմ:

17 Եթէ Տէրը օգնականս չըլլար, Զիչ պիտի մնար որ անձս լռութեան տեղը բնակէր:

18 Երբ կ'ըսէի. «Իմ ոտքս կը սահի», Զու կարեկցութիւնդ, ո՛վ Տէր, զիս կը կազդուրէր.

19 Մինչ Բհոգերս կը շատնային իմ ներսս՝ Զու մխիթարութիւններդ իմ անձս կը հաճոյացնէին:

20 Միթէ քեզի հետ ընկերակցա՞ծ է եղեռնագործութեան գահը,

<sup>4</sup> Եբբ.՝ խօսին

<sup>5</sup> Եբբ.՝ չի նկատեր

<sup>6</sup> Եբբ.՝ գօրաւոր մարդուն

<sup>7</sup> Եբբ.՝ արդարութեան պիտի վերադառնայ

<sup>8</sup> Եբբ.՝ ինծի համար պիտի կանգնի

<sup>9</sup> Եբբ.՝ ինծի համար պիտի կայնի

<sup>10</sup> Եբբ.՝ գաղափարներս

Որ ժկանոնին դէմ՝ անհրաւութիւն կը իծրագրէ:

- 21 Արդարին անձին դէմ կը խմբաւորուին,  
Եւ անմեղ արիւնը կը դատապարտեն:
- 22 Բայց Տէրը իմ միջնաբերդս է,  
Ու իմ Աստուածս՝ ապաւինութեանս վէմը:
- 23 Անոնց անօրէնութիւնը իրենց պիտի վերադարձնէ,  
Ու զանոնք իրենց չարութեամբ պիտի բնաջնջէ.  
Տէրը՝ մեր Աստուածը՝ զանոնք պիտի բնաջնջէ:

ՓԱՌԱԲԱՆՈՒԹԵԱՆ ԵՐԳ

95

Եկէ՛ք ցնծանք Տէրոջ առջեւ,

**Ուրախութեամբ** գոչենք մեր փրկութեան Վէմին:

- 2 Շնորհակալութեամբ անոր՝ առջեւ գանք,  
Սաղմոսներով գոչենք անոր:
- 3 Արդարեւ Տէրը մեծ Աստուած է,  
Մեծ Թագաւոր է՝ բոլոր աստուածներէն գերազանց:
- 4 Անոր ձեռքին մէջ են երկրի խորունկ տեղերը,  
Եւ անորն են լեռներուն <sup>բ</sup>գագաթները:
- 5 Ի՛րն է ծովը, ի՛նք <sup>գ</sup>ստեղծեց զայն.  
Ի՛ր ձեռքերը ձեւակերպեցին ցամաքը:
- 6 Եկէ՛ք, երկրպագե՛նք եւ ծռի՛նք,  
Ծնրադրե՛նք մեզ <sup>դ</sup>ստեղծող Տէրոջ առջեւ.
- 7 Որովհետեւ ի՛նք է մեր Աստուածը,  
Ու մենք անոր արօտին ժողովուրդը եւ անոր ձեռքին **առաջնորդած** ոչխարներն ենք:  
Այսօր, եթէ պիտի լսէք անոր ձայնը,
- 8 Մի՛ խստացնէք ձեր սիրտերը՝ ինչպէս Մերիպայի մէջ,  
Փորձութեան օրուան պէս՝ անապատին մէջ,
- 9 Ուր ձեր հայրերը փորձեցին զիս,  
Զննեցին զիս ու տեսան իմ գործերս:
- 10 Զառասուն տարի զգուեցայ **այս** սերունդէն,  
Եւ ըսի. «Անոնք սիրտով մոլորած ժողովուրդ մըն են,  
Իմ ճամբաներս չգիտցան»:
- 11 Ուստի իմ բարկութեանս մէջ երդում ըրի.  
«Անոնք իմ հանգստավայրս պիտի չմտնեն»:

<sup>ժ</sup> Կամ՝ իր դրած կանոնով

<sup>ի</sup> Եբր.՝ ձեւակերպէ

<sup>ա</sup> Եբր.՝ երեսին առջեւ

<sup>բ</sup> Կամ՝ փառքը

<sup>գ</sup> Եբր.՝ ըրաւ

<sup>դ</sup> Եբր.՝ շինող

96

- Նո՛ր երգ երգեցէք Տէրոջ,
- Երգեցէ՛ք Տէրոջ, **դուք** բոլորդ՝ երկրի՛ բնակիչներ:
- 2 Երգեցէ՛ք Տէրոջ, օրհնաբանեցէ՛ք անոր անունը,  
Աւետեցէ՛ք անոր փրկութիւնը օրէ օր:
- 3 Պատմեցէ՛ք անոր փառքը՝ <sup>ա</sup>հեթանոսներուն մէջ,  
Եւ անոր սքանչելիքները՝ բոլոր ժողովուրդներուն մէջ,
- 4 Զանի որ Տէրը մեծ է, ու յոյժ գովելի.  
Ան ահեղ է, **եւ** բոլոր աստուածներէն գերազանց,
- 5 Որովհետեւ ժողովուրդներուն բոլոր աստուածները՝ <sup>բ</sup>կուռքեր են,  
Բայց Եհովա՛ն <sup>գ</sup>ստեղծեց երկինքը:
- 6 Փառաւորութիւն ու վայելչութիւն կան անոր առջեւ,  
Զօրութիւն եւ շքեղութիւն՝ անոր սրբարանին մէջ:
- 7 Տէրո՛ջ տուէք, **ո՛վ** ժողովուրդներու գերդաստաններ,  
Տէրո՛ջ տուէք փառք ու զօրութիւն:
- 8 Տէրո՛ջ տուէք իր անունին փառքը.  
Ընծա՛յ բերէք եւ մտէ՛ք անոր գաւիթները:
- 9 Տէրո՛ջ երկրպագեցէք <sup>դ</sup>սուրբ զարդարանքով՝.  
Սարսափեցէ՛ք անոր առջեւ, **դուք** բոլորդ՝ երկրի՛ բնակիչներ:
- 10 Հեթանոսներուն մէջ ըսէ՛ք. «Տէ՛րը կը թագաւորէ.  
Ուստի երկրագունդը հաստատուն է, չ՛երերար:  
Ան ուղղամտութեամբ պիտի դատէ ժողովուրդները»:
- 11 Երկինքը թող ուրախանայ, ու երկիրը խայտայ.  
Ծովը եւ գայն լեցնողները թող <sup>ե</sup>գոռան,
- 12 Դաշտն ու բոլոր անոր մէջ եղողները թող հրճուին.  
Այն աստե՛ն անտառին բոլոր ծառերը պիտի ցնծան
- 13 Տէրոջ առջեւ, որովհետեւ կու գայ,  
Որովհետեւ կու գայ երկիրը դատելու.  
Ան պիտի դատէ երկրագունդը արդարութեամբ,  
Եւ ժողովուրդները՝ իր <sup>զ</sup>հաւատարմութեամբ:

<sup>ա</sup> Կամ՝ ազգերուն

<sup>բ</sup> Եբր.՝ չաստուածներ

<sup>գ</sup> Եբր.՝ ըրաւ

<sup>դ</sup> Կամ՝ սրբութեան վայելչութեամբ

<sup>ե</sup> Եբր.՝ որոտան

<sup>զ</sup> Այսինքն՝ ուղղամտութեամբ

97

- Տէրը կը թագաւորէ, երկիրը թող խայտայ.
- Շատ կղզիներ թող ուրախանան:
- 2 Անոր շուրջ ամպ եւ մառախուղ կան,  
Արդարութիւնն ու իրաւունքը անոր գահին խարխսխն են:
- 3 Անոր առջեւէն կրակ կ'երթայ  
Եւ անոր շրջակայ հակառակորդները կը բոցավառէ:
- 4 Անոր փայլակները երկրագունդը կը լուսաւորեն.  
Երկիրը կը տեսնէ ու կը սարսափի:
- 5 Լեռները մեղրամոմի պէս կը հալին Եհովայի ներկայութենէն,  
Ամբողջ երկրի Տէրոջ ներկայութենէն:
- 6 Երկինքը կը հռչակէ անոր արդարութիւնը,  
Եւ բոլոր ժողովուրդները կը տեսնեն անոր փառքը:
- 7 Թող ամչնան բոլոր անոնք՝ որ «կուռքեր կը պաշտեն,  
Որ չաստուածներով կը պարծենան.  
Ո՛վ բոլոր <sup>բ</sup>աստուածներ, երկրպագեցէ՛ք անոր:
- 8 Սիոն լսեց եւ ուրախացաւ,  
Յուդայի <sup>գ</sup>աղջիկները խայտացին  
Քու դատավճիռներուդ պատճառով, ո՛վ Տէր:
- 9 Արդարեւ դո՛ւն, ո՛վ Տէր, Ամենաբարձր ես ամբողջ երկրի վրայ.  
Շատ բարձրացար՝ բոլոր աստուածները գերազանցելով:
- 10 Ո՛վ Տէրը սիրողներ, ատեցէ՛ք չարութիւնը:  
Ան իր բարեպաշտներուն անձերը կը պահպանէ,  
Ջանոնք կ'ազատէ ամբարիշտներուն ձեռքէն:
- 11 Արդարին համար լոյս <sup>դ</sup>ծագեցաւ,  
Ու սիրտով ուղիղներուն համար՝ ուրախութիւն:
- 12 Տէրոջմո՛վ ուրախացէք, ո՛վ արդարներ,  
Շնորհակա՛լ եղէք՝ անոր սրբութիւնը յիշելով:

ԱՍՏՈՒԱԾ՝ ԱԾԽԱՐՇԻ ԻԾԽԱՆԸ  
Սաղմոս

98

Նո՛ր երգ երգեցէք Տէրոջ,  
Որովհետեւ սքանչելիքներ ըրաւ.  
Իր աջ ձեռքն ու սուրբ բազուկը  
«Իրեն յաղթութիւն տուին»:

---

- <sup>ա</sup> Եբր.՝ քանդակուած պատկերներ
- <sup>բ</sup> Կամ՝ հրեշտակներ
- <sup>գ</sup> Կամ՝ գիւղերը
- <sup>դ</sup> Եբր.՝ սերմանուեցաւ
- <sup>ա</sup> Եբր.՝ Ջինք ազատեցին

- 2 Տէրը գիտցուց իր փրկութիւնը,  
Հեթանոսներուն առջեւ յայտնեց իր արդարութիւնը:
- 3 Յիշեց իր կարեկցութիւնն ու հաւատարմութիւնը  
Իսրայէլի տան հանդէպ.  
Երկրի բոլոր ծայրերը  
Մեր Աստուծոյն փրկութիւնը տեսան:
- 4 Ուրախութեամբ գոչեցէք Տէրոջ, **դուք** բոլորդ՝ երկրի՝ բնակիչներ.  
Յնծութեամբ պոռթկացէք եւ սաղմո՛ս ըսէք:
- 5 Սաղմո՛ս երգեցէք Տէրոջ՝ քնարով,  
Քնարով ու նուագի ձայնով.
- 6 Փողերով եւ շեփորի ձայնով  
Գոչեցէ՛ք Տէրոջ՝ Թագաւորին առջեւ:
- 7 Թող <sup>բ</sup>գոռան ծովն ու զայն լեցնողները,  
Երկրագունդը եւ անոր բնակիչները:
- 8 Գետերը թող ծափ գարնեն,  
Ու լեռները միասին թող հրճուին
- 9 Տէրոջ առջեւ, որովհետեւ կու գայ երկիրը դատելու.  
Ան պիտի դատէ երկրագունդը արդարութեամբ,  
Եւ ժողովուրդները՝ ուղղամտութեամբ:

ԱՍՏՈՒԱԾ՝ ԳԵՐԱԳՈՅՆ ԹԱԳԱԻՈՐԸ

99

Տէրը կը թագաւորէ, ժողովուրդները թող սասանին.  
Ինք քերովբէներուն վրայ կը բազմի, երկիրը թող շարժի:

- 2 Տէրը մեծ է Սիոնի մէջ,  
Ու բարձրացած է բոլոր ժողովուրդներէն վեր:
- 3 Թող ներբողեն քու մեծ եւ ահաւոր անունդ.  
Ան սուրբ է:
- 4 <sup>ա</sup>Թագաւորին գօրութիւնը՝ իրաւունքը սիրելն է՝.  
Ուղղամտութիւն հաստատեցիր,  
Իրաւունք եւ արդարութիւն կիրարկեցիր Յակոբի մէջ:
- 5 Բարձրացուցէ՛ք Տէրը, մեր Աստուածը.  
Երկրպագեցէ՛ք անոր ոտքերուն պատուանդանին.  
Ան սուրբ է:
- 6 Մովսէս եւ Ահարոն՝ անոր քահանաներուն մէջ,  
Ու Սամուէլ՝ անոր անունը կանչողներուն մէջ  
Տէրոջ կը գոչէին,  
Եւ ան կը պատասխանէր իրենց:
- 7 Ամպի սիւնի մէջէն խօսեցաւ իրենց հետ.  
Իրենք **ալ** պահեցին անոր վկայութիւնները,  
Եւ այն կանոնը՝ **որ** իրենց տուաւ:
- 8 Ո՛վ Տէր, մեր Աստուածը, դուն իրենց պատասխանեցիր.

<sup>բ</sup> Եբբ.՝ որոտան

<sup>ա</sup> Կամ՝ Դո՛ւն, ո՛վ իրաւասէր գօրաւոր Թագաւոր

Իրենց ներող Աստուած եղար,  
Թէպէտ վրէժ կ'առնէիր իրենց արարքներէն:

- 9 Բարձրացուցէ՛ք Տէրը, մեր Աստուածը,  
Ու երկրպագեցէ՛ք անոր սուրբ լերան վրայ.  
Որովհետեւ Տէրը, մեր Աստուածը, սուրբ է:

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԵՐԳ  
Շնորհակալութեան սաղմոս:

# 100

Յնծութեամբ գոչեցէք Տէրոջ, դուք բոլորդ՝ երկրի՝ **բնակիչներ:**

- 2 Պաշտեցէ՛ք Տէրը ուրախութեամբ.  
Ներկայացէ՛ք անոր ցնծութեամբ:
- 3 Գիտցէ՛ք թէ Եհովա՛ն է **միակ** Աստուածը.  
Ա՛ն «ստեղծեց մեզ, եւ բո՛չ թէ մենք».  
**Մենք** անոր ժողովուրդն ու անոր արօտին ոչխարներն ենք:
- 4 Մտէ՛ք անոր դռները շնորհակալութեամբ,  
Եւ անոր գաւիթները՝ գովաբանութեամբ.  
Շնորհակա՛լ եղէք անկէ, օրհնաբանեցէ՛ք անոր անունը.
- 5 Որովհետեւ Տէրը բարի է,  
Անոր կարեկցութիւնը յաւիտենական է,  
Ու անոր հաւատարմութիւնը՝ սերունդէ սերունդ:

ԹԱԳԱԻՈՐԻ ՄԸ ԽՈՍՏՈՒՄԸ  
Դաւիթի սաղմոսը:

# 101

Կարեկցութիւնն ու իրաւունքը պիտի երգեմ.  
Ո՛վ Տէր, քեզի սաղմոս պիտի ըսեմ:

- 2 Ուշիմութեամբ պիտի **վարուիմ** անթերի ճամբային մէջ.  
Ե՞րբ ինծի պիտի գաս:  
Իմ տանս մէջ սիրտիս պարկեշտութեամբ պիտի ընթանամ:
- 3 Աչքերուս առջեւ «անօրէն բան պիտի չդնեմ.  
Մոլորածներուն վարմունքը կ'ատեմ,  
Ան ինծի թող չփակչի:
- 4 Ծուռ սիրտը թող հեռանայ ինձմէ.  
Չարը պիտի չճանչնամ:
- 5 Ան որ ծածկաբար կը բամբասէ իր ընկերին դէմ՝ պիտի բնաջնջեմ.  
Ան որ խրոխտ աչքեր եւ հպարտ սիրտ ունի՝  
Անոր պիտի չհանդուրժեմ:
- 6 Իմ աչքերս երկրի հաւատարիմներուն վրայ պիտի ըլլան՝

---

« Եբր.՝ ըրաւ  
բ Կամ՝ մենք անորն ենք  
« Եբր.՝ Բելիարի



Որպէսզի բնակին ինձի հետ.

Պարկեշտութեան ճամբայէն ընթացողը

Պաշտօն պիտի կատարէ ինձի:

7 Խաբէութեամբ վարուողը պիտի չբնակի իմ տանս մէջ.

Սուտ խօսողը պիտի չհաստատուի աչքերուս առջեւ:

8 Առտուն կանուխ պիտի փճացնեմ երկրին բոլոր ամբարիշտները,

Որպէսզի Տէրոջ քաղաքէն բնաջնջեմ բոլոր անօրէնութիւն գործողները:

ՉԱՐՉԱՐՈՒԱԾ ԵՐԻՏԱՍԱՐԴԻ ՄԸ ԱՂԹԸԸ

Տառապեալին աղօթքը՝ երբ սիրտը կը թալկանայ եւ գանգատը Տէրոջ «կը ներկայացնէ»:

102

Ո՛վ Տէր, լսէ՛ իմ աղօթքս,

Եւ աղաղակս թող հասնի քեզի:

2 Զու երեսդ մի՛ ծածկեր ինձմէ՝ տագնապիս օրը,

Դարձո՛ւր ինձի քու ականջդ.

Շտապելո՛վ պատասխանէ ինձի այն օրը՝ երբ քեզի գոչեմ:

3 Արդարեւ իմ օրերս մուխի պէս Բանհետացան

Եւ ոսկորներս վառարանի պէս հրաբորբոջ են:

4 Սիրտս զարնուեցաւ ու բոյսի պէս չորցաւ,

Այնպէս որ մոռցայ իմ հացս ուտել:

5 Հառաչանքիս ծայնէն՝

Ոսկորներս մարմինիս փական:

6 Անապատի հաւալուսնին նմանեցայ,

Աւերակներու հաւպատիրին պէս եղայ:

7 Անքուն մնացի, ու նման եղայ

Տանիքին վրայ մինակ եղող ճնճողուկին:

8 Ամէն օր թշնամիներս զիս կը նախատեն,

Ինձի դէմ մոլեգնողները ինձի դէմ երդում կ'ընեն:

9 Արդարեւ մոխիրը հացի պէս կերայ,

Ու խմելիքս Գարցունքով խառնեցի՝

10 Զու սրտմտութեանդ եւ զայրոյթիդ պատճառով,

Որովհետեւ զիս բարձրացուցիր ու նետեցիր:

11 Իմ օրերս երկարող ստուերի պէս եղան,

Եւ բոյսի պէս չորցայ:

12 Բայց դուն, ո՛վ Տէր, յաւիտեան կը գահակալես.

Զու յիշատակդ սերունդէ սերունդ կը մնայ:

13 Դուն պիտի կանգնիս ու Սիոնի գթաս.

Արդարեւ ժամանակն է անոր ողորմելու,

Զանի որ սահմանուած ատենը հասաւ:

14 Արդարեւ քու ծառաներդ անոր քարերուն կը հաճին,

<sup>ա</sup> Եբբ.՝ առջեւ կը թափէ

<sup>բ</sup> Եբբ.՝ սպառեցան

<sup>գ</sup> Եբբ.՝ լացով

## ՍԱՂՄՈՍՆԵՐՈՒ ԳԻՐԸԸ

Եւ անոր հողին կ'ողորմին:

- 15** Այն աստե՛ն հեթանոսները պիտի վախճան Տէրոջ անունէն,  
Ու երկրի բոլոր թագաւորները՝ քու փառքէդ:
- 16** Երբ Տէրը կառուցանէ Սիոնը,  
Իր փառքով պիտի երեւնայ:
- 17** Զրկուածներուն աղօթքին՝ ուշադրութիւն պիտի դարձնէ,  
Անոնց աղօթքը պիտի չարհամարհէ:
- 18** Ասիկա պիտի գրուի յաջորդ սերունդին համար,  
Ու «դեռ չծնած ժողովուրդը՝ Տէրը պիտի գովաբանէ:
- 19** Արդարեւ իր սրբարանին բարձունքէն նայեցաւ,  
Տէրը երկինքէն դիտեց երկիրը,
- 20** Որպէսզի բանտարկեալին հեծեծանքը լսէ,  
Եւ մահուան՝ դատապարտուածները արձակէ:
- 21** Որպէսզի Սիոնի մէջ Տէրոջ անունը հռչակեն,  
Ու Երուսաղէմի մէջ՝ անոր՝ փառաւոր գործերը՝,
- 22** Երբ ժողովուրդներն ու թագաւորութիւնները՝<sup>Բ</sup>հաւաքուին՝  
Տէրը պաշտելու համար:
- 23** Ի՛նք ոյժս տկարացուց ճամբային մէջ,  
Եւ օրերս կարճեցուց:
- 24** **Ուստի** ըսի. «Ո՛վ իմ Աստուածս,  
Զիս մի՛ վերցներ իմ օրերուս կէսին մէջ.  
Զու տարիներդ սերունդէ սերունդ եմ:
- 25** <sup>Ք</sup>Սկիզբէն երկրի հիմերը դրիր,  
Ու երկինքը քու ձեռքերուդ գործն է:
- 26** Անոնք պիտի կորսուին, բայց դուն պիտի՝<sup>Ժ</sup>մնաս.  
Անոնք բոլորը հագուստի պէս պիտի մաշին.  
Պատմուճանի պէս պիտի փոխես զանոնք,  
Եւ պիտի փոխուին:
- 27** Բայց դուն **միշտ** նո՛յնն ես,  
Ու քու տարիներդ պիտի չվերջանան:
- 28** Զու ծառաներուդ որդիները **ապահով** պիտի բնակին,  
Եւ անոնց զարմը պիտի հաստատուի քու առջեւդ»:

## ԱՍՏՈՒԾՈՅ ՍԷՐԸ

---

<sup>Դ</sup> Եբբ.՝ երես

<sup>Ե</sup> Եբբ.՝ այն ժողովուրդը որ պիտի ստեղծուի

<sup>Ձ</sup> Եբբ.՝ որդիները

<sup>Կ</sup> Եբբ.՝ գովաբանութիւնը

<sup>Բ</sup> Եբբ.՝ միասին հաւաքուին

<sup>Ք</sup> Եբբ.՝ Առաջուրնէ

<sup>Ժ</sup> Եբբ.՝ գոյատեւես

103

- Ո՛վ իմ անձս, օրհնաբանէ՛՛ Տէրը,  
 Եւ ամէն ինչ որ իմ ներսս է՝ անոր սուրբ անունը.
- 2 Ո՛վ իմ անձս, օրհնաբանէ՛՛ Տէրը,  
 Ու մի՛ մոռնար անոր բոլոր երախտիքները:
- 3 Ի՛նք կը ներէ բոլոր անօրէնութիւններդ,  
 Եւ կը բուժէ բոլոր հիւանդութիւններդ:
- 4 Ի՛նք կը փրկէ կեանքդ ապականութենէն,  
 Ու կը ՝պսակէ քեզ կարեկցութեամբ եւ գթութեամբ:
- 5 Ի՛նք կը կշտացնէ Քբերանդ բարիքներով,  
 Եւ ՝կ՛երիտասարդացնէ քեզ՝ արծիւի պէս:
- 6 Տէրը արդարութիւն ու իրաւունք կը կիրարկէ  
 Բոլոր հարստահարուածներուն.
- 7 Ան իր ճամբաները Մովսէսի ճանչցուց,  
 Եւ իր արարքները՝ Իսրայէլի որդիներուն:
- 8 Գթած ու ողորմած է Տէրը,  
 Համբերատար եւ մեծապէս կարեկից:
- 9 Ան ընդմիջտ ՚դատ չի վարեր՝,  
 Յաւիտեան **գայրոյթ** չի պահեր:
- 10 Ան մեր մեղքերուն համեմատ չվարուեցաւ մեզի հետ,  
 Ու մեր անօրէնութիւններուն համեմատ չհատուցանեց մեզի:
- 11 Հապա ո՛րչափ երկինքը ՝երկրէն բարձր է,  
**Ա՛յնչափ** իր կարեկցութիւնը ՝մեծ է իրմէ վախցողներուն վրայ.
- 12 Ո՛րչափ արեւելքը արեւմուտքէն հեռու է,  
**Ա՛յնչափ** հեռացուց մեզմէ մեր յանցանքները:
- 13 Ինչպէս հայր մը կը գթայ իր որդիներուն վրայ,  
**Նոյնպէս** ալ Տէրը կը գթայ իրմէ վախցողներուն վրայ.
- 14 Որովհետեւ ան գիտէ մեր ՝կազմուածքը,  
 Կը յիշէ թէ մենք ՝հող ենք:
- 15 Մարդուն օրերը խոտի պէս են,

<sup>ա</sup> **Եբր.**՝ թագադրէ

<sup>բ</sup> **Ոմանք**՝ ծերութիւնդ

<sup>գ</sup> **Եբր.**՝ երիտասարդութիւնդ կը վերանորոգուի

<sup>դ</sup> **Կամ**՝ չի վիճիր

<sup>ե</sup> **Եբր.**՝ երկրի վրայ

<sup>զ</sup> **Եբր.**՝ գօրաւոր

<sup>է</sup> **Եբր.**՝ ձեւակերպումը, **կամ**՝ նպատակը

<sup>ը</sup> **Կամ**՝ փոշի

Դաշտի ծաղիկի պէս կը <sup>բ</sup>ծաղկի.

- 16 Արդարեւ հովը անոր վրայէն կ'անցնի ու ան կը չքանայ, եւ անոր տեղը ա՛լ չի ճանչնար զայն:
- 17 Բայց Տէրոջ կարեկցութիւնը <sup>դ</sup>դարէ դար՝ իրմէ վախցողներուն վրայ է, եւ անոր արդարութիւնը՝ որդիներու որդիներուն վրայ.
- 18 Անոնց **վրայ է՝** որ կը պահեն անոր ուխտը, ու կը յիշեն անոր հրամանները եւ կը կատարեն:
- 19 Տէրը իր գահը երկինքի մէջ հաստատեց. Անոր թագաւորութիւնը բոլորին վրայ կը տիրէ:
- 20 Օրհնաբանեցէ՛ք Տէրը, դո՛ւք՝ անոր հրեշտակները, որ ոյժով զօրաւոր էք, Որ իր հրահանգները կը գործադրէք՝ անոր խօսքին ձայնը մտիկ ընելով:
- 21 Օրհնաբանեցէ՛ք Տէրը, **դո՛ւք՝** անոր բոլոր զօրքերը, Անոր կամքը գործադրող <sup>հ</sup>պաշտօնեաները:
- 22 Օրհնաբանեցէ՛ք Տէրը, **դո՛ւք՝** անոր բոլոր գործերը, Անոր տէրութեան բոլոր տեղերուն մէջ. Օրհնաբանէ՛ Տէրը, ո՛վ իմ անձս:

ԱՐԱՐԻՉԻՆ ՓԱՌԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ

104

Ո՛վ իմ անձս, օրհնաբանէ՛ Տէրը:  
 Ո՛վ Տէր, իմ Աստուածս, դուն չափազանց մեծ ես,  
 Փառաւորութիւն ու վայելչութիւն հագած ես.

2 Լոյսով ծածկուած ես՝ իբր թէ հանդերձով,  
 Երկինքը վարագոյրի պէս կը տարածես:

3 Ան ջուրերուն վրայ <sup>ա</sup>կը կերտէ՝ իր վերնատունները,  
 Թանձր **ամպերը** իրեն կառք կ'ընէ,  
 Հովին թելերուն վրայ կը շրջի:

4 Իր հրեշտակները հոգիներ կ'ընէ,  
 Եւ իր <sup>բ</sup>պաշտօնեաները՝ <sup>գ</sup>կրակի բոց՝:

5 Ի՛նք <sup>դ</sup>հաստատեց երկիրը իր <sup>ե</sup>հիմերուն վրայ,  
 Որպէսզի <sup>զ</sup>դարէ դար՝ չերերայ:

---

<sup>բ</sup> Եբր.՝ բուսնի

<sup>դ</sup> Եբր.՝ յաւիտենականութենէ յաւիտենականութիւն

<sup>հ</sup> Եբր.՝ սպասարկուները

<sup>ա</sup> Եբր.՝ գերաններով կը միացնէ

<sup>բ</sup> Եբր.՝ սպասարկուները

<sup>գ</sup> Եբր.՝ բոցավառ կրակ

<sup>դ</sup> Եբր.՝ հիմնեց

<sup>ե</sup> Եբր.՝ խարխսներուն

- 6 Զայն անդունդով ծածկած էիր, իբր թէ հանդերձով.  
Ջուրերը լեռներուն վրայ կեցած էին:
- 7 Զու սաստեղ փախան,  
Զու որոտումիդ ձայնէն աճապարեցին.
- 8 <sup>Է</sup>Լեռներէն բարձրացան ու հովիտներէն իջան՝  
Այն տեղը՝ որ դուն <sup>Ը</sup>որոշեցիր անոնց համար:
- 9 Սահման դրիր՝ որպէսզի **անկէ** չանցնին,  
Ու վերադառնալով երկիրը չծածկեն:
- 10 Աղբիւրներուն **ջուրերը** ձորերուն մէջ կը դրկէ.  
**Անոնք** լեռներուն մէջէն կը հոսին
- 11 **Եւ** դաշտի բոլոր գազաններուն կը խմցնեն,  
Վայրենի էշերը իրենց ծարաւը <sup>Թ</sup>կը յագեցնեն՝:
- 12 Երկինքի թռչունները անոնց քով կը բնակին,  
Ոստերուն մէջէն <sup>Ժ</sup>կը ճռուողեն՝:
- 13 Ան լեռները կը ջրէ իր վերնատուններէն.  
Երկիրը կը կշտանայ քու գործերուդ պտուղէն:
- 14 Ան խոտ կը բուսցնէ անասուններուն համար,  
Ու բոյս՝ մարդուն ծառայութեան համար,  
Որպէսզի հաց հանէ հողէն,
- 15 Նաեւ գինի՝ որ կ'որախացնէ մարդուն սիրտը,  
Եւ <sup>Ի</sup>իւղ՝ որ՝ կը փայլեցնէ անոր երեսը,  
Ու հաց՝ որ կը կազդուրէ մարդուն սիրտը:
- 16 Տէրոջ ծառերը՝ ոռոգուած են,  
Լիբանանի մայրիները՝ որ ինք տնկեց.
- 17 Թռչնազգիները հոն կը շինեն իրենց բոյները,  
Եւ արագիլին տունը եղեւիներուն վրայ է:
- 18 Բարձր լեռները քարայծերուն ապակէն են,  
Ու ժայռերը՝ ճագարներուն:
- 19 Եղանակներու համար լուսինը <sup>Խ</sup>ստեղծեց.  
Արեւը իր մայրամուտի **ատենը** գիտէ:
- 20 Խաւարը կը դնես, ու գիշեր կ'ըլլայ,  
Որուն մէջ անտառին բոլոր գազանները կը շարժին:

---

<sup>Գ</sup> Եբբ.՝ յաւիտենականութենէ յաւիտենականութիւն

<sup>Է</sup> Եբբ.՝ Լեռներուն վրայ բարձրացան ու հովիտներուն մէջ իջան

<sup>Ը</sup> Եբբ.՝ հիմնեցիր

<sup>Թ</sup> Եբբ.՝ կը կոտորեն

<sup>Ժ</sup> Եբբ.՝ ձայն կու տան

<sup>Ի</sup> Եբբ.՝ իւղէն **աւելի**

<sup>Լ</sup> Եբբ.՝ կուշտ

<sup>Խ</sup> Եբբ.՝ ըրաւ

- 21 Առիձներուն կորիւնները կը մոռցեն որսի համար,  
Եւ Աստուծմէ իրենց կեր <sup>ժ</sup>կ'ուզեն:
- 22 Երբ արելը ծագի՝ կը <sup>Կ</sup>հեռանան,  
Ու իրենց որջերուն մէջ կը պառկին.
- 23 Մարդն ալ <sup>Կ</sup>'երթայ իր գործին  
Եւ իր ծառայութեան՝ մինչեւ իրիկուն:
- 24 Ո՛վ Տէր, ո՛րչափ շատ են քու գործերդ.  
Անոնք բոլորը իմաստութեամբ կատարեցիր,  
Երկիրը լեցուած է քու <sup>ձ</sup>ստեղծածներովդ:
- 25 Ահա՛ւասիկ ծովը՝ մեծ ու լայն,  
Ուր կը շարժին անթիւ կենդանիներ,  
Պզտիկ թէ մեծ:
- 26 Հոն կ'երթեւեկեն նաւերը,  
Նաեւ <sup>Ղ</sup>կոկորդիլոսը՝ որ անոր մէջ զբօսնելու համար <sup>ճ</sup>ստեղծեցիր:
- 27 Բոլորը քեզի՛ կը սպասեն,  
Որպէսզի իրենց կերը ատենին տաս:
- 28 Դուն անոնց կու տաս, **եւ** անոնք կը հաւաքեն.  
Ձեռքդ կը բանաս, **ու** բարիքներով կը կշտանան:
- 29 Երբ քու երեսդ ծածկես՝ կը շփոթին.  
Երբ անոնց շունչը <sup>Մ</sup>առնես՝՝ կը մեռնին՝,  
Եւ իրենց հողը կը վերադառնան:
- 30 Երբ քու շունչդ դրկես՝ անոնք կը ստեղծուին,  
Ու երկրագունդին մակերեսը կը վերանորոգես:
- 31 Տէրոջ փառքը յաւիտենական թող ըլլայ.  
Տէրը իր գործերուն վրայ թող ուրախանայ:
- 32 Երկրի վրայ կը նայի, եւ ան կը դողայ.  
Լեռներուն կը դաչի, ու անոնք կը մխան:
- 33 Տէրոջ պիտի երգեմ՝ որքան **ատեն** որ ապրիմ,  
Սաղմոս պիտի ըսեմ իմ Աստուծոյս՝ քանի **ողջ** եմ:
- 34 Իմ խոկումս թող հաճելի ըլլայ իրեն.  
Ես Տէրոջմով պիտի ուրախանամ:
- 35 Մեղաւորները երկրէն թող <sup>Վ</sup>անհետանան,

---

<sup>ժ</sup> Երբ.՝ կը փնտռեն

<sup>Կ</sup> Երբ.՝ հաւաքուին

<sup>Կ</sup> Երբ.՝ դուրս կ'ելլէ

<sup>ձ</sup> Երբ.՝ իրերովդ, կամ՝ ինչքովդ

<sup>Ղ</sup> Երբ.՝ լեւիաթանը

<sup>ճ</sup> Երբ.՝ ձեւակերպեցիր

<sup>Մ</sup> Երբ.՝ հաւաքես

<sup>Վ</sup> Երբ.՝ շունչ կու տան

Եւ ամբարիշտները չքանան:  
Ո՛վ իմ անձս, օրհնաբանէ՛ Տէրը: <sup>2</sup>Ալէլուիա՛:

ԱՍՏՈՒԱԾ ԵՒ ԻՐ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ

105

- Շնորհակալ եղէք Տէրոջմէն, կանչեցէ՛ք անոր անունը,  
Գիտցուցէ՛ք անոր գործերը ժողովուրդներուն մէջ:
- 2 Երգեցէ՛ք անոր, սաղմո՛ս ըսէք անոր,  
Խօսեցէ՛ք անոր բոլոր սքանչելիքներուն մասին:
- 3 Պարծեցէ՛ք անոր սուրբ անունով.  
Տէրը փնտռողներուն սիրտը թող ուրախանայ:
- 4 Փնտռեցէ՛ք Տէրը եւ անոր զօրութիւնը,  
Խնդրեցէ՛ք անոր երեսը շարունակ.
- 5 Յիշեցէ՛ք անոր ըրած սքանչելիքները,  
Անոր հրաշքներն ու բերանին դատավճիռները,
- 6 Ո՛վ անոր ծառային՝ Աբրահամի զարմը,  
Ո՛վ Յակոբի որդիներ, անոր ընտրեալները:
- 7 Եհովան՝ ի՛նքն է մեր Աստուածը.  
Անոր դատավճիռները ամբողջ երկրի մէջ են:
- 8 Ան յաւիտեան կը յիշէ իր ուխտը,  
Իր պատուիրած՝ <sup>ա</sup>խօսքը՝ մինչեւ հազար սերունդ.
- 9 Այն ուխտը՝ որ Աբրահամի հետ կնքեց,  
Եւ իր երդումը՝ որ Իսահակի ըրաւ.
- 10 Յակոբի ալ հաստատեց զայն՝ իբր կանոն,  
Ու Իսրայէլի՝ <sup>բ</sup>իբր յաւիտենական ուխտ մը,
- 11 Ըսելով. «Զեզի պիտի տամ Զանանի երկիրը,  
Չեր ժառանգութեան վիճակը»,
- 12 Երբ անոնք սակաւաթիւ <sup>բ</sup>մարդիկ էին,  
Փոքրաթիւ եւ պանդուխտ՝ անոր մէջ:
- 13 Երբ մէկ ազգէն ուրիշ ազգի կ'երթային,  
Մէկ թագաւորութենէն՝ ուրիշ ժողովուրդի,
- 14 Ան ո՛չ մէկուն արտօնեց որ զանոնք հարստահարէ.  
Թագաւորներ ալ յանդիմանեց անոնց համար՝ <sup>բ</sup>ըսելով.
- 15 «Իմ օծեալներուս մի՛ դպչիք  
Եւ իմ մարգարէներուս չարիք մի՛ ընէք»:
- 16 Սով <sup>գ</sup>բերաւ երկրի վրայ.

<sup>ա</sup> Եբր.՝ սպառնից

<sup>բ</sup> Այսինքն՝ Գովաբանեցէ՛ք Տէրը՝ Եահր

<sup>ա</sup> Կամ՝ խոստումը

<sup>բ</sup> Եբր.՝ այր մարդիկ

<sup>գ</sup> Եբր.՝ կանչեց

՝Հացին ամբողջ գաւազանը կոտրեց՝:

- 17 Անոնց առջեւէն մարդ մը ղրկեց,  
Յովսէփը՝ որ իբր ստրուկ ծախուեցաւ:
- 18 Անոր ոտքերը կապանքով տառապեցուցին.  
Անոր անձը երկաթի մէջ դրուեցաւ
- 19 Մինչեւ այն ժամանակը՝ երբ անոր հաղորդածը ՚իրագործուեցաւ.  
Տէրոջ խօսքը ՚փորձարկեց զայն:
- 20 Թագաւորը ղրկեց եւ արձակեց զայն.  
Ժողովուրդներուն ղեկավարը ՚ագատեց զայն:
- 21 Իր տան վրայ տէր նշանակեց զայն,  
Ու իր ամբողջ ինչքին վրայ՝ կառավարիչ,
- 22 Որպէսզի անոր իշխանաւորները իր անձին կապէ,  
Եւ անոր երէցները իմաստուն ընէ:
- 23 Իսրայէլ Եգիպտոս եկաւ,  
Յակոբ պանդխտացաւ Քամի երկրին մէջ:
- 24 Տէրը իր ժողովուրդը չափազանց աճեցուց,  
Ու զայն իր թշնամիներէն աւելի հզօր ըրաւ:
- 25 Անոնց սիրտը ՚փոխեց, որպէսզի իր ժողովուրդը ատեն,  
Եւ իր ծառաներուն հետ նենգութեամբ վարուին:
- 26 Իր ծառան՝ Մովսէսը ղրկեց,  
Ու իր ընտրած Ահարոնը,
- 27 Որոնք անոնց մէջ իր նշանները ըրին,  
Եւ հրաշքներ՝ Քամի երկրին մէջ:
- 28 Խաւար ղրկեց ու խաւարեցուց,  
Եւ անոր խօսքին դէմ չընդվզեցան:
- 29 Անոնց ջուրերը արիւնի վերածեց,  
Ու անոնց ձուկերը մեռցուց:
- 30 Անոնց երկիրը Քառատութեամբ գորտեր արտադրեց՝,  
Մինչեւ անոնց թագաւորներուն ներքին սենեակներուն մէջ:
- 31 Հրամայեց, եւ շանաճանճերն ու մունները  
Անոնց ամբողջ հողամասին մէջ եկան:
- 32 Տեղատարափի տեղ կարկուտ տուաւ անոնց,  
Եւ կրակի բոցեր՝ անոնց երկրին մէջ:
- 33 Անոնց որթատունկերն ու թզենիները զարկաւ,  
Եւ անոնց հողամասին ծառերը կոտրտեց:

---

՝ Այսինքն՝ Ամէն ուտելիք պակսեցուց

Եբր.՝ եկաւ

Գ Եբր.՝ գտեց

Ե Եբր.՝ արձակեց, կամ՝ քակեց

Ը Կամ՝ փոխուեցաւ

Ք Եբր.՝ գորտեր վխտացուց



- 34 Հրամայեց, ու մարախները եկան,  
Նաեւ ջորեակները՝ առանց համրանքի,
- 35 Եւ կերան անոնց երկրին բոլոր բոյսերը,  
Լափեցին անոնց գետինին պտուղը:
- 36 Անոնց երկրին բոլոր անդրանիկները զարկաւ,  
Անոնց ամբողջ կորովին սկիզբը:
- 37 Երբ <sup>ժ</sup>զիրենք ոսկիով ու արծաթով դուրս հանեց,  
Իրենց տոհմերուն մէջ ո՛չ մէկը <sup>ի</sup>տկար էր՝:
- 38 Եգիպտոս ուրախացաւ անոնց դուրս ելլելուն համար,  
Որովհետեւ անոնց երկիւղը իրենց վրայ ինկած էր:
- 39 **Ցերեկը** ամպը տարածեց՝ իբր <sup>ի</sup>հովանի,  
Ու գիշերը՝ կրակը, լուսաւորելու համար:
- 40 Խնդրեցին, եւ լորամարգիներ բերաւ,  
Ու երկինքի հացով կշտացուց զանոնք:
- 41 Վէմը <sup>ի</sup>ճեղքեց եւ ջուրերը <sup>ժ</sup>բխեցան,  
Գետի **պէս** <sup>կ</sup>հոսեցան տափաստաններուն մէջէն:
- 42 Արդարեւ իր սուրբ խոստումը յիշեց,  
**Որ** իր ծառային՝ Աբրահամի **ըրեր էր**:
- 43 Ժողովուրդը բերկրանքով դուրս հանեց,  
Ու իր ընտրեալները՝ ցնծութեամբ:
- 44 Հեթանոսներուն երկիրները անոնց տուաւ,  
Եւ անոնք <sup>ժ</sup>ժողովուրդներու աշխատանքին տիրացան,
- 45 Որպէսզի անոր կանոնները պահեն,  
Ու անոր օրէնքներուն ուշադիր ըլլան: Ալէլուիա՝:

ՏԷՐՈՋ ԲԱՐՈՒԹԻՒՆԸ ԻՐ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ՀԱՆԴԷՊ

106

Ալէլուիա՝: Ծնորհակա՛լ եղէք Տէրոջմէն, որովհետեւ բարի է,  
Որովհետեւ անոր կարեկցութիւնը յաւիտենական է:

- 2 Ո՞վ պիտի պատմէ Տէրոջ քաջագործութիւնները.  
Ո՞վ պիտի իմացնէ անոր ամբողջ գովաբանութիւնը:
- 3 Երանի՛ր անոնց՝ որ իրաւունքը կը պահեն,  
Եւ ամէն ժամանակ արդարութիւնը կը կիրարկեն:

<sup>ժ</sup> Այսինքն՝ Իսրայելացիները

<sup>ի</sup> Եբր.՝ գայթեցաւ

<sup>լ</sup> Եբր.՝ ծածկոց

<sup>ի</sup> Եբր.՝ բացաւ

<sup>ժ</sup> Եբր.՝ հոսեցան

<sup>կ</sup> Եբր.՝ գացին

<sup>հ</sup> Եբր.՝ բնակչութիւններու

- 4 Յիշէ՛ գիս, ո՛վ Տէր, քու ժողովուրդիդ վրայ ունեցած բարեհաճութեանդ համեմատ, Այցելէ՛ ինձի քու փրկութեամբդ,
- 5 Որպէսզի քու ընտրեալներուդ բարօրութիւնը տեսնեմ, Զու ազգիդ ուրախութեամբ ուրախանամ, Զու ժառանգութեամբդ պարծենամ:
- 6 Մենք մեր հայրերուն հետ մեղանչեցինք. Անօրէնութիւն գործեցինք, ամբարշտութեամբ վարուեցանք:
- 7 Մեր հայրերը Եգիպտոսի մէջ չհասկցան քու սքանչելիքներդ, Չյիշեցին քու կարեկցութեանդ շատութիւնը, Հապա ընդվզեցան ծովուն քով, Կարմիր ծովուն քով:
- 8 Բայց զանոնք փրկեց իր անունին համար, Որպէսզի իր մեծ զօրութիւնը գիտցնէ:
- 9 Կարմիր ծովը սաստեց՝ ու ցամքեցաւ, Եւ անդունդներուն մէջէն քալել տուաւ անոնց, իբր թէ անապատի մէջէն.
- 10 Ազատեց զանոնք՝ «նոսխին ձեռքէն, Փրկեց զանոնք թշնամիին ձեռքէն:
- 11 Ջուրերը ծածկեցին անոնց թշնամիները. Անոնցմէ ո՛չ մէկը մնաց:
- 12 Այն ատեն հաւատացին անոր խօսքին Եւ գովաբանութիւն երգեցին անոր:
- 13 Շուտով մոռցան անոր գործերը, Ու չսպասեցին անոր ծրագիրին **իրագործումին:**
- 14 <sup>բ</sup>Յոյժ ցանկացին՝ անապատին մէջ, Աստուած փորձեցին ամայութեան մէջ.
- 15 Ինք ալ անոնց տուաւ իրենց խնդրածը, Բայց ուժաթափութիւն դրկեց անոնց անձերուն:
- 16 Երբ Մովսէսի նախանձեցան բանակավայրին մէջ, Եւ Տէրոջ սուրբին՝ Ահարոնի.
- 17 Երկիրը բացուեցաւ ու կլլեց Դաթանը, Եւ ծածկեց Աբիրոնի խումբը:
- 18 Կրակը վառեցաւ անոնց խումբին մէջ, Բոցը բռնկեցուց ամբարիշտները:
- 19 Հորթ շինեցին Զորեբի մէջ, Ու երկրպագեցին ձուլածոյ պատկերին:
- 20 Փոխանակեցին իրենց Փառքը՝ Կոտակեր եզի կերպարին հետ:
- 21 Մոռցան իրենց Փրկիչը՝ Աստուած, Որ մեծագործութիւններ կատարեց Եգիպտոսի մէջ,
- 22 Սքանչելիքներ՝ Զամի երկրին մէջ, Եւ ահաւոր **արարքներ**՝ Կարմիր ծովուն մէջ:

<sup>ա</sup> Եբր.՝ ատողին

<sup>բ</sup> Եբր.՝ Յանկալով ցանկացին

<sup>գ</sup> Եբր.՝ Բուսակեր

- 23 Ուստի ըսաւ թէ զանոնք պիտի բնաջնջէ,  
Բայց անոր ընտրեալը՝ Մովսէս,  
Խրամատին մէջ կայնեցաւ անոր առջեւ,  
Անոր ցատումը կասեցնելու համար, որպէսզի չկոտորէ:
- 24 Նաեւ այն ցանկալի երկիրը անարգեցին,  
Եւ անոր խօսքին չհաւատացին.
- 25 Իրենց վրաններուն մէջ տրտնջեցին,  
Տէրոջ ձայնին չհնազանդեցան:
- 26 Ուստի անոնց համար <sup>7</sup>երդում ըրաւ՝  
Որ զանոնք անապատին մէջ տապալէ,
- 27 Ու անոնց զարմը ազգերուն մէջ տապալէ՝  
Ջանոնք բոլոր երկիրներուն մէջ ցրուելով:
- 28 Յետոյ Բահաղ-Փէովրի յարեցան,  
Մեռելներուն զոհերը կերան,
- 29 Եւ իրենց գործերով **Տէրը** գրգռեցին.  
Ուստի անոնց վրայ պատուհաս <sup>8</sup>հասաւ:
- 30 Այն ատեն Փենեհէս կայնեցաւ եւ իրաւարար եղաւ,  
Ու պատուհասը դադրեցաւ.
- 31 Ասիկա անոր արդարութիւն սեպուեցաւ՝  
Սերունդէ սերունդ, յաւիտենապէս:
- 32 Նաեւ զայրացուցին **Տէրը** Մերիպայի ջուրերուն քով,  
Եւ իրենց պատճառով Մովսէս դժբախտացաւ.
- 33 Արդարեւ դառնացուցին անոր հոգին,  
Ան ալ իր շրթունքով անխոհեմաբար խօսեցաւ:
- 34 Չբնաջնջեցին ժողովուրդները՝  
Ինչպէս Տէրը հրամայեր էր անոնց,
- 35 Հապա հեթանոսներուն հետ խառնուեցան.  
Անոնց արարքները սորվեցան
- 36 Անոնց կուռքերը պաշտեցին,  
Եւ անոնք իրենց որոգայթ եղան:
- 37 Իրենց որդիներն ու աղջիկները  
Դեւերուն զոհեցին.
- 38 Անմեղ արիւն թափեցին,  
Իրենց որդիներուն եւ աղջիկներուն արիւնը,  
Որոնք զոհեցին Զանանի կուռքերուն.  
Երկիրը պղծուեցաւ արիւնով:
- 39 Իրենց արարքներով <sup>9</sup>ապականեցան,  
Եւ իրենց ըրածներով պոռնկեցան:
- 40 Ուստի Տէրոջ բարկութիւնը բորբոքեցաւ իր ժողովուրդին դէմ,  
Ու գարշեցաւ իր ժառանգութենէն.
- 41 Զանոնք հեթանոսներուն ձեռքը մատնեց,

<sup>7</sup> Եբր.՝ ձեռքը բարձրացուց

<sup>8</sup> Եբր.՝ պատռեցաւ

<sup>9</sup> Եբր.՝ անմաքուր եղան

Եւ էանոնց ոսոխները՝ իրենց վրայ տիրեցին:

- 42 Իրենց թշնամիները տանջեցին զիրենք,  
Եւ անոնց ձեռքին տակ ընկճուեցան:
- 43 Շատ անգամ ազատեց զիրենք,  
Բայց ընդվզեցան իրենց խորհուրդներով,  
Ու նուաստացան իրենց անօրէնութիւններուն համար:
- 44 Սակայն ինք նայեցաւ անոնց տագնապին՝  
Երբ անոնց <sup>բ</sup>պաղատանքը լսեց,
- 45 Եւ անոնց համար իր ուխտը յիշեց.  
Իր մեծ կարեկցութեան համեմատ արգահատեցաւ,
- 46 Ու անոնց բոլոր գերեվարներուն առջեւ  
Գթութիւն գտնել տուաւ անոնց:
- 47 Փրկէ՛ մեզ, ո՛վ Տէր, մեր Աստուածը.  
Հաւաքէ՛ մեզ հեթանոսներուն մէջէն,  
Որպէսզի քու սուրբ անունդ ներբողենք,  
Ու քու գովաբանութեամբդ պարծենանք:
- 48 Օրհնեա՛լ ըլլայ Տէրը՝ Իսրայէլի Աստուածը,  
Քօյարէ դար՝:  
Ամբողջ ժողովուրդը թող ըսէ.  
«Ամէն»: Ալէլուիա՛:

ԱՍՏՈՒԾՈՅ ԲԱՐՈՒԹԵԱՆ ՓԱՌԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ

107

Շնորհակա՛լ եղէք Տէրոջմէն, որովհետեւ բարի է,  
Որովհետեւ անոր կարեկցութիւնը յաւիտենական է:

- 2 Այսպէս թող ըսեն Տէրոջ փրկածները,  
Որոնք փրկեց թշնամիին ձեռքէն,
- 3 Ու հաւաքեց զանոնք երկիրներէն,  
Արեւելքէն, արեւմուտքէն, հիւսիսէն եւ <sup>ա</sup>ծովէն:
- 4 Անոնք դեգերեցան անապատին մէջ, ամայի ճամբայի մը մէջ.  
Զաղաք չգտան՝ բնակելու համար:
- 5 Անօթի ու ծարաւ ըլլալով՝  
Իրենց անձը կը թալկանար իրենց ներսը:
- 6 Տէրոջ աղաղակեցին իրենց տագնապին մէջ,  
Եւ ան ազատեց զանոնք իրենց տուայտանքներէն.
- 7 Զիրենք ուղիղ ճամբային մէջ առաջնորդեց,  
Որպէսզի բնակութեան քաղաք մը հասնին:
- 8 Թող շնորհակալ ըլլան Տէրոջմէն՝ իր կարեկցութեան համար,

<sup>է</sup> Երբ.՝ զանոնք ատողները

<sup>բ</sup> Երբ.՝ ճիշը

<sup>բ</sup> Երբ.՝ Յաւիտենականութենէ յաւիտենականութիւն

<sup>ա</sup> Կամ՝ հարաւէն

- Ու մարդոց որդիներուն ըրած իր սքանչելիքներուն համար.
- 9** Որովհետեւ ան պապական ճանճը կը բյազեցնէ,  
Եւ անօթեցած անճը բարիքներով կը լեցնէ:
- 10** Անոնք խաւարի ու մահուան շուքի մէջ կը բնակէին,  
Տառապանքով ու երկաթով կապուած էին.
- 11** Զանի որ Աստուծոյ խօսքերուն դէմ ընդվզեցան,  
Եւ Ամենաբարձրին ծրագիրը անարգեցին:
- 12** Ուստի ինք **ալ** տաժանքով խոնարհեցուց անոնց սիրտը.  
Ինկան, եւ օգնական մը չկար:
- 13** Այն ատեն Տէրոջ աղաղակեցին իրենց տագնապին մէջ,  
**Ու** զանոնք փրկեց իրենց տուայտանքներէն:
- 14** Զանոնք խաւարէն ու մահուան շուքէն հանեց,  
Եւ անոնց կապանքները փրցուց:
- 15** Թող շնորհակալ ըլլան Տէրոջմէն՝ իր կարեկցութեան համար,  
Ու մարդոց որդիներուն ըրած իր սքանչելիքներուն համար.
- 16** Որովհետեւ պղինձէ դռները կոտրեց,  
Ու երկաթէ նիզերը կոտրեց:
- 17** Յիմարները իրենց <sup>բ</sup>չար ճամբային՝ համար  
Եւ իրենց անօրէնութիւններուն համար կը տառապին:
- 18** Անոնց անճը ամէն կերակուրէ կը գարշի,  
Ու մինչեւ մահուան դռներուն կը <sup>դ</sup>մօտենան:
- 19** Տէրոջ կ'աղաղակեն իրենց տագնապին մէջ,  
**Եւ** զանոնք կը փրկէ իրենց տուայտանքներէն:
- 20** Իր խօսքը կը դրկէ ու զանոնք կը բուժէ,  
Եւ կ'ազատէ իրենց <sup>ե</sup>փոսերէն:
- 21** Թող շնորհակալ ըլլան Տէրոջմէն՝ իր կարեկցութեան համար,  
Ու մարդոց որդիներուն ըրած իր սքանչելիքներուն համար.
- 22** Շնորհակալութեան զոհ թող մատուցանեն,  
Եւ անոր գործերը ցնծութեամբ պատմեն:
- 23** Նաւերով <sup>զ</sup>ծովուն վրայ ճամբորդողները՝  
Ու յորդառատ ջուրերու մէջ գործ կատարողները՝
- 24** Իրե՛նք կը տեսնեն Տէրոջ գործերը,  
Եւ անոր սքանչելիքները՝ խորխորատին մէջ:
- 25** Արդարեւ ինք կը հրամայէ՝ ու մրրկալից հովը <sup>է</sup>կը փչէ՝,  
<sup>բ</sup>Եւ ծովուն՝ ալիքները կը բարձրացնէ:

---

<sup>բ</sup> Եբբ.՝ կշտացնէ

<sup>գ</sup> Եբբ.՝ յանցանքին

<sup>դ</sup> Եբբ.՝ հասնին

<sup>ե</sup> Եբբ.՝ ապականութիւններէն

<sup>զ</sup> Եբբ.՝ ծովը իջնողները

<sup>է</sup> Եբբ.՝ ոտքի կը հանէ

- 26 Երկինք կ'ելլեն, անդունդը կ'իջնեն,  
Եւ անոնց անձերը <sup>բ</sup>տագնապէն կը հալին.
- 27 Գինովի պէս կը տարուբերին ու կը դանդաչեն,  
Եւ անոնց ամբողջ իմաստութիւնը <sup>գ</sup>կ'ոչնչանայ<sup>՝</sup>:
- 28 Այն ատեն Տէրոջ կ'աղաղակեն իրենց տագնապին մէջ,  
Ու զանոնք կը փրկէ իրենց տուայտանքներէն.
- 29 Մրրիկը կը լռեցնէ,  
Եւ ալիքները կը հանդարտին:
- 30 Իրենք ալ կ'ուրախանան որ հանդարտած են,  
Ու զանոնք կ'առաջնորդէ իրենց փափաքած նաւահանգիստը:
- 31 Թող շնորհակալ ըլլան Տէրոջմէն՝ իր կարեկցութեան համար,  
Ու մարդոց որդիներուն ըրած իր սքանչելիքներուն համար.
- 32 Զինք թող բարձրացնեն ժողովուրդին համախմբումին մէջ,  
Զինք թող գովաբանեն երէցներուն <sup>հ</sup>ատեանին մէջ:
- 33 Գետերը անապատներու կը <sup>ւ</sup>վերածէ,  
Ու ջուրի ակերը՝ ծարաւուտ երկրի.
- 34 Նաեւ պտղաբեր երկիրը՝ աղահանքի,  
Անոր բնակիչներուն չարութեան պատճառով:
- 35 Անապատը ջուրի լիճի կը վերածէ,  
Եւ անջրդի հողը՝ ջուրի ակերու.
- 36 Անօթիները հոն կը բնակեցնէ,  
Որ բնակութեան քաղաք հաստատեն,
- 37 Արտեր հերկեն ու սերմանեն, եւ այգիներ տնկեն՝  
Որպէսզի բերք <sup>ե</sup>ւ պտուղ տան:
- 38 Զանոնք կ'օրհնէ, ու անոնք չափազանց կը բազմանան.  
Անոնց անասունները չի պակսեցներ:
- 39 Յետոյ կը նուազին եւ նկուն կ'ըլլան՝  
Կաշկանդումէն, ձախորդութենէն ու տրտմութենէն:
- 40 Արհամարհանք կը թափէ ազնուականներուն վրայ,  
Եւ անոնց դեգերիլ կու տայ ամայութեան մէջ, <sup>զ</sup>ուր ճամբայ չկայ:
- 41 Բայց աղքատը տառապանքէն կը պաշտպանէ,  
Ու գերդաստանները <sup>ը</sup>ոչխարներու հօտի պէս <sup>ի</sup>կը բազմացնէ<sup>՝</sup>:
- 42 Ուղիղները պիտի տեսնեն եւ ուրախանան  
Բայց ամէն անիրաւութիւն իր բերանը պիտի գոցէ:
- 43 Ո՞վ իմաստուն է՝ որ այս <sup>բ</sup>աներուն ուշադիր ըլլայ.

---

<sup>բ</sup> Եբբ.՝ Որ անոր

<sup>բ</sup> Եբբ.՝ ձախորդութենէն

<sup>գ</sup> Եբբ.՝ կը կլլուի

<sup>հ</sup> Եբբ.՝ նիստին

<sup>ւ</sup> Եբբ.՝ ընէ

<sup>ի</sup> Եբբ.՝ կ'ընէ

Ա՛ն պիտի հասկնայ Տէրոջ կարեկցութիւնները:

ԱՂԹԸ՝ ՕԳՆՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Երգ. Դաւիթի սաղմոսը:

108

Իմ սիրտս ՝տրամադիր է, ո՛վ Աստուած.

Պիտի երգեմ եւ սաղմոս ըսեմ իմ Բփառքովս:

2 Արթնցէ՛ք, ո՛վ տաւիղ ու քնար.

Ես արշալոյսին պիտի արթննամ:

3 Ո՛վ Տէր, քեզ պիտի ներբողեմ ժողովուրդներուն մէջ,

Զեզի սաղմոս պիտի երգեմ Գազգերուն մէջ.

4 Որովհետեւ քու կարեկցութիւնդ մեծ է, ու երկինքէն բարձր,

Եւ քու ճշմարտութիւնդ մինչեւ ցօսր ամպերը կը հասնի:

5 Ո՛վ Աստուած, բարձրացի՛ր երկինքէն վեր,

Ու քու փառքդ ամբողջ երկրի վրայ թող ըլլայ:

6 Որպէսզի քու սիրելիներդ ազատին՝

Փրկէ՛ աջ ձեռքովդ, ու պատասխանէ՛ ինծի:

7 Աստուած ՚իր սրբութեամբ՝ խօսեցաւ.

«Ես պիտի հրճուիմ՝ Սիւքէմը բաժնելով,

Ու Սոկքովթի հովիտը չափելով:

8 Գաղաադ իմս է, Մանասէ իմս է,

Եփրեմ գլուխիս Եզօրութիւնն է.

Յուդա իմ օրէնսդիրս է:

9 Մովաբ իմ լուացուելու կոնքս է.

Եդովմի վրայ պիտի ձգեմ իմ կօշիկս.

ԳՓղշտացիներուն դէմ պիտի գոչեմ»:

10 Ո՛վ պիտի տանի զիս պարսպապատ քաղաքը.

Ո՛վ պիտի առաջնորդէ զիս մինչեւ Եդովմ:

11 Միթէ դուն չե՞ս, ո՛վ Աստուած, որ մեզ մերժեցիր,

Ու մեր զօրքերուն հետ Էջգացիր, ո՛վ Աստուած

12 Օգնութի՛նն տուր մեզի՝ տագնապի մէջէն ելլելու,

Որովհետեւ ընդունայն է մարդուն Եօգնութիւնը:

<sup>ա</sup> Եբր.՝ պատրաստ, կամ՝ հաստատ

<sup>բ</sup> Այսինքն՝ անձովս, կամ՝ լեզուովս

<sup>գ</sup> Եբր.՝ բնակչութիւններուն

<sup>դ</sup> Կամ՝ իր սրբարանին մէջ

<sup>ե</sup> Եբր.՝ ամրոցն

<sup>զ</sup> Եբր.՝ Պաղեստինի

<sup>է</sup> Եբր.՝ դուրս չելար

<sup>ը</sup> Եբր.՝ ազատութիւնը

13 Աստուծո՛վ ոյժ պիտի բանեցնենք.  
Ա՛ն պիտի կոխկռտէ մեր թշնամիները:

ՄԱՐԴՈՒ ՄԸ ՏՐՏՈՒՆՋԸ՝ ՏԱՌԱՊԱՆՔԻ ՄԷՋ  
Գլխաւոր երաժիշտին. Դաւիթի սաղմոսը:

109

Ո՛վ իմ գովաբանութեանս Աստուածը, լուռ մի՛ կենար.

- 2 Որովհետեւ ամբարիշտին բերանը  
Ու խաբեբային բերանը բացուեցան ինծի դէմ,  
Ստախօս լեզուով խօսեցան ինծի դէմ:
- 3 Ատելութեան խօսքերով զիս շրջապատեցին,  
Եւ ինծի դէմ առանց <sup>ա</sup>պատճառի պայքարեցան:
- 4 Իմ սիրոյս փոխարէն ինծի ընդդիմացան,  
Բայց ես աղօթքի **նուիրուեցայ**.
- 5 Նաեւ իմ բարիքիս փոխարէն չարիք <sup>բ</sup>հատուցանեցին,  
Ու սիրոյս փոխարէն՝ **ատելութիւն**:
- 6 Ամբարի՛շտ **վերատեսուչ** մը նշանակէ անոր վրայ,  
Եւ <sup>գ</sup>Սատանա՛ն թող կայնի անոր աջ կողմը:
- 7 Երբ դատուի՝ թող յանցաւոր <sup>դ</sup>հռչակուի,  
Ու անոր աղօթքը մեղք **սեպուի**:
- 8 Անոր օրերը թող փոքրաթի՛ւ ըլլան,  
Եւ անոր <sup>ե</sup>պաշտօնը ուրի՛շը առնէ:
- 9 Անոր որդիները թող որբ ըլլան,  
Ու անոր կինը՝ այրի:
- 10 Անոր որդիները թող աստանդական ըլլան ու մուրան,  
Եւ իրենց աւերակներէն **ելլելով հաց** փնտռեն:
- 11 Վաշխառուն թող <sup>զ</sup>գրաւէ անոր ամբողջ ունեցածը,  
Եւ օտարները կողոպտեն անոր վաստակը:
- 12 Ո՛չ մէկը թող կարեկցութիւն <sup>է</sup>ցոյց տայ՝ անոր,  
Ո՛չ մէկը թող ողորմի անոր որբերուն:
- 13 Անոր յետնորդները թող բնաջնջուին,  
Անոնց անունը թող ջնջուի յաջորդ սերունդին մէջէն:

<sup>ա</sup> Եբր.՝ վճարումի

<sup>բ</sup> Եբր.՝ ներկայացուցին

<sup>գ</sup> Կամ՝ ընդդիմադի՛րը

<sup>դ</sup> Եբր.՝ հանուի

<sup>ե</sup> Եբր.՝ վերատեսչութիւնը

<sup>զ</sup> Եբր.՝ որոգայթի մէջ բռնէ

<sup>է</sup> Եբր.՝ երկարաձգէ



- 14 Անոր հայրերուն անօրէնութիւնը թող յիշուի Տէրոջ առջեւ,  
եւ անոր մօր մեղքը չջնջուի.
- 15 Անոնք շարունակ Տէրոջ առջեւ թող ըլլան,  
Որպէսզի անոնց յիշատակը երկրէն ջնջուի.
- 16 Որովհետեւ ան <sup>Ը</sup> չմտածեց կարեկցութեամբ վարուիլ,  
Հապա դժբախտն ու աղքատը հալածեց,  
Որպէսզի յուսալքուած սիրտ ունեցողը մեռցնէ:
- 17 Զանի անէծքը սիրեց, թող գայ իր վրայ.  
Օրհնութենէն չախորժեցաւ, ուստի թող հեռանայ իրմէ:
- 18 Զանի անէծքը իր վերարկուին պէս հագաւ,  
Թող մտնէ անոր <sup>Ք</sup> փորը՝ ջուրի պէս,  
եւ անոր ոսկորներուն մէջ՝ իւղի պէս.
- 19 Հագնելիք <sup>Ժ</sup> հանդերձի պէս թող ըլլայ անոր,  
Ու շարունակ <sup>Ի</sup> մէջքը կապելիք՝ գօտիի պէս:
- 20 Ա՛յս թող ըլլայ ինծի ընդդիմացողներուն  
եւ իմ անձիս դէմ չարախօսողներուն՝ հատուցումը Տէրոջմէն:
- 21 Բայց դո՛ւն, ո՛վ Տէր Եհովա, <sup>Խ</sup> օգնէ՛ ինծի՝ քու անունիդ համար.  
Ազատէ՛ զիս քու բարի կարեկցութեամբդ:
- 22 Արդարեւ ես դժբախտ եւ աղքատ եմ,  
եւ սիրտս խոցուած է իմ ներսս:
- 23 Երկարող ստուերի պէս **յառաջ** կ'երթամ,  
Մարախի պէս <sup>Ծ</sup> թօթափուեցայ:
- 24 Ծունկերս ծոմապահութենէն կը <sup>Կ</sup> դողդոջեն,  
Ու մարմինս **իր** պարարտութենէն զրկուեցաւ:
- 25 Ես անոնց նախատինք եղայ.  
Երբ զիս տեսնեն՝ իրենց գլուխը կը շարժեն:
- 26 Օգնէ՛ ինծի, ո՛վ Տէր, իմ Աստուա՛ծս.  
Փրկէ՛ զիս քու կարեկցութեանդ համեմատ:
- 27 Թող գիտնան թէ ա՛յս է քու ձեռքդ,  
եւ դո՛ւն ըրիր ասիկա, ո՛վ Տէր:
- 28 Անոնք թող անհիծեն, բայց դուն օրհնէ՛.  
Երբ **ինծի դէմ** կանգնին՝ թող ամչնան,

---

<sup>Ը</sup> Եբբ.՝ չյիշեց

<sup>Ք</sup> Եբբ.՝ ներսը

<sup>Ժ</sup> Եբբ.՝ հագուստի

<sup>Ի</sup> Եբբ.՝ գօտեւորուելիք

<sup>Լ</sup> Եբբ.՝ գործին վարձատրութիւնը

<sup>Խ</sup> Եբբ.՝ գործէ՛ ինծի համար

<sup>Ծ</sup> Եբբ.՝ թօթուուեցայ

<sup>Կ</sup> Եբբ.՝ գայթիւն

Բայց քու ծառայ թող ուրախանայ:

- 29 Ինձի ընդդիմացողները թող նախատինք հագնին, եւ իրենց ամօթով ծածկուին՝ որպէս թէ պարեգօտով:
- 30 Մեծապէս պիտի ներբողեմ Տէրը իմ բերանովս, Ու բազմութեան մէջ պիտի գովաբանեմ զինք.
- 31 Որովհետեւ ինք աղքատին աջ կողմը կը կայնի, Որպէսզի անոր անձը փրկէ ՚դատապարտողներէն:

ԱՍՏՈՒԱԾ ԵՒ ԸՆՏՐՈՒԱԾ ԹԱԳԱԽՈՐԸ  
Դաւիթի սաղմոսը:

110

Սէրը պատգամեց իմ Տէրոջս. «Բազմէ՛ իմ աջ կողմս, Մինչեւ որ քու թշնամիների պատուանդան դնեմ ոտքերուդ»:

- 2 <sup>Բ</sup>Տէրը Սիոնէն պիտի ղրկէ քու գօրութեանդ գաւազանը. Տիրապետէ՛ քու թշնամիներուդ մէջտեղ:
- 3 Ոյժիդ օրը քու ժողովուրդդ Յօժարակամ պիտի ըլլայ՝ ՚սուրբ զարդարանքներով՝. Զու ՚երիտասարդներուդ ցօղը Արշալոյսի արգանդէն պիտի գայ քեզի:
- 4 <sup>Ե</sup>Տէրը երդում ըրեր է ու պիտի չզղջայ. «Դուն յաւիտեան քահանայ ես՝ Մելքիսեդեկի կարգին համեմատ»:
- 5 Տէրը քու աջ կողմդ է. Իր բարկութեան օրը թագաւորներ պիտի ՚զարնէ:
- 6 Ան <sup>Է</sup>հեթանոսները պիտի դատէ, Փողոցները մեռած մարմիններով պիտի լեցնէ. Շատ երկիրներու մէջ <sup>Բ</sup>գլխաւորներ պիտի խոցէ՝:
- 7 Ճամբան վտակէն պիտի խմէ. Ուստի գլուխը պիտի բարձրացնէ:

<sup>Բ</sup> Եբր.՝ դատողներէն

<sup>Ս</sup> Եբր.՝ Եհովան

<sup>Բ</sup> Եբր.՝ Եհովան

<sup>Գ</sup> Կամ՝ սրբութեան վայելչութեամբ

<sup>Դ</sup> Եբր.՝ պատանեկութեանդ

<sup>Ե</sup> Եբր.՝ Եհովան

<sup>Զ</sup> Կամ՝ կոտրէ

<sup>Է</sup> Եբր.՝ հեթանոսներուն մէջ

<sup>Ը</sup> Կամ՝ գլուխներ պիտի կոտրէ

111

Ալէլուիա՝ Իմ ամբողջ սիրտովս Տէրը պիտի ներբողեմ՝  
Ուղիղներուն խորհրդածողովին եւ համայնքին մէջ:

- 2 Տէրոջ գործերը մեծ են.  
՝Կը փնտռուին՝ բոլոր անոնցմէ ախորժողներէն:
- 3 Անոր գործը փառաւոր ու վայելուչ է,  
Եւ անոր արդարութիւնը յաւերժ կը գոյատեւէ:
- 4 Յիշատակել տուաւ իր սքանչելիքները.  
Տէրը ողորմած ու գթած է:
- 5 ԲԿերակուր տուաւ իրմէ վախցողներուն.  
Իր ուխտը յաւիտեան պիտի յիշէ:
- 6 Իր գործերուն կարողութիւնը ցոյց տուաւ իր ժողովուրդին,  
Անոնց տալով ազգերուն ժառանգութիւնը:
- 7 Անոր ձեռքերուն գործերը ՝ճշմարիտ եւ արդար՝ են.  
Անոր բոլոր հրամանները վստահելի են,
- 8 Դարէ դար՝ Եհաստատուած են,  
Ճշմարտութեամբ եւ ուղղամտութեամբ եղած են:
- 9 Փրկութիւն ղրկեց իր ժողովուրդին,  
Իր ուխտը յաւիտեանապէս Գհաստատեց.  
Սուրբ ու ահաւոր է անոր անունը:
- 10 Իմաստութեան սկիզբը Տէրոջ վախն է.  
Լաւ ուշիմութիւն ունին անոնք՝ որ կը գործադրեն **անոր հրամանները**:  
Անոր գովաբանութիւնը յաւերժ կը գոյատեւէ:

112

Ալէլուիա՝ Երանի՛ այն մարդուն՝ որ Տէրոջմէն կը վախնայ,  
Եւ անոր պատուիրաններէն յոյժ կ'ախորժի.

- 2 Անոր զարմը զօրաւոր պիտի ըլլայ երկրի վրայ,  
Ուղիղներուն սերունդը պիտի օրհնուի:
- 3 Փարթամութիւն ու հարստութիւն պիտի ըլլայ անոր տան մէջ,  
Եւ անոր արդարութիւնը յաւերժ պիտի գոյատեւէ:
- 4 Խաւարին մէջ լոյս կը ծագի ուղիղներուն,

<sup>ա</sup> Կամ՝ Կ'որոնուին

<sup>բ</sup> Եբբ.՝ Որս

<sup>գ</sup> Եբբ.՝ ճշմարտութիւն եւ իրաւունք

<sup>դ</sup> Եբբ.՝ Յաւերժութենէ յաւերժութիւն

<sup>ե</sup> Եբբ.՝ յեճած

<sup>զ</sup> Եբբ.՝ պատուիրեց

- Անոր՝ որ ողորմած, գթած եւ արդար է:
- 5 Բարի մարդը կ'ողորմի ու փոխ կու տայ,  
իր գործերը իրաւունքով "կը վարէ":
- 6 Ի՛րապէս ան յաւիտեան պիտի չսասանի.  
Արդարին յիշատակը յաւիտեան **պիտի մնայ**:
- 7 Ան չարագուշակ լուրէն չի վախնար.  
Անոր սիրտը հաստատ է, **ու** Տէրո՛ջ կը վստահի:
- 8 Անոր սիրտը նեցուկ ունի. պիտի չվախնայ՝  
Մինչեւ որ իր հակառակորդներուն **կորուստը** տեսնէ:
- 9 Բ՛աշխեց **եւ** աղքատներուն տուաւ.  
Անոր արդարութիւնը յաւերժ կը գոյատեւէ,  
Անոր եղջիւրը փառքով պիտի բարձրանայ:
- 10 Ամբարիշտը պիտի տեսնէ ու գրգռուի.  
Իր ակռաները պիտի կրճտէ եւ պիտի հալի:  
Ամբարիշտներուն փափաքը պիտի կորսուի:

ԱՍՏՈՒԾՈՅ ԲԱՐՈՒԹԻՒՆԸ

113

- Ալէլուիա՛: Գովաբանեցէ՛ք, ո՛վ Տէրոջ ծառաները,  
Գովաբանեցէ՛ք Տէրոջ անունը:
- 2 Օրհնեա՛լ ըլլայ Տէրոջ անունը՝  
Հիմա եւ յաւիտեան:
- 3 Արեւելքէն մինչեւ արեւմուտք՝  
Գովելի ըլլայ Տէրոջ անունը:
- 4 Տէրը բարձրացած է բոլոր ազգերէն վեր.  
Անոր փառքը երկինքէն վեր է:
- 5 Ո՞վ կայ Տէրոջ՝ մեր Աստուծոյն պէս,  
Որ բարձրութեան մէջ կը բնակի,
- 6 Բայց կը "ցածնայ՝  
Երկինքի ու երկրի մէջ **եղած բաները** տեսնելու համար:
- 7 Ան չքաւորը Բհողէն կը վերցնէ,  
Եւ աղքատը աղբիւսէն կը բարձրացնէ,
- 8 Որպէսզի **գանոնք** նստեցնէ ազնուականներուն հետ,  
Իր ժողովուրդին ազնուականներուն հետ:
- 9 Ան ամուլ կինը ընտանիքի մէջ կը բնակեցնէ՝  
**Իբր** որդիներու ուրախ մայր: Ալէլուիա՛:

ԶԱՏԿԱԿԱՆ ԵՐԳ

՝ Եբր.՝ նեցուկ կ'ըլլայ

Բ Եբր.՝ Յրուեց

՝ Եբր.՝ նուաստանայ

Բ Կամ՝ փոշիէն

114

- Երբ Իսրայէլ Եգիպտոսէն դուրս ելաւ,  
Ու Յակոբի տունը՝ օտարալեզու ժողովուրդին մէջէն,
- 2 Յուդա անոր սրբարանը եղաւ,  
Եւ Իսրայէլ՝ անոր տէրութիւնը:
- 3 Ծովը տեսաւ ու փախաւ.  
Յորդանան՝ նահանջեց:
- 4 Լեռները խոյերու պէս ցատկոտեցին,  
Ու բլուրները՝ գառներու պէս:
- 5 Զեզի ի՞նչ եղաւ, ո՛վ ծով, որ փախար,  
Եւ դո՛ւն, Յորդանան՝ որ նահանջեցիր:
- 6 Ո՛վ լեռներ, ինչո՞ւ խոյերու պէս ցատկոտեցիք,  
Ու դո՛ւք, բլուրներ՝ գառներու պէս:
- 7 Սարսափէ՛, ո՛վ երկիր, Տէրոջ Բառքեւ,  
Յակոբի Աստուծոյն առջեւ,
- 8 Որ վէճը ջուրերու լիճի վերածեց,  
Եւ ապառաժը՝ ջուրերու աղբիւրի:

ՄԻԱԿ ՃՇՄԱՐԻՏ ԱՍՏՈՒԱԾԸ

115

- Ո՛չ թէ մեզի, ո՛վ Տէր, ո՛չ թէ մեզի,  
Հապա քու անունիդ փառք տուր՝  
Քու կարեկցութեանդ ու ճշմարտութեանդ պատճառով:
- 2 Ինչո՞ւ հեթանոսները ըսեն.  
«Ո՞ր է հիմա անոնց Աստուածը»:
- 3 Բայց մեր Աստուածը երկինքն է.  
Ան իր ամբողջ փափաքածը իրագործեր է:
- 4 Անոնց կուռքերը արծաթ ու ոսկի են,  
Մարդու ձեռքի գործեր են.
- 5 Բերան ունին՝ բայց չեն խօսիր,  
Աչքեր ունին՝ բայց չեն տեսներ,
- 6 Ականջներ ունին՝ բայց չեն լսեր,  
Զիթ ունին բայց չեն հոտոտեր,
- 7 Չեռքեր ունին՝ բայց չեն շօշափեր,  
Ոտքեր ունին՝ բայց չեն քալեր,  
Եւ իրենց կոկորդով չեն գոչեր.
- 8 Անոնց նման կ'ըլլան զանոնք շինողները,  
Ու բոլոր անոնց վստահողները:
- 9 "Ո՛վ Իսրայէլ, Տէրոջ վստահէ՛".

<sup>ա</sup> Եբբ.՝ ետեւ շրջեցաւ

<sup>բ</sup> Եբբ.՝ երեսէն

<sup>ա</sup> Կամ՝ Իսրայէլ Տէրոջ կը վստահի

Ի՛նք է անոնց օգնութիւնն ու վահանը:

10 <sup>բ</sup>Ո՛վ Ահարոնի տունը, Տէրո՛ջ վստահեցէք՝:

Ի՛նք է անոնց օգնութիւնն ու վահանը:

11 <sup>գ</sup>Ո՛վ Տէրոջմէն վախցողներ, Տէրո՛ջ վստահեցէք՝:

Ի՛նք է անոնց օգնութիւնն ու վահանը:

12 Տէրը մեզ կը յիշէ **եւ** պիտի օրհնէ.

Իսրայէլի տունը պիտի օրհնէ,

Ահարոնի տունը պիտի օրհնէ,

13 Տէրոջմէն վախցողները պիտի օրհնէ,

Պգտիկները՝ մեծերուն հետ:

14 Տէրը ձեր **բարիքները** պիտի անելցնէ,

Ձերը **եւ** ձեր որդիներունը:

15 Դուք օրհնեա՛լ էք Տէրոջմէն,

Որ երկինքն ու երկիրը <sup>ն</sup>ստեղծեց:

16 Երկինքը Տէրո՛ջ երկինքն է,

Բայց երկիրը մարդոց որդիներուն տուաւ:

17 Մեռելները Տէրը չեն գովաբաներ,

Ո՛չ ալ անոնք՝ որ <sup>ե</sup>գերեզմանը կ'իջնեն.

18 Բայց մենք Տէրը պիտի օրհնաբանենք,

Հիմա **եւ** յաւիտեան: Ալէլուիա՛:

ՄԱՀԷՆ ԱԶԱՏՈՒԱԾԻ ՄԸ ԳՈՎԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ

116

Ես Տէրը կը սիրեմ,

Որովհետեւ իմ ծայնս **եւ** աղաչանքս լսեց.

2 Զանի ան իր ականջը ինձի դարձուց,

«Ամբողջ կեանքիս» մէջ **իրեն** պիտի գոչեմ:

3 Մահուան լարերը զիս պատեցին,

Եւ <sup>բ</sup>դժոխքին տագնապները ինձի պատահեցան.

Տագնապ ու տրտմութիւն գտայ:

4 Բայց ես Տէրոջ անունը կանչեցի.

Կ'աղերսեմ, ո՛վ Տէր, փրկէ՛ իմ անձս:

5 Տէրը ողորմած **եւ** արդար է,

Մեր Աստուածը գթած է:

6 Տէրը միամիտները կը պահպանէ.

<sup>բ</sup> Կամ՝ Ահարոնի տունը Տէրոջ կը վստահի

<sup>գ</sup> Կամ՝ Տէրոջմէն վախցողները Տէրոջ կը վստահին

<sup>ն</sup> Եբր.՝ ըրաւ

<sup>ե</sup> Եբր.՝ լռութիւնը

<sup>ւ</sup> Եբր.՝ իմ օրերուս

<sup>բ</sup> Այսինքն՝ մեռած անձերու կայանին

Ես Գթշուառացած էի, բայց ա՛ն զիս ազատեց:

- 7 Ո՛վ իմ անձս, վերադարձի՛ր քու հանգստութեանդ, Զանի որ Տէրը քեզի երախտիք ըրաւ.
- 8 Արդարեւ դուն ազատեցիր իմ անձս մահէն, Իմ աչքերս՝ արցունքէն, ու ոտքերս՝ անկումէն:
- 9 Տէրոջ առջեւ պիտի ընթանամ Ապրողներու երկրին մէջ:
- 10 Վստահութիւն ունէի՝ **նոյնիսկ** երբ կ'ըսէի. «Ես մեծապէս տառապեցայ»:
- 11 Իրարանցումիս մէջ ըսի. «Ամէն մարդ ստախօս է»:
- 12 Ի՞նչ հատուցանեմ Տէրոջ՝ Անոր ինծի **ըրած** բոլոր երախտիքներուն փոխարէն:
- 13 Փրկութեան բաժակը պիտի առնեմ Ու Տէրոջ անունը պիտի կանչեմ.
- 14 Տէրոջ **ըրած** ուխտերս պիտի կատարեմ Իր ամբողջ ժողովուրդին առջեւ:
- 15 Տէրոջ աչքերուն թանկարժէք է Իր բարեպաշտներուն մահը:
- 16 Կ'աղերսեմ, ո՛վ Տէր, որովհետեւ ես քու ծառադ եմ. Զու ծառադ եմ, քու աղախիցիդ՝ որդիքն. Դո՛ւն իմ կապերս քակեցիր:
- 17 Շնորհակալութեան զոհ պիտի մատուցանեմ քեզի, Եւ Տէրոջ անունը պիտի կանչեմ:
- 18 Տէրոջ **ըրած** ուխտերս պիտի կատարեմ Իր ամբողջ ժողովուրդին առջեւ,
- 19 Տէրոջ տան գաւիթներուն մէջ, Զո՛ւ մէջդ, ո՛վ Երուսաղէմ: Ալէլուիա՛:

ՓԱՌԱԲԱՆՈՒԹԻՒՆ ԱՍՏՈՒԾՈՅ

117

Գովաբանեցէ՛ք Տէրը, ո՛վ բոլոր ազգեր, Դրուատեցէ՛ք զայն, ո՛վ բոլոր ժողովուրդներ.

- 2 Որովհետեւ անոր կարեկցութիւնը մեծ է մեզի հանդէպ, Ու Տէրոջ ճշմարտութիւնը յաւիտենական է: Ալէլուիա՛:

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԱՂՕԹԸ՝ ՅԱՂԹԱՆԱԿԻ ՀԱՄԱՐ

118

Շնորհակա՛լ եղէք Տէրոջմէն՝ որովհետեւ բարի է, Որովհետեւ անոր կարեկցութիւնը յաւիտենական է:

- 2 Իսրայէլ թող ըսէ. «Անոր կարեկցութիւնը յաւիտենական է»:
- 3 Ահարոնի տունը թող ըսէ.

\* Երբ.՝ ցածցած

«Անոր կարեկցութիւնը յաւիտենական է»:

4 Տէրոջմէն վախցողները թող ըսեն.

«Անոր կարեկցութիւնը յաւիտենական է»:

5 Տագնապի մէջ Տէրոջ գոչեցի,

եւ Տէրը պատասխանեց ինծի՝ ընդարձակ տեղ մը **դնելով զիս**:

6 Տէրը ինծի հետ է, չեմ վախնար.

Մարդը ի՞նչ կրնայ ընել ինծի:

7 Տէրը ինծի հետ է՝ իմ օգնականներու մէջ,

Ու ես՝ ոտխներու **կորուստը** պիտի տեսնեմ:

8 Աւելի լաւ է Տէրոջ ապաւինիլ,

քան թէ մարդոց վստահիլ.

9 Աւելի լաւ է Տէրոջ ապաւինիլ,

քան թէ ազնուականներուն վստահիլ:

10 Բոլոր ազգերը զիս շրջապատած էին.

**Բայց** Տէրոջ անունով զանոնք <sup>բ</sup>ջարդեցի:

11 Զիս շրջապատած էին, զիս <sup>գ</sup>պաշարած էին.

**Բայց** Տէրոջ անունով զանոնք ջարդեցի:

12 Մեղուներու պէս զիս շրջապատած էին,

**Բայց** փուշերու կրակին պէս շիջանեցան.

Արդարեւ Տէրոջ անունով զանոնք ջարդեցի:

13 Սաստիկ հրեցիր զիս՝ որպէսզի իյնամ.

Բայց Տէրը օգնեց ինծի:

14 Տէրը իմ զօրութիւնս ու սաղմոսս է,

եւ իմ փրկութիւնս եղաւ:

15 Արդարներուն <sup>դ</sup>բնակարաններուն մէջ **ցնծութեան ու փրկութեան ձայն կայ.**

Տէրոջ աջ ձեռքը ոյժ կը բանեցնէ:

16 Տէրոջ աջ ձեռքը բարձրացած է.

Տէրոջ աջ ձեռքը ոյժ կը բանեցնէ:

17 Պիտի չմեռնիմ, հապա պիտի ապրիմ,

Որ Տէրոջ գործերը պատմեմ:

18 Տէրը զիս **սաստիկ** պատժեց,

Բայց զիս մահուան չմատնեց:

19 Բացէ՛ք ինծի արդարութեան դռները.

Անոնց մէջ պիտի մտնեմ **ու** Տէրոջ շնորհակալ ըլլամ:

20 Ա՛յս է Տէրոջ դուռը,

Արդարները ասկէ պիտի մտնեն:

21 Շնորհակալ եմ քեզմէ, որ ինծի պատասխանացիր

եւ ինծի փրկութիւնս եղար:

22 Այն քարը՝ որ կառուցանողները <sup>ե</sup>մերժեցին,

---

<sup>ա</sup> Եբբ.՝ զիս ատողներուն

<sup>բ</sup> Եբբ.՝ ծայրատեցի

<sup>գ</sup> Եբբ.՝ շրջապատած

<sup>դ</sup> Եբբ.՝ վրաններուն



«Անկիւնաքարը եղաւ:

23 Ասիկա Տէրոջմէ՛ն եղաւ.

Սքանչելի է մեր աչքերուն:

24 Ահա՛ւասիկ այն օրը՝ որ Տէրը էստեղծեց.

Խայտա՛նք եւ ուրախանա՛նք անոր մէջ:

25 Ո՛վ Տէր, կ'աղերսե՛մ, փրկե՛ հիմա.

Ո՛վ Տէր, կ'աղերսե՛մ, յաջողութի՛նն տուր հիմա:

26 Օրհնեա՛լ ըլլայ ա՛ն՝ որ Տէրոջ անունով կու գայ.

Օրհնաբանեցի՛նք ձեզ Տէրոջ տունէն:

27 Տէրը Աստուած է, ու մեզ կը լուսաւորէ.

«Զոհի անասունը՝ փոկերո՛վ կապեցէք,

Եւ զոհասեղանի եղջիրներո՛նն մօտեցուցէք:

28 Դո՛ն իմ Աստուածս ես, ու քեզմէ շնորհակալ պիտի ըլլամ.

Ո՛վ իմ Աստուածս, քեզ պիտի բարձրացնեմ:

29 Շնորհակալ եղէք Տէրոջմէ՛ն՝ որովհետեւ բարի է,

Որովհետեւ անոր կարեկցութիւնը յաւիտենական է:

ԱՍՏՈՒԾՈՅ ՕՐԷՆԸ<sup>ա</sup>

ԱԼԷՖ

119

Երանի՛ անոնց՝ որ ճամբայով պարկեշտ են,

Որոնք Տէրոջ Օրէնքին համաձայն կ'ընթանան:

2 Երանի՛ անոնց՝ որ անոր վկայութիւնները կը պահեն,

Եւ ամբողջ սիրտով զինք կը փնտռեն.

3 Նաեւ անհրաւութիւն չեն գործեր,

Հապա անոր ճամբաներէն կ'ընթանան:

4 Դուն պատուիրեցիր որ շա՛տ զգուշութեամբ

Քու հրամաններդ պահենք:

5 Երանի՛ թէ ճամբաներս հաստատուին,

Որպէսզի քու կանոններդ պահեմ.

6 Այն ատեն պիտի չամչնամ՝

Երբ քու բոլոր պատուիրաններուդ <sup>բ</sup>ուշադիր ըլլամ՝:

7 Զեզ պիտի ներբողեմ ուղիդ սիրտով,՝

Երբ քու արդար <sup>գ</sup>դատավճիռներդ սորվիմ:

<sup>ա</sup> Կամ՝ անարգեցին

<sup>գ</sup> Եբբ.՝ Անկիւնին գլուխը

<sup>ե</sup> Եբբ.՝ ըրաւ

<sup>բ</sup> Եբբ.՝ Տօնի զոհը

<sup>ա</sup> Այս սաղմոսին 22 հատուածներէն իւրաքանչիւրին 8 համարները կը սկսին նոյն եբրայական գիրով՝ այբուբենական կարգով

<sup>բ</sup> Եբբ.՝ նայիմ

8 Զու կանոններդ պիտի պահեմ.

Զիս Դբնաւ մի՛ լքեր:

ՀՆԱԶԱՆ ԴՈՒԹԻՒՆ ՏԷՐՈՋ ՕՐԷՆԹԻՆ ՊԷԹ

9 Երիտասարդը ի՞նչպէս մաքրէ իր ուղիւն.

Անոր ուշադիր ըլլալով՝ քու խօսքիդ համաձայն:

10 Իմ ամբողջ սիրտովս փնտռեցի քեզ.

Մի՛ թողուր զիս՝ որ քու պատուիրաններէդ մոլորիմ:

11 Իմ սիրտիս մէջ պահեցի քու Էհրամաններդ,

Որպէսզի չմեղանչեմ քեզի դէմ:

12 Դուն օրհնեա՛լ ես, ո՛վ Տէր.

Սորվեցո՛ւր ինծի քու կանոններդ:

13 Իմ շրթունքովս թուեցի

Զու բերանիդ բոլոր դատավճիռները:

14 Զու վկայութիւններուդ ճամբայով բերկրեցայ,

Որպէս թէ ամէն տեսակ փարթամութեամբ:

15 Զու հրամաններուդ մասին պիտի խոկամ,

Եւ քու ուղիներդ պիտի դիտեմ:

16 Զու կանոններովդ պիտի հաճոյանամ,

Ու քու խօսքդ պիտի չմոռնամ:

ԵՐԶԱՆԿՈՒԹԻՒՆ ՏԷՐՈՋ ՕՐԷՆԹԻՆ ՍԷՋ ԿԻՍԷԼ

17 Երախտի՛ք ըրէ քու ծառայիդ,

Որպէսզի ապրիմ եւ քու խօսքդ պահեմ:

18 Բա՛ց իմ աչքերս,

Որպէսզի քու Օրէնքէդ սքանչելիքներ տեսնեմ:

19 Ես պանդուխտ եմ երկրի վրայ.

Մի՛ Գպահեր ինձմէ քու պատուիրաններդ:

20 Իմ անձս կը խորտակուի՝

Ամէն ժամանակ քու դատավճիռներուդ ըղձալէն:

21 Դուն սաստեցիր անիծեալ հպարտները՝

Որոնք քու պատուիրաններէդ կը մոլորին:

22 Էվերցո՛ւր ինձմէ նախատինքն ու արհամարհանքը,

Գ Կամ՝ կանոններդ

Դ Եբբ.՝ բոլորովին

Ե Կամ՝ խօսքերդ

Զ Եբբ.՝ ծածկեր

Է Եբբ.՝ Գլորէ՛

ՍԱՂՄՈՍՆԵՐՈՒ ԳԻՐԸԸ

Քանի քու վկայութիւններդ պահեցի:

- 23 Նոյնիսկ իշխանաւորներ կը նստէին եւ ինծի դէմ կը խօսէին,  
Բայց ծառայ քու կանոններուդ մասին կը խոկար:
- 24 Քու վկայութիւններդ ալ իմ հաճոյքս  
Ու <sup>Բ</sup>խորհրդատուներս են:

ՏԷՐՈՋ ՕՐԷՆՔԻՆ ՀՆԱԶԱՆԴՈՒԹԵԱՆ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ  
ՏԱԼԷԹ

- 25 Իմ անձս հողին կը փակչի.  
Վերապրեցո՛ւր զիս՝ քու խօսքիդ համաձայն:
- 26 Իմ ճամբաներս պատմեցի, ու դուն պատասխանեցիր ինծի.  
Սորվեցո՛ւր ինծի քու կանոններդ:
- 27 <sup>Բ</sup>Գիտցո՛ւր ինծի քու հրամաններուդ ճամբան,  
Եւ քու սքանչելիքներուդ մասին պիտի խոկամ:
- 28 Իմ անձս տրտմութենէն **արցունք** կը <sup>Ժ</sup>թափէ.  
<sup>Ի</sup>Հաստատէ՛ զիս՝ քու խօսքիդ համաձայն:
- 29 Հեռացո՛ւր ինձմէ ստութեան ճամբան,  
Ու շնորհէ՛ ինծի քու Օրէնքդ:
- 30 Հաւատարմութեան ճամբան ընտրեցի,  
Եւ քու դատավճիռներդ **իմ առջեւ** դրի:
- 31 Քու վկայութիւններուդ յարեցայ.  
Ո՛վ Տէր, մի՛ ամչցներ զիս:
- 32 Քու պատուիրաններուդ ճամբային մէջ պիտի վազեմ,  
Որովհետեւ դուն իմ սիրտս պիտի <sup>Լ</sup>սփոփես:

ՀԱՍԿԱՑՈՂՈՒԹԵԱՆ ԱՂՕԹԸ  
ՀԷ

- 33 Ո՛վ Տէր, սորվեցո՛ւր ինծի քու կանոններուդ ճամբան,  
Ու մինչեւ վախճանը պիտի պահեմ զայն:
- 34 Խելացի՛ ըրէ զիս, որպէսզի քու Օրէնքդ պահեմ,  
Եւ ամբողջ սիրտով անոր ուշադիր ըլլամ:
- 35 Առաջնորդէ՛ զիս քու պատուիրաններուդ շաւիղին մէջ,  
Որովհետեւ անկէ կ'ախորժիմ:
- 36 Հակեցո՛ւր իմ սիրտս քու վկայութիւններուդ,  
Եւ ո՛չ թէ ազահութեան:

---

- <sup>Բ</sup> Եբբ.՝ խորհուրդի մարդիկս
- <sup>Բ</sup> Կամ՝ Հասկցո՛ւր
- <sup>Ժ</sup> Եբբ.՝ կաթեցնէ
- <sup>Ի</sup> Կամ՝ Կանգնեցո՛ւր
- <sup>Լ</sup> Եբբ.՝ լայնցնես

ՍԱՂՄՈՍՆԵՐՈՒ ԳԻՐԸԸ

- 37 <sup>Խ</sup> Հեռացո՛ւր աչքերս ունայնութիւն տեսնելէ.  
Վերապրեցո՛ւր զիս քու ճամբայիդ մէջ:
- 38 Հաստատէ՛ քու <sup>ծ</sup>խոստումդ  
Քեզմէ վախցող ծառայիդ հանդէպ:
- 39 Հեռացո՛ւր ինձմէ նախատինքս՝ որմէ կը վախնամ,  
Որովհետեւ քու դատավճիռներդ բարի են:
- 40 Ահա՛ կ'ըղծամ քու հրամաններուդ.  
Վերապրեցո՛ւր զիս քու արդարութեամբդ:

ՎՍՏԱՀՈՒԹԻՒՆ ՏԷՐՈՋ ՕՐԷՆՔԻՆ ՎՐԱՅ  
ՎԱԻ

- 41 Ո՛վ Տէր, քու կարեկցութիւնդ թող գայ իմ վրաս,  
Նաեւ քու փրկութիւնդ՝ քու <sup>Կ</sup>խոստումիդ համաձայն.
- 42 Որպէսզի <sup>Բ</sup>բան մը ունենամ պատասխանելու զիս նախատողին,  
Որովհետեւ քու խօսքիդ կը վստահիմ:
- 43 Ճշմարտութեան խօսքը <sup>Ծ</sup>բնաւ մի՛ <sup>Ղ</sup>հեռացներ իմ բերանէս,  
Քանի քու դատավճիռներուդ կը յուսամ:
- 44 Զու Օրէնքդ շարունակ պիտի պահեմ,  
«Դարէ դար»:
- 45 Ընդարձակ տեղի մէջ պիտի ընթանամ,  
Քանի որ քու հրամաններդ փնտռեցի:
- 46 Թագաւորներու առջեւ պիտի խօսիմ քու վկայութիւններուդ մասին,  
Եւ պիտի չամչնամ:
- 47 Պիտի հաճոյանամ քու պատուիրաններովդ՝  
Որոնք սիրած եմ:
- 48 Ձեռքերս դէպի քու պատուիրաններդ պիտի բարձրացնեմ՝ որոնք սիրած եմ,  
Ու քու կանոններուդ մասին պիտի խոկամ:

ԱՊԱՀՈՎՈՒԹԻՒՆ ՏԷՐՈՋ ՕՐԷՆՔԻՆ ՄԷՋ  
ԶԱՅԻՆ

49 Յիշէ՛ քու ծառայիդ եղած <sup>Մ</sup>խոստումը,

<sup>Խ</sup> Եբբ.՝ Անցո՛ւր

<sup>Ծ</sup> Կամ՝ խօսքդ

<sup>Կ</sup> Կամ՝ խօսքիդ

<sup>Բ</sup> Կամ՝ խօսք

<sup>Ծ</sup> Եբբ.՝ բոլորովին

<sup>Ղ</sup> Եբբ.՝ ազատեր

<sup>Ծ</sup> Եբբ.՝ Յաւիտեանականութենէ յաւիտեանականութիւն

<sup>Մ</sup> Կամ՝ խօսքը

## ՍԱՂՄՈՍՆԵՐՈՒ ԳԻՐԸԸ

Որուն վրայ ինձի յուսալ տուիր.

- 50 Ա՛յս է մխիթարութիւնս՝ իմ տառապանքիս մէջ,  
Որովհետեւ քու խոստումդ զիս վերապրեցուց:
- 51 Հպարտները չափազանց ծաղրեցին զիս,  
**Բայց** ես քու Օրէնքէդ չջեղեցայ:
- 52 Ո՛վ Տէր, քու դարաւոր դատավճիռներդ յիշեցի,  
Ու մխիթարուեցայ:
- 53 Մոլուցքը զիս համակեց այն ամբարիշտներուն համար՝  
Որոնք քու Օրէնքդ կը լքեն:
- 54 Զու կանոններդ ինձի օրհներգեր եղան  
Իմ պանդխտութեանս տան մէջ:
- 55 Ո՛վ Տէր, գիշերը քու անունդ յիշեցի,  
Եւ քու Օրէնքդ պահեցի:
- 56 Ասիկա «պատահեցաւ ինձի»,  
Որովհետեւ քու հրամաններդ պահեցի:

## ՏԵՐՈՋ ՕՐԷՆՔԻՆ ՆՈՒԻՐՈՒՄԸ ԽԷԹ

- 57 **Դո՛ւն ես** իմ բաժինս, ո՛վ Տէր.  
Խոստացայ որ քու խօսքերդ պահեմ:
- 58 Ամբողջ սիրտով <sup>2</sup>քու շնորհքդ խնդրեցի՝.  
Ողորմէ՛ ինձի՝ քու յոստումիդ համաձայն:
- 59 Իմ ճամբաներուս մասին մտածեցի,  
Ու ոտքերս քու վկայութիւններուդ <sup>4</sup>ուղղեցի:
- 60 Զու պատուիրաններդ պահելու  
Արտորացի, եւ չտնտնացի:
- 61 Ամբարիշտներուն լարերը զիս կաշկանդեցին,  
**Բայց** ես քու Օրէնքդ չմոռցայ:
- 62 Կէս գիշերին կ'ելլեմ քեզ ներքողելու՝  
Զու արդար դատավճիռներուդ համար:
- 63 Ես ընկերակիցն եմ բոլոր անոնց՝ որ քեզմէ կը վախնան,  
Ու քու հրամաններդ կը պահեն:
- 64 Ո՛վ Տէր, երկիրը լեցուն է քու կարեկցութեամբդ.  
Սորվեցո՛ւր ինձի քու կանոններդ:

---

<sup>1</sup> Եբր.՝ Կիզումը

<sup>6</sup> Եբր.՝ եղաւ

<sup>2</sup> Եբր.՝ երեսիդ պաղատեցայ

<sup>7</sup> Կամ՝ խօսքիդ

<sup>4</sup> Եբր.՝ դարձուցի

ՏԵՐՈՋ ՕՐԷՆՔԻՆ ԱՐԺԷԸԸ  
ԴԷԹ

- 65 Բարիք ըրիր քու ծառայիդ, ո՛վ Տէր,  
Քու յխոստումիդ համաձայն:
- 66 Սորվեցո՛ւր ինձի դատողութեան ու գիտութեան բարիքները,  
Որովհետեւ քու պատուիրաններուդ վստահեցայ:
- 67 Զանի տառապած չէի՝ կը շմոլորէի,  
Բայց հիմա քու ՚հրամաններդ կը պահեմ:
- 68 Դուն բարի ես, ու բարերար.  
Սորվեցո՛ւր ինձի քու կանոններդ:
- 69 Հպարտները սուտեր հնարեցին ինձի դէմ,  
Բայց ես ամբողջ սիրտովս քու հրամաններդ պիտի պահեմ:
- 70 Անոնց սիրտը ճարպի պէս պարարտացաւ,  
Բայց ես քու Օրէնքովդ հաճոյացայ:
- 71 ՎՆպաստաւոր եղաւ ինձի որ տառապեցայ,  
Որպէսզի քու կանոններդ սորվիմ:
- 72 Քու բերանիդ Օրէնքը ինձի աւելի լաւ է՝  
Զան հազարներով ոսկի եւ արծաթ:

ՏԵՐՈՋ ՕՐԷՆՔԻՆ ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆԸ  
ԵՕՏ

- 73 Քու ձեռքերդ շինեցին ու ՚ձեւակերպեցին զիս.  
Խելացի՛ ըրէ զիս, որպէսզի քու պատուիրաններդ սորվիմ:
- 74 Զեզմէ վախցողները զիս պիտի տեսնեն եւ ուրախանան,  
Որովհետեւ քու ՚խոստումիդ յուսացի:
- 75 Գիտեմ, ո՛վ Տէր, թէ քու դատավճիռներդ արդար են,  
Եւ ՚հրաւունքով տառապեցուցիր զիս:
- 76 Կը խնդրե՛մ, քու կարեկցութիւնդ թող՝ մխիթարէ զիս՝

---

<sup>4</sup> Կամ՝ խօսքիդ

<sup>2</sup> Կամ՝ սխալէի

<sup>2</sup> Կամ՝ խօսքդ

<sup>4</sup> Կամ՝ թանձրացաւ

<sup>4</sup> Եբր.՝ Լաւ

<sup>5</sup> Եբր.՝ պատրաստեցին

<sup>6</sup> Կամ՝ խօսքիդ

<sup>8</sup> Եբր.՝ հաւատարմութեամբ

<sup>4</sup> Եբր.՝ մխիթարութիւն ըլլայ ինձի

ՍԱՂՄՈՍՆԵՐՈՒ ԳԻՐԸԸ

Զու ծառայիդ տուած խոստումիդ համաձայն:

- 77 Զու գթութիւններդ թող գան իմ վրաս՝ որպէսզի ապրիմ, Որովհետեւ քու Օրէնքդ իմ հաճոյքս է:
- 78 Հպարտները պիտի ամչնան,  
Զանի ընդունայն անիրաւութիւն գործեցին ինծի դէմ.  
**Բայց** ես քու հրամաններուդ մասին պիտի խոկամ:
- 79 Ինծի թող դառնան քեզմէ վախցողները,  
Եւ քու վկայութիւններդ գիտցողները:
- 80 Իմ սիրտս թող պարկեշտ ըլլայ քու կանոններուդ մէջ,  
Որպէսզի չամչնամ:

ԱՂՕԹՔ՝ ՓՐԿՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ  
ԸԱՅ

- 81 Իմ անձս կը <sup>փ</sup>նուաղի քու փրկութեանդ **սպասելէն**.  
Ես կը յուսամ քու <sup>բ</sup>խոստումիդ:
- 82 Իմ աչքերս կը նուաղին քու խոստումիդ համար,  
Ու կ'ըսեմ. «Ե՞րբ պիտի մխիթարես զիս»:
- 83 Արդարեւ ես ծուխի մէջ **դրուած** տիկի պէս եղայ,  
**Բայց** քու կանոններդ չմոռցայ:
- 84 Ո՞րչափ են քու ծառայիդ օրերը.  
Ե՞րբ օդատավճիռ պիտի արձակես՝ զիս հալածողներուն դէմ:
- 85 Հպարտները փոսեր փորեցին ինծի համար,  
Ինչ որ քու Օրէնքիդ համաձայն չէ:
- 86 Զու բոլոր պատուիրաններդ հաւատարմութիւն են:  
Օգնէ՛ ինծի. ընդունայն զիս կը հալածեն:
- 87 Զիչ մնաց որ զիս սպառէին երկրի վրայ,  
Բայց ես քու հրամաններդ չլքեցի:
- 88 Վերապրեցո՛ւր զիս՝ քու կարեկցութեանդ համեմատ,  
Ես ալ քու բերանիդ վկայութիւնը պիտի պահեմ:

ՀԱԻԱՏԱՐՄՈՒԹԻՒՆ ՏԵՐՈՋ ՕՐԷՆՔԻՆ  
ԼԱՍԷՏ

- 89 Ո՛վ Տէր, քու խօսքդ  
Յաւիտենապէս հաստատուած է երկինքի մէջ:
- 90 Զու հաւատարմութիւնդ սերունդէ սերունդ **կը տեւէ**:  
Դո՛ւն հաստատեցիր երկիրը, ու կը գոյատեւէ:
- 91 Զու կանոններուդ համաձայն կը կենան **մինչեւ** այսօր.  
Որովհետեւ բոլորը քու ծառաներդ են:
- 92 Եթէ քու Օրէնքդ իմ հաճոյքս չըլլար,

---

<sup>փ</sup> **Եբր.**՝ սպառի  
<sup>բ</sup> **Կամ**՝ խօսքիդ  
<sup>օ</sup> **Եբր.**՝ դատաստան պիտի ընես

ՍԱՂՄՈՍՆԵՐՈՒ ԳԻՐԸԸ

Կորսուած պիտի ըլլայի իմ տառապանքիս մէջ:

- 93 Զու հրամաններդ երբեք պիտի չմոռնամ,  
Զանի որ անոնցմո՛վ վերապրեցուցիր զիս:
- 94 Ես քուկդ եմ, փրկէ՛ զիս,  
Որովհետեւ քու հրամաններդ փնտռեցի:
- 95 Ամբարիշտները ինծի սպասեցին՝ որ զիս կորսնցնեն,  
**Բայց** ես քու վկայութիւններուդ <sup>Ֆ</sup>ուշադրութիւն պիտի դարձնեմ՝:
- 96 Տեսայ թէ ամէն կատարելութիւն վախճան **ունի**.  
**Մինչդէռ** քու պատուիրանդ չափազանց ընդարձակ է:

ՍԷՐ ՏԷՐՈՋ ՕՐԷՆՔԻՆ ՀԱՆԴԵՊ  
ՍԷՄ

- 97 Ո՛րչափ կը սիրեմ քու Օրէնքդ.  
Ա՛ն է ամէն օր իմ խոկումս:
- 98 Զու պատուիրաններդ զիս թշնամիներէս անելի իմաստուն ըրից,  
Զանի որ անոնք միշտ իմ քովս են:
- 99 Բոլոր ուսուցիչներէս անելի ուշիմ եղայ,  
Որովհետեւ քու վկայութիւններդ իմ խոկումս են:
- 100 Երէցներէն անելի խելացի եղայ,  
Զանի որ քու հրամաններդ պահեցի:
- 101 Ոտքերս ամէն գէշ ուղիէ <sup>Մ</sup>հեռացուցի,  
Որպէսզի քու խօսքդ պահեմ:
- 102 Զու դատավճիռներէդ չշեղեցայ,  
Որովհետեւ դո՛ւն սորվեցուցիր ինծի:
- 103 Ո՛րչափ քաղցր է քու <sup>Բ</sup>խօսքդ իմ քիմքիս,  
Մեղրէն անելի **անոյշ է** իմ բերանիս:
- 104 Զու հրամաններովդ խելացի եղայ.  
Հետեւաբար <sup>Գ</sup>ստութեան ամէն ուղի ատեցի:

ԼՈՅՍ՝ ՏԷՐՈՋ ՕՐԷՆՔԷՆ  
ՆՈՒՆ

- 105 Զու խօսքդ իմ ոտքերուս ճրագ է,  
Եւ իմ շաւիղներուս՝ լոյս:
- 106 Երդում ըրի – ու պիտի կատարեմ –  
Որ քու արդար դատավճիռներդ պահեմ:
- 107 Չափազանց տառապեցայ, ո՛վ Տէր.  
Վերապրեցո՛ւր զիս՝ քու <sup>Դ</sup>խոստումիդ համաձայն:

<sup>Ֆ</sup> Եբր.՝ մասին պիտի մտածեմ

<sup>Մ</sup> Եբր.՝ արգիլեցի

<sup>Բ</sup> Կամ՝ հրամաններդ

<sup>Գ</sup> Կամ՝ կեղծիքի



ՍԱՂՄՈՍՆԵՐՈՒ ԳԻՐԸԸ

- 108 Կ'աղերսեմ, ո՛վ Տէր, հաւանէ՛ բերանիս յօժարակամ ընծաներուն,  
Ու սորվեցո՛ւր ինծի քու դատավճիռներդ:
- 109 Իմ <sup>Ե</sup>կեանքս շարունակ կը վտանգեմ՝,  
Բայց քու Օրէնքդ չեմ մոռնար:
- 110 Ամբարիշտները վարմ դրին ինծի համար,  
Բայց ես քու հրամաններէդ չմոլորեցայ:
- 111 Զու վկայութիւններդ իմ յաւիտենական ժառանգութիւնս են,  
Որովհետեւ անոնք սիրտիս բերկրանքն են:
- 112 Հակեցուցի իմ սիրտս, որպէսզի քու կանոններդ գործադրեմ  
Յաւիտեան՝ մինչեւ վախճանը:

ԱՊԱՀՈՎՈՒԹԻՒՆ՝ ՏԷՐՈՋ ՕՐԷՆԵՒՆ ՄԷՋ  
ՍԱՍԷԽ

- 113 Երկմիտները կ'ատեմ,  
Բայց քու Օրէնքդ կը սիրեմ:
- 114 Դո՛ւն ես իմ <sup>Գ</sup>պատուպարանս ու վահանս.  
Ես քու <sup>Ե</sup>խոստումիդ կը յուսամ:
- 115 Հեռացէ՛ք ինձմէ, ո՛վ չարագործներ,  
Քանի ես իմ Աստուծոյս պատուիրանները պիտի պահեմ:
- 116 Նեցո՛ւկ եղիր ինծի՝ քու <sup>Բ</sup>խոստումիդ համաձայն, որպէսզի ապրիմ.  
Զիս մի՛ ամչցներ իմ յոյսէս:
- 117 Կազդուրէ՛ զիս՝ որպէսզի ապրիմ,  
Եւ շարունակ <sup>Ք</sup>ուշադիր ըլլամ՝ քու կանոններուդ:
- 118 Տապալեցիր բոլոր անոնք՝ որ քու կանոններէդ մոլորեցան,  
Քանի որ անոնց խաբէութիւնը կեղծիք է:
- 119 Դուն <sup>Ժ</sup>խարամի պէս <sup>Ի</sup>հանեցիր երկրի բոլոր ամբարիշտները.  
Հետեւաբար ես կը սիրեմ քու վկայութիւններդ:
- 120 Իմ մարմինս դողաց քու երկիւղէդ,  
Ու ես վախցայ քու դատավճիռներէդ:

ՀՆԱԶԱՆ ԴՈՒԹԻՒՆ ՏԷՐՈՋ ՕՐԷՆԵՒՆ

- 
- <sup>Դ</sup> Կամ՝ խօսքիդ
  - <sup>Ե</sup> Եբր.՝ շունչս շարունակ ափիս մէջ է
  - <sup>Գ</sup> Եբր.՝ ծածկոյթս
  - <sup>Ե</sup> Կամ՝ խօսքիդ
  - <sup>Ը</sup> Կամ՝ խօսքիդ
  - <sup>Ք</sup> Եբր.՝ նայուածքս դարձնեմ
  - <sup>Ժ</sup> Այսինքն՝ հալած մետաղի կեղտի
  - <sup>Ի</sup> Եբր.՝ դադրեցուցիր

- 121 Իրաւունք եւ արդարութիւն կիրարկեցի,  
Զիս մի՛ւլքեր իմ հարստահարիչներուս:
- 122 Երաշխաւոր եղիր քու ծառայիդ բարօրութեան.  
Հպարտները թող չհարստահարեն զիս:
- 123 Աչքերս նուաղեցան քու փրկութեանդ  
Ու քու արդարութեանդ <sup>Խ</sup>խոստումին **սպասելէն:**
- 124 Զու կարեկցութեանդ համեմատ վարուէ ծառայիդ հետ,  
Եւ սորվեցո՛ւր ինձի քու կանոններդ:
- 125 Ես քու ծառայ եմ. խելացի՛ ըրէ զիս,  
Որպէսզի քու վկայութիւններդ գիտնամ:
- 126 Ժամանակն է որ Տէրը գործէ,  
**Որովհետեւ** քու Օրէնքդ <sup>Ծ</sup>անտեսեցին:
- 127 Հետեւաբար քու պատուիրաններդ  
Ոսկիէն ու գուտ ոսկիէն աւելի կը սիրեմ.
- 128 Ուստի **քու** բոլոր հրամաններդ ամէն **կերպով** ուղիղ կը համարեմ,  
Եւ <sup>Կ</sup>ստութեան ամէն ուղի կ'ատեմ:

**ՏԵՐՈՋ ՕՐԷՆՔԻՆ ՀՆԱԶԱՆԴԵԼՈՒ ՓԱՓԱՔ  
ՓԷ**

- 129 Զու վկայութիւններդ սքանչելի են,  
Հետեւաբար իմ անձս զանոնք կը պահէ:
- 130 Զու խօսքերուդ <sup>Դ</sup>յայտնութիւնը կը լուսաւորէ,  
Ու միամիտները խելացի կ'ընէ:
- 131 Իմ բերանս բացի եւ հեւացի,  
Որովհետեւ քու պատուիրաններուդ կ'ըղծամ:
- 132 Նայէ՛ ու ողորմէ՛ ինձի,  
Ինչպէս սովորաբար **կ'ընես** քու անունդ սիրողներուն:
- 133 Հաստատէ՛ իմ քայլերս քու <sup>Ձ</sup>հրամաններուդ մէջ.  
Ո՛չ մէկ անօրէնութիւն թող տիրէ ինձի:
- 134 Փրկէ՛ զիս մարդոց հարստահարութենէն,  
Որ քու հրամաններդ պահեմ:
- 135 <sup>Պ</sup>Պայծառացո՛ւր երեսդ քու ծառայիդ վրայ,

---

- <sup>1</sup> Եբր.՝ ձգեր
- <sup>Խ</sup> Կամ՝ խօսքիւն
- <sup>Ծ</sup> Եբր.՝ խզեցին
- <sup>Կ</sup> Կամ՝ կեղծիքի
- <sup>Դ</sup> Եբր.՝ մուտքը
- <sup>Ձ</sup> Կամ՝ խօսքիդ

Եւ սորվեցո՛ւր ինձի քու կանոններդ:

136 Զուրի առուներ կ'իջնեն իմ աչքերէս,  
Զանի որ **մարդիկ** քու Օրէնքդ չեն պահեր:

ՏԷՐՈՋ ՕՐԷՆՔԻՆ ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆԸ  
ՅԱՏԷ

- 137 Դուն արդար ես, ո՛վ Տէր,  
Եւ քու դատավճիռներդ ուղիղ են:
- 138 Զու պատուիրած վկայութիւններդ  
Արդար ու յոյժ հաւատարիմ են:
- 139 Իմ նախանձախնդրութիւնս զիս փճացուց,  
Որովհետեւ իմ հակառակորդներս քու խօսքերդ մոռցան:
- 140 Զու խօսքդ յոյժ ճիշտ է,  
Ուստի քու ծառայ գայն կը սիրէ:
- 141 Ես փոքր եւ արհամարհուած եմ,  
**Բայց** քու հրամաններդ չմոռցայ:
- 142 Զու արդարութիւնդ յաւիտենական արդարութիւն է,  
Եւ քու Օրէնքդ ճշմարտութիւն է:
- 143 Տագնապն ու տուայտանքը զիս գտան,  
**Բայց** քու պատուիրաններդ իմ հաճոյքս են:
- 144 Զու վկայութիւններուդ արդարութիւնը յաւիտենական է.  
Խելացի՛ ըրէ զիս, եւ պիտի ապրիմ:

ԱՂՕԹԸ՝ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ  
ԳՕՅ

- 145 Ամբողջ սիրտով գոչեցի.  
Ո՛վ Տէր, պատասխանէ՛ ինձի, **ու** քու կանոններդ պիտի պահեմ:
- 146 Զեզի՛ գոչեցի, փրկէ՛ զիս,  
Ու քու վկայութիւններդ պիտի պահեմ:
- 147 Այգաբացը կանխեցի եւ աղաղակեցի.  
Զու ՝խոստումիդ յուսացի:
- 148 **Գիշերուան**՝ պահերէն առաջ բացուեցան՝ աչքերս՝  
Զու ՝հրամաններուդ մասին խոկալու համար:
- 149 Լսէ՛ իմ ձայնս՝ քու կարեկցութեանդ համեմատ, ո՛վ Տէր.  
Վերապրեցո՛ւր զիս՝ քու կանոններուդ համաձայն:

---

<sup>2</sup> Եբբ.՝ Լուսաւորէ՛

<sup>6</sup> Եբբ.՝ գտուած

<sup>5</sup> Կամ՝ խօսքիդ

<sup>1</sup> Եբբ.՝ պահերը կանխեցիս

<sup>6</sup> Կամ՝ խօսքերուդ

- 150 **Ինծի** կը մօտենան լրբութեան հետամուտ եղողները,  
Որոնք քու Օրէնքէդ հեռացած են:
- 151 **Բայց**, ո՛վ **Տէր**, դուն **իմ** մօտս ես,  
Եւ քու բոլոր պատուիրաններդ ճշմարտութիւն են:
- 152 Վաղուց գիտեմ թէ քու վկայութիւններդ  
՝Յաւիտենապէս հաստատած ես՝:

ՕԳՆՈՒԹԵԱՆ ԱՂԵՐՍ  
ԲԷՇ

- 153 Տե՛ս իմ տառապանքս եւ ազատէ՛ զիս,  
Որովհետեւ քու Օրէնքդ չմոռցայ:
- 154 Պաշտպանէ՛ իրաւունքս ու փրկէ՛ զիս,  
Վերապրեցո՛ւր զիս՝ քու ՚խոստումիդ համաձայն:
- 155 Փրկութիւնը հեռու է ամբարիշտներէն,  
Զանի որ քու կանոններդ չեն փնտռեր:
- 156 Ո՛վ **Տէր**, քու գթութիւններդ բազմաթիւ են,  
Վերապրեցո՛ւր զիս՝ քու կանոններուդ համաձայն:
- 157 Բազմաթիւ են իմ հալածիչներս ու հակառակորդներս.  
Բայց ես քու վկայութիւններէդ չջեղեցայ:
- 158 Անհաւատարիմները տեսայ եւ զգուեցայ,  
Որովհետեւ անոնք քու չհրամաններդ չէին պահեր:
- 159 Նայէ՛ թէ ո՛րքան կը սիրեմ քու հրամաններդ, ո՛վ **Տէր**.  
Վերապրեցո՛ւր զիս՝ քու կարեկցութեանդ համեմատ:
- 160 Զու խօսքիդ <sup>ա</sup>սկզբունքը ճշմարտութիւն է,  
Ու բոլոր արդար դատավճիռներդ յաւիտենական են:

ԸՆԾԱՅՈՒՄ ՏԷՐՈՋ ՕՐԷՆՔԻՆ  
ՇԻՆ

- 161 Իշխանաւորները առանց <sup>բ</sup>պատճառի զիս հալածեցին,  
Բայց իմ սիրտս **միայն** քու խօսքէդ կը վախնայ:
- 162 Ես կը բերկրիմ քու <sup>ն</sup>հրամաններովդ՝  
Շատ աւար գտնողի պէս:
- 163 Ստութիւնը կ'ատեմ, եւ անկէ կը գարշիմ.

<sup>2</sup> **Եբր.**՝ Զանոնք յաւիտենապէս հիմնած ես

<sup>ն</sup> **Կամ**՝ խօսքիդ

<sup>է</sup> **Կամ**՝ խօսքդ

<sup>ա</sup> **Եբր.**՝ գլուխը

<sup>բ</sup> **Եբր.**՝ վճարումի

<sup>ն</sup> **Կամ**՝ խօսքերովդ

Զու Օրէնքդ կը սիրեմ:

- 164 Օրը եօթը անգամ կը գովաբանեմ քեզ՝  
Զու արդար դատավճիռներուդ համար:
- 165 Զու Օրէնքդ սիրողները յորդառատ խաղաղութիւն ունին.  
Անոնց համար՝ սայթաքում չկայ:
- 166 Ո՛վ Տէր, քու փրկութեանդ յուսացի,  
Եւ քու պատուիրաններդ գործարեցի:
- 167 Իմ անձս քու վկայութիւններդ պահեց.  
Ես գանոնք շատ կը սիրեմ:
- 168 Զու հրամաններդ ու վկայութիւններդ պահեցի,  
Զանի որ իմ բոլոր ճամբաներս քու առջեւ եմ:

ԱՂՕԹԸ՝ ՕԳՆՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ  
ԹԱԻ

- 169 Ո՛վ Տէր, իմ՝ պաղատանքս թող ներկայանայ քու առջեւ.  
Խելացի՛ ըրէ զիս՝ քու ՝խոստումիդ համաձայն:
- 170 Իմ աղաչանքս թող հասնի քու առջեւ.  
Ազատէ՛ զիս՝ քու խոստումիդ համաձայն:
- 171 Իմ շրթունքս գովաբանութիւն պիտի արտայայտէ,  
Որովհետեւ քու կանոններդ սորվեցուցիր ինձի:
- 172 Իմ լեզուս քու ՝հրամաններդ պիտի՝ ցայտարարէ,  
Զանի որ քու բոլոր պատուիրաններդ արդար եմ:
- 173 Զու ձեռքդ թող օգնական ըլլայ ինձի,  
Որովհետեւ քու հրամաններդ նախընտրեցի:
- 174 Ո՛վ Տէր, քու փրկութեանդ կ'ըղծամ,  
Եւ քու Օրէնքդ իմ հաճոյքս է:
- 175 Իմ անձս թող ապրի ու քեզ գովաբանէ,  
Եւ քու դատավճիռներդ թող օգնեն ինձի:
- 176 Կորսուած ոչխարի պէս կը դեգերիմ.  
Փնտռէ՛ քու ծառայ, որովհետեւ քու պատուիրաններդ չմոռցայ:

ԱՂՕԹԸ՝ ՕԳՆՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ  
՝Աստիճաններուն երգը:

120

- <sup>u</sup> Եբբ.՝ խոչընդոտ
- <sup>v</sup> Եբբ.՝ ճիչս
- <sup>w</sup> Կամ՝ խօսքիդ
- <sup>x</sup> Կամ՝ խօսքդ
- <sup>y</sup> Եբբ.՝ խօսի
- <sup>z</sup> Կամ՝ Ուխտաւորներուն

Իմ տագնապիս մէջ Տէրոջ գոչեցի,  
Ան ալ պատասխանեց ինծի:

2 Ո՛վ Տէր, ազատէ՛ իմ անձս ստախօս շրթունքէն  
Ու խաբերայ լեզուէն:

3 Բ՛ն՛վ խաբերայ լեզու, քեզի ի՞նչ պիտի տրուի,  
Կամ քեզի ի՞նչ պիտի անելցուի՞...-

4 Զօրաւոր մարդուն սուր նետերը,  
Ու գիհիին կայծերը:

5 Վա՛յ ինծի՛ որ Մոսոքի մէջ պանդխտացայ,  
Եւ Կեդարի վրաններուն քով բնակեցայ:

6 Երկար ժամանակ իմ անձս բնակեցաւ  
Խաղաղութիւնը ատողներուն հետ:

7 Ես խաղաղութիւնը կը սիրէի.  
Բայց երբ կը խօսէի այդ մասին, անոնք պատերազմի կողմնակից էին:

ՏԷՐԸ՝ ՄԵՐ ՊԱՇՏՊԱՆԸ  
Աստիճաններուն երգը:

121

Աչքերս դէպի լեռները կը վերցնեմ.  
Ուրկէ՞ պիտի գայ իմ օգնութիւնս:

2 Իմ օգնութիւնս Տէրոջմէ՛ն է,  
Որ երկինքն ու երկիրը ստեղծեց:

3 Ան պիտի չթոյլատրէ որ քու ոտքդ սահի.  
Քու Պահապանդ պիտի չմրափէ:

4 Ահա՛ Իսրայէլի Պահապանը  
Ո՛չ կը մրափէ, ո՛չ կը քնանայ:

5 Տէրը քու պահապանդ է.  
Տէրը քու հովանիդ է՝ աջ ձեռքիդ քով:

6 Յերեկը արեւը քեզ պիտի չզարնէ,  
Ո՛չ ալ գիշերը՝ լուսինը:

7 Տէրը քեզ ամէն չարիքէ պիտի պահպանէ.  
Քու անձդ պիտի պահպանէ:

8 Տէրը քու թելքդ ու մուտքդ՝ պիտի պահպանէ՝  
Հիմա եւ յաւիտեան:

ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՓԱՌՔԸ  
Դաւիթի աստիճաններուն երգը:

122

Ուրախացայ երբ ինծի ըսին.

<sup>բ</sup> Կամ՝ Խաբերայ լեզուն քեզի ի՞նչ կու տայ, կամ քեզի ի՞նչ կ'անելցնէ

<sup>ւ</sup> Եբբ.՝ ըրաւ

<sup>բ</sup> Եբբ.՝ երթդ ու դարձդ

«Երթա՛նք Տէրոջ տունը»:

- 2 Մեր ոտքերը քու դռներուդ մէջ պիտի կայնին,  
Ո՛վ Երուսաղէմ:
- 3 Երուսաղէմ կառուցանուած է քաղաքի մը պէս,  
Որուն մասերը իրարու կցուած են:
- 4 Հոն կը բարձրանան տոհմերը, Տէրոջ տոհմերը,  
Իսրայէլի «պատուիրածին համաձայն»,  
Տէրոջ անունը ներբողելու համար.
- 5 Որովհետեւ հոն դրուած են դատաստանի գահերը,  
Դաւիթի տան գահերը:
- 6 Խաղաղութի՛ն խնդրեցէք Երուսաղէմի համար.  
Անդորրութիւն թող ունենան քեզ սիրողները:
- 7 Խաղաղութիւն թող ըլլայ պատուարներուդ մէջ,  
Նաեւ անդորրութիւն՝ պալատներուդ մէջ:
- 8 Իմ եղբայրներուս եւ ընկերներուս համար՝  
Հիմա պիտի ըսեմ. «Խաղաղութի՛ն ըլլայ քու մէջդ»:
- 9 Տէրոջ՝ մեր Աստուծոյն տան պատճառով  
Քու բարօրութիւնդ պիտի բուզեմ:

ԱՂՕԹԸ՝ ՈՂՈՐՄՈՒԹԻՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ  
Աստիճաններուն երգը:

123

Աչքերս քեզի՛ կը վերցնեմ,  
Ո՛վ երկինքի մէջ Բնակող:

- 2 Ահա՛ ինչպէս ստրուկներուն աչքերը իրենց տէրերուն ձեռքին կը նային,  
Եւ ինչպէս ստրկուհիին աչքերը՝ իր տիրուհիին ձեռքին,  
Այնպէս ալ մեր աչքերը Տէրոջ՝ մեր Աստուծոյն պիտի նային,  
Մինչեւ որ մեզի ողորմի:
- 3 Ողորմէ՛ մեզի, ո՛վ Տէր, ողորմէ՛ մեզի,  
Որովհետեւ յոյժ՝ յազեցանք արհամարհանքէն.
- 4 Մեր անձը յոյժ յազեցած է անխռով ապրողներուն ծաղրանքէն,  
Եւ կեղեքողներուն արհամարհանքէն:

ԱՍՏՈՒԱԾ՝ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ՊԱՀԱՊԱՆԸ  
Դաւիթի աստիճաններուն երգը:

124

Եթէ Տէրը մեզի հետ չըլլար,  
– Հիմա Իսրայէլ թող ըսէ –,

- 2 Եթէ Տէրը մեզի հետ չըլլար

<sup>ա</sup> Եբր.՝ վկայութեան

<sup>բ</sup> Եբր.՝ փնտռեմ

<sup>ա</sup> Եբր.՝ կշտացանք

- Երբ մարդիկ մեզի դեմ կանգնեցան,
- 3 Այն ատեն ողջ-ողջ պիտի կլլէին մեզ,  
Երբ անոնց բարկութիւնը մեր վրայ բորբոքած էր:
- 4 Այն ատեն ջուրերը մեզ պիտի ընկղմէին,  
Վտակը մեր անձերուն վրայէն պիտի անցնէր.
- 5 Այն ատեն՝ փրփրած ջուրերը  
Մեր անձերուն վրայէն պիտի անցնէին:
- 6 Օրհնեա՛լ ըլլայ Տէրը,  
Որ մեզ անոնց ակռաներուն չմատնեց **իր** որս:
- 7 Մեր անձերը ճնճողուկի պէս խոյս տուին թռչնորսներուն վարմէն.  
Վարմը՝ պատռեցաւ եւ մենք խոյս տուինք:
- 8 Մեր օգնութիւնը Տէրոջ անունովն է,  
Որ երկինքն ու երկիրը՝ Գստեղծեց:

ԱՍՏՈՒԾՈՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ԱՊԱՀՈՎՈՒԹԻՒՆԸ  
Աստիճաններուն երգը:

125

- Տէրոջ վստահողները Սիոն լերան պէս են,  
**Որ** չ'երերար, **հապա** յաւիտեան կը կենայ:
- 2 **Ինչպէս** Երուսաղէմ լեռներով շրջապատուած է,  
**Նոյնպէս** Տէրը իր ժողովուրդին շուրջն է  
Հիմա եւ յաւիտեան:
- 3 Արդարեւ ամբարիշտին գաւազանը արդարներուն վիճակին վրայ պիտի՝ չմնայ,  
Որպէսզի արդարները իրենց ձեռքերը անհրաւութեան չերկարեն:
- 4 Ո՛վ Տէր, բարի՛ք ըրէ բարիներուն  
Եւ սիրտով ուղիղներուն:
- 5 Իսկ անոնք որ իրենց ծուռ ճամբաներուն մէջ կը խոտորին,  
Տէրը զիրենք պիտի՝ կորսնցնէ՝ անօրէնութիւն գործողներուն հետ:  
Խաղաղութիւն ըլլայ Իսրայէլի վրայ:

ԱՂՕԹԸ՝ ՓՐԿՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ  
Աստիճաններուն երգը:

126

Երբ Տէրը Սիոնի գերիները վերադարձուց,  
՝Երազ տեսնողներու՝ պէս եղանք:

---

- <sup>ա</sup> Եբբ.՝ հպարտ
- <sup>բ</sup> Եբբ.՝ կոտորեցաւ
- <sup>գ</sup> Եբբ.՝ ըրաւ
- <sup>ա</sup> Եբբ.՝ չդրուի
- <sup>բ</sup> Եբբ.՝ տանի
- <sup>ա</sup> Կամ՝ Առողջացողներու



- 2 Այն աստեն մեր բերանը ծիծաղով լեցուեցաւ,  
Ու մեր լեզուն՝ ցնծերգով:  
Այն աստեն հեթանոսներուն մէջ ըսին.  
«Տէրը անոնց համար մեծագործութիւններ կատարեց»:
- 3 Տէրը մեզի համար մեծագործութիւններ կատարեց,  
Եւ մենք ուրախացանք:
- 4 Ո՛վ Տէր, վերադարձո՛ւր մեր գերիները՝  
Հարաւի վտակներուն պէս:
- 5 Անոնք որ արցունքով կը սերմանեն՝  
Յնծութեամբ պիտի հնձեն.
- 6 Ան որ լալով կ'երթայ՝  
Յանելիք սերմը տանելով,  
Անշուշտ ցնծութեամբ պիտի վերադառնայ՝  
Իր **ցորենի** որաները բերելով:

ԱՍՏՈՒԾՈՅ ԲԱՐՈՒԹԵԱՆ ՓԱՌԸԸ  
Սողոմոնի աստիճաններուն երգը:

# 127

- Եթէ Տէրը չկառուցանէ տունը,  
Ընդունայն կ'աշխատին զայն կառուցանողները.  
Եթէ Տէրը չպահպանէ քաղաքը,  
Ընդունայն կը հսկեն պահապանները:
- 2 Ընդունայն է ձեզի համար կանուխ ելլելը, ուշ՝ պառկիլը,  
Ու <sup>բ</sup>տքնելով հաց ուտելը.  
Արդարեւ ան իր սիրելիին քունի **մէջ նոյնքան** կու տայ:
- 3 Ահա՛ որդիները Տէրոջ ժառանգութիւնն են.  
Պրովայնի պտուղը **անոր** <sup>դ</sup>վարձատրութիւնն է:
- 4 Ինչպէս են նետերը զօրաւոր **մարդուն** ձեռքին մէջ,  
Այնպէս են երիտասարդութեան որդիները:
- 5 Երանի՛ այն <sup>ե</sup>մարդուն՝  
Որ իր կապարճը անոնցմով լեցուցած է.  
Պիտի չամչնան՝  
Երբ դրան մէջ թշնամիներուն հետ խօսին:

ՏԷՐՈՋ ՀՆԱԶԱՆ ԴՈՒԹԵԱՆ ՎԱՐՉԱՏՐՈՒԹԻՒՆԸ  
Աստիճաններուն երգը:

<sup>ա</sup> Եբր.՝ նստիլը

<sup>բ</sup> Եբր.՝ տքնութեան

<sup>գ</sup> Եբր.՝ Փորի

<sup>դ</sup> Եբր.՝ վարձքն

<sup>ե</sup> Եբր.՝ զօրաւոր **մարդուն**

# 128

- Երանի՜ բոլոր անոնց՝ որ Տէրոջմէն կը վախնան,  
Եւ անոր ճամբաներէն կ'ընթանան:
- 2 Արդարեւ քու ձեռքիդ վաստակէն պիտի ուտես.  
Երանի՜ քեզի, բարօրութիւն պիտի ունենաս:
- 3 Զու կի՞նդ պտղաբեր որթատունկի մը պէս պիտի ըլլայ  
«Տունէդ ներս»,  
Ու քու որդիներդ ձիթենիի տունկերու պէս պիտի ըլլան  
Սեղանիդ շուրջը:
- 4 Ահա՛ ա՛յսպէս պիտի օրհնուի  
Տէրոջմէն վախճող <sup>բ</sup>մարդը:
- 5 Տէրը օրհնէ քեզ Սիոնէ,  
Ու Երուսաղէմի բարօրութիւնը տեսնես  
Կեանքիդ բոլոր օրերուն մէջ.
- 6 Նաեւ քու որդիներուդ որդիները տեսնես:  
Խաղաղութիւն ըլլայ Իսրայէլի վրայ:

ԱՂՕԹԸ՝ ԻՍՐԱՅԷԼԻ ԹՇՆԱՄԻՆԵՐՈՒՆ ԴԷՄ  
Աստիճաններուն երգը:

# 129

- Իմ մանկութեանէս ի վեր յաճախ զիս ճնշեցին,  
– Հիմա Իսրայէլ թող ըսէ –,
- 2 Իմ մանկութեանէս ի վեր յաճախ զիս ճնշեցին,  
Բայց ինձի չյաղթեցին:
- 3 Հերկողները իմ կռնակս հերկեցին  
Եւ իրենց ակօսները երկարեցին:
- 4 Տէրը արդար է.  
Ան ամբարիշտներուն փոկերը կտրեց:
- 5 Բոլոր Սիոնը ատողները  
Պիտի ամչնան եւ ընկրկին.
- 6 Տանիքներու վրայի խոտին պէս պիտի ըլլան,  
Որ դեռ «չփրցուած կը չորնայ:
- 7 Անով հնձողը չի կրնար իր ձեռքը լեցնել,  
Ո՛չ ալ որայ կապողը՝ իր գոգը:
- 8 Անցորդները չեն ըսեր.  
«Տէրոջ օրհնութիւնը ձեր վրայ ըլլայ.  
Չեզ Տէրոջ անունով կ'օրհնենք»:

ԱՂՕԹԸ՝ ՕԳՆՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

<sup>ա</sup> Եբր.՝ Տանդ ներսի կողմերը

<sup>բ</sup> Եբր.՝ գօրաւոր մարդը

<sup>ա</sup> Եբր.՝ չքաշուած

130

Խորունկ տեղերէն քեզի գոչեցի, ո՛վ Սէր:

2 Տէր, լսէ՛ իմ ձայնս.

Քու ականջներդ թող մտիկ ընեն աղաչանքիս ձայնը:

3 Ո՛վ Քէր, եթէ անօրէնութիւնները <sup>գ</sup>յիշես,

Տէր, ո՞վ պիտի գոյատեւէ:

4 Բայց քու քովդ է ներումը,

Որպէսզի քեզմէ վախճան:

5 Ես <sup>Դ</sup>Տէրոջ կը սպասեմ. իմ անձս կը սպասէ,

Եւ անոր <sup>Ե</sup>խոստումին կը յուսամ:

6 Իմ անձս Տէրոջ կը սպասէ

Առտուան սպասող պահապաններէն, առտուան սպասող պահապաններէն աւելի:

7 Իսրայէլ Տէրոջ թող յուսայ,

Որովհետեւ Տէրոջ քով կարեկցութիւն կայ.

Անոր քով յորդառատ փրկութիւն կայ:

8 Ա՛ն պիտի փրկէ Իսրայէլը

Իր բոլոր անօրէնութիւններէն:

ԱՂՕԹ՝ ԿԱՏԱՐԵԱԼ ՎՍՏԱՀՈՒԹԵԱՆ

Դաւիթի աստիճաններուն երգը:

131

Ո՛վ Տէր, իմ սիրտս չխրոխտացաւ,

Եւ աչքերս չգոռոզացան.

Ես մեծագործութիւններու,

Ինձմէ բարձր սքանչելիքներու <sup>Մ</sup>հետամուտ չեղայ՝:

2 Հապա իմ անձս <sup>Բ</sup>հանդարտեցուցի եւ <sup>Գ</sup>հանգստացուցի՝

Իր մօր կաթէն կտրուած մանուկի մը պէս.

Իմ անձս կաթէն կտրուած մանուկի մը պէս է:

3 Իսրայէլ Տէրոջ թող յուսայ,

<sup>Մ</sup> Եբբ.՝ Եհովա

<sup>Բ</sup> Եբբ.՝ Եահ

<sup>Գ</sup> Եբբ.՝ միտքդ պահես

<sup>Դ</sup> Եբբ.՝ Եհովայի

<sup>Ե</sup> Կամ՝ խօսքին

<sup>Մ</sup> Եբբ.՝ ետեւէն չընթացայ

<sup>Բ</sup> Եբբ.՝ հաւասարեցուցի

<sup>Գ</sup> Եբբ.՝ լռեցուցի

Հիմա եւ յաւիտեան:

ԱՂԹԸ՝ ՏԱՃԱՐԻՆ ՀԱՄԱՐ  
Աստիճաններուն երգը:

132

Ո՛վ Տէր, յիշէ՛ Դաւիթը

Եւ անոր բոլոր տառապանքները:

2 Յիշէ՛ թէ երդում ըրաւ Տէրոջ,

Ուխտ դրաւ Յակոբի Հզօրին՝ ըսելով.

3 «Իմ տանս ՝բնակարանը պիտի չմտնեմ

Ու փռած անկողինիս վրայ պիտի չբարձրանամ,

4 Աչքերուս քուն պիտի չտամ,

Ո՛չ ալ կոպերուս՝ մրափ,

5 Մինչեւ որ տեղ մը գտնեմ Տէրոջ համար,

Բնակարան մը՝ Յակոբի Հզօրին համար»:

6 Ահա՛ Բանոր մասին լսեցինք Եփրաթայի մէջ,

Եւ գայն գտանք անտառի դաշտերուն մէջ:

7 «Մտնե՛նք անոր Գբնակարանները,

Ու երկրպագե՛նք անոր պատուանդանին քով»:

8 Կանգնէ՛, ո՛վ Տէր, մտի՛ր քու հանգստավայրդ,

Դուն եւ քու զօրութեանդ տապանակը:

9 Զահանաներդ թող արդարութիւն հագնին,

Ու բարեպաշտներդ թող ցնծան:

10 Զու ծառայիդ՝ Դաւիթի սիրոյն համար

Զու օծեալիդ երեսը մի՛ Դմերժեր:

11 Տէրը ճշմարտութեամբ երդում ըրաւ Դաւիթի,

Եւ Եգայն պիտի չուրանայ՝.

«Զու Գընդերքիդ պտուղէն մէկը

Զու գահիդ վրայ պիտի դնեմ:

12 Եթէ քու որդիներդ պահեն իմ ուխտս ու վկայութիւններս՝

Որոնք անոնց պիտի սորվեցնեմ,

Իրենց որդիներն ալ

Զու գահիդ վրայ Եյաւերժ պիտի բազմին»:

<sup>ա</sup> Եբր.՝ վրանը

<sup>բ</sup> Այսինքն՝ տապանակից

<sup>գ</sup> Կամ՝ խորանը

<sup>դ</sup> Եբր.՝ հեռացներ

<sup>ե</sup> Եբր.՝ անկէ ետ պիտի չդառնայ

<sup>զ</sup> Եբր.՝ փորիդ

<sup>է</sup> Եբր.՝ յաւերժութենէ յաւերժութիւն

- 13 Արդարեւ Տէրը Սիոնը ընտրեց,  
եւ փափաքեցաւ որ ան ըլլայ իր բնակութիւնը՝ **ըսելով**։
- 14 «Ա՛յս է իմ յաւերժական հանգստավայրս։  
Հոս պիտի բնակիմ, որովհետեւ ասոր փափաքեցայ։
- 15 Անոր պաշարը առատութեամբ պիտի օրհնեմ,  
Անոր աղքատները հացով պիտի կշտացնեմ։
- 16 Անոր քահանաներուն փրկութիւն պիտի հագցնեմ,  
եւ անոր բարեպաշտները ցնծութեամբ պիտի **գոչեն**։
- 17 Հոն Դաւիթի եղջիւր պիտի բուսցնեմ,  
Ու ճրագ պիտի պատրաստեմ իմ օծեալիս համար։
- 18 Անոր թշնամիներուն ամօթ պիտի հագցնեմ,  
Իսկ անոր վրայ իր <sup>Բ</sup>թագը պիտի <sup>Բ</sup>ծաղկի»։

**ԵՂԲԱՅՐԱԿԱՆ ՍԷՐԸ ՓԱՌՔԻ ՍԷՋ**  
Դաւիթի աստիճաններուն երգը։

### 133

- Ահա՛ ո՛րչափ վայելուչ եւ ո՛րչափ հաճելի է՝  
Որ եղբայրները **իրարու հետ** միաբանութեամբ բնակին։
- 2 Այն <sup>Մ</sup>հոտաւէտ իւղին պէս է՝  
Որ գլուխին վրայէն մօրուքին վրայ,  
Ահարոնի մօրուքին վրայ <sup>Բ</sup>հոսեցաւ,  
Ու մինչեւ անոր վերարկուն ծայրը իջաւ։
- 3 Սիոնի լեռներուն վրայ իջնող  
Հերմոնի ցօղին պէս է,  
Որովհետեւ Տէրը հոն <sup>Գ</sup>ապահովեց օրհնութիւնը  
եւ կեանքը՝ յաւիտենապէս։

**ԿՈՉ՝ ԱՍՏՈՒԱԾ ՓԱՌԱԲԱՆԵԼՈՒ**  
Աստիճաններուն երգը։

### 134

- Ահա՛ օրհնաբանեցէ՛ք Տէրը, ո՛վ Տէրոջ բոլոր ծառաները,  
Որ Տէրոջ տունը կը կենաք գիշերները։
- 2 Բարձրացուցէ՛ք ձեր ձեռքերը սրբարանը,  
եւ օրհնաբանեցէ՛ք Տէրը։
- 3 Երկինքն ու երկիրը <sup>Մ</sup>ստեղծող Տէրը

<sup>Բ</sup> Եբբ.՝ պսակը

<sup>Բ</sup> Եբբ.՝ բուսնի

<sup>Մ</sup> Եբբ.՝ լաւորակ

<sup>Բ</sup> Եբբ.՝ իջաւ

<sup>Գ</sup> Եբբ.՝ պատուիրեց

<sup>Մ</sup> Եբբ.՝ շիւնող

Թող օրհնէ քեզ Սիոնէն:

ՓԱՌԱԲԱՆՈՒԹԵԱՆ ԵՐԳ

135

Ալէլուիա՛: Գովաբանեցէ՛ք <sup>Մ</sup>Տէրոջ անունը,  
Գովաբանեցէ՛ք, ո՛վ Տէրոջ ծառաները,

- 2 Որ Տէրոջ տունը կը կենաք՝  
Մեր Աստուծոյն տան գաւիթներուն մէջ:
- 3 Գովաբանեցէ՛ք <sup>Բ</sup>Տէրը, որովհետեւ Տէրը բարի է.  
Սաղմո՛ս ըսէք անոր անունին, որովհետեւ հաճելի է.
- 4 Զանի որ Տէրը իրեն համար ընտրեց Յակոբը,  
**Ու** Իսրայէլը՝ որպէս իր սեփական **ժողովուրդը**:
- 5 Արդարեւ ես գիտեմ թէ Եհովան մեծ է,  
Եւ **թէ** մեր Տէրը կը գերազանցէ բոլոր աստուածները:
- 6 Տէրը իր ամբողջ փափաքածը իրագործեց  
Երկինքի ու երկրի մէջ,  
Ծովերուն եւ բոլոր անդունդներուն մէջ:
- 7 Երկրի ծայրերէն ամպեր կը բարձրացնէ,  
Անձրեւի համար փայլակներ կը <sup>Գ</sup>պատրաստէ,  
Ու հով կը հանէ իր շտեմարաններէն:
- 8 Ի՛նք զարկաւ Եգիպտոսի անդրանիկները՝  
Մարդէն մինչեւ անասուն:
- 9 Նշաններ ու հրաշքներ դրկեց քու մէջդ, ո՛վ Եգիպտոս,  
Փարաւոնի եւ անոր բոլոր ծառաներուն վրայ:
- 10 Բազմաթիւ ազգեր զարկաւ,  
Ու հզօր թագաւորներ մեռցուց.—
- 11 Ամորհացիներու Սեհոն թագաւորը,  
Բասանի Ովգ թագաւորը,  
Զանանի բոլոր թագաւորութիւնները,
- 12 Եւ անոնց երկիրը ժառանգութիւն տուաւ,  
Ժառանգութիւն իր ժողովուրդին՝ Իսրայէլի:
- 13 Ո՛վ Տէր, քու անունդ յաւիտեան **պիտի մնայ**.  
Ո՛վ Տէր, քու յիշատակդ՝ սերունդէ սերունդ **պիտի տեւէ**:
- 14 Արդարեւ Տէրը իր ժողովուրդին դատը պիտի պաշտպանէ,  
Եւ իր ծառաներուն վրայ պիտի արգահատի:
- 15 Հեթանոսներուն կուռքերը արծաթ ու ոսկի են,  
Մարդու ձեռքի գործեր են.
- 16 Բերան ունին, բայց չեն խօսիր,  
Աչքեր ունին, բայց չեն տեսներ,

---

<sup>Մ</sup> Եբր.՝ Եհովայի

<sup>Բ</sup> Եբր.՝ Եահը

<sup>Գ</sup> Կամ՝ շիւնէ

- 17 Ականջներ ունին, բայց չեն ՚լսեր,  
եւ շունչ չկայ անոնց բերանին մէջ:
- 18 Անոնց նման կ'ըլլան զանոնք շինողները,  
Ու բոլոր անոնց վատահողները:
- 19 Ո՛վ Իսրայէլի տունը, օրհնաբանեցէ՛ք Տէրը.  
Ո՛վ Ահարոնի տունը, օրհնաբանեցէ՛ք Տէրը.
- 20 Ո՛վ Ղեւիի տունը, օրհնաբանեցէ՛ք Տէրը.  
Ո՛վ Տէրոջմէն վախցողներ, օրհնաբանեցէ՛ք Տէրը:
- 21 Սիոնէն օրհնեա՛լ ըլլայ Տէրը,  
Որ երուսաղէմի մէջ կը բնակի: Ալէլուիա՛:

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԱՂՕԹԶ

136

- Շնորհակա՛լ եղէք Տէրոջմէն, որովհետեւ բարի է.  
Որովհետեւ անոր կարեկցութիւնը յաւիտենական է:
- 2 Շնորհակա՛լ եղէք աստուածներուն Աստուծմէն,  
Որովհետեւ անոր կարեկցութիւնը յաւիտենական է:
- 3 Շնորհակա՛լ եղէք տէրերուն Տէրոջմէն,  
Որովհետեւ անոր կարեկցութիւնը յաւիտենական է:
- 4 Մինակը մեծ սքանչելիքներ ընողէն,  
Որովհետեւ անոր կարեկցութիւնը յաւիտենական է:
- 5 Երկինքը հանճարով <sup>ա</sup>ստեղծողէն,  
Որովհետեւ անոր կարեկցութիւնը յաւիտենական է:
- 6 Երկիրը ջուրերուն վրայ տարածողէն,  
Որովհետեւ անոր կարեկցութիւնը յաւիտենական է:
- 7 Մեծ <sup>բ</sup>լուսաւորներ ստեղծողէն,  
Որովհետեւ անոր կարեկցութիւնը յաւիտենական է.–
- 8 Արեւը՝ որպէսզի ցերեկին տիրէ,  
Որովհետեւ անոր կարեկցութիւնը յաւիտենական է.
- 9 Լուսինը եւ աստղերը՝ որպէսզի գիշերին տիրեն,  
Որովհետեւ անոր կարեկցութիւնը յաւիտենական է:
- 10 <sup>գ</sup>Եգիպտացիներուն անդրանիկները՝՝ զարնողէն,  
Որովհետեւ անոր կարեկցութիւնը յաւիտենական է,
- 11 Եւ Իսրայէլը անոնց մէջէն հանողէն,  
Որովհետեւ անոր կարեկցութիւնը յաւիտենական է,
- 12 Ուժեղ ձեռքով ու երկարած բազուկով,  
Որովհետեւ անոր կարեկցութիւնը յաւիտենական է:
- 13 Կարմիր ծովը երկուքի բաժնողէն,

<sup>ա</sup> Եբր.՝ ունկնդրեր

<sup>ա</sup> Եբր.՝ ընողէն

<sup>բ</sup> Եբր.՝ լոյսեր

<sup>գ</sup> Եբր.՝ Եգիպտոսը իր անդրանիկներուն մէջ

- Որովհետեւ անոր կարեկցութիւնը յաւիտենական է,  
**14** Եւ Իսրայէլը անոր մէջէն անցընողէն,  
 Որովհետեւ անոր կարեկցութիւնը յաւիտենական է:  
**15** Փարաւոնը եւ անոր զօրագունդերը Կարմիր ծովուն մէջ թօթոնողէն,  
 Որովհետեւ անոր կարեկցութիւնը յաւիտենական է:  
**16** Իր ժողովուրդին անապատին մէջ քալել տուողէն,  
 Որովհետեւ անոր կարեկցութիւնը յաւիտենական է:  
**17** Մեծահամբաւ թագաւորներ զարնողէն,  
 Որովհետեւ անոր կարեկցութիւնը յաւիտենական է,  
**18** Ու երեւելի թագաւորներ մեռցնողէն,  
 Որովհետեւ անոր կարեկցութիւնը յաւիտենական է.–  
**19** Ամորհացիներու Սեհոն թագաւորը,  
 Որովհետեւ անոր կարեկցութիւնը յաւիտենական է,  
**20** Ու Բասանի Ովգ թագաւորը,  
 Որովհետեւ անոր կարեկցութիւնը յաւիտենական է,  
**21** Եւ անոնց երկիրը ժառանգութիւն տուողէն,  
 Որովհետեւ անոր կարեկցութիւնը յաւիտենական է,  
**22** Ժառանգութիւն իր ծառային՝ Իսրայէլի,  
 Որովհետեւ անոր կարեկցութիւնը յաւիտենական է:  
**23** Մեր նուաստութեան մէջ մեզ յիշողէն,  
 Որովհետեւ անոր կարեկցութիւնը յաւիտենական է,  
**24** Ու մեր թշնամիներէն մեզ ազատողէն,  
 Որովհետեւ անոր կարեկցութիւնը յաւիտենական է.  
**25** Ամէն մարմինի հաց տուողէն,  
 Որովհետեւ անոր կարեկցութիւնը յաւիտենական է.  
**26** Շնորհակալ եղէք երկինքի Աստուծմէն,  
 Որովհետեւ անոր կարեկցութիւնը յաւիտենական է:

ԻՍՐԱՅԷԼԻ ՈՂԲԸ ՏԱՐԱԳՐՈՒԹԵԱՆ ՄԷՋ

137

- Հո՛ն, Բաբելոնի գետերուն <sup>ա</sup>եզերքը,  
 Կը նստէինք ու կու լայինք՝  
 Սիոնը յիշելով:  
**2** Անոր <sup>բ</sup>մօտ՝ ուռիներուն վրայ  
 Կախեցինք մեր քնարները,  
**3** Որովհետեւ մեր գերեվարները  
 Հոն մեզմէ երգ մը ուզեցին,  
 Ու մեր <sup>գ</sup>կողոպտիչները՝ ուրախութիւն, **ըսելով.**  
 «Երգեցէ՛ք մեզի Սիոնի երգերէն»:  
**4** Տէրոջ երգը ի՞նչպէս երգենք

<sup>ա</sup> Եբր.՝ քով

<sup>բ</sup> Եբր.՝ մէջտեղը

<sup>գ</sup> Կամ՝ գերեվարները



Օտար հողի վրայ:

- 5 Ո՛վ Երուսաղէմ, եթէ քեզ մոռնամ,  
իմ աջ ձեռքս **իր պաշտօնը** թող մոռնայ.
- 6 Իմ լեզուս քիմքիս թող փակչի՝  
եթէ քեզ չյիշեմ,  
եթէ Երուսաղէմը իմ գլխաւոր ուրախութենէս  
Աւելի բարձր <sup>7</sup>չհամարեմ:
- 7 Յիշէ՛, ո՛վ Տէր, Եդովմի որդիները,  
Որոնք՝ Երուսաղէմի օրուան մէջ՝  
Կ'ըսէին. «Փլցուցէ՛ք, փլցուցէ՛ք  
Մինչեւ անոր հիմերը»:
- 8 Ո՛վ Բաբելոնի <sup>8</sup>բնաջնջող աղջիկ,  
Երանի՛ անոր՝ որ քեզի պիտի հատուցանէ  
«Մեզի ըրածիդ» փոխարէնը:
- 9 Երանի՛ անոր՝ որ քու երախաներդ պիտի բռնէ  
Ու ժայռի վրայ ջախջախէ:

ԱՂՕԹՔ՝ ԾՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Դաւիթի սաղմոսը:

138

Քեզմէ շնորհակալ պիտի ըլլամ իմ ամբողջ սիրտովս,  
«Աստուածներուն առջեւ քեզի սաղմոս պիտի երգեմ»:

- 2 Պիտի երկրպագեմ դէպի քու սուրբ տաճարդ,  
Եւ քու անունդ պիտի ներբողեմ՝  
Քու կարեկցութեանդ ու ճշմարտութեանդ համար,  
Որովհետեւ քու ամբողջ անունէդ <sup>9</sup>գերազանց ըրիր՝ քու <sup>10</sup>խօսքդ:
- 3 Այն օրը երբ գոչեցի՝ պատասխանեցիր ինծի,  
Իմ անձիս մէջ զօրութեամբ զիս ուժովցուցիր:
- 4 Ո՛վ Տէր, երկրի բոլոր թագաւորները քեզ պիտի ներբողեն՝  
Երբ բերանիդ խօսքերը լսեն.
- 5 Տէրոջ ճամբաներուն մէջ պիտի երգեն՝  
Որովհետեւ Տէրոջ փառքը մեծ է:
- 6 Թէպէտ Տէրը բարձր է, **սակայն** նուաստը կը տեսնէ  
Ու խրոխտը հեռուէն կը ճանչնայ:
- 7 Թէեւ տագնապի մէջէն ընթանամ,

<sup>7</sup> Եբր.՝ չբարձրացնեմ

<sup>8</sup> Եբր.՝ բնաջնջուելիք

<sup>9</sup> Եբր.՝ Մեզ վարձատրածիդ

<sup>10</sup> Կամ՝ Հրեշտակներուն, կամ՝ Դատաւորներուն, եւ կամ՝ Աստուծոյ

<sup>11</sup> Եբր.՝ վեր մեծցուցիր

<sup>12</sup> Կամ՝ խոստումներդ

Դուն գիս պիտի վերապրեցնես.  
Իմ թշնամիներու բարկութեան դէմ՝  
Զու ձեռքդ պիտի երկարես,  
Եւ քու աջ ձեռքդ գիս պիտի փրկէ.

8 **Տէ՛րը** պիտի կատարէ ինծի համար:  
Ո՛վ Տէր, քու կարեկցութիւնդ յաւիտենական է:  
Զու ձեռքերուդ գործերը **երեսի վրայ** մի՛ թողուր:

ԱՍՏՈՒԾՈՅ ԿԱՏԱՐԵԱԼ ԳԻՏՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՀՈԳԱԾՈՒԹԻՒՆԸ  
Գլխաւոր երածիշտին. Դաւիթի սաղմոսը:

139

Ո՛վ Տէր, գիս հետազօտեցիր ու ճանչցար.

- 2 Դուն գիտես իմ նստիլս ու ելլելս,  
Իմ մտածումն հեռուէն կը հասկնաս:
- 3 Իմ քալելս ու պառկիլս կը քննես,  
Եւ իմ բոլոր ճամբաներուս իրազեկ ես:
- 4 Արդարեւ խօսք մը **տակաւին** լեզուիս վրայ չեղած,  
Ահա՛ դուն, ո՛վ Տէր, ամբողջովին տեղեակ ես անոր:
- 5 Ետեւէս եւ առջեւէս գիս պաշարեցիր,  
Ու քու ձեռքդ իմ վրաս դրիր:
- 6 **Այս** գիտութիւնը յոյժ սքանչելի է ինծի համար.  
**Այնչափ** բարձր է, որ չեմ կրնար զայն **հասկնալ**:
- 7 Ո՞ւր երթամ քու Հոգիէդ,  
Եւ քու ներկայութենէդ ո՞ւր փախչիմ:
- 8 Եթէ երկինք ելլեմ, դուն հոն ես.  
Եթէ <sup>բ</sup>դժոխքը <sup>գ</sup>տարածեմ **անկողիս**, ահա՛ դուն **հոն կը գտնուիս**:
- 9 **Եթէ** արշալոյսին թելերը առնեմ  
Ու ծովուն ծայրամասը բնակիմ,
- 10 Հո՛ն ալ քու ձեռքդ գիս պիտի առաջնորդէ,  
Եւ քու աջ ձեռքդ գիս պիտի բռնէ:
- 11 Եթէ ըսեմ. «Անտարակոյս խաւարը գիս պիտի <sup>դ</sup>ծածկէ»,  
**Այն ատեն** գիշերն ալ լոյս կ'ըլլայ իմ շուրջս:
- 12 Խաւարն ալ քեզի համար <sup>ե</sup>մութ չէ,  
Հապա գիշերը ցերեկի պէս կը լուսաւորուի.  
Խաւարն ու լոյսը միեւնոյն **բանն են քու առջեւդ**:
- 13 Արդարեւ դո՛ւն <sup>զ</sup>ստեղծեցիր երիկամունքս,

<sup>ա</sup> Եբբ.՝ ուղիս

<sup>բ</sup> Այսինքն՝ մեռած անձերու կայանը

<sup>գ</sup> Եբբ.՝ դուրս հանեմ

<sup>դ</sup> Եբբ.՝ ճգմէ

<sup>ե</sup> Եբբ.՝ խաւարամած

<sup>զ</sup> Եբբ.՝ ստացար

Եւ դո՛ւն զիս ծածկեցիր մօրս էորովայնիս մէջ:

- 14 Կը ներբողեմ քեզ,  
Որովհետեւ ահաւոր **ու**<sup>Ը</sup>սքանչելի կերպով ստեղծուեցայ՝.  
Քու գործերդ սքանչելի են  
Եւ իմ անձս լաւ գիտէ:
- 15 Իմ ոսկորներս քեզմէ չպահուեցան՝  
Երբ ծածկաբար **Ք**<sup>Բ</sup>ձեւակերպուեցայ,  
Երկրի ստորին **մասերուն** մէջ **ժ**ճարտարութեամբ կազմուեցայ՝:
- 16 Քու աչքերդ իմ **ի**սաղմս տեսան.  
Բոլոր **անդամներս** քու գիրքիդ մէջ արձանագրուած էին  
**Ու** ժամանակին պիտի կազմուէին,  
Երբ դեռ անոնցմէ ո՛չ մէկը կար:
- 17 Ո՛րչափ պատուական են ինձի քու մտածումներդ, ո՛վ Աստուած.  
Որչա՛փ մեծ է անոնց թիւը:
- 18 **Եթէ** հաշուեմ զանոնք՝ աւագէն շատ են.  
Երբ արթննամ՝ դեռ քեզի հետ եմ:
- 19 Անշո՛ւշտ ամբարիշտը պիտի մեռցնես, ո՛վ Աստուած.  
Ուրեմն ո՛վ արիւնահեղ մարդիկ, հեռացէ՛ք ինձմէ:
- 20 Արդարեւ անոնք քեզի դէմ՝ **ն**ենգութեամբ կը խօսին,  
Քու **Խ**թշնամիներդ ընդունայն **քու անունդ** կ'առնեն՝:
- 21 Քեզ ատողները չե՞մ ատեր, ո՛վ Տէր.  
Միթէ քեզի դէմ ելլողներէն չե՞մ զգուիր:
- 22 Զանոնք ծայրագոյն ատելութեամբ կ'ատեն,  
Եւ ինձի թշնամի **ժ**կը համարեն՝:
- 23 Հետագօտէ՛ զիս, ո՛վ Աստուած, ու ճանչցի՛ր իմ սիրտս.  
Քննէ՛ զիս, ու գիտցի՛ր իմ գաղափարներս.
- 24 Նայէ՛ թէ արդեօք **կ**չար ճամբայի մէ՛ջ եմ,  
Եւ առաջնորդէ՛ զիս դէպի յաւիտենական ճամբան:

<sup>Է</sup> Եբբ.՝ փորիս

<sup>Ը</sup> Եբբ.՝ սքանչելիք եղայ

<sup>Բ</sup> Եբբ.՝ շինուեցայ

<sup>ժ</sup> Եբբ.՝ նկարակերտուեցայ

<sup>ի</sup> Կամ՝ նախասաղմս

<sup>լ</sup> Եբբ.՝ **նենգ** մտադրութեամբ

<sup>խ</sup> Կամ՝ քաղաքներդ անհրաւութեամբ կը գրաւեն

<sup>ժ</sup> Եբբ.՝ են

<sup>կ</sup> Եբբ.՝ ցաւալի

140

- Ո՛վ Տէր, ազատէ՛ զիս չար մարդէն,  
Պահպանէ՛ զիս բռնաւոր մարդէն:
- 2 Անոնք իրենց սիրտին մէջ չարութեան մասին կը մտածեն,  
Եւ «ամէն ատեն» պայքարի համար կը զինակցին:
- 3 Իրենց լեզուները օձի պէս սրեցին.  
Քարբի ժահր կայ անոնց շրթունքներուն տակ: (Սելա:)
- 4 Ո՛վ Տէր, պահէ՛ զիս ամբարիշտին ձեռքէն,  
Պահպանէ՛ զիս բռնաւոր մարդէն,  
Որոնք մտածեցին <sup>բ</sup>զիս սայթաքեցնել՝:
- 5 Ամբարտաւանները ինծի համար վարմ պահեցին ու լարեր դրին.  
Յանց փռեցին իմ ճամբայիս վրայ,  
Որոգայթ դրին ինծի համար: (Սելա:)
- 6 Տէրոջ ըսի. «Դո՛ւն ես իմ Աստուածս»:  
Ո՛վ Տէր, ունկնդրէ՛ աղաչանքիս ձայնը:
- 7 Ով՛ Տէր Եհովա, իմ փրկութեանս զօրութիւնը,  
Դո՛ւն իմ գլուխիս <sup>գ</sup>հովանի եղար պայքարին օրը:
- 8 Ո՛վ Տէր, <sup>դ</sup>մի՛ գոհացներ՝ ամբարիշտին փափաքները,  
Մի՛ յաջողցներ անոր **նենգ** մտադրութիւնը,  
Որ իրենք զիրենք չբարձրացնեն: (Սելա:)
- 9 Զիս շրջապատողներուն գլուխը՝  
Իրենց շրթունքներուն անհրաւութիւնը թող <sup>ե</sup>ծածկէ:
- 10 Հրավառ կայծեր թող <sup>զ</sup>հիյնան անոնց վրայ.  
Թող ձգէ գանոնք կրակի մէջ,  
Խորունկ ջուրերու մէջ, որ **վերստին** չկանգնին:
- 11 <sup>է</sup>Չարախօս մարդը երկրի վրայ պիտի չհաստատուի.  
Չախորդութիւնը պիտի հալածէ բռնաւոր մարդը,  
Որպէսզի **գայն** տապալէ:
- 12 Գիտեմ թէ Տէրը պիտի <sup>ը</sup>պաշտպանէ դժբախտին դատը

<sup>ա</sup> Եբր.՝ ամբողջ օրը

<sup>բ</sup> Եբր.՝ քայլերս հրել

<sup>գ</sup> Եբր.՝ ծածկոց

<sup>դ</sup> Եբր.՝ գոհացում մի՛ տար

<sup>ե</sup> Եբր.՝ զիրենք ծածկէ

<sup>զ</sup> Եբր.՝ սահիմ

<sup>է</sup> Եբր.՝ Չար լեզու ունեցող

<sup>ը</sup> Եբր.՝ գործադրէ

Եւ աղքատներուն իրաւունքը:

- 13 Անկասկած արդարները քու անունդ պիտի ներբողեն.  
Ուղիղները ներկայութեանդ մէջ պիտի բնակին:

ԻՐԻԿՈՒԱՆ ԱՂԹԸ

Դաւիթի սաղմոսը:

141

Ո՛վ Տէր, քեզի՛ կը գոչեմ. արտորա՛ ինծի **օգնելու:**  
Ունկնդրէ՛ իմ ձայնս, երբ քեզի կը գոչեմ:

- 2 Իմ աղօթքս «քեզի թող ներկայանայ՝ խունկի **պէս,**  
Եւ ձեռքերուս բարձրանալը՝ իրիկուան ընծային **պէս:**
- 3 Ո՛վ Տէր, պահապան դիր իմ բերանիս,  
Ու պահպանէ՛ իմ շրթունքիս դուռը:
- 4 Մի՛ հակեցներ սիրտս չար բանի,  
Որպէսզի անօրէնութիւն գործող մարդոց հետ ամբարշտութեան արարքներ  
չկատարեմ,  
Եւ անոնց խորտիկներէն չուտեմ:
- 5 Արդարը թող ծեծէ զիս, ատիկա կարեկցութիւն է.  
Թող յանդիմանէ զիս, ատիկա <sup>բ</sup>օծումի իւղ է,  
Իմ գլուխս պիտի չմերժէ **զայն.**  
<sup>գ</sup>Որովհետեւ անոնց ձախորդութիւններուն մէջ ալ՝ պիտի աղօթեմ:
- 6 Երբ անոնց դատաւորները ժայռոտ տեղեր ձգուին,  
Այն ատեն իմ խօսքերս պիտի լսեն, որովհետեւ հաճոյալի են:
- 7 Մեր ոսկորները <sup>դ</sup>դժոխքին երախը ցրուեցան,  
Ինչպէս <sup>ե</sup>հերկողն ու գետինը ճեղքողը **կը ցրուէ՝:**
- 8 Սակայն, ո՛վ Տէր Եհովա, իմ աչքերս դէպի քեզ **ուղղուած** են.  
Քեզի՛ ապաւինեցայ, իմ անձս մի՛ <sup>զ</sup>լքեր:
- 9 Պահէ՛ զիս ինծի համար լարուած որոգայթէն,  
Եւ անօրէնութիւն գործողներուն <sup>է</sup>ծուղակներէն:
- 10 Ամբարիշտները իրենց ցանցերուն մէջ պիտի իյնան,  
Մինչդեռ ես բոլորովին **անվնաս** պիտի անցնիմ:

ԱՂԹԸ՝ ՕԳՆՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

---

- <sup>ա</sup> Երբ.՝ քու ներկայութեանդ թող հաստատուի
- <sup>բ</sup> Երբ.՝ գլուխի
- <sup>գ</sup> Կամ՝ Բայց անոնց չարութիւններուն դէմ
- <sup>դ</sup> Այսինքն՝ մեռած անձերու կայանին
- <sup>ե</sup> Երբ.՝ փայտ կտրողն ու ճեղքողը **կը ցրուէ** երկրի վրայ
- <sup>զ</sup> Երբ.՝ պարպեր
- <sup>է</sup> Երբ.՝ որոգայթներէն

142

- Իմ ձայնովս Տէրոջ կ'աղաղակեմ,  
Իմ ձայնովս Տէրոջ կ'աղաչեմ:
- 2 Իմ գանգատս անոր <sup>ա</sup>կը ներկայացնեմ՝,  
Տագնապս <sup>բ</sup>անոր կ'իմացնեմ:
- 3 Երբ հոգիս թալկանայ ներսս,  
Դուն կը գիտնաս իմ շաւիղս:  
Իմ գացած ուղիիս մէջ  
Ինծի համար վարմ թաղեցին:
- 4 Նայէ՛ աջ կողմը եւ տե՛ս.  
Ո՛չ մէկը զիս կը ճանչնայ:  
Ապաստանարանը կորսուեցաւ ինծի համար.  
Ո՛չ մէկը կայ՝ որ անձիս <sup>գ</sup>հոգ տանի՞:
- 5 Ո՛վ Տէր, քեզի՛ աղաղակեցի  
Եւ ըսի. «Դո՛ւն ես իմ ապաւէնս  
Ու բաժինս՝ ապրողներու երկրին մէջ:
- 6 Ուշադի՛ր եղիր իմ <sup>դ</sup>պաղատանքիս,  
Որովհետեւ մեծապէս <sup>ե</sup>թշուառացայ.  
Ազատէ՛ զիս իմ հալածիչներէս,  
Քանի ինձմէ հզօր եմ:
- 7 Հանէ՛ զնտանէն իմ անձս,  
Որպէսզի քու անունդ ներբողեմ.  
Արդարները զիս պիտի շրջապատեն՝  
Երբ ինծի երախտիք ընես»:

ԱՂՕԹԸ՝ ՕԳՆՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Դաւիթի սաղմոսը:

143

- Ո՛վ Տէր, լսէ՛ իմ աղօթքս,  
Ունկնդրէ՛ աղաչանքս,  
Պատասխանէ՛ ինծի քու հաւատարմութեամբդ  
**Եւ** արդարութեամբդ:
- 2 Զու ծառայիդ հետ դատաստանի մի՛ երթար,  
Որովհետեւ ո՛չ մէկ ապրող **մարդ** մը պիտի արդարանայ քու առջեւ:
- 3 Արդարեւ թշնամին իմ անձս հալածեց,

<sup>ա</sup> Եբր.՝ առջեւ կը թափեմ

<sup>բ</sup> Եբր.՝ անոր առջեւ

<sup>գ</sup> Եբր.՝ ետեւէն փնտռէ

<sup>դ</sup> Եբր.՝ ճիչիս

<sup>ե</sup> Եբր.՝ ցածցայ

Իմ կեանքս <sup>ա</sup>զգետնեց, կոխկռտեց.

Զիս խաւարին մէջ բնակեցուց՝

<sup>բ</sup>Շատոնց մեռածներուն պէս:

4 Ուստի հոգիս թալկացաւ ներսս,

Սիրտս <sup>գ</sup>խռովեցաւ ներսս:

5 Վաղեմի օրերը կը յիշեմ,

Զու բոլոր արարքներուդ մասին կը խորհրդածեմ,

Զու ձեռքերուդ գործերուն վրայ կը խոկամ:

6 Ձեռքերս դէպի քեզ կ'երկարեմ,

Իմ անձս ծարաւուտ երկրի պէս քեզի կը պապակի: (Սելա:)

7 Շտապելո՛վ պատասխանէ ինձի, ո՛վ Տէր,

Հոգիս նուաղեցաւ.

Մի՛ ծածկեր ինձմէ քու երեսդ,

Որպէսզի գուրը իջնողներուն չնմանիմ:

8 Առտուընէ՛ լսել տուր ինձի քու կարեկցութիւնդ,

Որովհետեւ քեզի վստահեցայ.

<sup>դ</sup>Յուցո՛ւր ինձի երթալիք ճամբաս,

Զանի անձս դէպի քեզ բարձրացուցի:

9 Ո՛վ Տէր, ազատէ՛ զիս թշնամիներէս,

Որովհետեւ <sup>ե</sup>քեզ իմ ապաւէնս ըրի՞:

10 Սորվեցո՛ւր ինձի քու կամքդ գործադրել,

Զանի որ դո՛ւն ես իմ Աստուածս.

Զու բարի Հոգիդ թող առաջնորդէ զիս <sup>զ</sup>ուղղամտութեան երկիրը՞:

11 Ո՛վ Տէր, վերապրեցո՛ւր զիս՝ քու անունիդ համար.

Հանէ՛ իմ անձս տագնապէն՝ քու արդարութեամբդ.

12 Բնաջնջէ՛ թշնամիներս՝ քու կարեկցութեամբդ,

Կորսնցո՛ւր բոլոր անձս ճնշողները,

Զանի որ ես քու ծառադ եմ:

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ՝ ՅԱՂԹԱՆԱԿԻ ՀԱՍԱՐ

Դաւիթի սաղմոսը:

# 144

Օրհնեա՛լ ըլլայ Տէրը, իմ Վէմս,

Որ ձեռքերս կը վարժեցնէ պայքարի,

Ու մատներս՝ պատերազմի:

<sup>ա</sup> Եբր.՝ գետինը նետեց

<sup>բ</sup> Կամ՝ Յաւիտենապէս

<sup>գ</sup> Եբր.՝ ամայացաւ

<sup>դ</sup> Եբր.՝ Գիտցո՛ւր

<sup>ե</sup> Եբր.՝ քու քովդ ծածկուեցայ

<sup>զ</sup> Կամ՝ ուղիղ գետինի վրայ

- 2 Ի՛նք է իմ կարեկցութիւնս ու բերդս,  
 իմ պատսպարանս եւ ազատարարս:  
 Իմ վահանս է, ուստի իրեն կ'ապաւիճիմ.  
 Ի՛նք ժողովուրդս կ'ենթարկէ ինձի:
- 3 Ո՛վ Տէր, մարդը ի՞նչ է՝ որ զայն կը ճանչնաս,  
 Ու մարդու որդին՝ որ անոր հանդէպ համարում կ'ունենաս:
- 4 Մարդը ունայնութեան նման է,  
 Անոր օրերը անցնող ստուերի պէս են:
- 5 Ո՛վ Տէր, հակեցո՛ւր քու երկինքդ եւ իջի՛ր.  
 Դպչէ՛ լեռներուն՝ որպէսզի մխան:
- 6 Փայլա՛կ նետէ ու ցրուէ՛ զանոնք.  
 Արձակէ՛ նետերդ եւ խուճապի՛ մատնէ զանոնք:
- 7 Ղրկէ՛ վերէն քու ձեռքդ, ու փրկէ՛ զիս.  
 Ազատէ՛ զիս յորդառատ ջուրերէն եւ օտարազգիներուն ձեռքէն,
- 8 Որոնց բերանը ունայնութիւն կը խօսի,  
 Եւ անոնց աջ ձեռքը կեղծիքի աջ ձեռք է:
- 9 Ո՛վ Աստուած, նո՛ր երգ պիտի երգեմ քեզի,  
 Սաղմոս պիտի ըսեմ քեզի՝ տասը լար ունեցող տաւիղով:
- 10 Ի՛նք թագաւորներուն փրկութիւն կու տայ,  
 Եւ իր ծառան՝ Դաւիթը կ'ազատէ չարաղէտ սուրէն:
- 11 Փրկէ՛ զիս եւ ազատէ՛ օտարազգիներուն ձեռքէն,  
 Որոնց բերանը ունայնութիւն կը խօսի,  
 Եւ անոնց աջ ձեռքը կեղծիքի աջ ձեռք է.
- 12 Որպէսզի մեր որդիները իրենց մանկութեան մէջ մեծցող տունկերու պէս ըլլան,  
 Ու մեր աղջիկները պալատի "շէնքին համար" քանդակուած անկիւնաքարերու պէս  
 ըլլան.
- 13 Մեր ամբարները լեցուին  
 Եւ ամէն տեսակ պարէնով յորդին,  
 Ու մեր ոչխարները հազարապատիկ եւ բիւրապատիկ բազմանան մեր դաշտերուն  
 մէջ.
- 14 Մեր արջառները՝ բազմածին ըլլան,  
 "Բռնութեամբ մտնել" կամ դուրս հանել չըլլայ,  
 Ո՛չ ալ աղաղակ՝ մեր հրապարակներուն մէջ:
- 15 Երանի՛ այն ժողովուրդին՝ որ այսպիսի վիճակ ունի.  
 Երանի՛ այն ժողովուրդին՝ որուն Աստուածը Եհովան է:

ՓԱՌԱԲԱՆՈՒԹԵԱՆ ԵՐԳ  
Դաւիթի գովաբանութիւնը:

145

Զեզ պիտի բարձրացնեմ, ո՛վ Թագաւոր, իմ Աստուածս,

---

<sup>u</sup> Եբր.՝ կերպարին համեմատ  
<sup>p</sup> Կամ՝ պարարտ  
<sup>q</sup> Եբր.՝ ճեղքուածք



- Ու քու անունդ՝ «դարձ դար» պիտի օրհնաբանեմ:
- 2 Ամէն օր քեզ պիտի օրհնաբանեմ,  
Եւ քու անունդ դարձ դար պիտի գովաբանեմ:
- 3 Մեծ ու յոյժ գովելի է Տէրը.  
Անոր մեծութիւնը անհետազօտելի է:
- 4 Մէկ սերունդը միւսին պիտի դրուատէ քու գործերդ,  
Եւ քու քաջագործութիւններդ պիտի հռչակէ:
- 5 Զու փառքիդ պատուական վայելչութիւնը,  
Ու քու սքանչելի գործերդ պիտի <sup>բ</sup>հաղորդեմ:
- 6 Զու անաւոր **արարքներուդ** զօրութեան մասին պիտի խօսիմ,  
Իսկ ես քու մեծագործութիւններդ պիտի պատմեմ:
- 7 Զու մեծ բարութեանդ յիշատակը պիտի արտայայտեն,  
Եւ քու արդարութեամբդ պիտի ցնծան:
- 8 Տէրը ողորմած ու գթած,  
Համբերատար եւ մեծապէս կարեկից է:
- 9 Տէրը բոլորին հանդէպ բարի է.  
Անոր գթութիւնները իր բոլոր գործերուն <sup>գ</sup>կը վերաբերին՝:
- 10 Ո՛վ Տէր, քու բոլոր գործերդ քեզ պիտի ներբողեն,  
Եւ բարեպաշտներդ քեզ պիտի օրհնաբանեն:
- 11 Զու թագաւորութեանդ փառքին մասին պիտի խօսիմ,  
Ու քու զօրութիւնդ պիտի պատմեն.
- 12 Որպէսզի մարդոց որդիներուն գիտցնեն  
Անոր քաջագործութիւններն ու թագաւորութեան փառաւոր վայելչութիւնը:
- 13 Զու թագաւորութիւնդ՝ յաւիտենական թագաւորութիւն է  
Եւ քու տէրութիւնդ՝ սերունդէ սերունդ:
- 14 Տէրը նեցուկ կ'ըլլայ բոլոր ինկածներուն,  
Ու բոլոր կքածները կը կանգնեցնէ:
- 15 Բոլորին աչքերը քեզի կը սպասեն,  
Եւ դուն ատենին անոնց կու տաս իրենց կերակուրը:
- 16 Զու ձեռքդ կը բանաս,  
Ու ամէն կենդանի **մարմին** կը կշտացնես՝ **իր** փափաքին համաձայն:
- 17 Տէրը արդար է իր բոլոր ճամբաներուն մէջ,  
Ու կարեկից՝ իր բոլոր գործերուն մէջ:
- 18 Տէրը մօտ է բոլոր անոնց՝ որ իրեն կը գոչեն,  
Բոլոր անոնց՝ որ ճշմարտութեամբ իրեն կը գոչեն:
- 19 Ան իրմէ վախցողներուն փափաքը կը գործադրէ.  
Անոնց աղաղակը կը լսէ եւ զանոնք կը փրկէ:
- 20 Տէրը բոլոր զինք սիրողները կը պահպանէ,  
Սակայն բոլոր ամբարիշտները կը բնաջնջէ:
- 21 Իմ բերանս Տէրոջ գովաբանութիւնը պիտի արտայայտէ,

<sup>ա</sup> **Եբր.**՝ յաւիտենականութենէ յաւիտենականութիւն

<sup>բ</sup> **Եբր.**՝ խօսիմ

<sup>գ</sup> **Եբր.**՝ վրայ եմ

Եւ ամէն մարմին անոր սուրբ անունը պիտի օրհնաբանէ դարէ դար:

ՓՐԿԻՉ ԱՍՏՈՒԾՈՅ ՓԱՌՔԸ

146

Ալէլուիա՛: Գովաբանէ՛ Տէրը, ո՛վ իմ անձս:

- 2 Տէրը պիտի գովաբանեմ իմ կեանքիս մէջ,  
Որքան **ատեն** որ ապրիմ՝ իմ Աստուծոյս սաղմոս պիտի ըսեմ:
- 3 Մի՛ վստահիք ազնուականներուն,  
Մարդու որդիին՝ որուն քով <sup>ա</sup>օգնութիւն չկայ.
- 4 Անոր հոգին <sup>բ</sup>կ'երթայ, ան իր հողը կը վերադառնայ,  
Նոյն օրը անոր խորհուրդները կը կորսուին:
- 5 Երանի՛ անոր՝ որուն օգնականը Յակոբի Աստուածն է,  
Եւ անոր յոյսը Տէրոջ՝ իր Աստուծոյն վրայ է,
- 6 Որ <sup>գ</sup>ստեղծեց երկինքն ու երկիրը,  
Ծովը եւ ամէն ինչ որ անոնց մէջ է:  
Ինք ճշմարտութիւնը յաւիտենապէս կը պահէ,
- 7 Հարստահարուածներուն իրաւունքը կը <sup>դ</sup>պաշտպանէ,  
Եւ անօթիներուն հաց կու տայ:  
Տէրը կ'արձակէ բանտարկեալները,
- 8 Տէրը կը բանայ կոյրերուն աչքերը,  
Տէրը կը կանգնեցնէ կքածները,  
Տէրը կը սիրէ արդարները,
- 9 Տէրը կը պահպանէ գաղթականները,  
Կը հաստատէ որքն ու այրին,  
Բայց կը <sup>ե</sup>խափանէ ամբարիշտներուն ճամբան:
- 10 Տէրը պիտի թագաւորէ յաւիտենապէս,  
Քու Աստուած՛որ, ո՛վ Սիոն, սերունդէ սերունդ: Ալէլուիա՛:

ԱՄԵՆԱԿԱՐՈՂ ԱՍՏՈՒԾՈՅ ՓԱՌՔԸ

147

Գովաբանեցէ՛ք Տէրը, որովհետեւ վայելուչ է մեր Աստուծոյն սաղմոս ըսել,  
Որովհետեւ հաճելի **ու** պատշաճ է գովաբանել:

- 2 Տէ՛րը կը կառուցանէ Երուսաղէմը,  
Ի՛նք կը հաւաքէ Իսրայէլի արքայականները.
- 3 Կոտրած սիրտ ունեցողները կը բուժէ,  
Եւ անոնց խոցերը կը փաթթէ.

<sup>ա</sup> Եբբ.՝ ազատութիւն

<sup>բ</sup> Եբբ.՝ դուրս կ'ելլէ

<sup>գ</sup> Եբբ.՝ ըրաւ

<sup>դ</sup> Եբբ.՝ գործադրէ

<sup>ե</sup> Եբբ.՝ ծռէ

ՄԱՂՄՈՍՆԵՐՈՒ ԳԻՐԶԸ

- 4 <sup>ա</sup> Աստղերը կը թուարկէ,  
Անոնք բոլորն ալ **իրենց** անուններով կը կոչէ:
- 5 Մեծ է մեր Տէրը, եւ իր կարողութիւնը շատ է.  
Անոր հանճարը անհուն է:
- 6 Տէրը <sup>բ</sup> Գնեցուկ կ'ըլլայ հեզերուն՝,  
Իսկ մինչեւ գետին կը նուաստացնէ ամբարիշտները:
- 7 <sup>գ</sup> Խմբերգեցէ՛ք Տէրոջ շնորհակալութեամբ,  
Սաղմո՛ս ըսէք մեր Աստուծոյն՝ քնարով:
- 8 Ի՛նք կը ծածկէ երկինքը թանձր **ամպերով**,  
Անձրեւ կը պատրաստէ երկրի համար,  
Ու խոտ կը բուսցնէ լեռներուն վրայ.
- 9 Ի՛նք անասուններուն կու տայ իրենց <sup>դ</sup> Դերը,  
Եւ ագռաւին ձագերուն՝ որոնք կը գոչեն:
- 10 Ան ձիուն զօրութենէն չ'ախորժիր,  
Մարդուն սրունքներուն չի հաճիր:
- 11 Տէրը կը հաճի իրմէ վախցողներուն,  
Իր կարեկցութեան յուսացողներուն:
- 12 <sup>ե</sup> Դրուատէ՛ Տէրը, ո՛վ Երուսաղէմ,  
Օրհնէ՛ քու Աստուածդ, ո՛վ Սիոն.
- 13 Որովհետեւ ի՛նք ամրացուց քու դռներուդ նիգերը,  
Եւ օրհնեց որդիներդ քու մէջդ:
- 14 Ի՛նք խաղաղութիւն կու տայ հողամասիդ,  
**Ու** քեզ կը կշտացնէ <sup>զ</sup> Երեսիք ցորենով:
- 15 Իր հրամանը երկրին կը դրկէ,  
**Եւ** իր խօսքը արագութեամբ կը վազէ:
- 16 Չիւն կու տայ՝ բուրդի պէս,  
Եղեամբ կը ցանէ մոխիրի պէս,
- 17 Իր սառը կը նետէ պատառներու պէս.  
Անոր ցուրտին ո՞վ կրնայ դիմանալ:
- 18 Իր խօսքը կը դրկէ, ու կը հալեցնէ զանոնք.  
Իր հովը կը փչէ, **եւ** ջուրեր կը հոսին:
- 19 Իր խօսքը կը հաղորդէ Յակոբի,  
Իր կանոններն ու դատավճիռները՝ Իսրայէլի:
- 20 Ո՛չ մէկ ազգի հետ այսպէս վարուեցաւ,  
Բայց անոնք **իր** դատավճիռները չճանչցան: Ալէլուիա՛:

ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ԿՈՉ՝ ԱՍՏՈՒԱԾ ՓԱՌԱԲԱՆԵԼՈՒ

<sup>ա</sup> Եբբ.՝ Աստղերուն թիւը կը համրէ

<sup>բ</sup> Եբբ.՝ շիտակ կը կայնեցնէ հեզերը

<sup>գ</sup> Եբբ.՝ Պատասխանելով երգեցէ՛ք

<sup>դ</sup> Եբբ.՝ հացը

<sup>ե</sup> Եբբ.՝ ճարպոտ

148

- Ալէլուիա՛: Գովաբանեցէ՛ք Տէրը երկինքէն.  
 Գովաբանեցէ՛ք զայն բարձր վայրերուն մէջ:
- 2 Գովաբանեցէ՛ք զայն, ո՛վ անոր բոլոր հրեշտակները,  
 Գովաբանեցէ՛ք զայն, ո՛վ անոր բոլոր զօրքերը:
- 3 Գովաբանեցէ՛ք զայն, ո՛վ արեւ եւ լուսին.  
 Գովաբանեցէ՛ք զայն, ո՛վ բոլոր փայլուն աստղեր:
- 4 Գովաբանեցէ՛ք զայն՝ ո՛վ երկինքներու երկինք,  
 Ու երկինքէն վեր եղող ջուրեր:
- 5 Տէրոջ անունը թող գովաբանեն,  
 Որովհետեւ ինք պատուիրեց, եւ անոնք ստեղծուեցան.
- 6 Զանոնք «դարէ դար»<sup>բ</sup> հաստատեց,  
 Կանոն դրաւ՝ որ Գանխափանելի է:
- 7 Գովաբանեցէ՛ք Տէրը երկրէն՝  
 Ո՛վ վիշապներ ու բոլոր անդունդներ,
- 8 Կրակ եւ կարկուտ, ձիւն ու մշուշ,  
 Եւ անոր հրահանգը գործադրող մրրկալից հով,
- 9 Լեռներ եւ բոլոր բլուրներ,  
 Պտղատու ծառեր ու բոլոր մայրիներ,
- 10 Գազաններ եւ բոլոր անասուններ,  
 Սողուններ ու թեւաւոր թռչնազգիներ,
- 11 Երկրի թագաւորներ եւ բոլոր Պժողովուրդներ,  
 Իշխանաւորներ ու երկրի բոլոր դատաւորներ,
- 12 Երիտասարդներ եւ կոյսեր,  
 Ծերեր ու տղաներ:
- 13 Բոլորը թող գովաբանեն Տէրոջ անունը,  
 Որովհետեւ միայն անոր անունը վսեմ է.  
 Անոր փառաւորութիւնը երկրէն ու երկինքէն <sup>ե</sup>վեր է:
- 14 Ի՛նք բարձրացուց իր ժողովուրդին եղջիրը,  
 Իր բոլոր բարեպաշտներուն,  
 Իր մօտը եղող ժողովուրդին՝  
 Իսրայէլի որդիներուն գովաբանութիւնը: Ալէլուիա՛:

ՓԱՌԱԲԱՆՈՒԹԵԱՆ ԵՐԳ

149

Ալէլուիա՛: Նո՛ր երգ երգեցէք Տէրոջ,

---

<sup>ա</sup> Եբր.՝ յաւերժութենէ յաւերժութիւն

<sup>բ</sup> Եբր.՝ կայունացուց

<sup>գ</sup> Եբր.՝ անփոփոխելի

<sup>դ</sup> Եբր.՝ բնակչութիւններ

<sup>ե</sup> Եբր.՝ բարձր

**Երգեցէ՛ք** անոր գովաբանութիւնը՝ բարեպաշտներուն համախմբումին մէջ:

- 2 Իսրայէլ թող ուրախանայ իր Արարիչով.  
Սիոնի որդիները թող խայտան իրենց Թագաւորով:
- 3 Պարով թող գովաբանեն անոր անունը,  
Թմբուկով ու քնարով սաղմոս թող ըսեն անոր,
- 4 Որովհետեւ Տէրը իր ժողովուրդին կը հաճի,  
Հեզերը փրկութեամբ պիտի փառաւորէ:
- 5 Բարեպաշտները փառքով թող հրճուին,  
Եւ իրենց անկողիցին մէջ ցնծան.
- 6 Աստուծոյ գովաբանութիւնները անոնց բերանին մէջ թող ըլլան,  
Ու երկսայրի սուր մը՝ անոնց ձեռքին մէջ,
- 7 Որպէսզի հեթանոսներէն վրէժ առնեն,  
Ու <sup>ա</sup>ժողովուրդները <sup>բ</sup>պատժեն.
- 8 Որպէսզի անոնց թագաւորները շղթաներով կապեն,  
Եւ անոնց <sup>գ</sup>ազնուականները՝ երկաթէ կապանքներով,
- 9 Որպէսզի գրուած դատավճիռը անոնց վրայ գործադրեն:  
Այս փառաւորութիւնը իր բոլոր բարեպաշտներուն համար է: Ալէլուիա՛:

ՓԱՌԱԲԱՆՈՒԹԻՒՆ ԱՍՏՈՒԾՈՅ

150

Ալէլուիա՛: Գովաբանեցէ՛ք Աստուած իր սրբարանին մէջ.

Գովաբանեցէ՛ք զայն իր զօրութեան հաստատութեան մէջ:

- 2 Գովաբանեցէ՛ք զայն իր քաջագործութիւններուն համար,  
Գովաբանեցէ՛ք զայն իր մեծութեան ճոխութեան համեմատ:
- 3 Գովաբանեցէ՛ք զայն շեփորի հնչիւնով,  
Գովաբանեցէ՛ք զայն տաւիղով ու քնարով:
- 4 Գովաբանեցէ՛ք զայն թմբուկով եւ պարով,  
Գովաբանեցէ՛ք զայն լարաւոր նուագարաններով ու սրինգով:
- 5 Գովաբանեցէ՛ք զայն մեծաձայն ծնծղաներով,  
Գովաբանեցէ՛ք զայն մեծագոչ ծնծղաներով:
- 6 Ամէն շունչ ունեցող թող գովաբանէ Տէրը: Ալէլուիա՛:

<sup>ա</sup> Եբր.՝ բնակչութիւնները

<sup>բ</sup> Եբր.՝ կշտամբեն

<sup>գ</sup> Եբր.՝ պատուաւորները